2. Neuman R. Social Implications of the Internet // Annual Review of Sociology, 2001, No. 27, pp. 34–40.
3. Ассоциация директоров по Коммуникациям и корпоративным Медиа России. Эл. рес.: <https://corpmedia.ru/mediascope-73-rossiyan-pol-zuyutsya-social-nymi-setyami/>, 20.09.2022.
4. Ашомко А. Чистая теория // Medium, 2017. Эл. рес.: <https://medium.com/@ashomko/чистая-теория-db3850cad9a9>, 19.09.2022.
5. Горошко Е.И. Возникновение лингвистики новых медиа и перспективы развития этого направления // Гипертекст как объект лингвистического исследования: Материалы III международной научно-практической конференции, 20 июня 2013, Самара, ПГСГА, 2013, С. 27–41.
6. Градюшко А. А. Заголовок как важнейший элемент текста в веб-журналистике // Вестник БДПУ, Минск, БДПУ, 2014, Сер. 1, № 1, С. 73–77.
7. Назаренко Н. А., Падерно П. И. Влияние интерфейса на состояние и здоровье оператора // Биотехносфера, Санкт-Петербург, Политехник, 2009, № 6, С. 45–52.
8. Словарь терминов SeoPult.ru. Эл. рес.: https://seopult.ru/lbrary/%D0%A1%D0%BE%D1%86%D0%B8%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D0%B5_%D0%BC%D0%B5%D0%B4%D0%B8%D0%B0, 12.09.2022.

ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ ОРГАНИЗАЦИИ ДОЛГОВРЕМЕННОГО СОХРАНЕНИЯ ЦИФРОВОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

Ключевые слова: цифровая трансформация, долговременное цифровое сохранение, метаданные, эталонная модель, репозиторий, OAIS, PREMIS.

Keywords: digital transformation, long-term digital preservation, metadata, reference model, repository, OAIS, PREMIS.

Отличительной чертой цифровой трансформации общества является представление информации не только в традиционной печатной, но и цифровой форме, что позволяет более эффективно создавать, хранить, организовывать доступ и использовать информацию для разработки инновационных сервисов и продуктов.

Цифровыми объектами могут быть как данные, изначально созданные в электронном виде, так и специально оцифрованные данные с бумажных и иных аналоговых носителей информации. Цифровые объекты могут содержать, как структурированную информацию (например, электронные документы, таблицы, формализованные описания изделий), так и неструктурированную (например, фотографии, изображения изделий или сканированные страницы документации).

Цифровая трансформация оказывает активное воздействие и на состав библиотечных фондов, когда стратегическим направлением в их развитии становится расширение комплектования цифровыми материалами. Ведущие библиотеки мира в настоящее время уже приобретают и хранят большое количество материалов в электронной форме. Некоторые виды документов поступают в библиотеки только в цифровом формате, растет доля электронных публикаций научных журналов и справочных изданий.

Многие библиотеки сегодня считают одним из главных приоритетов своей деятельности на ближайшее будущее разработку последовательной стратегии оцифровывания фондов. Стремительное развитие глобальной информационной сети, бурный рост количества ресурсов ведут к изменению принципиальных основ обработки данных вследствие необходимости поддержки и развития распределенных электронных информационных ресурсов [Бричковский, 2021, 273].

Быстрый рост объемов электронных ресурсов породил комплекс проблем, связанных с обеспечением их долговременного хранения (long-term digital preservation). Дело в том, что возрастают риски потери цифровой информации, среди которых можно отметить следующие [Там же, 274]:

- локальные катастрофы (отключение электричества, выход из строя компьютерного оборудования, пожар, наводнение, поломка электронного носителя, действие вирусов, хакерские атаки и т.п.);
- физическое старение электронных носителей;
- прекращение финансирования, необходимого для поддержки цифровых информационных ресурсов
- моральное старение технических и программных средств, в связи с разработкой и внедрением новых технологий обработки и хранения информации;
- изменение форматов хранения и представления данных;
- ошибки обслуживающего персонала.

Долговременное цифровое сохранение направлено на обеспечение того, чтобы цифровой контент оставался доступным для сообществ пользователей в течение длительного периода времени и для будущих поколений. Ключевая проблема при проектировании таких систем заключается в том, что период времени очень велик, намного больше, чем срок службы отдельных носителей информации, аппаратных и программных компонентов, а также форматов, в которых кодируется информация. Если бы этот период был короче, было бы легко удовлетворить требование, сохраняя информацию на достаточно долгоживущих носителях, встроенных в систему аппаратного и программного обеспечения с таким же долговременным сроком службы. К сожалению, не существует ни одного носителя, аппаратного или программного обеспечения, в долговечности которого разработчики могут быть уверены.

Цифровое сохранение необходимо рассматривать как деятельность или комплекс мероприятий, которые позволяют цифровой информации быть понятной в течение длительных периодов времени. Цифровая информация должна сохраняться в архивной среде в удобочитаемом и интерпретируемом

виде гораздо дольше, чем ожидаемый срок службы отдельных аппаратных и программных компонентов систем хранения информации, а также форматов, в которых кодируются элементы цифровой информации.

Обычное хранение информации – это в основном пассивный процесс, так обеспечивает лишь то, чтобы извлекаемые байты оставались точно такими же, как и те, что хранятся, но не гарантирует использования этих байтов с помощью новых технологий. Стратегия же решения долговременной сохранности цифровой информации основывается на «активном сохранении» – переносе информации в формы, используемые сегодня, или предоставлении инструментов, позволяющих прочитывать старую информацию.

Активное сохранение осуществляется как в процессе приема цифровой информации, так и в процессе её хранения. Процесс приема (загрузки) автоматически описывает файлы, идентифицирует форматы и сообщает, находятся ли они под угрозой устаревания. Если файл определен как находящийся под угрозой устаревания, предлагается множество инструментов и путей миграции для создания файла, доступного современным технологиям.

Наиболее распространённым способом обеспечения долговременной сохранности цифрового наследия является создание крупных специализированных хранилищ цифровых объектов. Это могут себе позволить либо очень крупные учреждения культуры (например, национальные библиотеки и архивы), либо территориальные или отраслевые образования, которые создают подобные хранилища в порядке реализации национальных, региональных или отраслевых программ по сохранению цифровых материалов.

Хранилище должно обеспечивать физическую сохранность данных и возможность воспроизведения данных в течение длительного срока. Объекты поступают на хранение в соответствии с договорами о доверительном хранении, заключаемыми с организациями и лицами, владеющими правами на объекты, в которых определяются процедуры и периодичность обновления хранимых данных. Для обеспечения физической сохранности целесообразно создавать «зеркала» хранилища, по возможности, расположенные в разных местах, а также обеспечить защиту данных от несанкционированного доступа. Необходимо на регулярной основе проводить мониторинг развития технологий, по результатам которого планируются мероприятия по миграции хранимых цифровых объектов для обеспечения возможности долговременного доступа к ним.

Существует несколько возможных подходов к обеспечению долговременного сохранения:

- миграция/конвертирование в различные форматы;
- консервация технологий;
- эмуляция;
- инкапсуляция.

Самые распространенные способы обеспечения долговременного хранения среди упомянутых выше – это миграция и конвертирование, проводимые с сохранением свойств электронных документов [Мошкова, 2019, 268].

Учитывая важность длительного сохранения цифровой информации, Международная организация по стандартизации – International Standardization Organization (ISO) разработала стандарт 14721:2003 – Reference Model for an Open Archival Information System (OAIS). Данный стандарт определяет эталонную модель открытой архивной информационно-системы.

Модель OAIS устанавливает терминологию и концепцию цифрового хранения, определяет ключевые компоненты и процессы, присущие большинству архивов, предлагает информационную модель описания цифровых объектов и соответствующих метаданных. Она включает полный диапазон архивных функций сохранения информации, включая подготовку информации к архивированию, архивирование информации, непосредственно архивное хранение, управление информацией, управление доступом и распространение. Она также описывает миграцию цифровой информации на новые носители, модели данных и в новые форматы, используемые для представления информации [Dryden, 2009, 216].

Вместе с тем модель OAIS не специфицирует способ конкретной аппаратно-программной реализации архива и не определяет физические устройства и системы хранения. Она является теоретической основой создания и функционирования любого цифрового архива.

Концептуальной структурой информации, необходимой для выполнения функций OAIS является информационный пакет (контейнер).

В соответствии с этим стандартом информационная система должна содержать модули, обеспечивающие выполнение следующих функций:

- формирование из исходных файлов электронных документов источника комплектования так называемого сдаточного пакета, содержащего файлы документов и необходимый набор метаданных;

- формирование так называемого архивного пакета, в том числе специальных метаданных архивного хранения, а также нормализацию форматов и группировку документов по форматам;
- поддержание собственно процесса архивного хранения, включая обеспечение неизменности документов и, в случае необходимости, миграцию в более устойчивые во времени форматы;
- формирование так называемого дистрибутивного пакета, содержащего информацию по запросам потребителей (для решения этой задачи системе предусматриваются инструменты поиска и извлечения информации).

Основными типами, упорядоченными по возрастанию риска потери информации, являются:

Операции, которые не изменяют последовательности битов:

- обновление (восстановление): цифровая миграция, при которой экземпляр носителя, хранящий один или несколько архивных пакетов, заменяется, например носителем того же типа путем копирования битов на этот носитель, используемый для хранения архивного пакета, а также для управления и доступа к среде. В результате существующая инфраструктура архивного хранения, остается без каких-либо изменений.

- репликация: цифровая миграция, где нет никаких изменений в упаковке информации. Биты используются для передачи и сохранения этих информационных объектов на тот же или новый тип носителя. При этом репликация может потребовать изменения в инфраструктуре архивного хранения.

Операции, изменяющие битовые последовательности:

- переупаковка: цифровая миграция, где есть некоторые изменения в битах упаковки информации.

- трансформация (преобразование): цифровая миграция, где есть некоторые изменения в содержании информации или битах при попытке сохранить полную информативность.

Важную роль при организации долговременного цифрового сохранения играют метаданные, которые определяют информацию, необходимую для обеспечения долгосрочного использования цифровых объектов, чтобы они были доступны в той или иной форме в будущем. Метаданные цифрового хранения особенно важны для репозиторий, мест, где информационные объекты хранятся и управляются в течение длительного времени.

В области долговременного цифрового сохранения стандартом де-факто для метаданных является подход, предложенный в документе “PREservation Metadata: Implementation Strategies” (PREMIS), созданном рабочей группой в Библиотеке Конгресса США.

Для содействия логической организации набора метаданных PREMIS, рабочая группа разработала 5 компонентов процесса сохранения: Интеллектуальный компонент, Объект, Событие, Права, Агент. Объект, представляет собой абстрактную единицу информации в цифровой форме. Интеллектуальный компонент – это взаимосвязанное содержание объекта, представляющее единое целое, например, книга, карта, фотография, база данных. Интеллектуальный компонент может включать в себя другие интеллектуальные компоненты, например, веб-сайт, который содержит в себе веб-страницу, на которой находится фотография. Интеллектуальный компонент может иметь несколько цифровых представлений. Событие – это любое действие с участием по крайней мере одного объекта и агента в электронном хранилище. Агент – это лицо, организация или программа, участвующая в Событии в жизненном цикле Объекта. Право представляют собой утверждение разрешений и позволенных действий в отношении агента или объекта.

Объект имеет три подвида: файл, битстрим и представление. Файл – это именованный и организованный поток битов, узнаваемый оперативной системой. В данном понимании файл соответствует компьютерному файлу в его обычном понимании, он может быть написан, прочитан или скопирован, имеет имя и соответствующий формат. Битстрим – это поток битов, включенных в отдельный файл, например, файл TIFF с двумя изображениями.

Представление – это набор файлов, которые вместе со структурными метаданными необходимы для правильного понимания Интеллектуального компонента. Например, журнальная статья может вмещаться в один PDF файл, который является Представлением. Другая журнальная статья может состоять из HTML файла и двух изображений, эти три файла образуют Представление.

Предложенный подход может быть эффективно использован для организации долговременного цифрового хранения информационных ресурсов, представленных в репозиториях вузовских и публичных библиотеках Республики Беларусь, так как большинство из них реализовано на программном обеспечении Dspace, которое поддерживает эталонную модель OAIS и различные схемы метаданных.

SUMMARY

Long-term digital preservation aims to ensure that the digital content of traditional socio-cultural institutions (libraries, museums, archives, etc.) remains accessible to user communities for a long period of time and for future generations. The article considers the problems and prospects of organizing long-term digital storage of electronic information resources. It is proposed to use for solving the problems of long-term digital preservation approaches focused on the reference model of the open archival information system (OAIS), described in the ISO 14721:2012 standard. To describe events/actions with a document during archival storage, it is proposed to use the PREMIS metadata model.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Бричковский, В.И. Проблемы и перспективы организации долговременного цифрового хранения электронных информационных ресурсов // Развитие информатизации и государственной системы научно-технической информации: РИНТИ-2021: XX Международная конференция, 18 ноября 2021 года, Минск: доклады. – Минск, ОИПИ НАН Беларуси, 2021. – С. 273–277.
2. Мошкова, Н.А. Особенности хранения электронных документов, опыт ЭОС // Управление документами в цифровой экономике: проблемы взаимодействия: Материалы II Международной научно-практической конференции, 6 ноября 2019 г. Москва: РГГУ, 2019. С. 264–271.
3. Dryden J. The Open Archival Information System Reference Model // *Journal of Archival Organization*. – 2009. London, Taylor & Francis Group – v. 7. – №. 4. – P. 214–217.

ՄՓՅՈՒՌՔԻ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ
DIASPORA PRINTING HERITAGE
PRESERVATION & PROMOTION
СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ ПЕЧАТНОГО
НАСЛЕДИЯ ДИАСПОРЫ

DOI: <https://doi.org/10.52027/18294685-mmh2023.sp>

ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՀՐԱՆ

Երևան, Հայաստան

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ
ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԱՆԿԱՆ ԳԱՄԱՌԻՆ ՄԷՋ (ՀԱՄԱՌՕՏ ԱՎՆԱՐԿ)

Բանալի բառեր՝ Նիկոմիդիոյ անկախ գաւառ, Նիկոմիդիա քաղաք, Պարտիզակ, Արմաշի Վանքի տպարան, Ատաբազար, Օվաճրգ, հայերէն գիրք, հայ պարբերական մամուլ:

Keywords: Nicomedia independent province, Nicomedia town, Bardizag, Armash Monastery printing, Adapazar, Ovajek, Armenian book, Armenian periodical press.

Նիկոմիդիոյ (Բզմիտի) անկախ գաւառը Պոլսամերձ ամենահայախոճ շրջանն էր, որ կը տարածուէր Պոլիսէն արեւելք ու մէկ մասնիկն էր պատմական Բիւթանիոյ: Ըստ տեղւոյն Ազգային առաջնորդարանի 1913 թուականի մարդահամարին, Նիկոմիդիոյ ամբողջ թեմը ունեցած է 45 հայաբնակ գիւղ եւ քաղաք, 13.573 հայ առաքելական տուն՝ 68.041 անձ եւ 61 գործող եկեղեցի, մատուոտ եւ ուխտատեղի [Մարդահամար Նիկոմիդիոյ վիճակի..., 1913, 1: Վիճակացոյց պատկեր եկեղեցեաց..., (1915), 3]: Այս թիւին մէջ չէ ներգրաւուած Արմաշ գիւղն ու անոր ենթակայ Խասկալ հայաբնակ աւանը, որոնք այդ շրջանին անջատուած էին Նիկոմիդիայէն եւ ունէին անկախ կարգավիճակ: Նկատի չեն առնուած նաեւ հայ կաթողիկոսները, բողոքականներն ու կրօնական միւս փոքր խմբաւորումները:

Գաւառի 5 աւաններու մէջ լոյս տեսած են հայերէն գիրքեր ու թերթեր: Մօտաւոր հաշուարկով Նիկոմիդիոյ անկախ գաւառին մէջ (ներառեալ Արմաշը) գործած են հայկական 11 տպարաններ, որոնք միասնաբար հրատարակած են մօտաւորապէս 44 հայերէն գիրքեր, մինչ 1847-1915 թուականներուն հոն լոյս տեսած են 34 ձեռագիր, խմորատիպ եւ տպագիր թերթեր ու հանդէսներ:

Ամփոփ ձեւով անդրադառնանք իւրաքանչիւր աւանի հայկական տպագրական գործունէութեան.

Պարտիզակ գիւղաքաղաքը հարուստ էր իր պարբերականներով, թիւով 22, կամ՝ աւելի, բոլորն ալ ձեռագիր կամ խմորատիպ: Անոնց հնագոյնն է «Բանբեր պարտիզակեան» ձեռագիր շաբաթաթերթը, լոյս տեսած 1847-ին, Յովհաննէս Սուրեն Մկրեանի (1831-1909) խմբագրութեամբ: Երիտասարդ խմբագիրը, աւելի ետք, քահանայ ձեռնադրուելով, տեղափոխուած է Կ. Պոլիս եւ երկար տարիներ վարած է պատրիարքական փոխանորդի զգայուն պաշտօնը:

«Բանբեր պարտիզակեան»ը եղած է ազգային, լրատուական եւ գրական շաբաթաթերթ, ուր տեղ գտած են Պարտիզակը յուզող զանազան յօդուածներ եւ տեղական լուրեր: Աշխատակից մը, օրինակ, խօսելով տեղւոյն Ազգային վարժարանի մասին, առաջարկած է որ վարժարանի «աղքատիկ տղայոց ոտից ամաններ առնուին, որ կարենան ցուրտ եւ տղմուտ օրերը դպրատուն երթալ, որով դպրոցնիս ալ մաքուր կը մնայ այլ եւ այլ աղտեղութիւններէ»: Ան նաեւ առաջարկած է, որ «Աղջկանց դպրատանը մէջ որքան կարելի է նէ՝ ազգային պատմութիւնը մտցունելու ջանք ըլլուի, ինչպէս որ քրիստոնէական վարդապետութիւնը աղէկ սորված են» [Սմբ. (Սեմերճեա ն), 1847, 2]: Թերթէն լոյս տեսած է առնուագն 6 թիւ:

Պարտիզակի թերթերուն մէջ իր բովանդակութեամբ կ'առանձնանայ «Մեղու-գաւառի ձայն» խմորատիպ շաբաթաթերթը, հրատարակուած՝ Դաշնակցութեան տեղոյն մասնաճիւղին կողմէ, 1911-1914 թուականներուն: «Մեղու»ն եղած է Պարտիզակի լաւագոյն թերթը: Ան իր էջերը գրեթէ ամբողջութեամբ նուիրած է տեղական կեանքին՝ դպրոցներուն, մշակութային ընկերութիւններուն, տնտեսական դժուարութիւններուն եւ այլն, կան նաեւ աւանի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւններ, տեղական ժողովրդական երգերու գրառումներ եւ այլն եւ այլն:

Տեղոյն թերթերէն է նաեւ «Պարտիզակ» վեցամսեայ հանդէսը, հրատարակուած՝ Ամերիկեան բարձրագոյն վարժարանի Ընթացաւարտից ընկերութեան կողմէ 1909-1914 թուականներուն, ընդամենը 11 թիւ, իւրաքանչիւրը՝ 48 էջ: Հանդէսը խմբագրուած է Պարտիզակի մէջ, բժ. Յովսէփ Տէր Ստեփանեանի կողմէ եւ տպագրուած է Կ. Պոլիս: Եղած է մանկավարժական, ընկերային, գիտական, աշակերտական, միութենական, գրական, լրատուական եւ դաստիարակչական բնոյթի հանդէս:

Պարտիզակի թերթերէն են նաեւ «Փարոս» ազգային-ընկերական, գրական եւ բարոյական ամսագիրը, հրատարակութիւն՝ տեղոյն Երիտասարդաց քրիստոնէական ընկերակցութեան (Ե. Ք. Ը.- Կ. Մ. Ը. Ա.): Խմբագիրները եղած են՝ Յակոբ Ա. Ալոճեան (Ռոզմերի) եւ Գրիգոր Յ. Մխալեան: Խմբագրուած է Պարտիզակ եւ տպագրուած է Կ. Պոլիս, 1910-1912 թ., ընդամենը 24 թիւ:

Տեղոյն բազում թերթերէն յիշենք նաեւ «Թօհաֆի» խմորատիպ երգիծաթերթը (1867 կամ աւելի առաջ), լոյս տեսած մերթ հայերէն եւ մերթ հայատառ թրքերէն լեզուներով [Տէր-Յակոբեան, 1960, 224-225], «Պարտեզ ազգային ծաղկանց» խմորատիպ թերթը (1867 կամ աւելի առաջ) [նոյն տեղը, 224-225], «Գիշեր» գրական, հայրենասիրական, անկուսակցական խմորատիպ թերթը (1908-1910) [Լեվոնյան, 1934, 54], «Կշիռ» խմորատիպ զանգուարեթերթը, հրատարակուած՝ Գեորգ Յ. Քիւրճեանի խմբագրութեամբ 1908-ին [Բաբոյան, 1986, 72], «Պայքար» կիսամսեայ հանդէսը, հրատարակուած Հնչակեան կուսակցութեան կողմէ, 1912-1914 թթ. [Տէր Խաչատուրեան, 2014, 538] եւ այլն:

Ա. աշխարհամարտի նախօրեակին Պարտիզակի մէջ գործած են հայկական երկու տպարաններ՝ տպարան «Գրասէր» եւ «Ճարեան», որոնք զբաղած են վաճառականական ընթացիկ գործերու տպագրութեամբ: Շրջան մը տպագրած են նաեւ տեղական «Պայքար» կիսամսեայ հանդէսը:

Պարտիզակ տպուած հայերէն գիրքեր ծանօթ չեն մեզի, այլ միայն քանի մը տպագիր կոչեր, որոնք հաւանաբար միեջանի տպագիր կամ խմորատիպ հրատարակութիւններ եղած են [Մեղու, թիւ 8, 3; Մեղու, թիւ 25, 4]:

Նիկոմիդիա քաղաքի հայերէն առաջին թերթը եղած է «Սուրհանդակ» ձեռագիր-բազմացուած զանգուարեթերթը, Համբարձում Քերովբեանի խմբագրութեամբ, լոյս տեսած 1848-ին կամ աւելի առաջ: Քերովբեան, թերթը տեղոյն դպրոցի աշակերտներուն ընդօրինակել տալով, դրկած է Կ. Պոլսոյ ամիրաներուն, որպէսզի գուարճանան. «Այդ թերթը եզական համբաւ ունեցած է այն ատեն եւ մեծ հաճութեամբ կը կարդային, ձեռքէ ձեռք կը պտտէր, այնպէս որ ալ բոլորովին պատառ-պատառ կ'ըլլար» [Զարդարեան, 1911, 116, Գասապեան (Ֆարհատ), 1913, 279]:

Անոր յաջորդած է Աբրահամ Սուրատեանի «Հայրենասէր» քաղաքական, ազգային եւ բանասիրական շաբաթաթերթը, լոյս տեսած 1850-1853 թուականներուն, ընդամենը 77 թիւ: Թերթը կը համարուի հայ պարբերական մամուլի առաջնեկներէն: Հոն կը գտնենք տեղական եւ ազգային լուրեր, մանրավէպեր, թարգմանութիւններ, օգտակար գիտելիքներ եւ այլն: «Հայրենասէր»ը տպուած է խմբագրի սեփական տպարանին մէջ: Խմբագիրը միաժամանակ եղած է նաեւ անոր տպագրիչը: Վկայութիւն կայ այն մասին, որ տպարանի տառերը բաւարար չըլլալով, երբ կարելի չէ եղած թերթին մեծագիր էջերը մէկ անգամով տպագրել, 17 ամեայ Սուրատեան ստիպուած իւրաքանչիւր էջ տպած է երկու անգամով՝ կէս առ կէս:

«Հայրենասէր»ի առաջին թիւը ունեցած է ընդամենը 3 տպաքանակ, բաժանորդներու թիւով, բայց աւելի ետք, միայն Կ. Պոլսոյ մէջ, բաժանորդներու թիւը հասած է 300-ի, ինչ որ այդ օրերու համար բացառիկ երեւոյթ էր: Թերթը մեծ հետաքրքրութիւն ստեղծած է իր շուրջ ո՛չ միայն Նիկոմիդիոյ, այլ նաեւ Կ. Պոլսոյ մէջ, եւ շատեր համակրական նամակներով քաջալերած են խմբագիրը եւ փափաք յայտնած են ծանօթանալու հետը [Զարդարեան, 1911, 117-118]:

1 Յունուար 1910-ին Նիկոմիդիոյ մէջ սկսած է լոյս տեսնել «Բիւթանիա» ազգային, գրական, քաղաքական եւ տնտեսական տասնօրեայ գաւառաթերթը, որ աւելի ետք վերածուած է շաբաթաթերթի: Ան պաշտօնական օրկանն էր Հ. Յ. Դաշնակցութեան տեղական մարմինն, բայց քաղաքին մէջ տպագրական գործի դժուարութիւններուն պատճառով խմբագրուած է Նիկոմիդիոյ մէջ ու տպագրուած՝ Կ. Պոլիս, իսկ 20 Մայիս 1911-ին վերջնականապէս տեղափոխուած է Ատաբազար, որ մինչ այդ օժտուած էր արդիական տպարանով, եւ հուսկ 1913-ին, երբ կառավարութիւնը դադարեցուցած է Դաշնակցութեան Կ. Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթը, «Բիւթանիա»-ի արտօնագիրը փոխանցուած է «Ազատամարտ»-ին եւ ան ժամանակ մը լոյս տեսած է այդ անունով:

Նիկոմիդիոյ մէջ գործած են մէկէ աւելի տպարաններ, ինչպէս՝ Ս. Մաւեանի տպարանը, որ Արմաշի վանքի նախկին տպարանն էր, գոր 1878-1880 թուականներուն Մաւեան զայն գնելով՝ տեղափոխած է Նիկոմիդիա [Գասապեան, 1913, 283-284] եւ Օննիկ Տ. Ազարեանի տպարանը, հիմնուած Յունուար 1912-ին, որ զբաղած է առաւելաբար վաճառականական ընթացիկ տպագրութիւններով [Ալպոյաճեան, 1932, 88]:

Նիկոմիդիա քաղաքին մէջ տպուած հայերէն գիրքեր ծանօթ չեն մեզի:

Արմաշը հայկական փոքրիկ գիւղ մըն էր, որ վարչականօրէն մերթ պատկանած է Նիկոմիդիոյ գաւառին եւ մերթ դուրս մնացած է անկէ: Գիւղը ծանօթ էր առաւելաբար իր Չարխափան Ս. Աստուածաձնի պատմական վանքով, որ 1889-ին ունեցած է իր Դպրեվանքը, որ գործած է Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի հովանիին տակ եւ իր գոյութեան ընդամենը քառորդ դարու ընթացքին Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ ընծայած է տասնեակ զարգացած ու լուսաւոր եկեղեցականներ:

Վանքը 1863-ին ունեցած է իր սեփական տպարանը, ուր տպուած են բազմաթիւ կրօնական, դաւանաբանական, պատմական եւ գիտական գիրքեր, ինչպէս նաեւ Վանքի պաշտօնաթերթ «Յոյս» ամսագիրը: Արմաշի տպարանը իր հրատարակութիւններով կոչուած էր պաշտպանելու Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքներն ու շահերը եւ թումբ կանգնելու կաթոլիկ եւ բողոքական քարոզչութեանց դէմ, եւ պիտի հաստատել, որ ան լաւագոյնս հաւատարիմ մնացած է իր կոչումին: Տպարանի հիմնադիրն է Ստեփաննոս արք. Մաղաքեան [Պիպերեան եւ Եղիշեան, 1960, 145-146], իսկ պատասխանատու տնօրէնը՝ Գեորգ վրդ. Ալեքսանեան, որ շրջան մը նաեւ խմբագրած է «Յոյս» ամսագիրը [Արմաշու Դպրեվանքին..., 1914, 22, 25, Ստեփանյան, 1973, 47]:

Հետաքրքրական է, որ 1866-ին մշակուած Վանքի Կանոնագրութեան մէջ առանձին յօդուածներ կան վանքի տպարանին ու անոր տեսուչի պարտաւորութիւններուն մասին: Ահա թէ ինչ ըսուած է անոր 38-րդ յօդուածին մէջ.

«Տպարանի վերատեսչին պաշտօնն է տպարանի նիւթական մատակարարութիւնը, եւ մատենադարանի տեսչութիւնը. Իւր իրաւասութեան ներքեւ են տպարանի գործակալներն եւ գրապահը, եւ ասոնց վերաբերեալ բոլոր ծախքերն ինք կմատակարարէ խորհրդով տնօրէն ժողովոյ: Իսկ տպագրելի գրոց եւ գրուածոց համար չորս հոգիէ բաղկացեալ ուսումնական խորհուրդ մը կայ, եւ որուն անդամ են հոգաբարձուն եւ վերատեսուչը, եւ միւս երկուքը տնօրէն ժողովը կ'ընտրէ» [Կանոնագիր Չարխափան..., 1866, 8-9]:

ԺԷ.-ԺԸ. դարերու հայ տպարանները գեղեցիկ աւանդոյթ մը ունէին, երբ իւրաքանչիւր տպարանի երախայրիքը պէտք է ըլլար «Մաղմոսարան»ը: Նոյն այս աւանդոյթը յարգած է նաեւ Արմաշի նորահաստատ տպարանը, որ 1865-ին լոյս ընծայած է «Գիրք սաղմոսաց Դաւթի» հատորը (320 էջ), որուն յաջորդած են կրօնական, բարոյախօսական, դաւանաբանական, աստուածաբանական, պատմական, գրական, բժշկական, փիլիսոփայական եւ այլ բովանդակութիւններով գիրքեր, դպրոցական դասագիրքեր եւ այլն, ընդամենը աւելի քան երեք տասնեակ հրատարակութիւններ: Անոնցմէ յիշենք Յովհաննէս պատուելի Մաւեանի՝ Կեսար Քանդուի «հետեւողութեամբ շարադրած» «Բարոյական դաստիարակութիւն» գիրքը², Աբբայ Կեթէի «Հերձուածող պապութիւն կամ Հռովմ ի յարաբերութեան ընդ Արեւելեան եկեղեցիս» գործի Ա. հատորը, որուն թարգմանութիւնը կատարած են վանքին քանի մը միաբան վարդապետները³, Ներսէս արք. Վար-

² Տպուած 1864-ին, 228 էջ:

³ Տպուած 1869-ին, 2 չհ., Է., 139 էջ:

Ժապետեանի «Ուսումն համաբարբառ Աւետարանի Տեառն մերոյ ի Տ. Ներսէս արքեպիսկոպոսէ Վարժապետեան պատրիարքէ հայոց Կ. Պօլսոյ» մեծածաւալ գործը⁴, բժ. Գեորգ Ճերրահեանի «Ընդարձակ առողջաբանութիւն ի պէտս համայն հայազգի անձանց արանց ծերոց տղայոց օրիորդաց եւ նորածին երախայից» հաստափոր հատորը⁵, Մկրտիչ Էմինեանի «Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեանց» գիրքի ֆրանսերէնէ կատարուած թարգմանութիւնը⁶, եւ այլն:

Վանքի հրատարակութիւններուն մէջ իր արժէքով կ'առանձնանայ բժիշկ Բարունակ պէյ Տէրուհիսանի (1824-1868) «Հանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան» մեծարժէք գործը, որ 1847-ին Կ. Պոլսէն դէպի Պաղտատ կատարուած հեղինակի ուղեւորութեան նկարագրութիւնն է: Հոն կան հայկական գաւառներու մասին պատմական, տեղագրական, ազգագրական եւ ժողովրդագրական այնպիսի կարեւոր մանրամասնութիւններ, որոնց ընդհանրապէս չենք հանդիպիր տպագիր այլ աղբիւրներու մէջ⁷:

Օգոստոս 1864-ին Արմաշի Չարխափան Ս. Աստուածածին վանքի միաբանական ուխտը ունեցած է իր պաշտօնաթերթը՝ «Յոյս դրօշակ հայրենեաց ամսագիր բանասիրական» անունով կրօնական, բարոյական եւ բանասիրական ամսագիրը, որուն խմբագրութիւնը վարած են Խորէն վրդ. Աշըգեան, Գեորգ վրդ. Ալեքսանեան, Ստեփան վրդ. Փափագեան:

«Յոյս»ը, որոշ ընդհատումներով, շարունակուած է մինչեւ Դեկտեմբեր 1877: Անոր իւրաքանչիւր թիւը բաղկացած է 16-24 էջէ: Հրապարակած է լուրեր Արմաշի Վանքէն եւ Նիկոմիդիոյ առաջնորդական թեմէն, գրական գործեր՝ չափածոյ եւ արձակ, դաստիարակչական-մանկավարժական յօդուածներ, պատմական ուսումնասիրութիւններ եւ այլն: Ան կը համարուի իր օրերու հայերէն լաւագոյն հանդէսներէն մէկը:

Ատաբազարը Նիկոմիդիոյ գաւառի ամենահայահոծ քաղաքն էր. ըստ Նիկոմիդիոյ Ազգային առաջնորդարանի 1913-ի մարդահամարին՝ ունեցած է 2416 հայ առաքելական տուն՝ 11858 անձ եւ առաքելական համայնքի վեց եկեղեցի [Մարդահամար Նիկոմիդիոյ վիճակի..., 1913, 1, 3]:

Հոն հայկական տպարան հիմնելու եւ թերթեր լոյս ընծայելու փորձերը սկսած են Օսմ. սահմանադրութենէն ետք միայն, երբ 1 Սեպտ. 1911-ին, 10 անդամներով հիմնուած է «Ատրուշան տպարանական միութիւն»ը, որուն նպատակն էր հիմնել տպարան մը եւ հրատարակել «Բիւթանիա» տասնօրեայ թերթը: Անոնք իրենց միջոցներով գոյացուցած են 200 օսմ. ոսկի, եւ նոյն տարին Կ. Պոլսոյ Ղալաթիա թաղամասի Օ. Բարսեղեան եւ Ընկ.էն գնուած բազկամամուլով մը հիմնած են «Ատրուշան» տպարանը, որ քաղաքի առաջին տպարանն էր [Բիւթանիա, 1 Ապրիլ 1911, 396, Թէոդիկ, 1912, 145, թիւ 217, Ալպոյաճեան, 1932, 88]:

Տպարանը 1912-ի սկզբնաւորութեան ստացած է նոր տառերու ճոխ եւ այլազան հաւաքածոյ մը, որով կարող պիտի ըլլար տպելու գիրքեր, վաճառականական ամեն տեսակի գործեր, նամակագլուխներ, փոխանակագրեր, այցետոմսեր, գեղարուեստական հրատարակութիւններ, հարսանեկան հրաւերներ, մահազոյներ, եւ այլն [Բիւթանիա, Ատաբազար, 1912, թիւ 9, 563]:

Տարի մը ետք, Ընկերութիւնը ստանձնած է նաեւ տեղոյն «Բիւթանիա» գաւառաթերթին հրատարակութիւնը, բայց ծագած անհամաձայնութիւններու պատճառով լուծարուած է ու տպարանի սարքերը վաճառուած են ընկերութեան անդամներէն Յարութիւն Գ. Աթանասեանին, որ առանձինն շարունակած է գործը ու կարճ ժամանակ անց տպարանի կողքին ստեղծած է նաեւ կազմատունի բաժին մը [Պիպերեան եւ Եղիշէեան, 1960, 259, Ա. Պ.ի (Արտաշէս Պիպերեանի) վկայութիւնը]:

Տպարան «Ատրուշան»ը, իր երկու շրջաններով, լոյս ընծայած է առ նուազն 12 հայերէն գիրքեր, որոնցմէ մեզի ծանօթ առաջին գործը Մկրտիչ Յ. Ազարեանի (ըստ Թէոդիկի՝ Յովհ. Ազարեան [Թէոդիկ, 1912, 145]) «Ամէնուն բարեկամը» հատորն է, տպուած 1911-ին, 16 էջ [Հայ գիրքը 1901-1920 թվականներին, 2007, 331]: Անոր տպած գործերէն են նաեւ Կ. Յովհաննէսեանի (Սօս-Վանի)

⁴ Տպուած 1875-ին, 8 չհ., ԻԲ., 733 էջ:

⁵ Տպուած 1878-ին, Ը., 607 էջ:

⁶ Թարգմանիչ՝ Յովհաննէս Պրոսպի Տ. Կարապետեան Տէրոյենց, 1875, 77, 2 չհ. էջ:

⁷ Տպուած 1876-ին, 260 էջ:

կազմած «Հայկական պարերգներ» հատորը⁸, Ջարեհ Պլպուլի բանաստեղծություններու «Ընդվզում» ժողովածուն⁹, տպարանատեր Յարութին Գ. Աթանասեանի «Տարերք թուաբանութեան-Դասընթացք տարրական ուսողութեան» մեծածաւալ դասագիրքը, տպագրուած հաւանաբար 1911-1912 թուականներուն (528 էջ), տեղւոյն Ս. Հրեշտակապետ թաղի դպրապետ, ուսուցիչ Գրիգոր Միսեանի «Հայ ժողովուրդին նոր երգարանը» հատորը, որ հայերէն եւ հայատառ թրքերէն երգերու ժողովածու մըն է¹⁰, տեղացի ուսուցիչ Յովսէփ Մելքոնեանի երկու գործերը՝ «Համագգային մեծ տօնը եւ պարտիզակցին» եւ «Վերածնունդը»¹¹ եւ այլն:

Տպարանը գործած է մինչեւ 1915 թ.: Աթանասեան իր յուշերուն մէջ պատմած է, թէ ինչպէս, 1915-ին, տեղւոյն հայութեան արքայի հրամանէն ետք, 300 օսմ. ոսկի արժող այս տպարանը մեծ դժուարութեամբ կրցած է վաճառել ընդամենը 25 ոսկիի [Աթանասեան, գործ 74, 14]:

Ատաբազարի մէջ 1914-ին հիմնուած է նաեւ Ս. Ալթունեանի տպարանը, որուն գործունէութեան մասին ծանօթութիւններ կը պակսին մեզի [Ալպոյաճեան, 1932, 88]:

Ատաբազարի մէջ 26 Յունիս 1910-ին, Ասոյի, Անդրանիկ Կենճեանի եւ Բանուորի (Երուանդ Թովոյզեան) խմբագրութեամբ հրատարակուած է «Երկիր» թերթը, օրկան՝ տեղւոյն Հնչակեան մասնաճիւղի, որ խմբագրուած է Ատաբազար ու տպագրութիւնը կատարուած է Կ. Պոլիս: Թերթը, յաջորդ տարի տեղափոխուած է Պոլիս ու կարճ ժամանակ անց՝ դադրած [Բաբլոյան, 1986, 82, Տէր Խաչատուրեան, 2014, 512]:

Նիկոմիդիա գաւառի հայաբնակ **Օվաճրգ** գիւղին մէջ, Օսմ. սահմանադրութեան սկզբնական շրջանին տպուած է «Քնարիկ» խմորատիպ շաբաթաթերթը Գրիգոր Տատուրեանի խմբագրութեամբ (բանաստեղծ Ահարոնի փոքր եղբայրը), ընդամենը 2-3 թիւ: Թերթին մէջ, ի միջի այլոց, «հանգամանօրէն» գրուած է գիւղի հիմնարկութեան աւանդութիւններուն մասին [Գասապեան, 1912, 34, 286, Մինասեան, 2005, 36]:

Ամփոփելով՝ ըսենք, որ Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք նոր շունչ առած գաւառի տպագրական կեանքը, որ կը խոստանար նորանոր գործերով հարստացնել հայ գրատպութիւնը, միանգամընդմիջտ դադրեցաւ 1915 թ. Հայոց ցեղասպանութեան հետեւանքով, եւ 1918 թ. զինադադարէն ետք Նիկոմիդիոյ շրջան վերադարձած սակաւաթիւ վերապրողները, որեւէ ձեւով չկարողացան վերականգնել նախորդ տասնամեակներուն ստեղծուած տպագրական հարուստ աւանդոյթները, եւ թուրք միլիական շարժման հզօրացումով, անոնք եւս կամ կոտորուեցան եւ կամ լքեցին իրենց հայրենի բնակավայրերը ու տարտնուեցան աշխարհով մէկ, եւ այդպիսով վերջ գտաւ հայկական Նիկոմիդիոյ դարաւոր պատմութիւնը:

SUMMARY

The volume is dedicated to the history of Armenian printing and Armenian periodical press of the independent province of Nicomedia (Izmid) of the Ottoman Empire. Armenian books and newspapers were published in 5 towns of the province. According to rough estimate, there are 11 Armenian printing houses operating in the entire province (including Armash), which together have printed approximately 44 Armenian books. There, 34 hand and type copied, as well as printed newspapers and magazines were published between 1847-1915.

22 hand copied newspapers were published in the town of Bardizag in 1847-1915.

The most famous newspaper of the town of Nicomedia was Apraham Mouradian's "Hayrenaser" weekly newspaper, published in 1850-1853.

The printing house of the Armash Monastery was founded in 1865 and in the course of about 15 years it published about 30 books and "Huys" ("Hope") magazine.

"Adrushan" printing house of Adapazar town published 12 Armenian books. The city also had several Armenian-language newspapers, and finally, the village of Ovajak had one hand-copied newspaper.

⁸ Տպուած 1912-ին, 42 էջ:

⁹ Տպուած 1912-ին, 14 էջ:

¹⁰ Տպուած 1914-ին, Ը., 276 էջ:

¹¹ Տպուած 1913-ին, 15, 1 չհ. էջ եւ 19 էջ:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Աթանասեան Յարութին Գ., «Ատաբազարէն Տէր Զօր», ձեռագիր յուշագրութիւն, Հայաստանի ազգային արխիւ, ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 74:
2. Ալպոյաճեան Արշակ, Հայերը եւ տպագրութիւնը // Հայրենիք ամսագիր, Պոսթոն, Յուլիս 1932, թիւ 9 (117), էջ 78-90:
3. Արմաշու Դպրեվանքին 25 ամեայ յոբելեանին առթիւ 1889-1914, Կ. Պոլիս, Առետրական նոր տպարան Մ. Յովակիմեանի, 1914, 16 չհ., 416 էջ:
4. Բաբոյան Մ. Ա., Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1986, 472 էջ:
5. «Բիւթանիա», Իզմիտ, 1911, թիւ 9, էջ 396:
6. «Բիւթանիա», Ատաբազար, 1912, թիւ 9, էջ 563:
7. Գասապեան Մինաս Գ. (Ֆարհատ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ - Կ. Պոլիս, տպագրութիւն «Ազատամարտ»ի, 1913, 1 չհ., 314 էջ:
8. Հայ գիրքը 1901-1920 թվականներին / Կազմողներ՝ Գյուլումյան Օ., Ադամյան Ա., Թադեւոսյան Ս., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Սահակյան Ա., Երեւան, «Գիրք» հրատարակչութիւն, 2007, XII, 820 էջ:
9. Զարդարեան Վ. Գ., Յիշատակարան, Բ. հատոր, Կ. Պոլիս, տպագրութիւն Օսմ. գործակցական ընկերութեան, 1911, 188 էջ:
10. Թէոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, հրատարակչութիւն եւ տպագրութիւն Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, 1 չհ., 192 էջ, Ը էջ:
11. Լևոնյան Գարեգին, Հայոց պարբերական մամուլը, Երեւան, հրատարակչութիւն Մելքոնեան ֆոնտի, 1934, 229 էջ:
12. Կանոնագիր Չարխափան Ս. Աստուածածնի վանաց յԱրմաշ-1866-ՌՅԺԵ, հաւանաբար տպ. Չարխափան Ս. Աստուածածնի վանքի, 1866, 10 էջ:
13. Մարդահամար Նիկոմիդիոյ վիճակի հայ բնակչութեան (1913 թ.) եւ Վիճակացոյց պատկեր եկեղեցեաց վիճակին Նիկոմիդայ (1915 թ.), ձեռագիր վիճակացոյցներ, Հայաստանի Ազգային արխիւ, ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 111, թերթ 1-4:
14. Մեղու, խմորատիպ շաբաթաթերթ, Պարտիզակ, 1912, թիւ 8, էջ 3:
15. Մեղու խմորատիպ շաբաթաթերթ, Պարտիզակ, 24 Յունիս 1912, թիւ 25, էջ 4:
16. Մինասեան Միհրան, Բանաստեղծ Ահարոն Տատուրեանի անտիպ նամակները Սարգիս Մելեանին // Բագին հանդէս, Պէյրութ, Մարտ 2005, թիւ 1, էջ 28-37:
17. Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին / Պիպերեան Արտաշէս եւ Եղիշէեան Վարդան (խմբագրողներ), Փարիզ, տպարան Տէր Յակոբեան, 1960, 1 չհ., 751 էջ:
18. Սմբ. (Սէմէրճեա՝ն) Միհ. Աբրահամ, Անվերնագիր յօդուած // Բանբեր պարտիզակեան հանդէս, Պաղչէճիկ (Պարտիզակ), 1847, թիւ 6, էջ 2:
19. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, Ա. հատոր, Երեւան, «Հայաստան» հրատարակչութիւն, 1973, էջ 47:
20. Տէր Խաչատուրեան Արտաշէս, Հայ մամուլի մատենագիտական գործեր, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց՝ Կ. Յովհաննէսեան, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան հրատարակչատուն, 2014, 696 էջ:
21. Տէր-Յակոբեան Յակոբ, Պարտիզակը խատուտիկ. Յաւելուածաբար՝ Մանուշակ եւ իր հէքեաթները, Փարիզ, տպարան Տէր-Յակոբեան, 1960, 10 չհ., 525 էջ:

**ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

Բանալի բառեր՝ Հայաստան-արաբական աշխարհի հարաբերություններ, Հայաստան-Քուվեյթ հարաբերություններ, Քուվեյթի հայ համայնք, հայ մամուլ, Քուվեյթի հայ մամուլ, «Հայ մամուլ» շտեմարան:

Keywords: Armenia-Arab world relations, Armenia-Kuwait relations, Armenian community of Kuwait, Armenian press, Armenian press of Kuwait, “Armenian Press” database.

Սույն հոդվածի թեմայի գիտագործնական կարևորությունը, ճանաչողական նշանակությունն ու արդիական հնչեղությունը պայմանավորված է նաև հայագիտության հիմնահարցերի դիտարկման ու ուսումնասիրման անհրաժեշտությամբ: Քուվեյթի հայ մամուլի դիտարկումն ու արժևորումը կարևորվում է նաև ազգային արժեհամակարգի, գաղափարախոսության և ինքնության դիտանկյունից:

**Հայաստան-Քուվեյթ հարաբերությունները Հայաստան-արաբական
աշխարհի հարաբերությունների համատեքստում**

Հայերի մշակութային, առևտրական և քաղաքական բնույթի շփումներն արաբա-սեմական աշխարհի հետ ունեն բազմադարյան պատմություն և իրենց արմատներով գնում են դարերի խորքերը [Հովհաննիսյան, 2003, 65]: Հայ արևելագիտության ձևավորման ակունքները թվագրվում են առնվազն 5-րդ դարով [Հովհաննիսյան, 2006, 5]: Հայաստանի և հայ ժողովրդի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար, ի շարս այլ պատմական աղբյուրների, կարևոր նշանակություն ունեն նաև արաբ մատենագիրների (պատմիչների և աշխարհագրագետների) երկերը [Արաբական աղբյուրներ: Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր, հտ.Գ, 2005, 11]: Հայ ժողովրդի պատմության դարակազմիկ փուլերն այս կամ այն չափով արտացոլվել են արաբական պատմագիտության մեջ: [Hovhannisyan, 2012, 7]: Ուսումնասիրություններից մեկում լուսաբանվում է Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագիտության քննական լույսի ներքո: Հատկանշական է հետևյալ ձևակերպումը. «Արաբների անունը հայերի պատմության մեջ կգրվի ոսկե տառերով» [Հովհաննիսյան, 2004, 173]: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո զանազան արաբական երկրներում ձևավորվեցին հայկական համայնքներ, որոնք իրականացնում են նշանակալից դեր հյուրընկալ երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում՝ Հայաստան-արաբական երկրներ հարաբերություններում իրականացնելով նաև կամրջի գործառույթ: Արաբական երկրներն առաջիններից էին, որ ճանաչեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության անկախությունը՝ հաստատելով դիվանագիտական հարաբերություններ: Արաբական պետությունների լիզայի անդամ պետությունների կողմից Արցախյան հիմնահարցն ընկալվում է որպես ոչ կրոնական հակամարտություն [Hovannisyan, 1998, 51, 56]:

Հայաստանի Երրորդ Հանրապետությունն ընդգրկվեց միջազգային հարաբերությունների ոլորտում՝ աստիճանաբար իր արժանի տեղը գրավելով այդ կարևոր համակարգում [Հովհաննիսյան, 2020, 104]: 1992 թ. Քուվեյթը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Քուվեյթը Հայաստանի համար կարևորվում է քաղաքական և տնտեսական առումներով: Հայաստանը նույնպես Քուվեյթի համար որոշակի քաղաքական-ռազմավարական և տնտեսական կարևորություն է ներկայացնում՝ որպես Ռուսաստանի և Եվրոպական երկրների հետ կապող օղակ: Հայաստանի և Քուվեյթի միջև ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են տարբեր ոլորտներում համագործակցությանը: [Հովհաննիսյան, 2007, 671-673]:

Քուվեյթի հայ համայնքը

Քուվեյթը գտնվում է Արաբական թերակղզու հյուսիս-արևելքում՝ Պարսից ծոցի ափին: Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում սահմանակցում է Իրաքի, հարավում և հարավ-արևմուտքում Սաուդյան Արաբիայի հետ: Արևելքում մոտ 220 կմ երկարությամբ ափերը ողողվում են Պարսից ծոցի ջրերով [Պոտոսյան, Հովհաննիսյան, 2009, 151]: Պարսից ծոցն արաբներն անվանում են նաև Արաբական ծոց [Բադալյան, 2011, 634]: Մայրաքաղաքն Ալ-Քուվեյթն է: Իսլամը համարվում է պաշտոնական կրոն, պաշտոնական լեզուն արաբերենն է: Ըստ պետական կարգի՝ սահմանադրական միապետություն է՝ էմիրություն: Իշխանությունը բաժանված է 3 ճյուղերի՝ գործադիր, օրենսդիր և դատական: Անդամակցում է ՄԱԿ-ին, Արաբական պետությունների լիգային, Ծոցի երկրների համագործակցության խորհրդին, Իսլամական համագործակցության կազմակերպությանը և այլ միջազգային կազմակերպությունների [Հովհաննիսյան, 2007, 600-601]: Քուվեյթահայ համայնքի առնչությամբ հակիրճ ներկայացնենք որոշ իրողություններ: Հայերը Քուվեյթում սկսել են բնակություն հաստատել 1950-ական թթ. սկզբից՝ պայմանավորված նավթային գործունով: Համայնքը սկսել է կազմավորվել 1954 թ.-ից, երբ տեղի հայերը ձևավորել են իրենց առաջին համայնքային կառույցը՝ Ազգային վարչությունը: 1956 թ. քուվեյթահայ համայնքն անցել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանավորության ներքո: 1962 թ. քուվեյթահայերը ստացել են համայնքի օրինականությունը հաստատող պետական վկայագիր: 1963 թ. կառուցվել է եկեղեցի-հանդիսասրահ: 1982 թ. ստեղծվել է Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմը՝ Էլ Քուվեյթ կենտրոնով: 1958 թ.-ից գործում է կիրակնօրյա դպրոց: 1960 թ.-ին հիմնվել է Հայ-արաբական դպրոցը: 1961 թ. ստեղծվել է Քուվեյթի Հայ ազգային վարժարանը, որը 1969-1970 թթ. ստացել է միջնակարգ դպրոցի կարգավիճակ: Մինչև 1991 թ. Ծոցի պատերազմը, Քուվեյթում բնակվել է շուրջ 10-12 հազար հայ: Աշխույժ է համայնքի մարզական և մշակութային կյանքը: 4 տարին մեկ ընտրվող թեմական ժողովը նշանակում է Քուվեյթի հայ համայնքի վարչություն, որը կազմակերպում է համայնքի ազգային-եկեղեցական կյանքը: Գործում է Ս. Վարդանանց հայկական եկեղեցին: Քուվեյթահայ համայնքը զգալի աջակցություն է ցուցաբերել Սպիտակի 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից տուժած հայրենակիցներին, ինչպես նաև Արցախին [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, [617-618]:

Համայնքը փոխադարձ հարգանքի ու գործակցության վրա հիմնված բավական լավ պաշտոնական հարաբերություններ ունի երկրի իշխանությունների հետ: Հայերն իրենց ներդրումն են ունեցել Քուվեյթի բազմակողմանի զարգացման գործում [Փաշայան, Հարությունյան, 2012, 16-17]:

Հայ մամուլի առաքելությունը. Քուվեյթի հայ մամուլը

Հայկական տպագիր ժառանգության մեջ որպես պատմական աղբյուր հույժ կարևոր արժեք է ներկայացնում նաև հայ մամուլը՝ արտացոլելով հոգևոր-մշակութային, գիտակրթական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի իրողություններ [Ղազինյան, 2020, 44]: «Հայ մամուլը, մանաւանդ արտասահմանի մեր կեանքին մեջ ունի սրբազան պարտականություն մը՝ հայապահպանման սրբազան գործը: ...Կարելի է անվարան ըսել, թէ հայ մամուլին գոյութիւնն ու կենսունակութիւնը համեմատական է, կամ չափանիշ կը կազմէ անոր հրատարակութեան վայրին հայ գաղութին հայապահպանման եւ կենսունակութեան: Այն գաղութները որոնք կորսնցուցած են իրենց հայ մամուլը, հետզհետէ շիջումի նշաններ ցոյց կու տան» [Տէր-Խաչատուրեան, 2014, 13]: Ներկայացնենք Քուվեյթում տպագրված հայ մամուլը:

1. Աւագիստան.-Քուէյթ.-1965 [Տէր-Խաչատուրեան, նույն տեղում, 44]:
2. Ծիծեռնակ : Պարբերաթերթ Քուէյթի հայ ազգային երկրդ. վարժարանի. - Քուէյթ, 1979-1981. - 84 էջ : նկ. : 28,5 x 22 սմ. բնագիրը՝ հայերեն, անգլերեն, արաբերեն [Հայաստանի ազգային գրադարանի կայք, «Հայ մամուլ» շտեմարան]:
3. Ազդարար : Տեղեկատու Առաջնորդարանի հայոց Քուէյթի եւ Արաբական ծոցի երկիրներու թեմին. - Քուէյթ, 2009. - 16 էջ : նկ. բնագիրը՝ հայերեն

Կայքէջ՝ <http://www.aztarar.com/> [Հայաստանի ազգային գրադարանի կայք, «Հայ մամուլ» շտեմարան]:

Քուվեյթում տպագրված «Օիծեռնակ» պարբերականից ներկայացնենք որոշ մեջբերումներ: «Հողին արժեքը» վերտառությամբ նյութում կարդում ենք հետևյալը: «Հողը խորհրդանշն է հայրենիքին. այս կետին վրայ հիմնուելով, շատ դիրքերում կարելի է ներկայացնել և ըմբռնել հողին արժեքն ու անհրաժեշտությունը: Հողին արժեքը կարելի է ներկայացնել երկու անկիւններէ դիտած՝ նիւթական եւ բարոյական: Նիւթական արժեք ըսելով, կը հասկնանք բոլոր այն այլազան բոյսերը, որոնք կը ցանուին հողին վրայ, առաւել բոլոր այն հանքային անսպառ հարստութիւնները, որոնք թագնուած են իր մէջ, ինչպէս ոսկին, արծաթը, նաւթը, եւլն...: Վերոյիշեալ բնական նիւթական հարստութիւնները անշուշտ անհրաժեշտ ազդակներ են ազգի մը գոյատեւման յառաջդիմութեան և մշակութային զարգացման համար, սակայն ասոնց մէջ չէ որ կթագնուի հողին բուն արժեքը, այլ անոր բարոյական հարստութիւններուն մէջ: Խորքին մէջ հողն է որեւէ ազգի մը խարիսխը, անոր ոյժ ներշնչող աղբիւրը, որովհետեւ անոր մէջ մխրճուած են իր արմատները, իր պատմութիւնը: Պապենական հողն է որ կիրահրէ ազգային զգացումները և կ'ամրապնդէ ազատութեան ոգին ազգի մը զաւակներուն սրտին մէջ: Դարձեալ հողին վրայ է որ ազգը կը պահէ իր լեզուն, հաւատքը, կենցաղը, բարքերը և տոհմային նկարագիրը: Հետեւաբար, կարելի է եզրակացնել, թէ առանց հողի անկարելի է որ ազգ մը պահէ իր գոյատեւումը»... [Զաքարեան, 1980-1981, 30-31]: «Իմ Մայր Հայրենիքս» վերնագրով նյութում ևս ներկայցված են տպավորիչ իրողություններ՝ Հայաստան այցելության առթիվ: «Սարդարապատի պատմութիւնը մեզ կը կանչէր իր գիրկը: «Զանգեր Ղօղանջէ ք» . «Սրբազան քաջերին կանչէք» երգելով, Սարդարապատ մտանք: Դժբախտաբար, կարող չեմ իմ զգացումներս ամբողջութեամբ գրել. միայն այսչափը գրեմ, որ իրօք հիւանալի հայրենիք մը ունինք, մեր սքանչելի Գեղարդը, Սանահինը, Հաղպատը, Մեսրոպ Մաշտոցի դամբարանը, վանքերը, մեր աննման լեռները, ձորերը, մեր անմահ բանաստեղծներու տուն թանգարանները, մեր դաշտերը, այգիներն ու պարտէզները: Երբ Մեւանայ լիճը զացինք, հայոց պատմութիւնը յիշեցի, Աշոտ Երկաթը, մեր փայլուն անցեալը»... [Յակոբեան, 1980-1981, 33-34]: «Լուրեր Հայաստանէն» վերտառությամբ նյութում հակիրճ անդրադարձ է կատարված քաղաքամայր Երևանին: Նշված են այլ քաղաքներ ևս: Ներկայացված են տեղեկություններ Երևանի պետական համալսարանի, Գիտությունների ակադեմիայի, Բյուրականի աստղադիտարանի, դպրոցների, գրադարանների մասին և այլն: Նշվում է, որ Հայաստանի 1330 գրադարաններում առկա են շուրջ 17 մլն հատոր գրքեր: Նշված է նաև որոշ հուշարձանների, մետրոպոլիտենի մասին և այլն [Լուրեր Հայաստանէն, 1980-1981]: Սույն պարբերականի էջերում զետեղված են այլ թեմաներ ևս: Անդրադառնանք «Ազդարար» պարբերականին: Ներկայացնենք տարբեր տարիների զանազան համարներում տպագրված նյութերի որոշ խորագրեր: Թեմաների բաժանումն ինչ-որ չափով կրում է պայմանական բնույթ, քանզի առկա են նաև միաժամանակ մեկ և ավելի թեմաների վերաբերող նյութեր:

Հայոց պատմություն, Արցախյան հիմնահարց, Հայոց ցեղասպանություն - Անիի աւերակներուն նուիրումը դասախօսութիւն, ուխտագնացութիւն դէպի հայրենիք, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց 25-ամեակի նշում, Հայաստանի Հանրապետութեան եւ մայիսեան հերոսամարտերուն 100-ամեակի նշում, Հայաստանի զինուած ուժերու 22-րդ տարեդարձը, երկու Վեհափառ Հայրապետները պատմական այցելութիւն տուին ազատ եւ անկախ Արցախ, ապրիլեան ոգեկոչում եւ հսկում Քուէթի մէջ, միջազգային ճանաչման հարցին մէջ Արցախ կ'արձանագրէ շօշափելի յաջողութիւններ», Շուշիի ազատագրումը, Հայոց ցեղասպանութեան 99-ամեակի յիշատակում եւ բողոքի ցոյցեր Սփիւռքի տարածքին, միջազգային լրատուամիջոցներ՝ Հայոց ցեղասպանութեան մասին:

Դավանաբանություն- Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա.Կաթողիկոսին հայրապետական պատգամը հայ ժողովուրդին, Քուէթի մէջ «Եկեղեցւոյ հոգեւոր եւ ազգային առաքելութիւնը եւ արդի մարտահրաւերները» խորագրով լսարան, Վարդավառի տօնը, Տեառնընդառաջի խարոյկը ճարձատեցաւ Քուէթի մէջ:

Համայնքային կյանք - Սուրբ Ծննդեան եւ Ասուածայայտութեան տօները Քուէթի Ազգային Առաջնորդարանէն ներս, Ամանորը Քուէթի Ազգային վարժարանին մէջ, Քուէթի Ազգային

վարժարանն են ներս հայոց բանակի նուիրումը դասախօսություն, մայիսեան յաղթանակներու տօնախմբություն Քուէթի Ազգային վարժարանն են ներս, Քուէթի անկախութեան եւ ազատագրման զոյգ տօներու նշում Ազգային վարժարանն են ներս:

Այլ հայկական համայնքներ - Իրանի նախագահը Թեհրանի հայկական հիւանդանոցին 350,000 տոլարի նուիրատուութիւն կատարած է, աւստրալահայերը 50 հազար տոլար կը հանգանակեն սուրիահայերուն օգնելու, «Սուրիոյ տագնապը եւ հայութիւնը» նիւթով դասախօսութիւն, Ն.Ս.Օ.Տ.Տ ԱՐԱՄ Ա. Կաթողիկոս կմասնակցի Պահրէյնի միջազգային համագումարին եւ կը տեսնուի տեղոյն հայ համայնքի զուակներուն հետ, հայկական եկեղեցւոյ օծում Շուէտի մէջ, հայկական մշակութային նախաձեռնութիւններ Ֆրանսայի մեծ քաղաքներուն մէջ:

Գրադարաններ, ընթերցանություն, գրքերի շնորհանդես, գրականություն - հայ գրատպութեան նուիրումը ցուցահանդէս Չէխիոյ ազգային գրադարանին մէջ, գրական ցերեկոյթ եւ ցուցահանդէս մեծն Գահիրէի գրադարանին մէջ, կարդալը կ'ընդարձակէ մտահորիզոնը, ինչպէ՞ս ընթերցանութեան հանդէպ սէր սերմանել, գիրք նուիրելու օրը Ազգային վարժարանն են ներս, «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը» արաբերէն գիրքի շնորհանդէսը, «Յաւիտենական Հայաստան. մեծ դէմքեր» գիրքին ներկայացումը, երիտասարդ մատենագէտներ եւ այժմեական հրամայականներ, հայկական տպագրութիւն, Վահան Տէրեանի ծննդեան 130-ամեակի նշում:

Միջազգային կացություն և իրողություններ - Սուլյն թեմայով եւ ծավալուն տեղեկոյթ է զետեղված: ԱՄՆ-ի, եվրոպական տարբեր պետությունների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի և այլ երկրների քաղաքականություն անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանում, սիրիական ճգնաժամ, քրդական հիմնախնդիր, պաշտոնական փոխայցելություններ և հանդիպումներ:

Հայրենիք-Սփյուռք առնչություններ, պաշտոնական ընդունելություններ և հանդիպումներ Հայաստանի Հանրապետության ու արտասահմանի հոգևոր և աշխարհիկ անձանց հետ – ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին անձնական ներկայացուցիչն այցելեց Ազգային Առաջնորդարան, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան վարչապետի այցը Քուէթ:

Կրթություն և գիտություն - հայ ուսուցիչի մեծարման երեկոյ, Հայաստանի համալսարաններ կը յաճախեն 550 սփիւռքահայ եւ 420 օտար ուսանողներ, հայագիտական գիտաժողով Գահիրէի համալսարանն են ներս, «Արդի հայերէնի հիմնախնդիրները» խորագիրով միջազգային գիտաժողովի բացում:

Մշակույթ - մշակութային երեկոյ Քուէթի մէջ, «Իմ Հայաստան» համահայկական փառատօն, «Սայաթ Նովա» երգչախումբի համերգ, հայոց ինքնութեան, մշակոյթին եւ արուեստին նուիրումը ցուցահանդէս, Գանձասարի մէջ Մատենադարանի բացում, Թումանեանի եւ Կոմիտասի 150-րդ յոբելէաններուն նուիրումը ցուցահանդէս եւ ձայնապնակի շնորհանդէս:

Մարզաշխարհ - Քուէթի մարզիկները դէպի Հայաստան, քուէթահայ համայնքի մասնակցութիւնը համահայկական խաղերուն: Վերոնշյալներից գատ, անդրադարձ է կատարվել այլ թեմաների եւ:

Հայաստանի ազգային գրադարանում իրականացվող տպագիր արտադրանքի մեծածավալ թվայնացման աշխատանքների շրջանակներում կարևորվում է նաև հայ մամուլի թվայնացման գործընթացը: Գրադարանի կայքի «Հայ մամուլ» շտեմարանում մուտքագրված են պարբերականների հիմնական մատենագիտական տվյալները՝ պարբերականի հերթական համարները պարունակող կից աղյուսակով: «Կարդալ առցանց» հղման ներքո զետեղված են պարբերականների թվային պատճենները՝ նպաստելով ուսումնագիտական ու հետազոտական աշխատանքների իրականացմանը և տպագրական քաղաքակրթության արժեքների հավուր պատշաճի հանրահռչակմանը: Այս առումով անհրաժեշտ է շեշտել նաև Հայաստանի ազգային գրադարանի պատմական առաքելությունը:

SUMMARY

Thus, summarizing the above, we can state that various Armenian-Arab relations have a centuries-old history and continue also in the 21st century. Armenia-Kuwait relations should be considered in the

domain of Armenia-Arab world relations. There is a viable Armenian community in Kuwait, which plays an important role in the life of a hospitable country. The Armenian press has an important mission. That applies equally to the Armenian Diaspora press. The “Armenian Press” database, posted on the website of the National Library of Armenia, is also important. The press published in Kuwait covers a variety of topics, in a certain way also contributing to the extremely important, relevant and urgent imperative of preserving the Armenian identity.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արաբական աղբյուրներ: Արաբ մատենագիրներ: Թ-Ժ դարեր, հտ. Գ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2005, 704 էջ:
2. Բադալյան Գ., Իրան: Հանրագիտարան, Երևան, Ա.հ., 2011, 880 էջ:
3. Զաքարեան Վ., Հոդին արժեքը, Ծիծեռնակ: Պարբերաթերթ Քուէթի հայ ազգային երկրդ. վարժարանի, Քուէթ, Ա.հ., 1980-1981, №3, էջ 30-31:
4. Լուրեր Հայաստանէն, Ծիծեռնակ: Պարբերաթերթ Քուէթի հայ ազգային երկրդ. վարժարանի, Քուէթ, Ա.հ., 1980-1981, №3, էջ 49-54:
5. Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան, 2003, 732 էջ:
6. Հայաստանի ազգային գրադարանի կայք, «Հայ մամուլ» շտեմարան URL: <https://is.gd/1pw6sy> 13.06.2023:
7. Հայաստանի ազգային գրադարանի կայք, «Հայ մամուլ» շտեմարան URL: <https://is.gd/qbgdFO> 13.06.2023:
8. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հտ. 1, Երևան, Զանգակ-97, 2003, 416 էջ:
9. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հտ. 4, Երևան, Զանգակ-97, 2007, 767 էջ:
10. Հովհաննիսյան Ն., Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս: Մտորումներ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 35-ամյակի առթիվ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXV), Երևան, Զանգակ-97, 2006, էջ 5-25:
11. Հովհաննիսյան Ն., Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ: Պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 427 էջ:
12. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, Զանգակ-97, 2004, 208 էջ:
13. Ղազինյան Մ., Աֆրկյան երկրներում հայ մամուլի դերն ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում //Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի : Ազդարար 225 : Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28-29 նոյեմբերի 2019թ.), Երևան, «Գիրք» հրատ., 2020, էջ 41-51:
14. Յակոբեան Լ., Իմ Մայր հայրենիքս, Ծիծեռնակ: Պարբերաթերթ Քուէթի հայ ազգային երկրդ. վարժարանի, Քուէթ, Ա.հ., 1980-1981, №3, էջ 33-34:
15. Պոտոսյան Ա., Հովհաննիսյան Գ., Արաբական երկրների աշխարհագրություն: (Արաբական արևելքի երկրները): Բուհական ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 178 էջ:
16. Տեր-Խաչատուրեան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պէյրութ, Վահէ Սէրեան, 2014, 693 էջ:
17. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները: Արդի հիմնախնդիրները, Երևան, «Գևորգ-Հրայր» ՍՊԸ, 2012, 160 էջ:
18. Hovhannisyan N., King of kings Tigran The Great and the Armenian Empire as evaluated by modern Arab historiography, Yerevan, Zangak, 2012, 84 p.
19. Hovannisyan, N., The foreign policy of the Republic of Armenia in the Transcaucasian-Middle Eastern geopolitical region, Yerevan, Noyan Tapan, 1998, 108 p.

ՊՈԼՍՈՅ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ»Ը ԵՒ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԸ

Բանալի բառեր՝ «Ճակատամարտ», Յակոբ Օշական, պատմուածքների շարքեր, հրապարակագրություն, գերմանական «Կայսերական յաղթերգություն», գրամշակութային անդրադարձներ:

Keywords: “Chakatamart,” Hagop Oshagan, series of stories, publication, Germanic “Imperial Trumph,” literary-cultural references.

Արեւմտահայ մամուլի պատմութեան մէջ ազգային-քաղաքական հարուստ եւ հատու ենթախորքերով կայուն նախասիրություն դարձան 20-րդ դարասկզբին ծնունդ առած «մարտ» ազգային արթնություն պահող բաղադրիչով ւարժաւոր խորագրերը: Ռուբէն Զարդարեանը 1909-1914 թթ. հրատարակեց «Ազատամարտ»ը, որի հոգեգրականները դարձան «Առաջամարտ»ը (1912), «Արդարամարտ»ը (1918), «Արիամարտը» (1918), մեզ համար շահագրգիռ «Ճակատամարտ»ը (1918), որոնց աջակից-արտօնատերերի մէջ ստեպ-ստեպ հանդիպում էին Շաւարշ Միսաքեանը, Գեղամ Բարսեղեանը, Յակոբ Սիրունին, Վրթանէս Մարտիկեանը, Վարդգէս Սերէնկիւլեանը եւ ուրիշներ: Խորագրերի բազմապիստությունը արդարացուած էր անընդմեջ ընդհատում-արգելակումներով, որ յարուցում էր թուրքական գրաքննությունը: Ահա թէ ինչու էր այդքան յաճախ յամառում յայտնուել նաեւ «մարտ» բաղադրիչը: Դա ցոյց է տալիս նաեւ 1918-ի յաջորդական թուագրությունը. 1-ից 12 համարները «Արդարամարտ», 13-ից 32-ը՝ «Արիամարտ», իսկ ահա 1918-ի Դեկտեմբեր 27-ից՝ «Ճակատամարտ», ընդհուպ 1924 թուականի Հոկտեմբերի վերջերը:

Պէտք է ընդգծել, որ Պոլսում յայտնուելուց յետոյ Յ. Օշականին պատմուածքների եւ յօդուածների, գրախօսությունների, հրապարակագրական էջերի միջոցով ազատ գնահատությունների ստեղծագործական ասպարէզ է տրամադրում հենց «Ճակատամարտ»ը: Նախ, այստեղ էր խմբագրապետը, իրեն դեռ «Արեւելք»ի շրջանից յայտնաբերած, գրական մուտքի դարպասներ բացած Շ. Միսաքեանը: Այստեղ էին Ե. Օտեանը, Յ. Սիրունին, Մանուկ Արսլանեանը եւ գրական-լրագրական ուրիշ յայտնի դէմքեր: Աւելորդ չէ նշել, որ Յակոբ Քիւֆէճեանը իր պատմուածքներից մինչ այդ հրապարակել էր «Ազատամարտ»ում եւ նրա յաւելուածներից՝ «Ազդակ»ում («Պատաւին անէծքը», 1909) եւ «Բազին»ում («Կանանց-Կիրակի», 1912):

«Ճակատամարտ»ում երեկուայ պրոսագին այլեւս եւ մէկընդմիջտ գործածութեան մէջ դրեց նոր՝ «Օշական» գրչանունը: Դա Արտաշէս Յարությունեանի առիթով էր, ով իր կեանքում ուսուցչի դերակատարություն ուներ: Բաւական է ասել, որ Մալկարայում, ուր Յակոբը անցել էր մօր մահից անմիջապէս յետոյ, 1911-ին, նա բացայայտեց եւ ֆրանսերէնով կարդալ տուեց Ֆեոդոր Դոստոեւսկու վէպերը: Ուսուցչի մասին տպաւորիչ ակնարկ կայ «Ճակատամարտ»ի էջերում. «Ով որ ինծի պէս մտիկ ըրած է այդ պզտիկ մարդը, մեծ սօսիի մը տակ, խոնարհող արեւի մը դէմ, պիտի սիրէ հաւատալ խօսքի ուժին, այն սկիզբները անորոշ, հետզհետէ գունաւորուող դորդումին, որ կը բռնէ քեզ քու միամտութեանդ մէջ ու քիչ քիչ, ծաւալուն իսկութեան մը կրակովը կամ քաղցրութեամբը կը ճիւղաւորուի քենէ ներս: Քանի մը նման փորձերէ ետք օր մըն ալ կը զգաս ...իր ազդելու, թելադրելու եղանակը» [«Ճակատամարտ», 1919, թիւ 181, էջ 1]: Ի դէպ, նոյնիսկ 40-ական թթ. Օշականը պահում էր նշանաւոր «գիշերուան ճամբորդի» հանդէպ երախտագէտ յիշողությունը¹²:

«Ճակատամարտ»ի 1919-ի Յունուարի առաջին երկու օրերին Օշականը հանդէս է գալիս «Տարելից մը / տարեվերջի խոհեր» եւ «Ակնարկ մը 1919-ի հանդէսներուն վրայ» մտածումն ու տեսությունը ամփոփող, իսկ Փետրուարի 8-ի եւ 15-ի համարներում՝ «Ազգայնականությունը (մեր

¹² «Համապատկեր...»ում Ա. Յարությունեանի դիմանկարի հատուածում նոյնպէս տրուում է ենթակայական ջերմ յիշողութեան. նրա «...հետ իմ յարաբերությունները եղեր են մտերմական, քան ուրիշ ոեւէ գրողի հետ...» [Օշական, 1980, 113], «Խոնարհները» կը պարտիմ իր թելադրութեան» [նոյն տեղում, 110]:

գրականութեան մէջ» յօդուածներով: Վերջինում քննում է հայկական գրամշակութային երկու հատուածներում ազգային սրացած շեշտադրութիւնները: Հրապարակագրական յօդուածներից կարող ենք նշել նաեւ Մայիսի 16-ի համարում «Վրդովումը» պատկերիլը եւ ոչ պակաս ընդվզումով գրուած «Ռամիկ յարգանքը» յօդուածը, վերջինը՝ «Գրական խժոժութիւններ» խորագրի ներքոյ:

Նկատենք, որ «Ճակատամարտ»ի 1920-ի նոյն համարի առաջին էջում, հանդիպակաց հատուածներում, նոյն խնդրի շուրջ կիսահեգնախառն վերաբերմունք էին մշակել Յ. Օշականը եւ Եր. Օտեանը՝ վերհանելով իւրատեսակ զգվոտոց-«աքլորամարտը», որ յաճախ էր ծաւալուում խմբագրութեան մէջ: Խօսքը վերաբերում է Յ. Օշականի վերոնշեալ «Գրական խժոժութիւններ» եւ Եր. Օտեանի վարած «Օրը օրին» սիւնակների ներքին թեմատիկ բովանդակութեան զարմանալի համընկնումներին: Երկուսի ենթավերնագրերում խօսքի ուղղութեան իմաստային «հատիկը» «յարգանքի» չափաբաժինն է, որ, նախ, ոտնահարել էր Ենովք Արմէնը, երբ 1920-ի Օգոստոսի առաջին տասնօրեակում ձեռք էր նետել նահատակ բանաստեղծ Ա. Յարութիւնեանի «արիւնտ շապիկին»՝ առաջ բերելով Յ. Օշականի բուռն զայրոյթը, որտեղ «ռամիկ» արտայայտութիւնը ցածրակարգի հոմանիշն էր, աւելի մեղմ՝ գրչակների (այս պարագային՝ ենովքարմէնների եւ նրա նմանների) «գաճաճ» մօտեցումը: Յ. Օշականը, խիստ դժգոհ անփառունակ գրագէտի մանրախնդիր ձգտումից, «դառնօրէն ճշմարիտ օրէնքի» յայտնատեսութեամբ սպանիչ եզրայանգման է գալիս, թէ «դարձեալ յետ մահու հաշուեյարդարութեան ընդվզեցուցիչ էջ մըն է Պ. Ենովք Արմէնի գիսախորի մէկ ուսումնասիրութիւնը», եւ աւելացնում. «Տարաբախտօրէն ճիշդ է, որ մեր գրագէտ նահատակներուն նուիրուած ամէն թիւ, յարգանքի ցոյց մը ըլլալէ աւելի ...առիթ մըն է, երջանիկ ու կարմիր առիթ մը հաշիւներ մաքրելու ասոր կամ անոր դէմ» [«Ճակատամարտ», 1920, թիւ 529, էջ 1]:

«Յարգանքի» երկրորդ «արտայայտութեան» հեղինակը Երուանդ Օտեանն է, միայն թէ աւելի թունոտ, սարկազմով: Որքան էլ զարմանալի է, վերջինիս նօթը յիշեցնում է թատերական կառոյց խմբագիրների վարած այլեւայլ զրոյցների խորքի վրայ, ինչը երգիծանք է աւելի, քան մտահոգութիւնների կարգ: Մեր կարծիքով, հենց այս գրութիւնն էլ մի քանի տարի անց կարող էր նախահիմք հանդիսանալ Յ. Օշականի «Աքլորամարտ»ի առաջին տարբերակի համար: Եր. Օտեանը գրում է, որ ընդամենը մէկ օր առաջ մասնակցել էր խմբագիրների հանդիպմանը, ուր 1915-ի նահատակների «նոր ողջակէզի մը պատրաստութիւն» էր նկատել՝ «անգամ մըն ալ մեռցնելու, անոնց յիշատակին յարգանք մատուցանելու պատրուակին ներքեւ» [նոյն տեղում], ի շարս այլոց՝ նաեւ Ա. Յարութիւնեանին:

Սրանք 1920-ի մեր պոլսական մտաւորականութեան իմացութեան խեղճուկրակ, «տեղական» մակարդակի պատառիկներն են: Բանավէճ չկայ, մտքի պարապութիւն է, եւ ցաւալին այդ մակարդակի հետ ինքնաբաւ հաշտութիւնն է, ինչից խորապէս դժգոհ են եւ Եր. Օտեանը, եւ Յ. Օշականը:

Յ. Օշականի տեսադաշտում նաեւ արեւելահայ դէմքերն են, ինչպէս Յովհաննէս Թումանեանը եւ Աւ. Իսահակեանը, որոնցից առաջինի ստեղծագործութեան տարբեր շերտերին անդրադառնում է ծաւալուն յօդուածաշարով՝ խոստովանելով, որ «արեւմտեան Հայերու համար դժուար է արդարութեամբ մօտենալ Արեւելահայ գրականութեան», քանի որ վերջինս «օտար ու անծանօթ պայմաններու կը հպատակի» [«Ճակատամարտ», 1921, թիւ 923, էջ 1], միաժամանակ այդ խորթութեան միջից վերբերելով Թումանեանի գործը՝ իբրեւ «ագնուական բարութիւն մը, մաքուր մեր ցեղին հոգիին նման» [նոյն տեղում, թիւ 927, էջ 4]:

Աւ. Իսահակեանի հանդէպ Յ. Օշականի վերապահ եւ ժխտական մօտեցումները արձանագրուած են աւելի վաղ շրջանի քննադատական տարբեր նօթերի մէջ, դեռ այն ժամանակից, երբ Յովհ. Թումանեանը դարասկզբի պօէմը համարում էր «մեծ դալմադալ»: Մակայն թերեւս «Ճակատամարտ»ի 1920 թ. սեպտեմբերեան թուերի մէջ է, որ Յ. Օշականը համակարգում է հայեացքի ուղղութիւնը՝ քննական մասնաւոր նիւթ դարձնելով «Աբու Լալա Մահարի»ի հարցադրումներից բխող հին ու նոր մեկնութիւնները: Ուշագրաւ է նրա մօտեցումը ոչ այնքան բանաստեղծի մեծութեան աւանդական ընկալման, որքան գրական տեսակէտի խորացման արդիւնաւորութեան առումով, եւ այն հարցին, թէ ինչ է, ի վերջոյ, «Աբու Լալա Մահարի» պօէմը՝ «Իսկական նաւաբեկութեան եղերե՞րզ մը, հսկայ նգո՞ վը մը ժամանակակից այնքան ճղճիմ հաճոյապաշտութեան դէմ,

որ մարդերը գործիքը կը դարձնէ անորակելի կիրքերու...», պատասխանում է՝ «...անբնական, անմարդկային, անհրապական, որեւէ ձեւով, ուղտերու քամակին, արեւու վրայ խոյանալու... ծիծաղելի ու հասարակ տօնքի շօտութիւն» [«Ճակատամարտ», 1920, թիւ 564, էջ 1]:

Հարկ է յիշատակել ընթացիկ գրականութեան շուրջ օշականեան անդրադարձը 1921-ի յունուարեան առաջին երկու համարներում՝ «Օրուան գիրքեր» վերտառութեամբ, ներքին յստակ կարգաւորումով¹³, երբ հրապարակ է հանում Ե. Օտեանի եւ Թէոդիկի կազմած տարեցոյց-տարեգրքերի շուրջ գրախօսականները, որոնք աւելի մօտենում են գրական մեկնական դիմանկարի ենթաժանրին, քան բուն տարեգրքերի ընդգրկումին կամ ուղղութեանը վերաբերող հարցերին:

Նկատենք, որ քննադատական գրութիւնների կողքին Մայիս 28-ի առթիւ նրա հրատարակած ողջոյնի ոգեկոչ խօսքը փնտրում է «նոր օրերու տեսանողը, բանաստեղծը ու խորհողը», այն դիւցազներգուն, որ պիտի մօտենայ մեր ժամանակի «ուրիշ մէկ հրաշքին, մեր ազատութեանը յաղթերգանքին» [նոյն տեղում, թիւ 464, էջ 1]: Առինքնող ոգեւորութիւնն է իշխում «Գեղի մեր տղոց» ուղղուած պայքարի կոչի մէջ՝ բարձրացնել մեր եռագոյնը, ելնել երկրի փաստացի ազատագրութեան, պայքարի բռնուցք դառնալ՝ պարտքի լեռնացումով: «Գեղը» մեր երկրի, «տղաքը»՝ երկիր վերադարձնող մեր զինուորի խորհրդանշաններն են, իսկ «պարտքը»՝ մաքառող ուխտաւորի բռնած հերոսական ճամբան, նպատակը՝ «Ցուցուցէ՛ք մարդերուն թէ դուք հարազատ շառաւիղները կը մնաք ցեղերուն ամենէն ազնիւներէն մէկուն...: Լեռնէ՛ լեռ, ծովէ՛ ծով...: Տղա՛ք, պատմութիւնը ձեզի կը նայի» [նոյն տեղում, թիւ 523, էջ 1]:

Հոկտեմբերին արդէն դէպի ճակատ մեկնող տղաների մէջ տեսնում է իր մանկութեան ընկերոջը. նոյն «տղոց» տողանցքն է կարծես՝ տուն եւ երկիր պահելու վճռականութեամբ, ինչի նկատմամբ անվերապահ է գրողի հաւատը: Նրան պէ՛տք է վստահել. «Զարմանքով ու քիչ մըն ալ հիացիկ կը նայիմ անոր հոգիի շէնքին: Ո՛րկէ եւ ի՛նչպէս գեղի այդ տղան սորվեցաւ, այսպէս մէկէն, իմաստութիւնը անիմաստ բառերուն» [«Ճակատամարտ», 1920, թիւ 588, էջ 1]¹⁴: Ճակատ է գնում նա, եւ հնչում է հրաժեշտի տխրամած խօսքը՝ «Մնա՛ւ բարով: Կ'ըլլայ որ ալ չենք տեսնուիր» [նոյն տեղում]:

Առանձին քննութեան առարկայ է 1920-ի Յունուարից «Ճակատամարտ»ում Յ. Օշականի կարճ արձակի՝ ազգային-քաղաքական խորքով շնչառութիւնը՝ «Կայսերական յաղթերգութիւն» խորագրով պատմուածաշարը:

1922-ին «Խորհուրդներու մեհեանը» գրքի հրատարակութեան ծանօթագրութեան մէջ նշում էր, որ պատմուածքների երրորդ ժողովածուն պատրաստ է եւ շուտով հրապարակ կ'իջնի «Կայսերական յաղթերգութիւն» խորագրով: Սակայն այդ «շուտովը» ձգուեց աւելի քան վաթսուն տարի: Գրողի ծննդեան 100 ամեակի առթիւ 1983-ին լոյս տեսած մատենաշարի գրքերից էր «Կայսերական յաղթերգութիւն»ը¹⁵, ուր խմբագիր Պօղոս Սնապեանը ներմուծել է լրացումներ, պայմանական «յաւելագրումներ», որոնք այնքան էլ թեմատիկ առնչութիւններ չունէին նշեալ շարքի հետ. այնտեղ գիւղաշխարհ եւ անհատի ներաշխարհ բացող պատմուածքներ ու հեքեաթներ էին՝ «Հինէն ու նորէն», «Երբ պզտիկ են»¹⁶ ենթախորագրային բաժանումներով: Այն իսկապէս, ժողովածուի արժէքով, նշանակալի իրադարձութիւն էր: Ցաւօք, Դաւիթ Գասպարեանը այս շարքը դիտում է ծաւալուն «վէպ», որը «Ճակատամարտ»ում, իր կարծիքով, լոյս է տեսել անհամեմատ աւելի ուշ, 1922-1924 թթ. [Գասպարեան, 2000, 40]: Ահա թէ ինչու, ներքին կարգապահութեան տեսակէտից աւելի յուսալի եւ ճշգրիտ է իբրեւ սկզբնաղբիւր «Ճակատամարտ»ում եղած «Կայսերական յաղթերգու-

¹³ Մ. Նշանեանը խորագիրը նշում է «Օրուան գիրքերէն» [«Յակոբ Օշականի մատենագիտութիւն», 53]:

¹⁴ Այստեղ փոքր-ինչ քօղարկուած նկատելի է Վահան Թէքէեանի պատկերային մտածողութեան հետքը, որն ինքնին ուշագրաւ է Յ. Օշականի արձակում: Մի կողմում դարերի մէջ պայքարած ու դիմացած հայոց լեզուն է, որի «արմատներուդ, ճիւղերուդ վրայ նայելով հիացիկ» անցնում է բանաստեղծը [Թէքէեան, 1914, 182], միւս կողմում՝ այդ լեզուն պաշտպանելու ելած եւ «անիմաստ բառերուն իմաստութիւնը» իրացրած զինուորի նկարագիրը:

¹⁵ 1977-ին «Բագին»ում խմբագրական կարճաոտ նօթ կայ շարքի ստեղծագործական պատմութիւնից, երբ սեպտեմբերեան համարում հրապարակում է «Արծիւները» պատմուածքը: Այս մասին տե՛ս՝ **Օշական Յ.**, Ամբողջական գործեր, հ. 1, Եր., «Զանգակ», 2020, էջ 753:

¹⁶ Այս երկու, ինչպէս նաեւ «Երբ պատանի են» շարքերի տարբեր գործեր տեղ են գտել «Ճակատամարտ»ի էջերում:

թին»ը, որն էլ ընկել է 2020-ին լոյս տեսած «Ամբողջական գործեր»ի առաջին հատորի բնագրերի կազմման հիմքում:

Ժամանակին այս շարքի՝ առանձին գրքով չտպագրելու պատճառն ասելի քան առարկայական էր, մեծ մասամբ պայմանաւորուած քաղաքական դրդապատճառներով: Բանն այն է, որ վրայ հասած քեմալական նոր հալածանքների հետեւանքով շիջում է յունական Մուդրուս նաւահանգստում կնքուած Զինադադարի առկայծ ոգեւորութիւնը, եւ մեր գրագէտների զգալի մասը լքում է արեւմտահայ գրական հինաւուրց ոստանը: Ուշագրաւ է, որ Պոլսից վերջնականապէս հեռանալուց յետոյ Յ. Օշականը երբեւէ տպագրութեան չներկայացրեց այն: Թերեւս ողջ ստեղծագործական շրջանում «Կայսերական յաղթերգութիւն» շարքը՝ «Յառաջաբանի տեղ» փառահեղ մուտքով, «Արծիւները», «Վրդովուած խղճմտանքը», «Տանտան»ը, «Վրէժը», մէկ տարի անց, 1921-ին, շարքը լրումի հասցրած համանուն «Կայսերական յաղթերգութիւն» պատմուածքներով, եղերական նիւթի գեղարուեստական մշակման գայթակղութիւնն էր, որի ներքին ընդգրկումներից, յատկապէս նատուրալիստական սրուած հակումներից, հեղինակն ինքը կարող էր այնքան էլ գոհ չլինել: Յայտնի է, այդպիսի վիճակների մէջ յետագայում, վէպերում, նա յաճախ ընկել է եւ ըստ էութեան՝ ընկրկել:

Յ. Օշականի համար պարզ էր թուրքական ոճի գերմանական ենթահողը, որն ամբողջացրել էր շարքի խորագրում՝ խտացնելով քաղաքական շահերի խորքերում ծուարած, բայց շատ արագ ջրի երես ելած յայտնի դիւանագիտութեան անբարոյ քօղը՝ ուղղուած հայութեան ջարդերը խրախուսող գերմանական կայսրութեան բացորոշ դրսեւորումներին, երբ հիւանդագին Վիլհելմ կայսրը «...հանդուրժեց – չըսելու համար փառաբանեց – ոճիրներուն ամենէն անորակելին», որի դիմաց ունեցաւ, ստացաւ «այնքան վայրագօրէն նահատակուած մեր ցեղին մեծ ու պզտիկ բոլոր, բայց բոլոր հոգիներուն արգահատանքը...»:

Մեր ցեղը չի հեգներ: Չի կրնար ատել: Իր պատմութեան մէջ ան ամենէն ասելի մեղքցած է:

Ու ցեղին շառաւիղը պիտի չմերժեր իր աւանդութիւնը» [«Ճակատամարտ», 1920, թիւ 358, էջ 1]:

Եզրակացութիւնն այն է, որ այս պատմուածքները եւ թղթակցութիւնները ծրագրային որոշակի իրենց ընկալումով յստակեցրին Յ. Օշականի հայեացքի սուր ուղղութիւնը արեւմտահայ գրական զարգացումներում՝ ցոյց տալով, որ «Ճակատամարտ»ը գրողի ճակատամարտն էր նաեւ քաղաքական եւ ազգային մշակոյթի ծալքերի բացայայտման գործում:

SUMMARY

Immediately after the Genocide, the Constantinople daily newspaper “Chakatamart” became a platform for national-political issues, where Hagop Oshagan stands out with his positions and a clear artistic and political description. Here, next to the prose stories “When they are little,” “When they are young,” his series “Imperial Triumph” is published. The author of the article presents the main issues that touch both creative history and political evaluations. There are also literary-cultural references that played a role in the literary environment (Artashes Harutyunian, Yervand Otian, Yenovq Armen, later Poghos Snpian, Marc Nichanian and others).

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարեան Դ., Հայ գրականութիւն / մեթոդական ձեռնարկ, Եր., «Զանգակ», 2000, 344 էջ:
2. Թէքէեան Վ., Հրաշալի Յարութիւն (1901-1914), Կ. Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 1914, 199 էջ:
3. Օշական Յ., Արտաշէս Յարութիւնեան (նիշեր) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Ժ. Տանտրիա, 1919, Նոր շրջան, 15 Յունիս, թիւ 181 (2002), էջ 1:
4. Օշական Յ., Կայսերական յաղթերգութիւն / Յառաջաբանի տեղ // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան Էդարց, 1920, 18 Յունուար, թիւ 358 (2179), էջ 1:
5. Օշական Յ., Յաղթանակներու օրը // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պէճիտեան Էդարց, 1920, 28 Մայիս, թիւ 464 (2285), էջ 1:

6. Օշական Յ., Գեղի մեր տղոց // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պեճիտեան եղբարց, 8 Օգոստոս, 1920, թիւ 523 (2344), էջ 1:
7. Օշական Յ., Ռամիկ յարգանքը (նուիրում թիւերու առիթով) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պեճիտեան եղբարց, 1920, 15 Օգոստոս, թիւ 529 (2350), էջ 1:
8. Օշական Յ., Աբու Լալա Մահարի (հեղ. Ա. Իսահակեան) // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պեճիտեան եղբարց, 1920, 26 Սեպտեմբեր, թիւ 564 (2385), էջ 1:
9. Օշական Յ., Ճակատին համար / Ան որ կը մեկնի // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պեճիտեան եղբարց, 1920, 24 Հոկտեմբեր, թիւ 588 (2409), էջ 1:
10. Օշական Յ., Յովհաննէս Թումանեան // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Մ. Իտարէճեան, 1921, 27 Նոյեմբեր, թիւ 923 (2744), էջ 1:
11. Օշական Յ., Յովհաննէս Թումանեան // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Մ. Իտարէճեան, 1921, 2 Դեկտեմբեր, թիւ 927 (2748), էջ 1 եւ 4:
12. «Յակոբ Օշականի մատենագիտութիւն» / կազմեց՝ Մարկ Նշանեան, Լոս Անճելըս, «Open Letter Journal», 1999, 197 էջ:
13. Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, իններորդ հատոր / Արուեստագէտ սերունդ, Անթիլիաս, 1980, 534 էջ:
14. Օտեան Ե., Յարգանքի արտայայտութիւն // Ճակատամարտ, Կ. Պոլիս, տպ. Պեճիտեան եղբարց, 1920, 15 Օգոստոս, թիւ 529 (2350), էջ 1:

ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ-ԽԱՇԱՏՈՒՐՅԱՆ.
ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՈՒԼԻ ԳԻՏԱԿԸ ԵՎ ՀԱՆՐԱՅՆԱՑՆՈՂԸ

Բանալի բառեր՝ սփյուռքահայ մամուլ, հայ մամուլի պատմություն, ցուցահանդես, մատենագիտական ցանկ, «Հասկ» հայագիտական տարեգիրք, գրախոսություն, խմբագիր:

Keywords: Armenian diaspora periodicals, Armenian periodicals history, exhibition, bibliographic series, “Hask” Armenian studies yearbook, review, editor.

Արտաշես Տեր-Խաչատուրյանի մասնագիտությունը մեկ բառով հնարավոր չէ բնորոշել: Այն ճշմարտությունը, որ Սփյուռքում մտավորականը միաժամանակ և ուսուցիչ է, և՛ խմբագիր, և՛ պատմության ու գրականության գիտակ ու հետազոտող, հաստատապես վերաբերում է նաև այս բացառիկ անձնավորությանը [Ղազարյան, 2007, 4]: Ծնվել է 1931 թ. հունիսի 16-ին Բեյրութում: Նախահայրենիքը Մշո դաշտի Խաչխալտաղ գյուղն է, «...որ ունեցած է եկեղեցի եւ հոն քահանայագործած է մեծ հայրս՝ Տեր Խաչատուրը, ծանօթ նաեւ Քէոսէ Տէրտէր անունով» [Հասկ հայագիտական տարեգիրք, 1983-1984, 477]: Զավակն է Համազասպ և Ազնիվ Տեր-Խաչատուրյանների. հայրը Խաչխալտաղ գյուղից էր, իսկ մայրը՝ Յրոնքից: Ծագումնաբանական այս տվյալների մասին խոսելը ինքնանպատակ չէ: Արտաշես Տեր-Խաչատուրյանը իր աշխարհի պատմության, ազգագրության, տեղագրության, մշակույթի, սովորությունների ուսումնասիրությունը կարևորող, հավաքող, հետազոտող, իր հետազոտությունների արդյունքները հանրությանը ներկայացնող ու հանրայնացնող հայ մտավորական է, և այս որակները նա դրսևորեց իր գործունեության բոլոր ուղղություններում: Սովորել է Կիլիկիոյ Կաթողիկոսության դպրեվանքում, Հայ ավետարանական կենտրոնական վարժարանում, ապա բարձրագույն կրթություն է ստացել Բեյրութի Ամերիկյան համալսարանում: Զբաղվել է ուսուցչությամբ, դասավանդել է Հալեպի և Բեյրութի մի շարք ուսումնական հաստատություններում՝ գրաբար, հայոց պատմություն, հայ հին և ժամանակակից (արևելահայ և արևմտահայ) գրականություն, հայ մշակույթի պատմություն: Իր հետազոտությունների լեզվի մասին ասում է. «Կը գրեմ հայերէնով, կրնամ արտահայտուիլ անգլերէնով եւ ֆրանսերէնով, սակայն նախընտրած եմ հայերէնը» [Տեր Խաչատուրեան, 2008, 18]: Աշխատել է գաղութի՝ հայապահպանությանն ուղղված կառույցներում նախ որպես անդամ, ապա՝ ուսուցիչ: ՀՄԸՄ-ի անդամ էր, նրան տրված վկայականի մեջ կազմակերպության նպատակների մասին կարդում ենք. «Հ.Մ.Ը.Մ. ի նպատակն է ֆիզիքական առողջ դաստիարակություն մը տալով պատանիին՝ սատարել ցեղին բարոյական եւ իմացական բարձրացման: Սովրեցնել անոր ըլլալ չարքաշ եւ ժուժկալ, կարգապահ եւ օրինապահ, արթուն, արագ եւ ճիշտ դատող, ձեռներեց, կորովի, արի, հայրենասէր, զարգացնելով անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումներ, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի...»:

Հենց այս հատընտիր որակներն էլ ձևավորեցին նրա՝ հետազոտող խմբագրի պատասխանատու, ուսուցանող ուսուցչի ծանրակշիռ, լսելի խոսքի ուժը և գիտելիքի ու իմացության լույսը աշակերտներին շռայլորեն փոխանցելու ունակությունը:

Հանդես է եկել մի քանի ծածկանուններով՝ Արտաշես Մանկունի, Արտակ Մանկունի, Արտաշես Խաչատուրեան, Արտաշես Մամիկոնեան:

1950 թ. հրատարակում է «Տարօն» ժողովրդական երգերի ժողովածուն՝ լավագույն արտահայտությունը ժողովրդական բանահյուսության հավաքորդի իր որակների: Առաջաբանի հեղինակ Կարո Մասունին այդ օգտաշատ հատորը կազմողին բնութագրում է հետևյալ բառերով. «... գրական փառքի ճամբայ մը կրնայ դառնալ աշխատասիրող Արտաշես Տեր-Խաչատուրյանին, որ շատ թարմ երիտասարդ մըն է և իր առաջին քայլն է, որ կը նետէ այս գրքոյկով» [Տարօն (Հաւաքածոյ ժողովրդական երգերու), 1950, 6]:

Որպես գրքի և պարբերականի խմբագիր՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը բացառիկ էր իր հետևողականությամբ և անաչառությամբ: Խմբագրել է Շահան Պերպերյանի «Գեղագիտությունն եւ գեղարուեստ» (Պեյրուք, 1975) և Ռուբեն Զարդարյանի «Ցայգալոյս»-ը (Պեյրուք, 1977, 1994) գրքերը: Այս գույգ հրատարակությունների մատենագիտական ցանկերը Արտաշես Տեր-Խաչատուրյանը կազմել է բժախնդրությամբ և մատենագետի երկյուղածությամբ՝ նշելով, թե «ընթերցողին անթերի գործ մը հրամցուցած ըլլալու գոհունակութիւնը չունինք դժբախտաբար...» [Զարդարեան, 1977, 397], և այդ տարաբախտության պատճառներից մեկը համարում է գրադարաններում հայ գրքի ու մամուլի անունների թերի հավաքածուները: Առաջ է քաշում դրանց ամբողջականության վերականգնման, ապահով պահպանության անհրաժեշտությունը: Այս խնդիրը, ցավոք, արդիական է նաև այսօր, և գրադարանիս առաջնահերթություններից մեկն էլ հատկապես մամուլի թղթային և էլեկտրոնային հավաքածուների ամբողջականության ապահովումն է:

1948 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի նախաձեռնությամբ հրատարակվում է «Հասկ» հայագիտական տարեգիրքը: Վեհափառ Հայրապետի «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն» կարգախոսը դարձավ տարեգրքի գործունեության նշանաբանը [Հասկ հայագիտական տարեգիրք, 1948, 1]: Նրա վախճանից հետո ևս մեկ համար հրատարակվում է Զարեհ Ա. կաթողիկոսի հետևողականությամբ 1957 թ: Տարեգրքի վերահրատարակությունը նախաձեռնեց Գարեգին առաջին Կաթողիկոսը: «Հայագիտական տարեգիրք... Այս օրերուն Անթիլիասի մէջ... ինքնին հանդուգն նախաձեռնութիւն»։ այսպես է բնորոշում հանդեսի վերահրատարակումը Վեհափառ Հայրապետը: Նոր շրջանի տպագրությունը և խմբագրական աշխատանքները Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը վստահեց Արտաշես Տեր-Խաչատուրյանին (խմբագրել է 3 համար): Նոր շրջանի Ա հատորի առաջաբանում Գարեգին Ա-ը, խանդավառված 24 տարի ընդմիջումից հետո պարբերականի վերահրատարակության փաստով, այսպիսի խոսքերով է բնութագրում Տեր-Խաչատուրյանին. «Մեր մասնաւոր գնահատանքը խմբագրական կազմի անդամներուն եւ այդ կազմի Գործադիր Խմբագիրին՝ Պրն. Արտաշես Տեր Խաչատուրեանին, որ հետեւողական բժախնդիր ճիգերով յառաջ տարաւ հատորին պատրաստութեան եւ տպագրական սրբագրութեան աշխատանքը» [Նույն տեղում]:

«Հասկ»-ի գրախոսությունների, մահագրությունների և բանասիրական մի շարք բաժինների հեղինակը Արտաշես Տեր-Խաչատուրյանն է՝ գործադիր խմբագիրը: «Մահագրութիւններ» բաժնում անդրադառնում է նախորդ 2-3 տարիների հայագիտության կորուստներին՝ հաճախ տեքստը պարզ մահախոսականից վերածելով տվյալ անձի գործունեությանը, հատկապես հայագիտության զարգացմանը մատուցած ծառայությունների գնահատության ընդարձակ խոսքի: Այստեղ տեղին է նշել նաև, որ Արտաշես Տեր-Խաչատուրյանը մինչև «Հասկ» հայագիտական տարեգրքում աշխատելը նմանօրինակ հրապարակումներ է ունեցել նաև «Բագին», «Ազդակ» պարբերականների էջերում: Արտաշես Տեր-Խաչատուրյանը մահախոսականը եզրափակում է հանգուցյալի գործերի մատենագիտական ցանկով՝ իբրև նրա վաստակին ուղղված իր գնահատողական խոսքի ապացույց: Անդրադառնում է ոչ միայն աշխարհասփյուռ, այլև հայրենիքում մահկանացուն կնքած հայագետներին և նրանց վաստակին: «Հասկ»-ի երեք համարները, որոնք խմբագրել է Արտաշես Տեր-Խաչատուրյանը, իսկապես հայագիտական տարեգիրք-ժողովածուին արժանի բովանդակություն և ձև ունեն: «Հասկ»-ի էջերում հետազոտական հոդվածներով հանդես են գալիս սփյուռքի և հայրենիքի տարբեր սերունդների հայագետներ, մատենագետներ (Ռաֆայել Իշխանյան, Մուշեղ Իշխան, Պեպո Սիմոնյան, Վահե Օշական, Զավեն Մարյան, Լևոն Խաչիկյան): 3 հատորների ընդհանուր առմամբ 1600 էջերի 1/5 մասը պատկանում են Արտաշես Տեր-Խաչատուրյանի գրչին: Դրանք գրախոսություններ են, մահախոսականներ, գրողների արխիվային նյութերի և նամակների հրապարակումներ:

Հավաքչական, խմբագրական, հետազոտական, լրացուցիչ աղբյուրների ուսումնասիրման ու համադրման արդյունքում ասպարեզի վրա գտնվող հետազոտություններում անճշտությունները բացառելու և գիտական եզրակացությունների հանգելու՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանի հմտությունները առավել քան արդյունավետ դրսևորումներ ունեցան հայ մամուլի հետ կապված աշխատանքներում:

1961 թ. հայ ավետարանական քոլեջի շրջանավարտից միության հովանավորությամբ կազմակերպում է Հայ մամուլի ցուցահանդես: Երեք բաժիններով ներկայացված էին պարբերականներ, հայ մամուլի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ և հայ նշանավոր խմբագիրների լուսանկարներ: Ցուցանմուշները թիվը հասնում էր 1000-ի: 1963 թ. մամուլի ցուցադրություն է կազմակերպում Հայ լրագրության 170-ամյակին ընդառաջ: Այս երկրորդ ցուցահանդեսի նմուշների թիվը ավելին էր, իսկ այդ առիթով հրատարակված գրքի վերջում տրվող անհատների ու կազմակերպությունների՝ Տեր-Խաչատուրյանին տրամադրած ցուցանմուշների անունների թիվը 960-ից հասել է 1050-ի: Սա վկայում է հայ մամուլի նկատմամբ աճող հետաքրքրության և կազմակերպչի որոնողական ջանքերի հաջողության մասին:

Բոլոր ցուցահանդեսները ուղեկցվում են հայ մամուլի պատմության, դրանում անկյունաքարային նշանակություն ունեցող պարբերականների մասին բանախոսություններով: Արտաշես Տեր-Խաչատուրյանը կարևորում է մամուլի անունների քանակը՝ համեմատելով հայ մամուլի տարբեր ժամանակների հայտնի գիտականների և ուսումնասիրողների՝ Յարոյի, Մկրտիչ Պոտուրյանի, Արտաշես Կարինյանի, Գարեգին Լևոնյանի, Հովհաննես Պետրոսյանի նշած քանակները: Արտաշես Տեր-Խաչատուրյանի եզրակացությունը մեկն է. մամուլի անունների քանակները պարզելու համար «անհրաժեշտ է, որ Հայաստան և Արտասահման գործակցին, նախ հաւաքելու հայ մամուլի բոլոր հաւաքածոները, ապա անոնց ցուցակը կազմելու համար» [Հայ մամուլի ցուցահանդես, 1961, 7]: Նորից առաջ է քաշվում հայ մամուլի հավաքածուների ամբողջականության ապահովման խնդիրը: Արտաշես Տեր-Խաչատուրյանը անչափ կարևորում է մամուլի տպաքանակների բացահայտումը, տարբեր պատճառներով դրանց ավելացումը կամ նվազումը, խմբագիրների գործունեությունը:

Առհասարակ, Արտաշես Տեր-Խաչատուրյանը հայ մշակույթի, կրթության, լեզվի և գրականության զարգացման մեջ մամուլին բացառիկ դերակատարում է վերապահում: Նրա համոզմամբ, մամուլը Հայ աշխարհաբար լեզվի զարգացման օրրան է: Բաղդատելով 19-րդ դ. առաջին և երկրորդ կեսերի մամուլի լեզուն՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը հայերեն աշխարհաբար լեզվի զարգացման, հարստացման գործում մամուլի ունեցած դերը անքննելի է համարում: Մամուլը, ըստ նրա, փորձաքար է սկսնակ հայ գրական մշակների համար, քանի որ գրագետները, գրքերի հրատարակություններից առաջ, իրենց «քերթուածները» տպագրում էին մամուլում, և այստեղ է կազմավորվել նրանց ոճը: «Հայ լրագրությունը այն թանգարանն է, ուր կը քնանան մեր գրողներու մեծագոյն մասին գրութիւնները, և այդ թանգարանէն գիտցան օգտուիլ Նահատակ գրագետներու բարեկամները» [Մեր պարբերականները, 1933, № 2, 141]. նկատի ունի այս մատենաշարով Փարիզում 1930-ական թվականներին նահատակ գրողների երկերի հրատարակությունները: Ինքն էլ ժամանակ առ ժամանակ օգտվել է այդ «թանգարանից»՝ կազմելով Լևոն Շանթի, Շահան Պերպերյանի, Ռուբեն Զարդարյանի, Դանիել Վարուժանի մատենագիտությունները [Մատենագիտութիւն Լևոն Շանթի, 1969; Շահան Ռ. Պերպերեան (1891-1956): Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն, 1969]: Մատենագիտական այս ցանկերը շատ կարևոր են, քանի որ մամուլի մեջ ցրված նրանց գործերը ի մի բերելով է հնարավոր դրանք փրկել մոռացությունից: Մամուլի մյուս կարևոր դերակատարությունը գրականության ժողովրդականացումն է: Գրել-կարդալը, որը մինչ լրագրության ի հայտ գալը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, դարձավ համաժողովրդական սեփականություն, և պարբերական մամուլը դպրոցի հետ միասին կրթության տարածող, քարոզող և հանրահռչակող հանդիսացավ: Սփյուռքում հայապահպանության խարխիսներ են պետք, և Արտաշես Տեր-Խաչատուրյանի կարծիքով հայապահպան զենքերից մեկը՝ դպրոցի ու եկեղեցու կողքին, պետք է լինի և է հայ մամուլը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում 1950-60-ականներին արտասահմանի տարբեր երկրներում հրատարակվող մամուլի անուններին, նրանց պարբերականությանը, տպաքանակներին, խմբագիր-հրատարակիչներին, թղթակիցներին:

Արտաշես Տեր Խաչատուրյանը Սփյուռքի տարբեր պարբերականներում՝ «Տարօնի արծիւ», «Հայ բոյժ», «Հայկազեան Հայագիտական Հանդես», «Մարգիկ», «Ազդակ», «Հասկ» տարեգիրք, «Շիրակ», «Սփիւռք», «Նայիրի» և այլն, հանդես է եկել հայ կյանքի, ազգագրության, մշակույթի տարբեր

կողմերին, առավելապես՝ հայկական մարզական մամուլի, լիբանանահայ մամուլի, սիրիահայ մամուլի, հայ դաշնակցության մամուլի, Պոլսո «Ազդակ» շաբաթաթերթի մասին, հայ գրքի, տպագրության պատմության, կուսակցական մամուլի և այլ թեմաներով հոդվածներով: Լայնորեն անդրադարձներ է կատարում հայրենիքում և Միյությունում հրատարակվող մամուլի մատենագիտություններին: Իրեն հատուկ անաչառությամբ և ուղղախոսությամբ գրախոսություններ է գրում, որոնք ավելին են քան գրախոսությունը: Դրանցում արձանագրվում են այդ հրատարակություններում առկա բազմաթիվ բացթողումներ, սխալներ, անճշտություններ: Միշտ բարձր գնահատելով և արժևորելով մամուլի մատենագետների տքնաջան ու դժվարագույն աշխատանքը՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը այդ անճշտությունների պատճառ է համարում ոչ այնքան մատենագետների բացթողումները, որքան հավաքածուների անլիարժեքությունը:

Տեր- Խաչատուրյանը պարբերական մամուլը համարում էր լեզվի ուսուցման, հղկման, հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների ձևավորման, հոդվածների գիտական մակարդակի բարձրացմանն ուղղված հարթակներ: Այդ նպատակով էլ «Հասկ» հայագիտական տարեգրքի հենց առաջին համարում սահմանում է չափորոշիչներ, որով ամրագրում էր հայագիտական հրապարակումների գիտական պատշաճության և լրջության բարձր նշանով: «Գործադիր խմբագիրը յարմար նկատեց տրուած որոշ ուսումնասիրութիւններու պարագային՝ խմբագրական ծանօթութեամբ նախամուտ մը կատարել. այլոց պարագային՝ տալ ամփոփումը եթէ օտար լեզուով են: Որոշ ուսումնասիրութիւններու պարագային՝ յաւելուածի բաժին դնել, վաւերագիրներ ու տողատակեր աւելցնել, զանոնք աւելի ամբողջական դարձնելու մտահոգութեամբ» [Հասկ հայագիտական տարեգիրք, 1980, 400]:

Նա անդրադարձներ է կատարում գրողների, գրականության հանրայնացման գործում մամուլի դերակատարությանը: Նա հանգում է այն մտքին, որ հայ մամուլի ավագ պարտականությունը պետք է լինի ճշտորոշել հայ մշակույթի գանձարանի մեջ իր լուման նետող հայ գրողի յուրաքանչյուր լումայի արժեքը: Պետք է բացառել գովասանական գրախոսությունները, դրանք պետք է լինեն գրքի գեղագիտական արժանիքների ու թերությունների բացահայտման հարթակ: Միաժամանակ, չգրախոսվող գիրքը չպետք է դիտարկել իբրև նրա ցածրարժեքության ցուցիչ: Այս աշխատանքներին իրենց նպաստը պետք է բերեն հայ մամուլի երկու մասերը՝ առօրյա և պարբերական: Առաջինը պետք է արձանագրի հրատարակությունների փաստերը՝ հպանցիկ անդրադառնալով դրանց, իսկ երկրորդը պետք է լայնորեն անդրադառնա յուրաքանչյուր գրքին: Պարբերական մամուլի վրա պետք է ծանրանա առավելապես գրողի ստեղծագործական արժեքի մասին հանգամանորեն խոսելու, նրա հաջողության չափանիշը սահմանելու պարտականությունը: Պետք է մամուլը իր ձեռքը պահի գրական-հրատարակչական կյանքի զարկերակին, և գրքերի հրատարակություններին պետք է արագորեն հաջորդեն դրանց մասին գրախոսություններն ու քննարկումները մամուլում, որպեսզի «ուղեցոյց հանդիսանան ընթերցողին»: Հակառակ դեպքում, ուշացած գրախոսությունները չեն կարող արդիական լինեն և կարող է հանդիպեն «սառը վերաբերմունքի» [Տեր-Խաչատուրեան, 1954, № 47, 3]:

Դեռևս 1962 թ. «Բազին»-ում հրապարակած «Մշակութային մտահոգություններ» հոդվածում նա խոսում է ոչ միայն գրողների արխիվների, անտիպների, այլև մամուլի անունների հավաքման և ամբողջացման կարևորության մասին [Տեր-Խաչատուրեան, 1962, № 2]: Ապա Հայաստան կատարած այցելությունից հետո, 1980 թ. Արտաշես Տեր-Խաչատուրյանը դարձյալ ահագանգում է հայ մամուլի պահպանության հետ կապված մարտահրավերների մասին և պահպանության խնդիրներին զուգահեռ առաջ է քաշում տեր-տնօրենների, խմբագիրների, արտոնատերերի, տպարանների անունները վերհանելու, «...պարզելու վերոնշյալ անձերի կամ նրանց հարազատների տվյալները և եթե հավաքածուն չի պահպանվել, «առնվազն տրամադրելի թիւեր ձեռք գցել...» [Տեր-Խաչատուրեան, 1980, № 8, 47]: Արտաշես Տեր-Խաչատուրյանը դա հնարավոր է համարում ազգային առաջնորդարանների, եկեղեցական և ազգային այլ հաստատությունների ու կազմակերպությունների «թանկագին» օժանդակությամբ: Սա խիստ կարևոր էր՝ մամուլի պատմության մեջ այդ փաստերը մոռացության չմատնելու տեսակետից: Օրախնդիր է համարում նաև օտար մա-

մուլի մեջ հայոց վերաբերյալ բոլոր հոդվածների հավաքումն ու Հայաստան փոխադրումը [Նույն տեղում]:

Ամփոփելով, մեկ անգամ ևս փաստենք, որ Արտաշես Տեր-Խաչատուրյանը անուրանալի ծառայություններ ունի հայ մամուլի հավաքման, նոր անունների բացահայտման, հետազոտման, հանրայնացման և հանրահռչակման գործում: Այսօր Հայաստանի ազգային գրադարանում նրա մատենագիտական ցանկի կազմման աշխատանքներ են կատարվում՝ Մատենագիտություն մատենագետի մասին: 2019-2020 թթ. ՀԱԳ-ի անձեռնմխելի բաժնում ստեղծվեց Արտաշես Տեր-Խաչատուրյանի անհատական հավաքածուն, ավելի քան 200 արժեքավոր գիրք ու պարբերական. դրանց մի մասը գրադարանի հավաքածուում բացակայում էր:

SUMMARY

Artashes Ter-Khachaturyan has significant support in assembling the Armenian periodicals, identifying new titles, researching, publicizing and promoting them. He demonstrated all the qualities specific to the intellectuals of the diaspora: a patient teacher, a skilled organizer and editor, an impartial researcher, an accepted public figure, a visible person who establishes and develops ties with the Motherland. Today, the National Library of Armenia is working on compiling his bibliographic series: Bibliography about the librarian. A small part of Artashes Ter-Khachaturyan's personal collection is preserved here: more than 200 valuable books and periodicals. some of them were missing in the library collection.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արտաշես Տեր Խաչատուրեան. Մարդը եւ գործը / Կազմ. և խմբ. Յ. Յովհաննէսեան, Պէյրութ, տպ. Համազգայինի «Վահէ Սէթեան», 2008, 330 էջ:
2. Գարեգին կաթողիկոս: Հրատարակչութեան կողմից // Հասկ հայագիտական տարեգիրք, 1948, էջ 1:
3. Զարդարեան Ռ. Ցայգալոյս, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1977, 447 էջ:
4. Հայ մամուլի ցուցահանդես (1794-1961), Պէյրութ, տպ. Ատլաս, 1961, 21 էջ:
5. Ղազարյան Հ. Սփյուռքի գրադարանը լոկ գրադարան չէ // Հոգևոր հայրենիք, 2007, № 9, սեպտ., էջ 4:
6. Պէրպլերեան Շ. Գեղագիտութիւն և գեղարուեստ / Խմբ.՝ Ա. Տեր Խաչատուրեան, Պէյրութ, G. Doniguiian & Fils, 1975, 414 էջ:
7. Տարօն (Հաւաքածոյ ժողովրդական երգերու) / Հաւաքեց եւ կազմող՝ Ա. Տեր Խաչատուրեան, Պէյրութ, տպ. Յովեա, 1950, 120 էջ:
8. Տեր-Խաչատուրեան Ա. [Ազդ] // Հասկ հայագիտական տարեգիրք, 1980, էջ 400:
9. Տեր-Խաչատուրեան Ա. Հայ գրողն ու մամուլը // Նայիրի, 1954, № 47, 25 յուլիսի, էջ 3:
10. Տեր-Խաչատուրեան Ա. Հայ մշակութային գանձերու փրկութեան եւ պահպանման հրամայականը // Բագին, 1980, № 8, էջ 37-53:
11. Տեր Խաչատուրեան Ա. Հայկական սովետական հանրագիտարան // Հասկ հայագիտական տարեգիրք, Պէյրութ, 1983-1984, 471-481 էջ:
12. Տեր Խաչատուրեան Ա. Մատենագիտութիւն Լեւոն Շանթի, Պէյրութ, ա. հ., 1969, 49 էջ:
13. Տեր Խաչատուրեան Ա. Մեր պարբերականները // Վեմ, Փարիզ, 1933, № 2, էջ 141, (Գիրք եւ մամուլ):
14. Տեր-Խաչատուրեան Ա. Մշակութային մտահոգութիւններ // Բագին, 1962, № 2, էջ 65-67:

ՀԱՄԱՍՏԵՂ, ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ, ՀԱԿՈԲ ԽԱՇՄԱՆՅԱՆ.
«ՄՈՌԱՑՎԱԾ ԷԶԵՐ»Ի ՏԱՄՆԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ «Մոռացված էջեր»ի 12 հատորներ, նամակներ, գրական ստեղծագործություններ, հայ մամուլի էջերում մնացած անծանոթ էջեր, Հայաստան-Սփյուռք կապերի պատմության հետաքրքիր էջեր:

Keywords: The 12 volumes of “Forgotten Pages,” letters, literary works, unknown pages left in Armenian periodicals, interesting pages of the history of Armenia-Diaspora relations.

Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) գրական ժառանգության ուսումնասիրության առաջին քայլերից ուշադրությունից չեն վրիպել նրա մտերիմների՝ Արամ Հայկազի (Զեքեմյան, 1900-1986), Հակոբ Խաչմանյանի (1888-1968) հետ առնչվող տպագիր կամ արխիվային նյութերը: Այս երեք ՀԱՅԵՐԻ ընկերությունը բացառիկ էր և օրինակելի: Փառք Աստծո, տասնամյակներ անց կարողացաւ ընթերցողին պատկերացում տալ նրանց բարեկամության մասին:

2005-2022 թթ. հրատարակել են «Համաստեղ. Մոռացված էջեր»ի չորս, «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» շարքի յոթ և «Հակոբ Խաչմանյան. Մոռացված էջեր: Նամակներ» հատորը. սրանով լրացել է տասներկու հատորների¹⁷ շարքը: Այս գրքերում ներկայացված են «Հայրենիք» օրաթերթի¹⁸, նույնանուն հանդեսի, «Հայրենիք» տարեգիրք-տոնացույցի, «Փինիկ»ի, «Բազմավեպ»ի, «Գեղունի»ի, «Հայաստանի կոչնակ»ի, «Բազին»ի, «Ամերիկահայ հանրագիտակ»ի էջերում հրատարակված բազմաթիվ գրական երկեր ու հոդվածներ, ծավալուն ուսումնասիրություններ, ինչպես նաև Գրականության և արվեստի Եղիշե Զարենցի անվան թանգարանում պահվող նյութեր:

Առանձնակի ջանասիրությամբ են կազմել այս հատորների ծանոթագրությունների բաժինը, որ պատմաբան, իմ լավ բարեկամ ու հատորների մեծ մասի խմբագիր Գեորգ Յազըճյանը լրացրել է հետաքրքիր մանրամասներով: Հատորներն ունեն նաև բառարաններ. Գեորգ Յազըճյանի՝ արեւելյան մի քանի լեզուների խոր և հիմնավոր իմացությունը շատ է հեշտացրել այդ գործը:

Գեորգին գրավոր ու բանավոր շնորհակալություն հայտնելու առիթներ ունեցել են և չեն ծուլանում կրկնել շնորհակալ են:

Համաստեղի երկերի «Հայաստանի լեռների սրնգահարը» հատորը Երեւանում լույս է տեսել 1986-ին [կազմող՝ Գեղամ Սեւան (Սվաճյան, 1926-1991)]:

«Համաստեղ. Մոռացված էջեր»ի չորս հատորներում հրատարակել են գրողի՝ հայաստանաբնակ ընթերցողին անծանոթ ժողովածուներում հրատարակված գրական երկեր՝ առաջին բանաստեղծություններից, մանրապատումներից, առաջին՝ «Շէն գիւղի հին օրերէն» պատմվածքից մինչև հայ գրականության երկու գլուխգործոց՝ «Այծետոմար» երգիծական պոեմը և քսաներկու աղոթքներից կազմված «Աղօթարան»ը, պատմվածքներից հինգի և «Այծետոմար»ի դրամատիկական տարբերակները:

Մեր անսկզբունք ու հեղիեղուկ օրերում, երբ թագավորում է նորին մեծություն... սուտը, բացառիկ, շեշտում են՝ բացառիկ կարեւորություն ունեն «Այծետոմար»ը, որպես նախազգուշացում

¹⁷ Խոսքը իմ հրատարակած հետևյալ հատորների մասին է՝ «Համաստեղ. Մոռացված էջեր», Ա-Դ հատորներ, Երևան, 2005-2007: «Արամ Հայկազ. Մոռացված էջեր», Ա-Է հատորներ, Երևան, 2010-2016: «Հակոբ Խաչմանյան. Մոռացված էջեր: Նամակներ», Երևան, 2022:

¹⁸ Շարադրանքում հղումները տալիս են թերթերով ու ամսագրերով: «Հայրենիք» օրաթերթում տպագրված նյութերի հրատարակության թիվն ու օրը նշում են փակագծերում: Մյուս օրաթերթերն ու հանդեսները նշվում են շարադրանքում:

համատիեզերական խաղաղության դարաշրջանի մասին բարբաջող ազգադավ ուժերին, և «Աղօթարան»ը, որպես մեր հավատի արմատները, ազգային դիմագիծը վերագտնելու միջոցներից մեկը՝ Աստվածաշնչի ու Նարեկի հետ:

Համաստեղի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյակներին նվիրված հոդվածները, նշանավոր մտավորականների հուշերը ինքնատիպ կամուրջ եղան Համաստեղի համար հոբելյանական տարվա՝ 1966 թ. և 2005 թ. Հայաստանի Հանրապետությունում Համաստեղի ծննդյան 110-ամյակին նվիրված մի շարք հետաքրքիր ձեռնարկների միջև:

Փաստորեն, 2005 թ. հրատարակել եմ Համաստեղի՝ այս շարքի գրքերից երեքը:

«Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Դ հատորը լույս է տեսել «Գալուստ Կուլյանյան» հիմնարկության հովանավորությամբ: Գիրքն ավարտվում է շարքի չորս հատորների նյութերի ցանկով:

«Արամ Հայկազ. Մոռացված էջեր» շարքի յոթ հատորների հրատարակությունը դրամատիկ ու մեր երկրի համար շատ տիպական պատմություն է, բայց կարելո՞րն արդյունքն է: Այս յոթ հատորներում ժամանակագրական կարգով ներկայացրել եմ «Հայրենիք» օրաթերթի և համանուն ամսագրի՝ Հայաստանի Ազգային գրադարանում պահվող համարներում տպագրված, արխիվում պահվող և ոչ մի ժողովածուում չգետեղված նյութերը, գրողի երկերին, գրքերին նվիրված հոդվածներ:

Ծավալուն նյութերը ներկայացված են հատորների «Հավելված» բաժնում:

Արամ Հայկազը Նյու Յորքում ապրում էր Բնօրրանի՝ Շապին Գարահիսարի սուրբ հիշատակներով: Մանկության, ծննդավայրի ու դպրոցների, ծննդավայրի ինքնապաշտպանության հերոսական օրերի ու պարտության, օտարների միջավայրում կրած տառապանքների, պատանեկան առաջին ուրախությունների հիշատակները դառնում են վավերագրեր՝ դեպքերի մասնակցի ու ականատեսի հաստատումով:

Արամ Հայկազի հոդվածներից առանձնացնեմ մեկը՝ «Նշանաձու կ'ըսէ, որ...» (1972 թ. հունիսի 9): Գրողը պատմում է՝ հայությունը վարժվել էր, որ ծույլ ու անբան թուրքին, քրդին կերակրելու համար թուրքական այսպես կոչված պետությունը պարբերաբար արտոնում էր հայերին թալանելը: Ուշադիր՝ պետական մակարդակով, հատուկ հրամանով... 1915թ. գարնանը շատ հայեր սպասում էին թալանի, կոտորածի ավարտը հայտարարող հրահանգին, այնինչ թուրքերը սպառնացին՝ հայության արմատն են չորացնելու...

Սա արդարացում չէ, բայց խորհելու տեղիք է տալիս. հայությունը կոմեդ ու դիմադրեց՝ հաղթահարելով հնարավոր ու անհնար թվացող բազմաթիվ խոչընդոտներ, բայց դարերի ընթացքում չճանաչեց իր Բնօրրանը խլած վայրի ցեղերի արյունարբու էությունը...

Այս շարքի Ե հատորում՝ էջ 189-194, ներկայացրել եմ Վահե Գյուլեսերյանի (1894-1970) «Թէ ինչպէս ջարդուեցանք «ոչխարներու պէս» (Արամ Հայկազի «Նշանաձու կ'ըսէ... յօդուածի մասին») գրությունը...

Արամ Հայկազը սովորաբար ամեն տարվա օգոստոսի վերջին օրերին իր մեծ համաքաղաքացու՝ Զորավար Անդրանիկի (1865-1927) հիշատակին նվիրված հոդված էր գրում: Մի առիթով հավաքեցի այդ հոդվածները ու պարզեցի մի հետաքրքիր հանգամանք՝ գրողի խոսքը գրեթե չի կրկնվում, ու կարելի է դրանք ամփոփել փոքրիկ գրքույկում՝ որպես երախտիքի ու հարգանքի տուրք «կռուի սիրահար» հմուտ ռազմիկի հիշատակին:

Այսպես, «Հայրենիք» օրաթերթի 1962 թ. օգոստոսի 30-ի համարում լույս է տեսել Արամ Հայկազի «Զորավար Անդրանիկ (Իր մահուան տարելիցին առթիւ. 1927թ., օգոստոս 30)» հոդվածը: Գրողը պատմում է «գերմարդկային ուժով ու կարողութիւններով» հայտնի մեր ազգային հերոսի ու նրա մարտական ընկերների «անխոցելի» լինելու մասին. նրանք «գիրենք պաշարող խուժանին ու բանակին վրայ առասպելական ու անտեսանելի էակներու տպաւորութիւն ձգեցին արդարացիօրէն»:

Արամ Հայկազը բազմաթիվ հոդվածներ է նվիրել իր Ուսուցիչների, հատկապես՝ Հակոբ Օշականի (Քյուֆեճյան, 1883-1948) հիշատակին. այդ հոդվածները և Արամ Հայկազի «Թէ ինչպէս

կը դասախօսէր Օշական» և «Թէ ինչպէս կ'ուսուցանէր Օշական» ծավալուն հիշողությունները հրատարակել են շարքի հատորներում:

Արամ Հայկազը 1969 թ. սեպտեմբերի 6-27-ը Խորհրդային Հայաստանում էր և վերադարձից հետո գրեց՝ «Գացէ՛ք և ձեր աչքով տեսէ՛ք Հայաստանը» («Կարօտ» ժողովածու, Բեյրութ, 1971):

«Ազդակ» օրաթերթի 1969 թ. ապրիլի 23-ի համարում տպագրվել է Արամ Հայկազի «Յաղթանակի տօնը» հոդվածը: Գրողը հիշատակում է հայոց ազատամարտի հերոսների անունները, խոսում Խորհրդային Հայաստանի, աշխարհահռչակ հայ գիտնականների մասին, չի մոռանում նաև թուրք «համաշխարհային համբաւով ոճրագործներ»ին և արձանագրում. «Ցեղասպանութեան գիւտը իրենցն է: Իրենք եղած են զայն առաջին անգամ գործադրողները, երբ այդ բառը գոյութիւն անգամ չունէր բառարաններուն մէջ»:

1970 թ. գարնանը հարուցվել է դատական գործ «Ազդակ» և «Զարթօնք» օրաթերթերի արտոնատերեր Հայկ Պալյանի (1897-1987) և Բարունակ Թովմասյանի (1910-1991) դեմ: Պատճառներից մեկը Արամ Հայկազի՝ վերը հիշատակված հոդվածն է, մյուսները՝ Նշան Պեշիկթաշլյանի (1898-1972)՝ նույն օրաթերթի 1968 թ. հոկտեմբերի 14-ի համարում տպագրված «Թրքական վիրաբուժութիւնը» և Վերապատվելի Եփրայիմ Գ. Ճոնազյանի (1890-1971)՝ «Զարթօնք»ի 1969 թ. ապրիլի 24-ի համարում տպագրված «Ինչո՞ւ նահատակուեցանք» հոդվածները:

«Ազդակ»ի 1972 թ. հունիսի 24-ի համարում տպագրված է Արամ Հայկազի «պաշտպանական խոսքը»՝ «Եթէ կարենայի հոդ ըլլալ» հոդվածը. գրողը պատմում է 1915թ.-ին թուրքերի գործած ոճիրների մասին, որոնց «բանականութիւն ու սիրտ ունեցող մարդը» պարզապէս չի կարող հավատալ...

Շարքի հատորներում ներկայացված են Արամ Հայկազի «Գիրքերու հետ» կրկնվող խորագրի տակ տպագրված հոդվածները, բազմաթիվ գրախոսականներ: Առանձնացնեն «Նահապետը»՝ Հրաչյա Քոչարի (Գաբրիելյան, 1910-1965) վեպի մասին («Հայրենիք» օրաթերթի 1964 թ. հոկտեմբերի 7 և «Գրական թերթ» շաբաթաթերթի նոյեմբերի 6): Վեպը կարդալուց հետո Արամ Հայկազը «ուրախութիւնն ու խանդավառութիւնը» բաժանելու համար ընթերցողներ փնտրեց նաև Խորհրդային Հայաստանում և հոդվածն ընկերոջ՝ Հակոբ Խաչմանյանի հետ ուղարկեց Երևան...

Հարկ է նշել, որ Արամ Հայկազը, ճիշտ է, դժգոհում էր արեւելահայերենի ուղղագրությունից, բայց սիրով կարդում էր գրչընկերների հրատարակած գրքերը և գրախոսում: Այսպէս, «Հայրենիք» օրաթերթի 1971 թ. նոյեմբերն 23-ի համարում տպագրված է նրա «Դու հասկացա՞ր ինձ» հոդվածը՝ Բաղիշ Հովսեփյանի (1922-2004) նույնանուն վեպի մասին: Չմոռանամ նշել՝ նա հիացած էր արեւելահայերենի սահմանական եղանակի ներկա ժամանակի և ներգոյական հոլովի «ուս»երով:

Շարքի Է հատորում ներկայացրել են գրողի նամակագրությունը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պատասխանատուների, Լեւոն Գ. Մինասյանի (1920-2012) և Աղասի Հովհաննիսյանի (1915-2002) հետ:

1972 թ. Արամ Հայկազի համար հոբելյանական էր. ԱՄՆ-ում, Կանադայում նշել են գրողի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյանները: Նյու Յորքում, Դետրոյտում, Տորոնտոյում, Մոնրեալում, Բոստոնում, Լոս Անջելեսում և այլ քաղաքներում տեղի ունեցած ձեռնարկներում բանախոսը Պողոս Սնայանն (1927-2014) էր: Հատորներում ներկայացրել են այս հոբելյանին առնչվող բազմաթիվ նյութեր:

Առանձնացնեն Արամ Հայկազի և իմ լավ բարեկամ, գրողի 70 և 110-ամյա հոբելյանների կազմակերպիչներից Հրանտ Մարգարյանի (ծնվ. 1938 թ.) հետաքրքիր հարցազրույցը գրողի հետ (1972 թ. մարտի 11):

«Արամ Հայկազ. Մոռացված էջեր» շարքի Է հատորն ավարտվում է Արամ Հայկազի, Գեորգ Յազըճյանի և իմ լավ բարեկամ Թորոս Թորանյանի (1928-2021) «Վասն վերջաբանի «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի Ա-Է հատորներու» ծավալուն խոսքով:

«Մոռացված էջեր»ի տասներկուերորդ՝ «Հակոբ Խաչմանյան. Մոռացված էջեր: Նամակներ» գիրքը երկար ու դժվար ճանապարհ անցավ: Այս հատորը ներառում է Հակոբ Խաչմանյանի նամակագրությունը Համաստեղի, Վազգեն Ա (Լեւոն Պալճյան, 1908-1994) Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1955-1994), Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի

հայկական ընկերության և Մփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի, «Համագգային» հայ կրթական միության պատասխանատուների հետ:

Նամակները գրվել են տասնամյակներ առաջ, բայց համագգային մտահոգությունները, դժբախտաբար, այժմեական են նաև այսօր:

Հատորն ունի անձնանունների ցանկ:

Այս տասներկու հատորները շաղկապված են ներքին տրամաբանությամբ. այսպես, Արամ Հայկազի «Այց Մոնթրեալի մեր գաղութին» հոդված-հուշագրությամբ արձանագրվում են Համաստեղի հետ Արամ Հայկազի և Հակոբ Խաչմանյանի ապրած մի քանի երջանիկ օրերը հեռավոր Կանադայում, իսկ «Իմ լաւ բարեկամը՝ Յակոբ Խաչմանեան» (1968 թ. հունիսի 1) հոդվածն Արամ Հայկազի հիշատակի խոսքն է ընկերոջ մասին: «Հայրենիք» օրաթերթի 1975 թ. դեկտեմբերի 14-ի համարում հրատարակված է Արամ Հայկազի «Անհետացած, բայց չմոռցուող դէմքեր» հոդվածը, որի մի հատվածը նվիրված է Խաչմանին, ինչպես նրան կոչում էին ընկերները:

«Մոռացված էջեր» շարքի տասներկու հատորներում ներկայացված է Համաստեղի, Արամ Հայկազի գրական ժառանգության մեկնությանը նվիրված հսկայածավալ նյութ, որը շատ կօգնի նրանց մասին գիտական աշխատանք կատարողին, նաև շարքային ընթերցողին, որ լավ հասկանա կարդացածը, կարողանա համադրել-հակադրել կարծիքները: Թող այս հատորները դառնան յուրատեսակ նվեր նրանց համար, ովքեր արժեւորում են պատմությունը, կատարվածից դաս քաղում ու միշտ պատրաստ են լսել-կարդալ-սովորել, ոչ թե թութակի պես կրկնել արևմտյան այսպես կոչված ճշմարտությունները...

Պարտավոր եմ նշել՝ այս հատորների լույսընծայման գործում շատ-շատ մեծ ավանդ ունեն լուսահոգի հայրս՝ Մամիկոն Խաչատրյանը (1930-2015) և «Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանը (1950-2023), որոնց հիշատակի առաջ խոնարհվում եմ:

Այս տասներկու հատորները՝ վեց հազար ընդհանուր տպաքանակով և չորս հազար հարյուր էջ ընդհանուր ծավալով, շատերին օգնեցին ճանաչել Մփյուռքի այս երկու հայ գրողների գրական վաստակը, նրանց և Հակոբ Խաչմանյանի օգնությամբ հասկանալ Հայաստան-Մփյուռք հարաբերությունների ներքին խութերը, հայությանը հուզող հարցերն ու խնդիրները:

Այս տասներկու հատորները դրանց մեծ մասի խմբագիր Յազնյան Գևորգի և իմ պատասխանն է մեր Մեծ Հայրենիքի գրավյալ տարածքները հայության հիշողությունից ջնջելու հայատյաց ցեղերի ու նրանց հայանուն գործակալների դավադիր ծրագրերին: Այդ գործում մեզ աջակից են Խաբբերդի Բարջանճ գյուղից Բոստոն հասած Համբարձումը, շապինգարահիսարցի Արամը և պարտիզակցի Հակոբը. նրանք արդեն քանի՜ տասնամյակ զրուցում են ՀԱՅ ընթերցողի հետ ու ՀԱՅ մարդու հոգում կենդանի պահում Բնօրրանի հիշատակները:

SUMMARY

The 12 volumes of “Forgotten Pages” present the pages of rich heritage left by two prominent cultural-public figures of Armenian literature of the diaspora.

The volumes include letters, literary works, unknown pages of Armenian continuous resources, articles dedicated to the Armenian reality and various issues of Armenian life. These books, published between 2005-2022, summarize the Armenia-diaspora relations of the last century, whose unbiased examination is still very useful for Armenians today.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ազդակ» օրաթերթի 1968 թ. հոկտեմբերի 14-ի համար:
2. «Ազդակ» օրաթերթի 1969 թ. ապրիլի 23-ի համար:
3. «Ազդակ» օրաթերթի 1972 թ. հունիսի 24-ի համար:
4. «Գրական թերթ» շաբաթաթերթի 1964 թ. նոյեմբերի 6-ի համար:
5. «Զարթոնք» օրաթերթի 1969 թ. ապրիլի 24-ի համար:
6. «Հայրենիք» օրաթերթի 1962 թ. օգոստոսի 30-ի համար:

7. «Հայրենիք» օրաթերթի 1964 թ. հոկտեմբերի 7-ի համար:
8. «Հայրենիք» օրաթերթի 1968 թ. հունիսի 1-ի համար:
9. «Հայրենիք» օրաթերթի 1971 թ. նոյեմբերի 23-ի համար:
10. «Հայրենիք» օրաթերթի 1972 թ. հունիսի 9-ի համար:
11. «Հայրենիք» օրաթերթի 1972 թ. մարտի 11-ի համար:
12. «Հայրենիք» օրաթերթի 1975 թ. դեկտեմբերի 14-ի համար:
13. Խաչմանյան Հ., Մոռացված էջեր: Նամակներ (բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Հայաստան», 2022, 544 էջ:
14. Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, «Խորհրդային գրող», 1989, 704 էջ:
15. Համաստեղ, Մոռացված էջեր, հ. Ա (բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Հայկական հանրագիտարան», 2005, 320 էջ:
16. Համաստեղ, Մոռացված էջեր, հ. Բ (բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2005, 320 էջ:
17. Համաստեղ, Մոռացված էջեր, հ. Գ (բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2005, 320 էջ:
18. Համաստեղ, Մոռացված էջեր, հ. Դ (բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2007, 320 էջ:
19. Հայկազ Ա., Կարօտ, Բեյրութ, «Մշակ», 1971, 335 էջ:
20. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Է (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 320 էջ:
21. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Ա (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2010, 320 էջ:
22. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Բ (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2011, 320 էջ:
23. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Գ (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2013, 320 էջ:
24. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Դ (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2013, 320 էջ:
25. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Ե (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2014, 320 էջ:
26. Հայկազ Ա., Մոռացված էջեր, հ. Զ (բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Մարգարիտա Խաչատրյանի), Երևան, «Տիգրան Մեծ», 2015, 320 էջ:
27. Հովսեփյան Բ. , Դու հասկացա՞ր ինձ, Երևան, «Հայաստան», 1971, 516 էջ:
28. Քոչար Հ., Սպիտակ գիրքը, Երևան, «Հայաստան», 1965, 340 էջ:

**ԹԵՈԴԻԿԻ «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ» ԻՐԵՒ
ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՐ**

Բանալի քառեր՝ Թեոդիկ, «Ամենուն տարեցոյցը», նամակ, Եղիա Տեմիրճիպաշեան, գրապատմական երկխօսութիւն, բանասիրական ճշգրտումներ:

Keywords: “Amenun Taretsuytsy,” Theodik, letter, Eghia Temirchipashyan, literary-historical dialogue, philological adjustments.

Գաղտնիք չէ, որ հայ մամուլի շատ ու շատ անուններ եղել եւ մնում են գրապատմական երեւոյթների ու իրադարձութիւնների անգնահատելի պահոց: Այդ պահոցներից մէկը վստահաբար հայ մշակոյթի երախտաւորներից Թեոդիկի (Թեոդորոս Լապճինճեան) «Ամենուն տարեցոյցը» հատորներն են՝ լոյս տեսած 1907-1929 թթ., որոնց հրատարակութիւնը համընկաւ իր բնութագրած եւ իր կրած «հայ Գողգոթային»՝ ճամբորդելով հեղինակի հետ Պոլսից մինչեւ Փարիզ, Վենետիկ ու Վիեննա, դառնալով հայութեան կեանքի իւրատեսակ վկայարանը: Այս առումով բնութագրական է հայ մամուլի մէկ այլ երախտաւորի՝ Հայր Մկրտիչ Պոտուրեանի գնահատութիւնը, թէ «Այս գիրքը երբեք «րեքլամ»ի պէտք չունի: Ո՛չ թէ միայն «Ամենուն», այլ «ամէն ժամանակի Տարեցոյց» է, ո՛չ երբեք հիննալու դատապարտուած» [Թեոդիկ, 1909, 8]:

Պարբերականի՝ «ամենուն» պատկանող էջերում շատ հրաշալի նիւթեր կարելի է մատնանշել՝ գրական բազմաթիւ ու բազմապիսի անտիպ էջերից մինչեւ թարգմանութիւններ, պատմագիտական ակնարկներ, բժշկագիտական տեղեկութիւններ ու ծիծաղաշարժ ու զուարճալի պատմութիւններ, որոնք, ինչպէս բնութագրում է պոլսահայ գրող, «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռ. Հատտէճեանը, այսօր էլ «կը փնտռուին, ուսումնասիրութիւններու ատաղձ կը հայթայթեն» [Հատտէճեան, 2008, 58]: Սակայն մեր ուշադրութեան կենտրոնում նամակներն են, որոնք շատ յաճախ շարունակում են պահուած մնալ միայն տարեցոյցի էջերում եւ կամ սկզբնադրիւրի դեր են խաղացել առանձին հեղինակների ժողովածուների հրատարակութեան համար: Ինքը Թեոդիկն էլ նամակները դիտարկել է իր պարբերականի կարելոր ենթաբաժանումներից մէկը:

Բնականաբար, այստեղ տեղ գտած հարիւրաւոր նամակներին անդրադարձը հնարաւոր չէ: Արձանագրենք միայն, որ գրեթէ բոլոր համարները բացում են խմբագրին ու նրա գործին նուիրւած գնահատական-նամակներով ու մամուլի էջերի գրախօսականներից քաղուածքներով, որոնք, սակայն, նկատի առնելով իբրեւ մէկ թեմատիկ ընդհանրութիւն, զանց են առել: Զանց են առնուած նաեւ համապատասխան ծանօթագրութիւններով եւ բանասիրական աղբիւրային յղումներով յետագայում հրատարակուած նամականիւթերը:

Սրա կողքին կայ նաեւ Թեոդիկի՝ տարեցոյցից դուրս մնացած նամակագրութիւնը՝ թէ՛ իր գրած (ասենք՝ Արշակ Ալպոյաճեանին ուղղուած տասնեակ նամակները, որոնք պահուում են Եղիշէ Զարենցի անուան ԳԱԹ-ում), թէ՛ իրեն ուղղուած նամակները (եթէ վերցնելու լինենք միայն Դանիէլ Վարուժանի օրինակը), որոնք յաճախ վերաբերում են նաեւ պարբերականի հրատարակութեան, աշխատակիցների կամ նիւթերի ընտրութեան հարցերին: Պէյրութի «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի էջերում Վաչէ Ղազարեանը «Թղթեայ զաւակներու «հայր»ը՝ Թեոդիկ» վերտառութեամբ լոյս է ընծայել Թեոդիկի նամակները՝ ուղղուած Մեսրոպ Նշանեանին (2006, էջ 261-296), իսկ Վարդան Մատթէոսեանը տպագրել է «Թեոդիկին ուղղուած նորայայտ նամակներ» (2014, էջ 339-376): Սակայն այս բոլորին անդրադարձը կարող է մէկ այլ քննութեան նիւթ լինել:

Ինչ մնում է «Ամենուն տարեցոյց»ին, նրա էջերում հիւրընկալուել են բազմաթիւ գրամշակութային գործիչներ, նուիրական անուններ՝ Մատթէոս Մամուրեան, Հայր Ղեւոնդ Ալիշան, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, Տիգրան Զեօկիւրեան, նրանց կողքին եւ՝ արեւելահայ դէմքեր, թէպէտ

ոչ նոյն ընդգրկումով: Կարելի է ընդգծել, որ որոշակի նախապատուութիւններ, այնուամենայնիւ, նկատուում են: Դա առաջին հերթին վերաբերում է դասընկերներ Ռեթէոս Պէրպէրեանին, Եղիա Տէմիրճիպաշեանին, Մինաս Չերազին, ինչպէս նաեւ Գրիգոր Օտեանին: Անկարելոր չէ, որ ինքն էլ Պէրպէրեան վարժարանի շրջանաւարտ էր:

Շարադրանքում տրուում են ոչ միայն նամակագրական էջերը, այլեւ դրանց մատենագիտական յետագայ ճակատագիրը:

Այսպէս, Թէոդիկի տարեցոյցի տարբեր համարներում լոյս տեսած Եղիա Տէմիրճիպաշեանի նամակներից յիշենք հետեւեալները՝ ուղղուած Մինաս Չերազին (1869, Մարտ 10(22), Օգոստոս 25, 1874, Մայիս 14, 1898, 13 Ապրիլ), Հրանդ Ասատուրին (1881, Սեպտեմբեր 19, 1883, Ապրիլ 9, նոյն թուականի Դեկտեմբեր 30, 1884, Մայիս 22, 1897, Սեպտեմբեր 3 եւ եւս մէկ անթուակիր), Զապէլ Ասատուրին (1890, Սեպտեմբեր 4 եւ 1898, 25 Օգոստոս), որոնց մի մասը պահուում է Եղիշէ Չարենցի անուան ԳԱԹ տարբեր ֆոնդերում կամ մտել է 1955-ի փարիզեան «Արձակ էջեր, նամակներ, քերթուածներ» եւ 1986-ի երեւանեան «Երկեր» ժողովածուների մէջ: Ի տարբերութիւն առաջինի, սակայն, «Երկեր»ում Թէոդիկի աղբիւրները չեն վկայակոչուում: Իսկ Չերազին ուղղուած վերոնշեալ Օգոստոս 25, 1869 թուակիր նամակը, ճիշդ է, առաջինում տեղ է գտել աղբիւրի վկայակոչումով, սակայն՝ առանց ժամանակային նշումի, նամակում տեղ գտած հեղինակային գծագրութեան ու ուղեկցող հետեւեալ տողերի. «Ա՛լ չալտի գծեմ, Մինաս: Ա՛հ, իրաւամբ գրիչը ձեռքէս ինկած է: Ես որ գրչիս ծայրովը կենդանի ձեռներ դնել կարող էի երէկ՝ անկենդան թղթերու վրայ, այսօր չեմ կարող ինձ պաշտելի ձեռք մը գծել, ձեռք մը որուն վրայ մի՛միայն հոգւոյս հուրովը տաքցած շուրթերով համբոյրներ դրոշմած եմ...» [Թէոդիկ, 1914, 35], ինչն էլ թերեւս անցել է երեւանեան հրատարակութեան մէջ:

Ուշադրութիւն է գրաւում 1911-ի համարում փոքրիկ, առաջին հայեացքից աննշան թուացող, սակայն քնարաշունչ մի նամակ՝ «Առ Ասքանազ Պետո ի Սօտա» յղումով, թուականը՝ 1890: Բանն այն է, որ Պետոն այն նաւագն է, որ Տէմիրճիպաշեանին փրկել է ինքնասպանութիւնից եւ ըստ էութեան նրա գրական մնայուն հերոսն է: «Ամէնուն տարեցոյց»ի համապատասխան համարից արդէն մէկ տարի անց, Զմիւռնիայի «Հայ գրականութիւն» հանդէսի 1912 թուականի 12-րդ համարում ձեռագրից անհրաժեշտ մեկնութիւն-բացատրականով Միքայէլ Կիւրճեանը լոյս է ընծայել «Յիմար արշաւն (յիմար տաղ)» առ Ասքանազ Պետո յղումով 1893, Ապրիլ 27 թուակիր քերթուածը: Բացի այդ՝ Տէմիրճիպաշեանն «իր ազատարարին» է ձօնել նաեւ «Աշխատութեան երգն» արձակ կտորը՝ «Շաղիկ»ի իմբագիր Ա. Սուրենեանին ուղեկցող նամակով:

Եղիայի նամակներից մի ուշագրաւ կտոր է պահուած տարեցոյցի 1908-ի թուի մէջ՝ խորագրուած «Նորայր ու Նուպար», ուղղուած Մեսրոպ Նուպարեանին, եւ գնահատական խօսք է Նորայր Բիւզանդացու «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն: Հետեւողութեամբ բառարանացն Եմիլ Լիդրէի եւ գաղղիական ակադիմիայ» (1884) եւ Մեսրոպ Նուպարեանի¹⁹ «Բառարան ֆրանսերէնէ հայ-աշխարհիկ» (1892) գործերի մասին: Սա թոյլ է տալիս ենթադրելու, որ նամակը գրուած պիտի լինի 1892-ին կամ դրանից յետոյ:

Բնականաբար, բոլոր նամակներին անդրադարձն անհնար է. եթէ վիճակագրօրէն նայելու լինենք, չկան համարներ, որոնցում ներկայութիւն չունենայ Եղիա Տէմիրճիպաշեան գրողն ու նրա նամականին: Ստացում է, որ այս հեղինակի ստեղծագործական կենսապատումը ամբողջացնելու ճանապարհին «Ամէնուն տարեցոյցը» անգնահատելի դեր ունի:

Յաջորդը Գրիգոր Օտեանի տասնեակ նամակներն են, որոնցից առանձնացրել ենք մի քանիսը: Այսպէս, 1911-ի համարի էջերում «Պոլիս՝ բարեկամի մը» ուղղուած 1884, Ապրիլ 12 եւ 1885, Փետրուար 1 թուակիր երկու նամակներից առաջինը ծանրանում է Սառա Բէռնարի եւ թատրոնի շուրջ, երկրորդը վերաբերում է Եղիա Տէմիրճիպաշեանին: Նամակները տեղ են գտել «Գրիգոր Օտեանի գոհարները» հաւաքածուի Բ. Հատորում (Կ. Պոլիս, 1931)՝ նորից առանց հասցեատիրոջ ճշգրտման: Այդ հասցեատէրը, պարզուում է, Հրանդ Ասատուրն է: Նախ, առաջին նամակից հատուած ենք կարդում Հայր Սիմոն Երեմեանի «Գրագէտ հայեր»ում՝ հաւաստումով, թէ Հրանդ

¹⁹ Կարելոր է մի ոչ երկրորդական հանգամանք. մինչեւ իր բառարանի հրատարակութիւնը Նուպարեանը լոյս է ընծայել «Նորայրեան բառարանի սխալները» աշխատութիւնը (1886):

Ասատուր «Արեւելք»ի գրած մէկ քանի յօդուածներու առիթով Օտեանի այս տողերը կ'ընդունի» [Երեմեան, 1914, 15]: Երկրորդի առիթով, նախ, յուշարար են Եղիա Տէմիրճիպաշեանին վերաբերող հետեւեալ կտորը, թէ «քու Պոլիս երթալէդ ի վեր²⁰ Տէմիրճիպաշեանը նորէն սկսաւ դրկել ինձ իւր տետրակները (իմա՝ «Գրական եւ իմաստասիրական շարժում»ը – Բ.Ա.), զորս չեմ կարդար: Սիրտերը թունդ կը հանէ, հոգիները կը վառէ, եւ ապա խորշա կ'ընէ փշէ. մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ այսպէս» [Թէոդիկ, 1911, 28]: Իսկ արդէն «Դիմաստուներ»ում Ասատուրը պարզապէս մէջբերում է նամակից մի հատում: Փաստօրէն, Երեմեանի եւ Ասատուրի գրքերից տասնամեակներ անց էլ Օտեանին նուիրուած գրքում շարունակում է հասցէատէրը անանուն մնալ:

«Գրիգոր Օտեանի գոհարները» հատորից դուրս է մնացել 1914-ի համարում գետեղուած Ներսէս Պատրիարքի մահուան առթիւ Մկրտիչ Էսայեանին ուղղուած 1884-ի 14 Նոյեմբեր թուակիր նամակը: Նոյն թուի մէջ լոյս է տեսել նաեւ Ներսէս Պատրիարքի նամակը՝ դարձեալ ուղղուած իր գործակից Մկրտիչ Էսայեանին (1878, Օգոստոս 19): Գրիգոր Օտեանից եւ մէկ փոքրիկ նամակ էլ Խաչիկ Օտեանից տեղ են գտել աւելի ուշ, արդէն 20-ական թթ. համարներում: Դրանց մի մասը դարձեալ դուրս է մնացել վերոնշեալ հատորից:

Առհասարակ, պիտի նկատել, որ Գրիգոր Օտեանը եւ Հրանդ Ասատուրը ըստ էութեան Եղիայի հոգեաշխարհը կազմած անհատականութիւններ են, որոնցից առաջինի համար նկատում է, թէ «իմ հոգեւոր եղբայրս ես», իսկ «Օտեանին որդեակն եմ ես հոգեւոր» [Թէոդիկ, 1914, 39]: Նկատելի է Թէոդիկի ջանքը՝ ամբողջացնելու այս հեղինակներով կազմուած գրամշակութային մթնոլորտը:

Հրանդ Ասատուրին գրական եւ մշակութային բաւական լայն շառաւիղ ընդգրկող, ըստ էութեան նաեւ մամուլի տեսութիւնն ամփոփող մէկ նամակ էլ ուղղել է Յովհաննէս Շահնազարը (Պաթում, 1 Նոյեմբեր, 1880), որ լոյս է տեսել «Գրական էջ մը» խորագրի տակ, 1914-ին:

Նամակագրական բաւական հարուստ նիւթ կայ կապուած Թէոդիկի կնոջ՝ Արշակունի Թէոդիկի «Ամիս մը ի Կիլիկիա» ուղեգրութեան մասին: Այդ նամակները ուղղուած են ինչպէս խմբագրին, այնպէս էլ հեղինակին: Յատկապէս ուշագրաւ են դրանցից երկուսը. առաջինը վերաբերում է Ռուբէն Սեւակին, որի նամակը գնահատութիւնից զատ նաեւ գրապատմական երկխօսութեան հրաշալի մէկ դրուագ է. «Սարսաղով կարդացի «Ամիս մը ի Կիլիկիա»ն: ՅԱԻն գիրքն է այդ, աւելի ճիշդ՝ ԶԱՅՐՈՅԹի՛ն գիրքը: Ու ես մխիթարուեցայ հոն գտնելով այն էական միտքը զոր ջանացեր էի դնել «Կարմիր գիրք»իս մէջ» [Թէոդիկ, 1911, 218]: Նշենք նաեւ, որ այս եւ Ռ. Սեւակի բնագրային շատ ու շատ նիւթեր, ընդգրկուած երեւանեան «Երկեր» ժողովածուում, վերցուած են հենց տարեցոյցներից: Երկրորդը Աննա Բաֆֆու 1911-ի Մայիս 27 թուակիր նամակում հիացումն է նոյն գրքի մասին, երբ նկատում է, որ այդ գործի «ընթերցանութեամբ ամէն քարասիրտն անգամ պիտի յուզւի նախանձախնդրութեան ոգով...» [Թէոդիկ, 1912, 21]: Նամակով տեղեկացնում է «Սալբի»ի գրութեան մանրամասները: Անմիջապէս յարջորդում է անտիպ վէպից մի հատում, որ բանասիրութիւնը կարծես չի արձանագրում:

Գրապատմական կարեւոր վաւերագիր է Էռնեստ Ռընանի նամակը Եղիշէ Արք. Դուրեանին, որի կարեւորութեան մասին նշում է խմբագիրը «Ռընան եւ Դուրեան» գրութեամբ. «Ահաւասիկ 22 տարուան հնութիւն ունեցող նամակ մը, որ իրաւամբ թանկագին է զայն ստորագրող անունին մեծութեամբը» [նոյն տեղում, 143]: Իսկ Ռընանին մեր գրականութեան մէջ դիմումները շատ են, այդ թում եւ Դ. Վարուժանի օրինակը (նկատի ունենք «Աստուծոյ լացը» բանաստեղծութեան բնաբանը): Կարեւոր է նաեւ այն, որ հայերէն թարգմանութեան կողքին տրւում է նաեւ նամակի լուսապատճէնը:

Պատմական մի պատառիկ է Ուիլեամ Գլադստոնի նամակը Աբրահամ Տէր-Յակոբեանին, որ վերջինս ուղեկցող բացատրական նամակով յանձնել է Թէոդիկին: Ի հա՛րկէ, Հայկական հարցի վրայ այն առանձնակի լոյս չի սփռում, ինչպէս նշում է Տէր Յակոբեանը, բայց կարեւոր է արխի-

²⁰ Այստեղ միակ անհամաձայնութիւնը առաջանում է Հրանդ Ասատուրի Պոլիս հաստատուելու ժամանակի հետ կապուած. խոստովանում է, որ «1884-ի վերջերը Պոլիս դարձած էի արդէն» [Ասատուր, 1921, 97], երբ առաջին նամակն ուղղուած է 1884-ի Ապրիլ 12-ին: Ստացում է, որ Հր. Ասատուրը Պոլիս է հաստատուել նոյն թուականին, սակայն աւելի վաղ:

ւային տեսանկյունից: Այս կարճաժամ նամակում արդէն հիւանդ պետական գործիչը հայկական հարցը դիտարկում է «ամէնէն ահաւոր խնդիրը, որուն երբեք ինձ վիճակուած է հանդիպիլ» [Թեոդիկ, 1913, 29]:

Իբրեւ վերջաբան՝ նկատենք, որ տարեցոյցի մէջ վերոնշեալ անունների մէջ առանձնակի ներկայութիւն է մանկավարժ, դաստիարակ Ռեթէոս Պերպերեանը, նաեւ նամակագրական ժառանգութեան դրուագներով, որից բերենք մէկ օրինակ: Ուսուցչի ու սանի յարաբերութեան «նորը զգացումի» մէկ գեղարուեստական շնչով արտայայտութիւնն է Պերպերեանի պատասխանը (6 Նոյեմբեր, 1903, անտիպ, 1908) կնոջ՝ Զարուհի Պերպերեանի մահուան առթիւ ձօնուած Ստեփան Բաբելեանի “Vers le passé” վալսին եւ ուղեկից նամակին:

Պերպերեանի յիշատակը եւ Թեոդիկի՝ նրա հանդէպ վերաբերմունքի սահմաններն է ճշդում տարիներ անց Թեոդիկի քրոջ որդին՝ Շահան Շահնուրը, երբ հնարաւորութիւն է ունենում քեռու հետ այցելել Սկիւտարի գերեզմանատուն եւ արձանագրել, որ «Թեոդիկ շուտով հեռացաւ իր ծնողքին հողակոյտէն, երթալ մխրճուելու համար ընդարձակ գերեզմանատան ծայրամասը» [Շահնուր, 1971, 74-75], որտեղ ամփոփուած է Ռեթէոս Էֆէնտի Պերպերեանը, դաստիարակը, որ այսօր էլ պահում է իր հետաքրքրութիւնը մանկավարժի ու մտաւորականի իր կերպարի շուրջ:

Եթէ ամփոփենք, պիտի նկատենք, որ Թեոդիկն իր «Ամէնուն տարեցոյց»ով հրաշալի երկխօսութիւն է վարում 19-րդ դարի երկրորդ կեսի գրամշակութային աշխարհի հետ, եւ մէկ յետահայեաց ակնարկն իսկ բացում է այն անուրանալի դերը, որ կատարել եւ կատարում է հայ մշակոյթի անդաստանում «Ամէնուն տարեցոյցը» կոչուող այս հրաշալի վկայարանը:

SUMMARY

The article refers to one of the most visible names of the Western Armenian press of the beginning of the 20th century, to Theodig's “Amenun Taretsuytsy” (1907-1929), particularly the correspondental heritage found in its pages.

It is emphasized the fact, that the author considered the letter as one of the important columns of his journal. This is evidenced by hundreds of published letters, for many of which the periodical continues to be a source. The letters of Eghia Temirchipashyan, Hrantsatur, Krikor Odian, Ruben Sevak and others are separated by combining and clarifying them with their later editions and creative works of the writers.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Ասատուր Հր., Դիմաստուներ, Կ. Պոլիս, տպ. Կ. Քէշիշեան որդի, 1921, 280 էջ:
2. Երեմեան Հ. Ս., Ազգային դէմքեր, Գրագէտ հայեր, Հինգերորդ շարք, Վենետիկ, Ս. Ղազար, 1914, 478 էջ:
3. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը զբօսալի ու պիտանի, Գ. տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1909, 384 էջ:
4. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, հինգերորդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1911, 416 էջ:
5. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, վեցերորդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, 13 չ. էջ, 419 էջ:
6. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, 7-րդ տարի, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1913, 5 չ. էջ, 395 էջ:
7. Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը / ազատ հայուն պզտիկ հանրագիտարանը, 8-րդ տարի, Կ. Պոլիս, հրատ. եւ տպ. Ս. Յովակիմեան, 1914, 448 էջ:
8. Հատտէճեան Ռ., Յուշատետր – 60 / Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հ. Բ. Բ. տպ., Իսթանպուլ, «Մարմարա-Մուրատ Օֆսէթ», 2008, 303 էջ:
9. Շահնուր Շ., Բաց տոմարը, Փարիզ, «Յառաջ», 1971, 170 էջ:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Նոր Զուղա, Խաչատուր Կեսարացի, Պարսկաստան, համալսարան, գրադարան, տպարան, գիրք, դպրոց:

Keywords: New Jugha, Khachatur Kesaratsi, Persia, university, library, printing house, book, school.

Նախաբան

Գիտության զարգացման արդի փուլում, երբ համացանցը հնարավորություն է ընձեռում հասու դառնալու աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող հասարակական-քաղաքական, գիտակրթական, մշակութային և այլ զարգացումներին, գրադարանը՝ որպես գրի ու գիտելիքի շտեմարան, չի կորցնում իր հետաքրքրությունն ու արդիականությունը: Գրադարաններում կազմակերպվող գրական-գեղարվեստական, հոբելյանական և այլ բնույթի միջոցառումները, գրքերի շնորհանդեսները գրավիչ են հասարակության տարբեր խավերի, մանավանդ գրասեր երիտասարդության համար: Ընթերցասրահներն այսօր էլ պահանջարկ ունեցող վայրեր են, որտեղ հնարավոր է ոչ միայն ձեռք բերել անհրաժեշտ գրականություն, այլև տրամադրող մթնոլորտում նորանոր գիտելիքներ ձեռք բերել: Նշված հանգամանքները փաստում են գրադարանի հաստատության արդիականությունն ու անփոխարինելիությունը:

«Գրադարանները մարդկային ընկերության ընտրելագոյն տեսակներն են: Գրադարանները պանթեոն չեն, ո՛չ փառքի նշաններ, ո՛չ անունի փայլեր, այլ կենսալի բաներ, լոյսեր՝ առարկայական, խօսուն, ճառագայթուն: Գրադարանները կեանքի, գաղափարի, զգացումի նուագախումբ մըն են, որ սակայն նուագողի մատներուն և շրթներուն, խմբավարի ճպոտին կը կարօտի՝ դառնալու համար ձայն ու համանուագ», – ահավասիկ գրադարանի ամփոփ բնութագիրը, որը կատարված է Գարեգին Քեսապցի կաթողիկոսի գրչով [Սարգիսեան, 1990, 63]:

Կրթօջախը, տպարանը և գիրն ու գիրքը որպես գրադարանի հաստատության կայացման անհրաժեշտություններ

Գրադարանի հաստատության կայացման համար անհրաժեշտ է երկու կարևոր նախադրում՝ ա) կրթօջախ, բ) տպարան և տպագրության արդյունք՝ գիրք:

ա) **Կրթօջախ:** 1831-1853 թթ. *Նոր Զուղայի Վանքի վանահայր* Խաչատուր Կեսարացին բացում է վանքապատկան դպրոց, որը ժամանակակիցներն անվանում էին «համալսարան»: Ուսումնական այս հաստատությանը հաջորդում են «Ս. Կատարինեան ազգային օրիորդաց» (1858 թ.), «Ազգային կեդրոնական», «Գևորգ Քանանեան» իգական և բազմաթիվ ու բազմանուն այլ դպրոցներ («Հայկեան հայրենասիրական», «Սարիամ Յարութիւնեան», «Գևորգ Յովսէփեան», «Մարգար Սուքիասեան» և այլն): «Բացի յիշեալ դպրոցներից, զանազան ժամանակներում, մասնաւոր քահանաների տներում ևս լինում են փոքրիկ խալիֆայական դպրոցներ, ուր ուսումնաձարաւ երեխաները յաճախում են փոքր ի շատէ գրել-կարդալ և եկեղեցական փոխեր սովորելու» [Աբգարեանց, 1914, 18]:

Ներկայում Նոր Զուղայում գործում են նախկինում «Կեդրոնական», այժմ «Արմէն» վերանվանված հայկական տարրական, երկսեռ, «Քանանեան» իգական և «Կատարինեան» արական դպրոցները: Բացվում է «Ալենոյշ Տերեան» մշակութային կենտրոնը: Հայերին պատկանող հողատարածքների վրա կառուցվում է Իսպահանի պետական համալսարանը, իսկ «Գալուստ Գիւլբենկեան» հիմնադրամի միջոցներով՝ համալսարանի հայագիտության մասնաշենքը: Սպահանի պե-

տական համալսարանի ծրագրում ներառված են հայոց լեզու և գրականություն, տաղաչափություն, հայ ժողովրդի պատմություն, հայ բանահյուսություն, հայոց աղբյուրները պարսիկների և Պարսկաստանի մասին, ինչպես նաև հայագիտական այլ առարկաներ:

Օտարերկրյա գրոսաշրջիկներին գրավող մշակութային կենտրոն է «Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարանը», որը 2012 թ. վերանվանվում է «Խաչատուր Կեսարացի թանգարան»: Բազմաթիվ այցելուներ ունեցող մշակութային այս կենտրոնում ապաստան են գտել տարագիր հայության բնօրրանից բերած, ինչպես նաև Նոր Զուղայում գրված ձեռագրերը, տեղի հայ վաճառականների մեկենասությամբ հրատարակված բազմաթիվ գրքեր: Եզակի ձեռագրերից բացի, ցուցադրված են հինգ հնատիպ գրքեր՝ 1513 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի տպագրած «Պատարագատետրը», 1641-1642 թթ. Նոր Զուղայում Խաչատուր Կեսարացու հրատարակած «Հարանց վարքը» և «Ժամագիրքը», 1666 թ. *Ամստերդամում* Ոսկան Երևանցու *լույս ընծայած* «Աստուածաշունչը» և 1794 թ., Մադրասում Հարություն քահանա Շմավոնյանի հիմնադրած «Ազդարարը»:

Նշված կրթարաններին կից գործում էին տարբեր մեծության գրադարաններ, որոնցում պահվում էին արժեքավոր գրքեր և եզակի տպագրություններ:

բ) **Տպարան:** Գրադարանի գոյության նախապայման է տպարանը և տպագրական գործը, որոնց ստեղծմանը մեծապես նպաստում է Նոր Զուղայի հայությունը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը հայ գրքի մայրաքաղաքների շարքի յոթերորդ հորիզոնականում նշում է Նոր Զուղան՝ վստահեցնելով, որ «այլ հայ գաղութներ անմասն պիտի չմնային հայկական տպարան հիմնելու համընդհանուր շարժումին» [Քէշիշեան, 2012]:

1637 թ. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վանահայր Խաչատուր Կեսարացին, ունենալով իր արժանավոր համերկրացու՝ հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտ-Զուղայեցու փորձը, հիմնում է Պարսկաստանի և Միջին Արևելքի առաջին տպարանը (1636-1972), որի տառատեսակները և տպագրական մամուլը պատրաստում է Հակոբջան Զուղայեցին: 1639 թ. Կեսարացին Հովհաննես Զուղայեցի Քթոշենցիի ուղարկում է Եվրոպա՝ տպագրության արվեստի մեջ հմտանալու և տպագրական միջոցներ ձեռք բերելու: Նա ուղևորվում է Վենետիկ, ապա Հռոմ, որտեղ ձուլվել է տալիս հայերեն տառեր: **Նոր Զուղայի տպարանի կատարելագործմանը մեծապես օժանդակում է նաև Ոսկան Զուղայեցի-Երևանցին**²¹:

«Տպագրութիւնը ազգի մը քաղաքակրթութեան զարգացման հիմնական լծակներէն մէկն է: Տպարանի մամուլի խժալուր ձայնը քաղաքակրթութեան համերգին նախերգանքն է: Մեզ համար պատիւ է, որ մեր հայրերը իրենց գերագոյն աստիճանի ջանքերով, երբեմն հայկական նախանձախնդրութեան, զոհողութեան ոգիի արտայայտութիւն եղող հերոսական նուիրումով հեռաւոր Վենետիկի, Ամստերդամի, Լվովի, Լիվոռնոյի, Հռոմի, Մարսելյի խունացած տպարանական գործատեղիներու մէջ հայ գիրք են տպել 1512 թուականէն սկսեալ եւ հետզհետէ տպարանի անիւները դարձուցեր հասցուցեր են դէպի Պոլիս ու Կալկաթա եւ ի Հայաստան», - գրում է Ամենայն հայոց երանաշնորհ հայրապետ Գաբրիէլ Քեսապցին փերիահայ անվանի մտավորական Լևոն Մինասեանի «Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը» աշխատության առաջաբանում [Մինասեան, 1972, 6]:

Նոր Զուղայում ստեղծված գրականության և գրադարանների մասին

Զուղայի հայերը ամենայն բարեխղճությամբ գույքագրել, ցուցակագրել նաև նկարագրել են բնօրրանից բերած ձեռագրերն ու հնատիպ գրքերը, ապա նաև նոր բնակատեղիում տպագրած գրքերը: Այս առումով նշանակալից են փերիացի մտավորական, Ս. Ամենափրկիչ վանքի թանգարան-տպարանի երբեմնի տնօրեն Լևոն Մինասյանի ավելի քան ութսուն հայերեն և պարսկերեն աշխատությունները, որոնցից երեսունհինգը նվիրված է Նոր Զուղայի և Փերիա գավառի պատմությանը, ազգագրությանը, լեզվին և բազմաթիվ այլ հարցերի: Նշանակալից են այս հեղինակի «Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)», «Մոդերն» տպարանը եւ իր տպագրած գրքերը 1922-1982», «Հայ տպագիր գիրքը Իրանում 1638-2000» (2001), «Մատենագիտա-

²¹ Ոսկան Երևանցին ծնվել է Նոր Զուղայում: Երևանցի է կոչվել ծնողների ծննդավայրի անունով:

կան ցանկ Սպահանի հայոց թեմի նվերաբերող հայերեն, պարսկերեն եւ անգլերեն գրքերի ու յօդ-ւածների» (2007), «Իրանի առաջին տպարանը և Սպահանի տպարանների ցանկը» (2000) աշխատությունները, որոնք սպառիչ տեղեկություններ են հաղորդում տպարանի բազմամյա գործունեության և արժեքավոր արտադրանքի մասին [Տեր-Աւետիսեան, 1970]:

Հիմնադրումից մեկ տարի հետո տպարանը տալիս է իր երախայրիքը՝ «Սաղմոսարանը» (1638), որին հաջորդում են՝ «Հարանց վարք» (1641), «Խորհրդատետր» (1641), «Ժամագիրք ատենի» (1642), «Պարզայ տումար» (1647), «Աստուածաշունչ» (1650), **Աղեքսանդր Ջուղայեցու** «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» (1687), «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց» (1683), **Հովհաննես Ջուղայեցու** «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ» (1688) և այսպէս շարունակ՝ ավելի քան 400 անուն գիրք:

Եվ այսպէս՝ դպրոց, տպարան, գիրք եռաչափ հիմքով ստեղծվում են Նոր Ջուղայի գրադարանները՝ դառնալով ապահով ապաստան հայության հոգեմտավոր ճգնության արգասիքի՝ կրոնական, դավանաբանական, բարոյախրատական, պատմական, տեղագրական, բանահյուսական, գեղարվեստական և այլ բնույթի բազմաբովանդակ հրատարակությունների համար: Բազմաթիվ գրքեր հանգրվանում են գյուղական դպրոցների գրադարաններում, նաև անհատ գրասերների պահարաններում: Գյուղական գրադարանները ժամանակի ընթացքում կազմալուծվում են, գրքերը անցնում են ձեռքից ձեռք, քանի որ գյուղաբնակները տեղափոխվում են քաղաքներ: Գյուղերը աստիճանաբար մարում են, դառնում են ամառանոցներ, դպրոցները փակվում են, որոնց գրադարաններում էին գտնվում նաև պապերի՝ բնօրրանից բերած արժեքավոր հնատիպ գրքերը և գրչագրերը:

Նոր Ջուղան այսօր ունի **երեք մեծ գրադարան**:

Առաջինը XVIII դարի սկզբում Վանքի տարածքում հիմնադրված գրադարանն է, որը 1974 թ. ի պատիվ Ս. Ներսէս Շնորհալու մահվան 800-ամյակի, վերանվանվում է «Ս. Ներսէս Շնորհալի Մատենադարան»: Մատենադարանում պահվում է կրոնական, պատմական և այլ բնույթի մոտ 750 մանրանկարազարդ ձեռագիր, որոնցից քառասունչորսը՝ մագաղաթյա. ամենահինը X դարից ավանդված մի Ավետարան է:

1986թ. Արբակ Մխիթարյանի և Սիրարփի Տեր-Ներսիսյանի ջանքերով Բելգիայում տպագրվում է Նոր Ջուղայի Վանքի գրչագրերի գունագարդ ալբոմը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մեկենասությամբ: Գրչագրերը գրված են Արևմտյան Հայաստանում X-XVI դարերում: Նոր Ջուղայի ձեռագրերը պատկանում են XVII դարասկզբին: «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանը ներկայում ունի շուրջ քսանհինգ հազար հայերեն և օտարալեզու գրքեր, ինչպէս նաև մամուլի հարուստ հավաքածու:

Երկրորդ կարևոր գրադարանային կենտրոնը պատկանում է համալսարանի հայագիտության բաժնին, հայերեն գրքեր կան նաև պետական համալսարանի հանրային կենտրոնական գրադարանում: Համալսարանի գրադարանում առանձնապէս ուշագրավ են հայագրի տարբեր հեղինակների՝ Խորհրդային Հայաստանի քաղաքացու համար նախկինում անհասանելի գրականությունը՝ Ս. Վրացյանի «Կեանքիս ուղիներով» վեցհատորյակը, «Հայաստանի Հանրապետությունը», Կ. Սասունու «Պատմութիւն Տարօնի աշխարհի», ինչպէս նաև Ճորոխի ավագանին, Խոտրջուրին, Բաղեշին, Եվդոկիային, Ջմյունիային, Բալուին, Արդահանին, Չարմահալին, Ղարաղանին, Վերին Չանախչին, Շապին Գարահիսարին և բազմաթիվ այլ հայաբնակ վայրերին նվիրված մենագրությունները:

Գրադարանային **երրորդ** նշանակալից կենտրոնը գտնվում է «Արարատ» միության շրջափակի մեջ, որը դարձել է ազգային, կրթամշակութային հավաքատեղի վերջին տարիներին Փերիայից, Չարմահալից, Բուրվարից տեղափոխված և Նոր Ջուղայում բնակություն հաստատած հայերի համար:

Նոր Ջուղայի հարուստ գրադարաններում պահվող գրականության ցանկում զիտագործնական առանձնակի նշանակություն ունեն վերջին տարիներին տպագրված բարբառագիտական մենագրությունները, հատկապէս Փերիայի, Չարմահալի, Բոլորմակի և պարսկահայ այլ խոսվածքներին նվիրված արժեքավոր հրատարակությունները: Այս առումով ուշագրավ են Լևոն Մի-

նասյանի՝ Ջուղայի բարբառին և Փերիայի խոսվածքին նվիրված հրատարակությունները, Տիգրան Թ Աբգարեանցի «Նոր-Ջուղայի անգիր գրականությունը» (1966) և այլն:

Այս շարքը վերջին տարիներին համարվել է **Արամ Երեմյանի** «Սպահանի Չարմահալ գաւառը», **Հիլդա Մարգարյան-Ալեքսանդրյանի** «Բարով, քա դորաս», **Հայկ Մարյանի** «Փերիայի բարբառ» և բարբառային այլ աշխատանքներով:

Այսպիսով, Նոր Ջուղայի գրադարաններում է ամփոփված հայ ժողովրդի հոգեմտավոր ճգնության ծանրակշիռ մի մասը, և հարկ է, որ հայագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր գրասեր մտավորական մոտիկից ծանոթ լինի ձեռագիր և տպագիր այդ հարստությանը: Ներկայում գիտական այդ շտեմարանը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների և տեղի դպրոցականների համար:

SUMMARY

Based on personal observations, we presented the libraries of New Jugha, which were created at three important bases.

a) Educational center. In 1831, KhachaturKesaratsi opened a monastery school, on the basis of which many schools were created. At present, there are “Armen,” “Kananyan,” “Katarinyan” schools, the Department of Armenian Studies of the University.

b) Typography. In 1637, Kesaratsi founded the first printing house in Persia, which printed educational, theological, moral, historical and folklore books.

c) A book. The Armenians of Jugha listed the manuscripts and books they brought from their homeland, as well as the books printed in their new place of residence.

Today there are three basic libraries in New Jugha: 1) the monastery library, 2) the state university library, 3) the “Ararat” union library, where there are also valuable dialectological monographs.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբգարեանց Տիգրան, Նոր Ջուղայի դպրոցները, Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկչեան Վանքի, 1914, 56 էջ: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://www.abcarians.com/images/NJschools.pdf>, 18.12.2022:
2. Մինասեան Լևոն, Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972), Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, 1972, 173 էջ: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://serials.flib.sci.am/matenagitutyun/Nor%20Juxayo%20tparan@/book/content.html>, 17.12.2022:
3. Միրզախանեան Արամայիս, Հայ տպագրութեան 500-ամեակը և Նոր Ջուղայի հայոց տպարանի դերը, Ստոկհոլմ, 2012: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: www.aaeurop.com/?p=11870, 18.12.2022:
4. Մկրտչյան Կարեն, Իրանահայության ժողովրդագրության հարցերը 2000-ական թվականներին // «Բանբեր հայագիտության», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, N 1 (25), էջ 73-85: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://haygithimnadram.am/journals.php?p=2&arch=&id=&langid=1>, 18.12.2022:
5. Մարգիսեան Գարեգին, Հայ մարդը՝ Հայ գիրքին դիմաց..., Անթիլիաս, 1990, 150 էջ:
6. Տէր-Աւետիսեան Ս., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի, Հտր. Ա.: Վիեննա 1970, 940 էջ:
7. Քէշիշեան Արամ, Վատիկանի ձայնասփիւռ, 2012՝ Հայ գիրքի տարի հռչակուած Արամ Ա. Կաթողիկոսէն [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://westernprelacy.org/hy/2012-year-of-the-armenian-book-pontifical-message-of-his-holiness-aram-i-armenian/>, 17.12.2022:

ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ԵՐԱԽՏԱՎՈՐ ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԺ
ԴՈՒՐՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց միաբանություն, տպարան, վարժարան, հայ տպագրություն, բանասիրություն, «Սիոն» ամսագիր, հոգևոր-մշակութային կյանք:

Keywords: Jerusalem, St. James Congregation, publishing house, seminary, Armenian printing, philology, the journal “Sion,” the spiritual-cultural life.

Կ. Պոլսի նախկին պատրիարք Դուրյան Եղիշե սրբազանը (1860-1930 թթ.) 1921 թ. ընտրվեց Երուսաղեմի աթոռի պատրիարք ազգային սահմանադրությամբ և անգլիական կառավարության մասնավոր թույլտվությամբ: Ընտրությունը հաստատվեց Անգլիայի Գևորգ 5-րդ թագավորի կողմից: Պաղեստինի բարձրագույն կոմիսար Սըր Հերբերթ Սամուելի պաշտոնական ներկայությամբ Ս. Հակոբի մեջ կատարվեցին նորընտիր պատրիարքի գահակալության արարողությունները [Խմբագրական, 1927, 3-4]: Երուսաղեմի բազմադարյան աթոռի համար պատրիարք Եղիշե Դուրյանի պաշտոնավարության ընթացքում (1921-1929 թթ.) նոր դարաշրջան է սկսվում²²:

Դուրյան պատրիարքի պաշտոնավարության ներքո վերակազմակերպվեց Ժառանգավորաց Վարժարանը, ավելացվեց Ընծայարանի բաժինը, բացվեց Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ինչպես նաև Կյուլպենկյան նշանավոր Մատենադարանը:

Պատրիարք Դուրյանն իր գահակալության առաջին օրից սկսած ուշադրության կենտրոնում է պահել Ժառանգավորաց Վարժարանի բարեկարգությունը և առաջադիմությունը: Նրա օրոք հաստատվել են Կյուլպենկյան և Մեսրոպյան սաների Ընծայարանի երկու դասարանները, որոնցում, ինչպես նաև Ժառանգավորացում, նա դասախոսել է: Ժառանգավորաց Վարժարանի 1925-1926 թթ. դպրոցական շրջանը նշանակալից է դառնում իր արդյունքով. վարժարանն ունենում է 4 դասարան: Ընծայարանում պատրիարք Եղիշե Դուրյանը դասավանդում է Պատմություն Հայ և օտար մատենագրության և հայրենագիտական նյութեր:

Եղիշե Դուրյանի գալստյամբ վանքի պատմության մեջ կրոնական և մտավորական լայն շարժում է ծավալվում, որին անմասն չի մնում նաև տպարանը. հրատարակվում են հայ միջնադարյան մատենագրության անտիպ գործեր, հայ եկեղեցու դավանաբանական և պատմական հիշատակարաններ, դպրոցական դասագրքեր և թարգմանություններ, որոնց թվում՝ «Խորհրդատետր սրբազան պատարագի»-ն, Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ի երրորդ հատորը, Կորյունի «Վարք Մաշտոցին»-ն: Ս.Հակոբի պատրիարքական աթոռը ղեկավարած և իրենց գործունեությամբ և նկարագրերի բարձրությամբ փայլած պատրիարքներից ոչ մեկը չի կարող զուգակշռվել Ս. Եղիշե պատրիարքի հետ մտքի խորության և ծովածավալ հմտության կողմից, քանի որ նա այնպիսի տիպար հայրապետ էր և պատկառելի ուսուցիչ, որի քարոզները լեզվի և իմաս-

²² Համառոտ ներկայացնենք նրա կենսագրությունը. Եղիշե /Միհրան/ Դուրյանը ծնվել է Կ.Պոլսում 1860 թ.-ին: Նախնական կրթությունը ստացել է Սկյուտարի ճեմարանում և հետո՝ 1876-1878 թթ. ուսուցիչ է եղել նույն հաստատության մեջ: Մարկավազ է ձեռնադրվել 1878 թ. Մաթևոս եպս. Իզմիրյանի ձեռքով այդ ժամանակվանից ստանալով Եղիշե անունը: 1879 թ. ձեռնադրվել է քահանա և ընդունել է մասնավոր վարդապետության աստիճան: 1880-1890 թթ. քարոզիչ և ուսուցիչ է եղել Պարտիզակում: 1882 թ. ընդունել է ծայրագույն վարդապետի գավազանը: 1890-1904 թթ. Արմաշի դպրեվանքում եղել է ուսուցիչ, տեսուչ, փոխվանահայր և վերատեսուչ: 1898 թ. եպիսկոպոս է ձեռնադրվել Խրիմյան Հայրիկի ձեռքով: 1904-1908 թթ. եղել է Զմյուռնիայի առաջնորդ, 1909-1910 թթ.՝ Կ.Պոլսի պատրիարք: 1911-1921 թթ. եղել է Կ.Պոլսի դպրոցներում քարոզիչ, ուսուցիչ և Կրոնական ժողովի ատենապետ [Հանգիստ Ամեն Ս.Եղիշե... 1930, 101]:

տության մարգարիտներ էին, որոնց կենդանությունը օրհնություն էր հայ ժողովրդի և Ս. Աթոռի համար:

Տպարանը կարգավորելուց հետո Դուրյան սրբազանը վերահրատարակում է 1878 թ.-ից փակված «Միոն» ամսագիրը: Հիշեցնենք, որ «Միոն» ամսագիրը լույս էր տեսնում 1866թ. հունվարից և հրատարակվում է 12 տարի շարունակ, մինչև 1877 թ. վերջը: 1877 թ. «Միոն»-ը դադարում է լույս տեսնել: Պատճառը, թերևս, Սուրբ աթոռին պատահած ներքին և արտաքին հարվածներն էին՝ սուրբ վայրերի խնդիրը, որն այդ թվականներին վերին աստիճանի բորբոքված էր, մյուս կողմից «ներքին ձախորդությունները», որոնք ամբողջովին ջլատեցին վանքի ուժերը [Լևոնյան, 1895, 283]:

«Միոն»-ի վերահրատարակությունն սկսում է 50 տարի անց՝ 1927 թ. հունվարի 1-ից: «Միոնի» վերահրատարակման լուրը խանդավառությամբ ընդունվեց ամենուրեք: Այդ առթիվ ամսագրի խմբագրությանը իրենց ողջույնի խոսքն են հղում Սահակ Բ կաթողիկոս Խապայանը, Մինաս Չերազը, Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Գևորգ Սարաֆյանը, Արշակ Ալպոյաճյանը և շատ ուրիշներ: Ամսագրի վերահրատարակման ջերմ փափագողներից է եղել Խրիմյան Հայրիկը (1820-1907), ով որոշակի ֆինանսական օժանդակություն է հայթայթել այդ նպատակով:

Վերահրատարակվող «Միոնն» իր «հայացքը շրջում է» դեպի հայ հին և միջնադարյան գրականություն և անդրադառնում է մեր հին և միջնադարյան մատենագրությանը: Այդ են վկայում 1927-1930 թթ. նրա էջերում լույս տեսնող մեկը մյուսից արժեքավոր հոդվածները: Նշենք մի քանիսը՝ օրինակ, ամսագիրը անդրադառնում է Հովհան Մանդակունուն, Վրթանես Քերթողին, Կոլյունին:

1930 թ. ի մի բերելով «Միոնի» նոր շրջանի չորս տարվա հրատարակված նյութերը՝ Բաբկեն Կյուլեսերյանը բարձր գնահատական է տալիս²³: Թերևս վերոհիշյալի վկայությունը «Վեմ» ամսագրի կարծիքն է. «Միոն» հայագիտական բանասիրական տեսակետից հետզհետե սկսում է աչքառու տեղ գրավել՝ հիշեցնելով էջմիածնի երբեմնի «Արարատը» [Գիրք եւ մանուլ, 1934, 126]:

Երուսաղեմի հայոց պատրիարքության «Կյուլպենկյան» մատենադարանը կառուցված մեծանուն ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի նվիրատվությամբ՝ իբրև գաղափար և գոյություն, կապվում է պատրիարք Եղիշե Դուրյանի անվան հետ: Մատենադարանի անհրաժեշտությունն առաջացավ Եղիշե Դուրյան պատրիարքի հիսունամյա քահանայության հոբելյանի առիթով:

Կենտրոնական հանձնախմբի կարևոր որոշումներից մեկն էր հոբելյանի առթիվ հանգանակված ամբողջ գումարը հատկացնել Սուրբ աթոռի տարածքի մեջ մատենադարանի շինությանը՝ «Դուրյան» մատենադարան անունով՝ հավերժացնելու համար գրքի նվիրյալ պատրիարքի հիշատակը: Տեղի է ունենում հանգանակություն, և ընդհանուր արդյունքը կազմում է 3613 պաղեստինյան ոսկի [Գրիգոր վարդապետ, 1946, 215], որը բավական չէր մատենադարանի շինությունն իրականացնելու համար: Բայց այդ օրերին Փարիզում էր գտնվում Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, ում խնդրում են աջակցել ձեռնարկի հաջողությանը: Թորգոմ Գուշակյանը այս հարցով դիմում է բարերար Գալուստ Կյուլպենկյանին, ով խոստանում է ստանձնել ամբողջ ծախսը մատենադարանի շինության համար՝ ի հիշատակ իր հանգուցյալ ծնողների՝ Սարգսի և Տիրուհու [Նույն տեղում, 215]:

Եղիշե Դուրյան պատրիարքը բարձր է գնահատում Գալուստ Կյուլպենկյանի այս վեհանձն հանձնառությունը և առաջարկում է, որ մատենադարանը իր անվան փոխարեն կոչվի բարերարի անունով, իսկ նախապես կատարված հանգանակության գումարով կազմվի հիմնադրամ, որի արդյունքով կարելի լինի Սուրբ աթոռի հովանավորությամբ իրագործել գրական հրատարակչա-

²³ «Միոնի» առաջին տասնամյակների հեղինակավոր աշխատակիցների թվում էին Եղիշե Դուրյան պատրիարքը, Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը, Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունին, Թորգոմ Գուշակյան պատրիարքը, Մեսրոպ Նշանյան պատրիարքը, Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը, Հակոբ Օշակյանը, Շահան Պերպերյանը, Նիկոլ Աղբալյանը, Մինաս Չերազը, Վահան Թեքեյանը, Վահան Մալեգյանը:

կան ձեռնարկներ, այսինքն՝ «Դուրյան» մատենադարան մատենաշարով կազմվելիք հայագիտական ուսումնասիրությունների տպագրություն [Թորգոմ արքեպիսկոպոս, 1935, 33]:

Եղիշե Դուրյանի մահից հետո Սուրբ աթոռի գահակալ Թորգոմ Գուշակյանի (1874-1939) կազմած ուսումնական խորհուրդը մշակում է «Դուրյան» Մատենադարանի կանոնագիրը և տպագրության է հանձնում «Եղիշե պատրիարք Դուրյան» ստվար գիրքը: Այնուհետև մշակվում է սրբոց թարգմանչաց «Դուրյան» գրական մրցանակի կանոնադրությունը: Մրցանակի նպատակն էր հայագիտական գրականության մշակումը [Նույն տեղում, 33-35] :

Սրբոց Հակոբյանց տպարանի հրատարակած գրքերի թվում առանձնակի տեղ ունի պատրիարք Եղիշե Դուրյանի «Ամբողջ երկեր»-ի երկրորդ հատորը՝ նվիրված հայոց հին կրոնին և հայկական դիցաբանությանը: Գրքի գրախոսականը ներկայացրել է Զգոն վարդապետ Տեր-Հակոբյանը [Տեր-Հակոբյան, 1934, 89-92]: Գիրքը բարձր է գնահատված: «Հայկական դիցաբանություն» գրքի լեզուն ընտիր է, բովանդակությունը՝ պերճիմաստ, հրատարակությունը՝ մաքուր և անթերի [Նույն տեղում, 89-92]:

1930 թ. Սրբոց Հակոբյանց տպարանում տպագրված և մամուլում բարձր գնահատականի արժանացած գրքերի թվում է Եղիշե Դուրյան պատրիարքի «Ընթացք ի գրոց բարբառ» գիրքը, որը բազմիցս վերահրատարակվել է [Կյուլեսերյան, 1930, 87]:

«Սիոն» ամսագրում հրատարակված բազմաթիվ նյութերից բացի Եղիշե Պատրիարք Դուրյանը կատարել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք տպագրվել են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում ²⁴:

Դուրյան Եղիշե պատրիարքի մահը 1930 թ. սգում է ողջ հայ եկեղեցականությունը և հայ առաջադեմ ժողովուրդը, քանի որ կորցրեց Հայ եկեղեցու առաջնորդներից մեկին, բանաստեղծին, վարդապետին, քննադատին, կրոնագետին, քարոզչին: «Սիոն» ամսագրում զետեղվում է գույծ. «Այսօր մի Առաջնորդ ընկավ Իսրայելի մեջ» (Բ. Թգր. Գ. 38) [Դամբանական, 1930, 108]:

Փարիզի «Հառաջը» գրում է. «Հարկ է ճշտել, որ ամեն բան է առաջ փիլիսոփայ մըն էր, բանաստեղծ, մատենագիր, դաստիարակ... և իբրև իմացականութիւն մը որ կրնար ճառագայթել շատ աւելի բարձր հորիզոնի մը վրայ» [Խմբագրական, 1930, 1]: Իր կորուստով բացվում է մի մեծ դատարկ տարածք մեր մտավոր անդաստանում, ուր այնքան սակավաթիվ են իրական ուժերը, արժեքները, և այնքան բազմաթիվ և բազմազան են միջակությունները:

Հիրավի, պատմությունը, բանասիրությունը, լեզվագիտությունը, փիլիսոփայությունը, կրոններն իրենց պատմությամբ, իսկ քրիստոնեությունը մասնավորապես իր բոլոր ուսմունքներով՝ ծանոթ էին Եղիշե Դուրյանին, ով հարուստ ու շքեղ մի մատենադարան էր ու շատ բարձր մի մտավորական: Նա անհամեմատելի եզակի մի ուսուցիչ էր կամ դասական բառով՝ Մեծ Վարդապետ:

SUMMARY

The presentation discusses the period of service of Patriarch Yeghishe Duryan in Jerusalem (1921-1929), which became a separate subject of study. Noteworthy is the fact that with the advent of Yeghishe Duryan (1860-1930) in the history of the monastery, a broad religious and intellectual movement unfolded, in which the publishing house didn't stand aside. The unique works of the Armenian medieval bibliography, theological and historical memoirs of the Armenian Church, textbooks and translations were published.

Based on the sources, it can be stated that the inspiring and educational activity of Patriarch Yeghishe Duryan was a great impetus, especially to the cultural field of the Holy See Congregation. The Duryanashen Trading Center was built with voluntary donations made on the occasion of his fiftieth

²⁴ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում հրատարակված Եղիշե Դուրյանի գրքերը տե՛ս Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն /1833-1996/ /Խ.Արքովյանի անվ. հայկ. պետ. մանկ. համալս.: Կազմ.՝ Ա.Ա.Սուրադյան: Խմբ.՝ Գ.Ա.Սուքիասյան.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011.-հհ.. 409, 410, 412, 421, 422, 435, 446, 454, 464, 465, 466, 479, 485, 486, 487, 495, 496, 565,589,637,670,674:

anniversary (1929) “in memory of the great patriarch and mentor.” The profits gained from the center were to be directed towards the publication of the “Durian” series.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիրք եւ մամուլ, Մեր պարբերականները // Վեմ, Փարիզ, 1934. №1, էջ 126-129:
2. Գրիգոր վարդապետ., Ս. Աթոռոյս Կիւլպենկեան մատենադարանը // Սիոն, Երուսաղեմ, 1946, №11, էջ 215-221:
3. Դամբանական քարոզը//Սիոն, Երուսաղեմ, 1930, №4, էջ 108-115 :
4. Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն /1833-1996/ /Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկ. համալս.: Կազմ.՝ Ա.Ա. Մուրադյան; Խմբ.՝ Գ.Ա. Սուքիասյան, Երևան, Հեղ.հրատ., 2011, 148 էջ:
5. Թորգոմ արքեպիսկոպոս, Կանոնագրություն «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան գրական մրցանակի» // Սիոն-Յաւելուած, Երուսաղեմ, 1935, №1, էջ 33:
6. Լևոնյան Գ. Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, Տպ.Աբրահամ Մ. Մալխասյանի, 1895, 570 էջ:
7. Փիլիսոփայ վանականը / Շ. // Յառաջ, Փարիզ, 1930, № 1254, էջ 1.-(Երկու խօսք):
8. Խմբագրական // Սիոն, Երուսաղեմ, 1927, №1, էջ 2-5:
9. Մատենախոսական / Բ.Ե. // Սիոն, Երուսաղեմ, 1930, №3, էջ 87-88:
10. Հանգիստ Ամեն Տ.Եղիշէ Ս.Արքեպսի. Դուրեան Սիրեցեալ Պատրիարքին Առաքելական Աթոռոյն Երուսաղեմի 1860-1930 // Սիոն, Երուսաղեմ, 1930, №4, էջ 98-101:
11. Տեր-Հակոբյան Զ., Ամբողջ երկեր Եղիշէ պատրիարք Դուրեանի, Բ. Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանություն // Սիոն, Երուսաղեմ, 1934, №3, էջ 89-92.- (Մատենախօսական):

ԹՎԱՅԻՆ XXI ԴԱՐ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ
THE DIGITAL XXI CENTURY: CHALLENGES
ЦИФРОВОЙ XXI ВЕК: ВЫЗОВЫ ЭПОХИ

DOI: <https://doi.org/10.52027/18294685-cvo2023.sp>

CHAHAN VIDAL-GORENE
Paris, France

OCR / HTR TECHNOLOGIES AND ARMENIAN HERITAGE PRESERVATION*

Keywords: digitization, handwritten text recognition, optical character recognition, Armenian archives, manuscripts.

Introduction

Character recognition is the task that automatically converts a scanned document into a searchable text format. A distinction is made between OCR (Optical Character Recognition) for printed documents and HTR (Handwritten Text Recognition) for handwritten documents. The objective of these steps is to provide a searchable and editable version of a document. These technologies meet the needs of institutions involved in the massive digitization of their collections, and strengthen the accessibility of documents and their preservation.

Although the issue of OCR for printed documents remains a task considered to be largely resolved, including for Armenian, with a wide variety of software such as Abbyy Fine Reader²⁶ (paid software), Tesseract²⁷ (free and open source) or Calfa²⁸ (paid service) that can reach a character error rate (CER) of less than 1%, the recognition of manuscripts or historical documents remains an open research problem. The great variability of handwriting, the philological questions inherent to the transcription of documents, the degradation of documents (damaged printed materials, old printed matter or damaged manuscripts), the inconsistency of layouts or the quality of digitizations are all issues to be overcome, and that limit the development of generic models of recognition.

Artificial Intelligence and pipeline for Armenian

With the rise of Artificial Intelligence however, these tasks can be overcome, provided an AI is trained with enough representative samples of the desired task. These samples, within the framework of an HTR, consist in documents manually transcribed and annotated according to specifications to be defined [Vidal-Gorène, 2023]. Many datasets have been compiled in recent years, particularly for Latin [Nikolaidou, 2022] and Arabic [Vidal-Gorène, 2021b] scripts, in order to overcome specific issues raised by scripts (e.g. Latin scripts from the 14th century) or layouts. Concomitantly several platforms have been developed to enable researchers to overcome the barrier of HTR on their corpus, the best-known being Transkribus [Kahle, 2017]. Nevertheless, these tools therefore require a large amount of data, the critical mass of which for Armenian is hard to reach, owing to linguistic specificities (e.g. variants of Armenian) or paleographic particularities (e.g. abbreviation system), and the variety of applications (e.g. ancient manuscripts, contemporary manuscript archives, etc.). Armenian is still today considered as an under-resourced language.

Calfa has implemented AI approaches to overcome the lack of data, by creating effective specialized layout analysis and recognition models with very few data [Vidal-Gorène, 2021a]. This results in recognition models that can achieve more than 99% good recognition for printed matter and more than 95% for manuscripts. For example, we have shown that on old manuscripts in bolorgir, our models prove to be more than

* This paper is an excerpt from a couple of conferences on Digitization and OCR/HTR for Armenian documents that took place in fall 2022 in Armenia (“Heritage Preservation for a Sustainable Future” International Conference - National Library of Armenia, and Գիտաժողով՝ նվիրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» - Etchmiadzin).

²⁶ <https://pdf.abbyy.com/>

²⁷ <https://tesseract-ocr.github.io/>


²⁸ <https://calfa.fr>

97% efficient with only 3 transcribed pages [Kindt, 2022], and for more cursive Arabic scripts more than 93% good recognition with 10 pages transcribed [Lucas, 2022]²⁹. These approaches are implemented in particular in our services and our annotation tool Calfa Vision (freemium), dedicated to non-Latin scripts and poorly endowed languages [Vidal-Gorène, 2021a]. The pipeline implemented by Calfa is a joint work between machine and human, the expertise of the latter remaining essential [Vidal-Gorène, 2023].

Some case studies and Results

Therefore, we achieve very specialized models (hence not as versatile) obtaining very high recognition rate on a given task (see Figure 1). We apply them to various case studies:

- old, poor quality or damaged digitization (handwritten or printed) requiring a dedicated recognition model;
- retrieval of specific information in a structured printed document;
- ancient and modern manuscript documents;




- retrieval of information in an unstructured handwritten document.

Figure 1: Examples of documents targeted by specialized models. Left: Voskanian Bible (1666) with 98.67% of good recognition; center: handwritten letter from Father Trianz (1828) 98.9% good recognition; right: the catalog of Armenian manuscripts from San Lazzaro (Venice), whose average recognition is 99.5% with automatic content detection (manuscript title, number of pages, place of copy, etc.).

Calfa is notably involved in the processing of microfilms for the National Library of France [BnF Dat-alab, 2023]. The creation of a very specialized model on a microfilm of the BnF (P191) results in a 95.1% relevance. Although some parts of the microfilm remain illegible, the model manages to offer usable reading, with nonetheless frequent confusion between *u* / *un*. Abbreviations have not been expanded by the model, and word separation is provided despite the fact the document looks like *scriptio continua* (see Figure 2).


²⁹ Traditionally, similar approaches for printed documents require on average at least 100 transcribed pages [Ströbel, 2020].



և զանձն ի պիտանի պահապան տանն կացուցել: Էկեցէ ժա
մանակ զի և զպաշտպալովն վանսն թողցուք, բայց չն ևս հասել
է ժամանակն այն: ահա վեր հայր, գոր խորհիմսն և գոր կարծեմ
գրեցի պարզաբար. գրեցէ և վր. վեր գկարծիս իւր և գեղանակ
կատարման
կարելոր գոյերոյն, ոպ և խոստանայ և ես ոչ եթէ ծանրացայ եւ կամ
տհաճեցայ, այլ ուրախ լել և զհնարաւորն ջանացայ տալ ի գործ
եւ յարդիմս ածել:
թխսիթիւ թծարուք երթալոյ ի հռոմ, թէ ստուգուք իցէ. առ
հնարագիտուն է. զի յերկար ջանացել և զամ ճարտարութի գործ
արկել իբրև չկարաց առնուլ զհրաման խոստովանուն ոպ և կա
մէր. յոժարի արդ երթալ ի հռովմ յուսով թերևս ամբաստանելոյ

Figure 2: Result achieved by Calfa on the microfilm P191 (BnF) - 95.1% good recognition.

Since 2022, Calfa has been in partnership with the Mekhitarist Fathers of Venice for the processing of the correspondences of the Mekhitarist Fathers from 1759 to 1850, in collaboration with Father Vahan Ohanian. The objective is to automatically transcribe several thousand letters in order to speed up the editing and publication work. They feature a wide variety of layouts and are written in cursive, highly abbreviated scripts. For each hand, a new specialized model is produced after transcription of a representative sample. To meet the editorial purposes of the project, models are trained to expand abbreviations, where most errors are located. The models obtained oscillate between 95% and 99% good recognition (see Figure 3). A complete presentation and description of the results will be carried out at the end of the project.



և որդիX և բժ. խնդնէ յացտնի ելել ի վր զօգց մերոց զբզմս ի նցնէ
սպանին: և յովս ի նցնէ արրին կալկանց. և ածին առջի մերոյ
թգրուեX նոյնպս և ուր հանդիպէին փախըXտկն առնէին գնս:
Եւ իսպառ ջնջեցաք զամ ~ն տռապօլիս զայգիսն և զձիXենի
սն. և զբուրաստանս նց առ հարկ կոտորցք. և աւեր դիժուցք
և արմատախիլ արրք զամ գուն. և ափրիկեցիքն որ էին անդ
և համարձակեցն և ելին ի պտրզմ ը դէմ մեր: Յայն ժմ արձակէ
ցաք ի վր նց և կոտորցք XX հարկ զպմսն և ապայ առք զմեծ

Figure 3: Results obtained by Calfa on Hurmuz, 1848, Mekhitarist Congregation, 99.01% good recognition.

Conclusion

OCR and HTR technologies are now sufficiently mature to be implemented in the preservation and promotion process of institutions for their collections. The massive digitization of documents, a dynamic in which Armenian institutions such as the Fundamental Scientific Library of NASRA³⁰, the National Library of Armenia, the Mekhitarists of Vienna (with the support of the Gulbenkian Foundation and the Fundamental Scientific Library) and worldwide institutions participate actively, now provides access to a whole section of Armenian history and literature. Even though imperfect, the results achieved by OCR/HTR technologies are precise enough to allow for their integration into searchable databases, increasing their accessibility and contributing to the sustainability of heritage. Text recognition is not a goal in itself but a step in the creation of a digital heritage and its exploration through digital humanities.

Calfa is a company, based in Paris, and specialized in the automatic processing of Oriental languages (OCR, HTR, text analysis). It develops tailor-made OCR / HTR models and supports heritage institutions in their digitization projects. To find out more about Calfa, the projects carried out and its commitment to heritage: <https://calfa.fr>.

Acknowledgements

We want to extend our thanks to the Congregation of Mekhitarist Fathers and Father Vahan especially with whom we have been collaborating for several years, as well as to the Fundamental Scientific Library and its scientific advisor Tigran Zargaryan with whom Calfa has a partnership to strengthen OCR models for historical printed documents. The development of OCR was originally supported by the Gulbenkian Foundation in 2016. This communication has been translated by Aliénor Decours-Perez (Calfa).

ԱՄՓՈՓՈՒՄ

Օպտիկական տառաճանաչումը (OCR) և ձեռագիր տեքստի ճանաչումը (HTR) այժմ պատրաստ են գործարկման հայերենի համար: Այս տեխնոլոգիան կարող է ապահովել փաստաթղթերի ավելի բարձր արժևորում՝ ապահովելով բարելավված հասանելիություն, օգտագործելով, օրինակ, բանալի բառերով որոնում և կարող է թելադրել թվային գրադարանների նոր մարտահրավերներ:

Զեկուցման նպատակն է, ներկայացնելով հայոց լեզվով տեքստերի ճանաչման գործընթացի ժամանակ առաջացած մարտահրավերները, ցույց տալ ժամանակակից հնարավորությունները: Շեշտադրումն արվելու է ձեռագիր արխիվի, հնագույն ձեռագրերի և հնատիպ գրքերի համար Կալֆայի կողմից մշակված տեխնոլոգիային:

Մենք կներկայացնենք մեր մեկնաբանությունները երեք ընթացիկ նախագծերի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության հայկական ձեռագրերի գրացուցակի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի թերթերի, Մխիթարյան միաբանության անդամների հայկական նամակների վերամշակման վերաբերյալ: Կալֆայի կողմից կիրառվող մեթոդաբանությունն ապահովում է ձեռագիր փաստաթղթերի առավել քան 98%-ի և տպագիր փաստաթղթերի առավել քան 99,9%-ի ճշգրտությունը:

REFERENCES

1. Kindt B., Vidal-Gorène C., From Manuscript to Tagged Corpora. An Automated Process for Ancient Armenian or Other Under-Resourced Languages of the Christian East // *Armeniaca. International Journal of Armenian Studies*, 2022, No 1, pp. 73-96.
2. Kahle P., Colutto S., Hackl G. and Mühlberger G., Transkribus - A Service Platform for Transcription, Recognition and Retrieval of Historical Documents // 14th IAPR International Conference on Document Analysis and Recognition (ICDAR), Kyoto, 2017, pp. 19-24.
3. Lucas N., Salah C., and Vidal-Gorène C., New Results for the Text Recognition of Arabic Maghribi Manuscripts - Managing an Under-resourced Script // *arXiv preprint*, 2022, arXiv : 2211.16147.

³⁰ <http://arar.sci.am/>

4. Nikolaidou, K., Seuret, M., Mokayed, H. et al., A survey of historical document image datasets // International Journal on Document Analysis and Recognition (IJДАР), Springer, 2022, No 25, pp. 305–338.
5. Ströbel P. B., Clematide S. and Volk. M., How Much Data Do You Need ? About the Creation of a Ground Truth for Black Letter and the Effectiveness of Neural OCR // Proceedings of the 12th Language Resources and Evaluation Conference, Marseille, ACL Anthology, 2020, pp. 3551-3559.
6. Vidal-Gorène C., Dupin B., Decours-Perez A. and Riccioli T., A Modular and Automated Annotation Platform for Handwritings : Evaluation on Under-Resourced Languages // Document Analysis and Recognition – ICDAR 2021, Cham, Springer, 2021a, pp. 507-522.
7. Vidal-Gorène C., Lucas N., Salah C., Decours-Perez A. and Dupin B., RASAM - A Dataset for the Recognition and Analysis of Scripts in Arabic Maghrebi // Document Analysis and Recognition – ICDAR 2021 Workshops, Cham, Springer, 2021b, pp. 265-281.
8. Vidal-Gorène C., La reconnaissance automatique d'écriture à l'épreuve des langues peu dotées // Programming Historian, Vol. 5, en français, 2023, [Electronic Publication] URL: <https://doi.org/10.46430/phfr0023>.

**ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆԶԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐ.
ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ լեզվական կորպուս, լեզվական շտեմարան, կորպուսային լեզվաբանություն, հաշվողական լեզվաբանություն, բնական լեզվի մշակում, տեքստերի հավասարեցում, ծանոթագրում, զուգահեռ կորպուսներ, թվային ժառանգություն:

Keywords: language corpus, linguistic database, corpus linguistics, computational linguistics, natural language processing, text alignment, annotation, parallel corpora, digital heritage.

Բնական լեզվի թվային մշակումն ունի մի քանի տասնամյակի պատմություն, և համաշխարհային մակարդակով արդեն կուտակվել է զգալի փորձ ու գիտելիք. կան հսկայական քանակությամբ գրավոր և բանավոր խոսքի թվայնացված նյութեր: Այդ նյութերը, որոնք հիմնականում հավաքագրված են որոշակի լեզվական և արտալեզվական նկարագրիչների համապատասխան, ընդունված է կոչել **լեզվական կորպուս կամ շտեմարան**:

21-րդ դարակզբին կորպուսային լեզվաբանության հիմնադիր համարվող Ջոն Սինքլերը կորպուսը բնորոշել է որպես էլեկտրոնային տեքստերի հավաքածու, որը ընտրված է արտաքին որոշ չափանիշների համաձայն՝ հնարավորինս ներկայացնելու լեզուն կամ լեզվի տվյալ տարբերակը, և որը կծառայի որպես տվյալների աղբյուր լեզվաբանական հետազոտությունների համար [Sinclair, 2005, 1-16]: Այս իմաստով, լեզվական շտեմարանները մասնակիորեն իրականացնում են նույն գրադարանների գրավոր տեքստեր հավաքագրելու և դասակարգելու գործառնությունը, գումարած այդ տեքստերի մեջ պարունակված գիտելիքի և հենց լեզվի տարբեր հատկանիշների հետ աշխատելու հնարավորությունը, որը տալիս է դրանց թվայնացված ներկայացումը: Ի դեպ, բնական լեզվի մշակումը հենց իրականացվում է այդ լեզվի տեքստերում պարունակված գիտելիքի տարամակարդակ շերտերը վեր հանելու և տարբեր նպատակներով գործածելու համար:

Այսպիսով, կորպուսը լեզվական տարամակարդակ միավորների՝ տվյալների որոնողական բազա է, որը օգտագործվում է լեզվաբանական հետազոտությունների, լեզվի ուսուցման, մեքենայական թարգմանության բարելավման, և ընդհանրապես՝ մեքենային տարբեր նպատակներով բնական լեզուն մշակել ուսուցանելու համար: Կորպուսները կարող են լինել ինչպես ծանոթագրված (ինչն իրենից ենթադրում է հատուկավորում, խոսքիմասային պիտակավորում, շարահյուսական վերլուծություն և այլն), այնպես էլ չծանոթագրված՝ «հում» տեքստերի հավաքածու: Դրանք լինում են մեկ լեզվով, կամ երկլեզու ու բազմալեզու:

«Կորպուսը ուշագրավ բան է ո՛չ այնքան այն պատճառով, որ բնական տեքստերի հավաքածու է, այլ այն հատկությունների շնորհիվ, որոնք նա ձեռք է բերում լավ նախագծված և խնամքով կառուցված լինելու դեպքում»,- հետաքրքիր բնորոշում է տալիս Սինքլերը՝ մատնանշելով կորպուսների գիտելիքի և տեղեկատվության իմաստով կիրառական բարձր արժեքը գրագետ հավաքագրված լինելու պարագայում [Նույն տեղում, 5]:

Շատ նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Մ. Հալիդեյը, Ջ. Լիչը, Դ. Բայբերը, Ս. Յոհանսոնը, Գ. Ֆրենսիսը, Ս. Հանսթոնը, Ս. Կոնրադը, Մ. Մաքքարթին և Ա. Ստեֆանովիչը նպաստել են ժամանակակից կորպուսային լեզվաբանության զարգացմանը: Գրվել են բազմաթիվ աշխատություններ, ու ոլորտը գնալով ավելի հավակնոտ է դարձել ու հիմա քայլում է ժամանակակից տեխնոլոգիաներին համընթաց՝ օգտվելով դրանց ընձեռած աճող հնարավորություններից:

Դեռ ժամանակին Սինքլերը մատնանշում էր, որ անհրաժեշտ է լեզվի ուսումնասիրման նոր դիտանկյուն՝ կապված մասնավորապես համակարգչային տեխնոլոգիաների առաջընթացով ու հաշվողական լեզվաբանության զարգացումներով [Sinclair, Carter, 2004, 10-23]:

Լեզվական շտեմարանների ստեղծման պատմության համառոտ ակնարկը կօգնի ընթերցողին ինքնուրույն գուգաիզել անցկացնել թվային տեխնոլոգիաների և բնական լեզվի ամբարած գիտելիքի փոխակերպման միտումների միջև: Այդ գուգաիզելները նաև կօգնեն հասկանալ լեզվական շտեմարանների դերը արհեստական բանականության, կամ, ինչպես մենք ենք գերադասում կոչել՝ արհեստական մտքի ստեղծման գործում: Չէ՞ որ բնական լեզվի տեքստերում ամբարված է լեզվակիր հանրության հավաքական գիտակցությունը՝ իր ժամանակային և տարածական բազմազանության մեջ: Ավելին, մեր վերջին հետազոտությունները նվիրված են լեզվակիր անձի, որպես գիտելիքի և գիտակցության, կոնկրետ ունակություններ կրողի: Անձն իբրև լեզվաստեղծ միավոր դիտարկելը մեծ հեռանկարներ է բացում լեզվի մեքենայական մշակման բնագավառում [Hovhannisyan, 2022, 79-95]:

Առաջին լեզվական կորպուսը ԱՄՆ Բրաունի համալսարանում ստեղծված BROWN կորպուսն է՝ ստեղծված 1961 թվականին հրատարակված գրական արձակ տեքստերից: [Stefanowitsch, 2020, 30-31]

Ավելի ուշ ի հայտ եկան դրանց ձևավորման սկզբունքները, ապա սկսեցին ներառել գրավորից բացի նաև բանավոր տեքստային նյութեր: Այսօր ամերիկյան և բրիտանական անգլերենի ամենահայտնի կորպուսներից են COCA-ն, COHA-ն, BNC-ն և MICASE-ը: Ժամանակակից ամերիկյան անգլերենի կորպուսը (COCA) ամերիկյան անգլերենի ամենամեծ ազատ հասանելի կորպուսն է՝ բաղկացած ավելի քան 1 միլիարդ բառից: COCA-ն թողարկվել է 2008 թվականին, տեքստերը թվագրվում են 1990-2019 թվականներին [COCA կորպուսի կայքէջ]: Պատմական ամերիկյան անգլերենի կորպուսը (COHA) տարժամանակյա անգլերենի ամենամեծ հավաքածուն է, որի տեքստերը թվագրվում են 1810-ից 2009 թվականը, ունի ավելի քան 400 միլիոն բառ: BYU/BNC-ն ժամանակակից բրիտանական անգլերենի 100 միլիոնանոց կորպուս է, որը նույնպես պարունակում է գրավոր և բանավոր տեքստեր: Այն ստեղծվել է Oxford University Press-ի կողմից 1980-1990-ականներին [BNC կորպուսի կայքէջ]: Միջիզանի ակադեմիական խոսակցական անգլերենի կորպուսը (MICASE)՝ ավելի քան 1,8 միլիոն տառադարձված տեքստերի հավաքածու է, որ ստեղծել են Միջիզանի համալսարանի հետազոտողներն ու ուսանողները [MICASE կորպուսի կայքէջ]:

Որպես հանրային գիտակից գործունեության փաստագրված արդյունքներ, և որպեսզի կորպուսը համարվի հավաստի գործիք, կիրառելի լինի, պետք է այն հավաքագրել հետևյալ մի քանի սկզբունքով. **ներկայացուցչականություն, հավասարակշռություն, ծանոթագրում, որակ** [Atkins, Clear & Ostler, 1992, 1-16]: Բացի այդ, լեզվական մտածողության նման, կորպուսը պետք է շարունակ թարմացվի, հակառակ դեպքում որոշ ժամանակ անց չի արտացոլի լեզվի արդի վիճակը, կհնանա: Նման փորձի օրինակը կա, և կարելի է դրանից սովորել, հետագայում փակուղային վիճակներից խուսափելու համար:

Լեզվական շտեմարանների կամ կորպուսների ստեղծման, պահպանման և զարգացման պայմանների ապահովումը մեծ ռեսուրսներ և կազմակերպչական աշխատանք է պահանջում: Արդեն առաջին իսկ հետազոտություններից պարզ է, որ հատկապես մեծ է պահանջարկը հայերենի բազմալեզու կամ առնվազն երկլեզու գուգաիզել ռեսուրսներ ունենալու, որը հայերենի նման փոքրաթիվ խոսողներ ունեցող լեզվի համար գլոբալ թվային քաղաքակրթությանը ինտեգրվելու ամենաարագ ուղիներից է: Այս պահանջները բավարարելու համար բազմալեզու գուգաիզել կորպուսների կառուցումը դառնում է բնական լեզվի մշակմամբ զբաղվող (NLP) մեր առաջին գիտական խմբերի ուշադրության առարկան: Ի տարբերություն միալեզու կորպուսների, աշխարհում հասանելի երկլեզու կամ բազմալեզու գուգաիզել կորպուսների թիվը սահմանափակ է, և, քանի որ այդ կարգի կորպուսի հավաքագրումը շատ ռեսուրսներ է պահանջում, ոչ բոլորն են ազատ հասանելի: Բացի այդ, այսպիսի ռեսուրսներ հավաքագրվում են հիմնականում այն լեզուների համար, որոնք հայտնի են խոսողների մեծ քանակով ու հատկացված ռեսուրսների մասշտաբով [Steingrímsson, Loftsson, & Way, 2020, 182-190]:

ԲԼՄ ռեսուրսների առկայության առումով, ինչպես նշվեց, հայերենը ետ է մնում: Իհարկե, կան մի քանի նախաձեռնություններ, որոնք աշխատել են հայերենի թվայնացման տարբեր խնդիրների վրա: Հայերենի առաջին թվայնացված կորպուսի՝ ԱՐԵՎԱԿ-ի (Արևելահայերենի ազգային կորպուս) նախագիծը գործարկվել է 2006 թվականին, սակայն այն 2009 թվականից հետո չի

թարմացվել: 2009 թ. մարտի դրությամբ ԱՐԵՎԱԿ-ն ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք [ԱՐԵՎԱԿ կորպուսի կայքէջ]: Մյուս նախաձեռնությունը «Հայերենի ծառադարան»-ն է: «... նախագիծը մաս է կազմում Universal Dependencies (UD) – «Համընդհանուր կախվածություններ» հարթակի, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար» [Յավրումյան Մ., Դանիելյան Ա., 2020]: Ծառադարանը պարունակում է շուրջ 100 հազար բառամթերք և 5 հազար շարահյուսական ծառ [Հայերենի ծառադարանի կայքէջ]:

Մյուս մեզ հայտնի հետազոտական խումբը՝ «Ազգային արագացման հանրային նախաձեռնությունը», «իրականացնում է հայերեն լեզվով մեքենայական սարքերի հետ հաղորդակցության գործիքների՝ արհեստական ձայնի սինթեզի TTS (Text To Speech), խոսքի ճանաչման ASR (Automatic Speech Recognition), մեքենայական թարգմանության NMT (Neural Machine Translation) մշակումը» [Ազգային արագացման հանրային նախաձեռնության կայքէջ]: Այս խումբը ևս առաջիններից է, որ համագործակցության հուշագիր է ստորագրել ԲՊՀ հետ՝ նախադեպ ստեղծելով ՀՀ համալսարանական միջավայրում բնական լեզվի կայուն-շարունակական մշակման աշխատանքներ ապահովելու տեսանկյունից: Հարկ է, որ այս նախաձեռնությունը պետական հովանավորության տակ առնվի, որպեսզի գիտական, կրթական և արտադրական ջանքերի արդեն կայացած միավորումը երկրի կենսական խնդրի լուծմանն անհրաժեշտ մասշտաբներն ու արդյունքներն ապահովի:

Այսօր դժվար է գտնել մի հեղինակավոր համալսարան, որն իր լեզվական թեկուզ փոքր կորպուսները, ասել է, թե սեփական գիտելիքի և հետազոտական ռեսուրսների զարգացող բազան չունենա: Վերևում թվարկված բոլոր խոշոր կորպուսները ևս ստեղծվել են ու զարգացվում են համալսարաններում: Հայերենում, հատկապես, նմանատիպ հետազոտությունների պահանջարկը շատ մեծ է, իսկ մասնավոր ձեռնարկությունների ուժերով արվող ուսումնասիրությունները միայն փոքր առևտրային նպատակներ են հետապնդում: Մշակութային ժառանգության, հումանիտար և սոցիալական գիտությունների բնագավառի հետազոտողի համար ունենալ լեզվի տարբեր կորպուսներ ու ենթակորպուսներ նշանակում է հնարավորություն ստեղծել մեքենայական միջլեզվական թարգմանությունների, տեքստերից տարաբնույթ ռազմավարական, արժեքաբանական, տեղեկատվական և այլ գիտելիքի գտման, խոսքային ներգործման աշխատանքների բարելավման, լեզուների ուսուցման (կորպուսների տարաբնույթ կիրառություններ կարելի է թվել թե սովորողի, թե սովորեցնողի համար [Cobb, Boulton 2015, 478-497]), լեզվախոսքային գիտակցության տեքստերի բազմաշերտ իմաստագործառական քննություն կատարելու և ընդհանրապես, լեզվաբանական հետազոտությունների արդիականացման համար, լեզվամշակութային ժառանգության և դրա ընթացիկ թվային նկարագրերի ստեղծման, պահպանման, և գլոբալ ինտեգրման համար [Biber, Douglas 2006, 243-257]:

Բնական լեզվի մշակումը անգլերենի նման հարուստ լեզվում արդեն լուծել է որոշակի համակարգային խնդիրներ, որոնց հարմարեցումը հայերենին զուգահեռման միջոցով կարող է արագացնել սկզբնական աշխատանքները: Մակայն երկլեզու տեքստերի հավասարեցումը բառերի, նախադասությունների մակարդակով, ծանոթագրումը և այլ անհրաժեշտ գործընթացներ այնուամենայնիվ, աշխատատար են և էական նշանակություն ունեն զուգահեռ կորպուսների ձևավորման գործում [Devlin et al, 2019]: Զուգահեռ կորպուսների պարագայում, տեքստերի ծանոթագրում կարող է և չարվել, սակայն առնվազն մեկ հարթության վրա հավասարեցում պետք է արվի: Թարգմանաբանական հետազոտությունների, լեզվի ուսուցման, ինչպես նաև ավելի մեծ ծավալների մեքենայական թարգմանության բարելավման նպատակով, հավասարեցումը կարող է լինել միակողմանի, երկկողմանի կամ երկուսի համադրությունը:

Վիճակագրական մեքենայական թարգմանությունը մեկն է այն կիրառություններից, որտեղ կորպուսները զգալի արդյունք են տվել [Eisele, 2006]: Դրա հաջողության հիմնական գործոնը բարձրորակ տվյալներն են: Իսկ բարձրորակ թարգմանական նյութի մշակումն ու կայուն ապահովումը հնարավոր է աշխատանքի վրա հենված կրթական ծրագրեր իրականացնող համալսարաններում: Նշված փորձառական աշխատանքներ մենք արդեն իրականացնում ենք Բյուրետովի

համալսարանում մեր արտաքին գործընկերների աջակցությամբ: Բնարկէ, կան տեքստերի հատույթավորման և հավասարեցման ծրագրեր, որոնք կարագացնեն բնօրինակի և թարգմանության հավասարեցումը, բայց դրանք հայերենի համար չեն: Մեր գործիքները ինքներս պիտի ստեղծենք: Մեկտեղելու համար առկա ռեսուրսները, մենք օգտագործում ենք արդեն առկա երկլեզու տեքստեր՝ գիտակրթական, հետազոտական կենտրոններում, գրադարաններում արդեն թվայնացված ռեսուրսներից:

Այս առումով, Հայաստանի Ազգային գրադարանի թվայնացված ռեսուրսների ներդրումը հայերենի երկլեզու շտեմարանների ստեղծման գործին անգնահատելի կլինի, միաժամանակ կբարձրանա գրադարանային ռեսուրսների կիրառական արժեքը:

SUMMARY

The Republic of Armenia has traditionally had a solid culture of preserving written heritage. However, in the last few decades, due to various geopolitical circumstances, we have lagged behind the global advancement of digitization, information, and communication technologies in terms of natural language processing for the Armenian language, access to the expanding opportunities of systematising and utilising the collated enormous amount of literature. This paper presents the current global state of natural language processing and the related methodological problems of the field in our country. The process of dataset development and consumption, from the primary stage of text digitising collected in physical databases, libraries, and archives, to the very use of the knowledge and information stored in these texts for various scientific, educational and practical purposes, requires a clear scientific-methodological program introducing not only the importance and perspectives of the field but will also ensure the conditions for its sustainable development, including the processing of written (and spoken) digitized language data and the retrieval and “industrialization” of the information and knowledge contained in the language corpora.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Atkins, S., Clear, J. and Ostler, N., Corpus design criteria // Literary and Linguistic Computing 7/1, Oxford University Press, Oxford, 1992, pp. 1-16.
2. Biber, D., Representativeness in corpus design // Corpus linguistics: Readings in a widening perspective, London, 2004, pp. 174-97.
3. Biber, D., University Language: A corpus-based study of spoken and written registers, John Benjamins Publishing, Amsterdam, 2006, 261 p.
4. Cobb T., Boulton A., Classroom applications of corpus analysis // Cambridge Handbook of Corpus Linguistics, Cambridge University Press, Cambridge, 2015, pp. 478-497.
5. Devlin, J., Chang, M., Lee, K., & Toutanova, K., BERT: Pre-training of Deep Bidirectional Transformers for Language Understanding // In Proceedings of the 2019 Conference of the North American Chapter of the Association for Computational Linguistics: Human Language Technologies, Volume 1, Association for Computational Linguistics, Minneapolis, 2019, pp. 4171-4186. [Electronic publication] URL: <https://aclanthology.org/N19-1423>, 29.11.2022.
6. Eisele A., Parallel Corpora and Phrase-Based Statistical Machine Translation for New Language Pairs via Multiple Intermediaries // In Proceedings of the Fifth International Conference on Language Resources and Evaluation, European ELRA, Genoa, 2006, pp. 845-848 [Electronic publication] URL : http://www.lrec-conf.org/proceedings/lrec2006/pdf/643_pdf.pdf, 29.11.2022.
7. Frankenberg-Garcia, A., Compiling and using a parallel corpus for research in translation // Babel: international journal of translation, Vol. XXI (1), John Benjamin Publishing, Amsterdam, 2009, pp. 57-71.
8. Hovhannisyanyan, G., The Architecture of Language Personality // Individual and Contextual Factors in the English Language Classroom, Springer, Cham, 2022, pp. 79-95.
9. Sinclair, J. & Carter R., Trust the Text // Language, Corpus and Discourse, Routledge, London, 2004, 224 pages.
10. Sinclair, J., Corpus and Text: Basic Principles // Developing Linguistic Corpora: A Guide to Good Practice, Oxbow Books, Oxford, 2005, pp. 1-16.
11. Sinclair, J., Corpus, Concordance, Collocation, Oxford University Press, Oxford, 1991, 179 pages.

12. Stefanowitsch, A., Corpus linguistics: A guide to the methodology // Textbooks in Language Sciences 7, Language Science Press, Berlin, 2020, 481 pages.
13. Steingrímsson, S., Loftsson, H., & Way, A., Effectively Aligning and Filtering Parallel Corpora under Sparse Data Conditions // ACL, 2020, pp. 182-190. [Electronic publication] URL: <https://aclanthology.org/2020.acl-srw.25>, 29.11.2022.
14. Յավրույան Մ., Դանիելյան Ա., Համընդհանուր կախվածություններ և հայերենի ծառադարանը // Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2020, էջ 231-244:
15. Հայերեն ծառադարանի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL : <http://armtreebank.yerevann.com/>, [29.11.2022].
16. Արևակ կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <http://www.eanc.net/am/composition/>, [29.11.2022].
17. Ազգային արագագման նախաձեռնության կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <https://hayq.ican24.net/hyenmt/index.php>, [29.11.2022].
18. Միչիգանի ակադեմիական խոսակցական անգլերենի կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL : <https://quod.lib.umich.edu/cgi/c/corpus/corpus?page=home;c=micase;cc=micase>, [29.11.2022].
19. BNC Կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <https://www.english-corpora.org/bnc/>, [29.11.2022].
20. COCA կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <https://www.english-corpora.org/coca/>, [29.11.2022].
21. COHA կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <https://www.english-corpora.org/coha/>, [29.11.2022].

DOI: <https://doi.org/10.52027/18294685-mgn2023.sp>

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

Երևան, Հայաստան

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 510-ԱՄՅԱԿԻՆ (1512-2022).
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Բանալի բառեր` Հակոբ Մեղապարտ, հայ գրատպություն, 510-ամյակ, համակարգ, մատենագիտություն, գիտաժողովներ, Արցախ, գրադարաններ, ժառանգության պահպանություն, միջազգային համագործակցություն:

Keywords: Hakob Meghapart, Armenian book printing, 510-th anniversary, system, bibliography, conferences, Artsakh, libraries, heritage preservation, international cooperation.

«Ժառանգության պահպանություն հանուն կայուն ապագայի» միջազգային գիտաժողովում նվիրված հայկական տպագրության 510-ամյակին, տողերիս հեղինակի զեկուցման հիման վրա ներկայացվող հոդվածն ունի գրքագիտական, մատենագիտական և գրադարանագիտական կարևոր նշանակություն և բխում է բարձրագույն մասնագիտական կրթության ու գիտության զարգացման ժամանակակից խնդիրներից.

1. Գրքամատենագիտական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա ցույց տալ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը և գլխավորապես հայ տպագրության (տպագիր մշակույթի) զարգացման պատմական ընթացքը XVI-XXI դդ.:

2. Անդրադառնալ հայկական գրատպության պատմությանը նվիրված գիտաժողովներին ու դրանց վերաբերյալ հրապարակումների նորովի գնահատմանը, որոնք գիտական առումով նորություն են և չափազանց կարևոր:

3. Հանուն կայուն ապագայի՝ հայկական մշակութային ժառանգության անվտանգությունը ապահովելու տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն տալ արցախյան նոր պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով աղբյուրների հսկողության տակ մնացած հայկական գրադարանները (փաստաթղթային-տեղեկատվական ֆոնդերը) հայերիս վերադարձնելու հարցին:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է XIV դարից: Այսպես. Չինաստանում XVII դարի ռուսական հյուպատոս (ծագումով մոլդովացի) Նիկոլայ Գավրիլովիչ Սպաֆարին (1636-1708) տպագրության «չինական գաղտնիքը» Արևելքից Եվրոպա տարածելու գործում հիշատակել է նաև հայագրի Անտոնին: Իր գրքի «Աշխարհի Ասիա կոչվող առաջին մասի նկարագրությունը» գլխում նա գրել է. «Եվ այն հաստատ է, որ մետաքսի արտադրությունը չինացիներից են մյուս պետությունները սովորել, և ոչ միայն այդ, այլ նաև թղանթներ ձուլելը, ծովագնացությունը՝ մագնիսի օգնությամբ, ինչպես և գրքեր տպագրելը...», երբ կալմիկները (մոնղոլները – Գ. Ս.) և թաթարները գրավեցին Չինաստանը, նրանց հետ Չինաստան եկան հայր Օդերիկը, Անտոն հայր և Մարկո Պավել (Պոլո – Գ.Ս.) վենետիկցի և ճշմարիտ, նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այդ արվեստները» [Спафарий–Милеску, 1960, 184]: Իսկ ֆրանսիացի գիտնական Պ. Գյուսմանը 1916 թ. կարծիք է հայտնել, թե տպագրությունը Եվրոպա կարող էին բերել փոքրասիական և կովկասյան ժողովուրդները, օրինակ՝ հայերը, թուրքերի և մոնղոլների ճնշումներից նահանջելով արևմուտք [Владимиров, 1988, 95-96]: Ըստ Գյուսմանի՝ մի խումբ հայեր, ույզուրների մոտ սովորելով տպագրության ամենակատարյալ ձևերը, մեկնում են

Նիդերլանդներ, ուր ապրում էր Լաուրենս (Լավրենտի) Յանսզոն Կոստերը (1405-1484)՝ եվրոպական գրատպության ենթադրվող հիմնադիրներից մեկը Յոհան Գուտենբերգից (1394/1399-1468) առաջ: Սակայն մեր ուսումնասիրությունները և գրքագիտության նորագույն տվյալները հաստատում են, որ Նիդերլանդների Հառլեմ քաղաքի վանական Կոստերը տպագրական տեխնիկայի գաղտնիքն իմացել է արևելքից եկած հայ գաղթականներից [История книги, 1998, 50]: Սա, մեր կարծիքով, ցնցող փաստ է ընդհանուր հայագիտության և արդի գրքագիտության համար:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տպագրական գյուտը ոչ միայն ժողովուրդների պատմամշակութային փոխգաղափարների կամուրջը հանդիսացավ, այլև՝ սեպագրական և ձեռագրական հարուստ ժառանգությունը միավորեց հետագա դարաշրջանների գրատպական ու լեզվական մշակույթների զարգացումների մեջ: Իսկ նորագույն ժամանակներում խթանեց էլեկտրոնային (ինտերնետային) հաղորդակցական կապերի և տեղեկատվական բազմազան աղբյուրների առաջացմանն ու «թվայնացմանը»:

Հայ տպագրության օրրանը Վենետիկն է (Իտալիան), ուր 1512 թ. Հակոբ Մեղապարտը [Իշխանյան, 1982] հիմք դրեց հայալեզու-մեսրոպատառ առաջին տպագիր հրատարակությանը՝ «Ուրբաթագիրք» վերնագրով: Այնուհետև (1512-13 թթ.) Հակոբը տպագրում է ևս չորս գիրք. «Պատարագատետր» (կամ «Պատարագամատոյց»), «Աղթարք», «Պարգատումար» և «Տաղարան»: Փաստորեն Հակոբի շնորհիվ հայերը ոչ միայն եվրոպացի շատ ազգերից առաջ, այլև նախկին Խորհրդային Միության ժողովուրդներից ու ներկայիս ԱՊՀ երկրներից առաջինն էին, որ իրականացրին ազգային լեզվով տպագրություն: Կարելի է հաստատել, որ **Հակոբ Մեղապարտը ոչ միայն հայկական գրատպության, այլև՝ տպագրական քաղաքակրթության սկզբնավորման հիմնադիրը հանդիսացավ հայ մշակույթի պատմության մեջ:** XVI դարում հայկական գրատպության զարգացման գործում աչքի ընկնող դեր են խաղում Կ. Պոլսի (1567 թ.) և Հռոմի (1584 թ.) հայկական տպարանները: XVII-XVIII դդ. հայկական գրատպությունը թևակոխում է նոր շրջան՝ նոր բովանդակություն հաղորդելով տպագրական մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Հայկական տպագրական արվեստի մյուս կենտրոնները դարձան Լվովը (1616 թ.), Սիլանը (1621 թ.), Փարիզը (1633 թ.), Լիվոռնոն (1644 թ.), Մարսելը (1672 թ.), Լայպցիգը (1680 թ.), Վենետիկը (1686 թ.): Նոր Զուղան (1638 թ.), Ամստերդամը (1660 թ.), Լոնդոնը (1736 թ.), Կ. Պոլիսը (1792 թ.), Զմյուռնիան (1759 թ.), Մադրասը (1772 թ.), Էջմիածինը (1771 թ.), Սանկտ-Պետերբուրգը (1781 թ.), Նոր Նախիջևանը (1789 թ.), Աստրախանը (1796 թ.) և այլ քաղաքներ:

XIX-XXI դարում հայ գրատպական կենտրոններ են հիմնվում ինչպես Եվրասիայի, այնպես էլ Ամերիկայի ու Աֆրիկայի երկրներում: Գրատպության և տպագրական քաղաքակրթության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան Վիեննայի (1812 թ.), Բոմբեյի (1810 թ.), Երուսաղեմի (1833 թ.), Կահիրեի (1865 թ.), Բաքվի (1872 թ.), Ալեքսանդրիայի (1888 թ.), Ժնևի (1891 թ.), Աթենքի (1892 թ.), Թեհրանի (1894 թ.) Նյու Յորքի (1857 թ.), Բոստոնի (1899 թ.), ինչպես նաև Շուշիի (1828 թ.), Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1828 թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1823 թ.), Վանի (1858 թ.), Մուշի (1863 թ.), Սեբաստիայի (1875 թ.), Երևանի (1876 թ.) և Ալեքսանդրապոլի (1876 թ.) հայկական տպարանները:

Մայր Հայաստանը գրքի և տպագրական գործի զարգացման ծաղկուն կենտրոն դարձավ Խորհրդային և հետխորհրդային շրջաններում, երբ սկսեցին հիմնադրվել տասնյակ հրատարակչություններ. «Հայաստան» (1921 թ.), «Հայաստանի գիտությունների ակադեմիա» (1943 թ.), «Լույս» (1964 թ.), «Խորհրդային գրող» (1976 թ.), որը 1991 թ.-ից կոչվել է «Նաիրի», «Արևիկ» (1986 թ.), «Հայկական սովետական հանրագիտարան» (1965 թ.), «Զանգակ-97» (1997 թ.), «Հայաստանի գրողների միություն» (2001 թ.) և այլն: Հետաքրքիր է նշել, որ 1920-ական թվականներին, երբ դարասկզբի առաջին տասնամյակների հեղափոխական ու պատերազմական ծանր իրադարձություններից հետո նպաստավոր պայմաններ են ստեղծվում տպագրա-հրատարակչական գործի զարգացման համար, նույնիսկ երգեր են հյուսվում այդ կարևորագույն գործին նվիրված: Այդ մասին է վկայում «Մուրճ»-ում տպագրված Ա. Բաբայանի «Գրաշարի երգը» եզակի բանաստեղծությունը՝ ժամանակաշրջանի փայլուն նկարագրությամբ և ապագայի հանդեպ ունեցած լուսավոր հավատով:

Գրաշարի երգը

Ինձ հարազատ պոետների երգերն եռուն, կրակոտ
ես կշարեմ տառակալի անկյունում.
կերգեմ նրանց բառերը հուր ու խրոխտ,
զիլ կկանչեմ նրանց երգը անդադրում:
Իմ – բանվորիս ապրումները բոցավառ
ես կխառնեմ մեքենայի երգերին՝
աշխատանքի համերգի հետ մի ալար-
ես վերջ կուտամ հին ու դաժան վերքերին:
Ներկ ու արճիճ, և դուք տառե՛ր փոշոտած,
ես ձեզանով ընկերներիս լույս կուտամ,
մեր նոր կյանքի նոր գործերով հիացած,
ես նոր կյանքին, ազատ կյանքին լույս կուտամ [Մուրճ, 1923, № 3, 11]:

Գրահրատարակչական առանձնահատկություններով, կրթության ու գիտության զարգացման ոլորտներում կարևոր նշանակություն են ձեռք բերել նաև բուհական և ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիական միջոցները: Այժմ հայկական տպարաններ են գործում նաև սփյուռքի հայաշատ կենտրոններում՝ Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում, Կահիրեում, Հալեպում, Կ. Պոլսում, Նոր Ջուղայում, Լոս Անջելեսում, Սոֆիայում, Փարիզում, Նյու Յորքում, Բեյրութում, Մոսկվայում և այլուր՝ նպաստելով ազգային լեզվի պահպանմանն ու տպագիր մշակույթի տարածմանը, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը: «Մեզի համար,- գրել է Գարեգին Բ. Կաթողիկոսը,- Հայ գրքի հրատարակությունը ազգային, կրոնական, մշակութային, քաղաքակրթական առաքելության հարց է: Գոյատևման պայքարի հարց է: Լինելության խնդիր է» [Գարեգին Բ, 1990, 145]:

Հետևապես, հայ ժողովրդի գրավոր մշակույթի մասին տեղեկատվական լայն պատկերացում կազմելու համար պետք է օգտվել տարբեր դարաշրջաններում ստեղծված տարատեսակ մատենագիտություններից (իսկ դրա համար պետք է ունենալ գրադարանային-մատենագիտական անհրաժեշտ գիտելիքներ և տեղեկատու աղբյուրներից օգտվելու ունակություններ), որոնց միջոցով հեղինակները ձգտել են պահպանել ազգային-մշակութային ժառանգության գենետիկական կապը՝ դրանք շաղկապելով համաշխարհային գրքարվեստի, գրադարանագիտական և գրքագիտական մտքի զարգացումների հետ: Այդ առումով առանձնակի նշանակություն ունեն սեպագիր, ձեռագիր և տպագիր գրքերին ու պարբերական մամուլին նվիրված բազմաթիվ մատենագիտությունները՝ ստեղծված Հայաստանում, Արցախում և հայկական սփյուռքում: Հատկապես ուշադրության են արժանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակած «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» տասնհատորյակը (Հ. Ա. – Ժ, 1984-2019 թթ.) և 1512-1940 թթ. ընդգրկող Հայաստանի ազգային գրադարանի (ՀԱԳ) հրատարակած «Հայ գրքի» վեցհատորյա (Հ. 1-6, 1967-2018 թթ.) հետադարձ մատենագիտությունները:

Այդպիսով, **հայկական գրատպության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա զարգացման ընթացքը կրել է համակարգային բնույթ:** Գրատպության շնորհիվ ստեղծվել է հսկայածավալ մատենագիտական գրականություն՝ հասարակության և ընթերցողների լայն շրջանների համար հանդիսանալով տեղեկատվության և գիտելիքի անսպառ աղբյուրներ: Աչքի են ընկնում խորը պատմականությամբ, լեզվական առանձնահատկություններով և ուսուցողական անգնահատելի նշանակությամբ: Դասակարգված են փաստաթղթատեղեկատվական համակարգերում և իրենց հարուստ բովանդակությամբ ու գործառնություններով ազդ(ել)ում են միջմշակութային և սոցիալական հաղորդակցությունների զարգացման վրա: Այդպիսիներից են նաև Ա. Սալմասյանի (1888-1971 թթ.) «Հայկական մատենագիտությունը» (1969 թ.), Հովհ. Պետրոսյանի (1892-1961 թթ.) «Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիան» (Հ. 1-3, 1954-1957 թթ.), Հ. Անապանի

(1904-1988 թթ.) «Հայկական մատենագիտությունը» (Հ. 1-3, 1959-2004 թթ), Հ. Դավթյանի (1919-1983 թթ.) «Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը» (1964 թ.) և այլն:

Հայկական գրատպության զարգացման պատմությունը վերաիմաստավորելու մեթոդաբանական տեսանկյունից ներկա հոդվածում նպատակ ենք դրել նաև անդրադառնալ գրատպության վերաբերյալ գիտական հետաքրքրություն ներկայացնող մի շարք հոբելյանական գիտաժողովներին ու դրանց վերաբերյալ հրապարակումներին: Նախ չըջանցելով դեռ 1895 թ. Վենետիկում հրատարակված Գ. Զարբհանալյանի (1827-1901 թթ.) «Պատմություն հայկական տպագրության» գրքի անչափ կարևորությունը, անհրաժեշտ է նշել, որ հայ գրքի և տպագրության պատմության վերաբերյալ հրատարակությունների **նոր սկիզբ** դրվեց 1912 թ., երբ նշվում էր հայկական տպագրության 400-ամյակը: Այդ առթիվ արժանի են հիշատակման Լեոյի (1860-1932 թթ.) «Հայ գրքի տունը» (Թիֆլիս, 1912 թ.), Թեոդիկի (1873-1928 թթ.) «Տիպ ու տառը» (Կ. Պոլիս, 1912 թ.), Արշակ Ալպոյաճյանի (1879-1962 թթ.) Նյու Յորքում հրապարակած հոդվածաշարը (1912 թ.) [Ալպոյաճյան, 1912, № 2, էջ 43-45; № 3, էջ 64-67, № 4, էջ 87-91; № 5, էջ 112-117], հետագայում՝ Գ. Լևոնյանի (1872-1947 թթ.) և Ռ. Իշխանյանի (1922-1995 թթ.) ուսումնասիրությունները [Իշխանյան, 1981; Լևոնյան, 1958]:

Անդրադառնալով, մասնավորապես, հայ տպագրության 400-ամյակին նվիրված Արշակ Ալպոյաճյանի հոդվածին՝ իմանում ենք, որ հայկական երկրորդ տպարանի հիմնումը Կ. Պոլսում (1567 թ.) այնքան էլ հեշտ չի եղել: Որովհետև, ըստ Ալպոյաճյանի, թուրքական իրականության մեջ «տիրապետող տարրը կը գտնվեր կատարյալ տգիտության մեջ, և թշնամի էր ամեն քաղաքակրթության ձեռնարկին» [Ալպոյաճյան, 1912, № 3, 67]: Նույնիսկ XV դ. Կ. Պոլսում հիմնված հրեաներն իրենց գրքերը տպագրում էին գաղտնաբար (Հրեական առաջին գիրքը՝ «Աստծոյ ժողովրդին պատմությունը» Կ. Պոլսում տպագրվել է 1490 թ.): Ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, սրա գլխավոր ապացույցը նաև այն է, որ «Թուրքերը՝ Հրեաներէն 240 և Հայերէն 160 տարի հետ, 1726 թ. հազիվ առաջին անգամ տպագիր գիրք մը կունենային, այն էլ ամենամեծ դժվարություններով» [Նույն տեղում, 67]:

Այնուհետև, 1962 թ. դեկտեմբերի 25-ին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում տեղի է ունենում գիտական նիստ՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին [Անդրեասյան, 1963, 297-298]: Նստաշրջանը բացել է Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանը: Նիստում ծավալուն զեկուցմամբ հանդես են եկել Արամ Բաբայանը [Բաբայան, 1963, 31-44], Ռաֆայել Իշխանյանը, ում զեկուցումը նվիրվել է Հակոբ Մեղապարտի անձի և գործունեության հարցերին, ինչպես նաև Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Յարոսլավ Դաշկևիչը և ուրիշներ: Պետք է ընդգծել, որ Յա. Ռ. Դաշկևիչը գնահատելի խոսք է ասել Լվովի հայկական տպարանի դերի ու նրա հիմնադիր Հովհաննես Քարմատանենցու մասին և նշել, որ Լվովի տպարանը «Սովետական Միության տերիտորիայում առաջին հայկական տպարանն է եղել» [Անդրեասյան, 1963, 298]: Այստեղ է 1616 թ. հրատարակվել Հովհ. Քարմատանենցի առաջին գիրքը՝ «Մաղմուսարանը», որը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում, իսկ 1618 թ.-ին՝ հայատառ-դպչադերեն «Աղոթագիրքը»:

Հայկական գրատպության պատմությանը նվիրված հոբելյանական գիտաժողովներ են անցկացվել XXI դարի առաջին տասնամյակներում, որոնցից երկուսը՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում՝ տողերիս հեղինակի նախաձեռնությամբ: Առաջինը կայացել է 2002 թ. ապրիլի 19-ին՝ նվիրված հայ տպագրության 490-ամյակին, որին ներկա են եղել շուրջ 130 մասնակիցներ, այդ թվում 10 զեկուցողներ [Սուքիասյան, 2002, № 83, 6]: Բացման խոսքով հանդես է եկել համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Հր. Չփլախյանը: Երկրորդը՝ նվիրվել է հայկական գրատպության 500-ամյակին և կայացել է 2010 թ. ապրիլի 15-16-ին: Գիտաժողովի մասնակիցների թիվը կազմել է 210 մարդ, այդ թվում 30 զեկուցողներ [Հայկական տպագրության 500-ամյակը, 2010]: Բացման խոսքով հանդես է եկել ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Ղուկասյանը: Հայկական գրատպության 500-ամյակը մեծ հանդիսավորությամբ նշվել է նաև Շուշիում՝ 2012 թ. սեպտեմբերի 17-19-ին կայացած միջազգային գիտաժողովում [Շուշին՝ հայկական մշակույթի օջախ, 2014]: Ողջույնի խոսքերով հանդես են եկել ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղու-

յանը, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Նարինե Աղաբալյանը: Ձեկուցողների թիվը՝ 24: Իսկ 2018 թ. հուլիսի 12-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում Ժուռնալիստների միության դահլիճում նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը [Սուքիասյան, 2018, № 142, 4]՝ վերաբժնորելով Շուշիի պատմական դերը ազգային մշակույթի զարգացման մեջ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ էլ կազմակերպվել են հայկական սփյուռքում՝ Բելյուրում [Հայկազեան համալսարան, 2014]:

Գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ հոբելյանական գիտաժողովները, նրանց մասին վկայող հրապարակումները, ինչպես նաև Վ. Դևրիկյանի ու Գ. Սուքիասյանի աշխատություններն [Դևրիկյան, 2012, 2014, 2016; Սուքիասյան, 2013] ունեցել և ունեն ընդհանուր հայագիտական, սփյուռքագիտական ու արցախագիտական կարևոր նշանակություն՝ պատմական, տեսական ու մեթոդական հարցերի արտացոլումներով: Հայ գիրքը, կազմելով համաշխարհային տեղեկատվական մշակույթի անբաժան մասը, բազմաթիվ անգամ ներկայացվել է նաև գրքի միջազգային ցուցահանդեսներում ու փառատոններում և ամենուր արժանացել բարձր գնահատականի: Իսկ 2015թ. Վարշավայում կայացած գրքի միջազգային փառատոնում նշվել է, որ «Հայերն ունեն փառավոր մշակույթ» (ըստ «Հ1» հեռուստաալիքի, 18. 05. 2015թ.):

Հետևաբար, հանուն կայուն ապագայի (ընդգծումը՝ Գ. Ս.)՝ հայկական մշակութային ժառանգությունը պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել գրադարանային-տեղեկատվական և գիտակրթական քաղաքականության զարգացման նորագույն միտումները՝ այդ ժառանգության անվտանգությունը ապահովելու համար: Այս տեսանկյունից ներկա հոդվածում խնդիր ենք դրել նաև անդրադառնալ **Արցախյան նոր պատերազմի** (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով աղբյուրների հսկողության տակ մնացած հայկական գրադարանների՝ հայ գիրքն ու գրադարանային ֆոնդերը հայերիս վերադարձնելու գրադարանագիտական հարցին և ոչ միայն:

Այսպես, համաձայն Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության՝ մեզ տրամադրած 2021 թ. մայիս-հունիսի տվյալների, Արցախի վերահսկողությունից դուրս են մնացել 124 գրադարաններ, այդ թվում Շուշիի և Հադրութի կենտրոնական և Բերձորի քաղաքային գրադարանները՝ 68400 գրքային ֆոնդով: Ինչպես նաև՝ 121 դպրոցական գրադարաններ, այդ թվում Ասկերանի շրջանի 8, Մարտակերտի շրջանի 7, Մարտունու շրջանի 7, Շուշիի շրջանի 4, Հադրութի շրջանի 28, Քարվաճառի շրջանի 15 և Քաշաթաղի շրջանի 52 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդը կազմել է 548600 միավոր: Բոլոր ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 617.000 միավոր գրականություն, որոնց գոյության մասին տեղեկություններ չկան: Գրադարանների ու գրքային մշակույթի մասին այսպիսի փաստեր (միայն հայերին վերաբերող), մեր կարծիքով, դեռ չի գրանցվել վերջին 100 տարում:

Բացի վերը նշվածներից, աղբյուրների հսկողության տակ են մնացել Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Մհեր Հարությունյան) 30000 գրքային ֆոնդով գրադարանը, 150 անուն ամսագրեր (կազմելով 15000 միավոր), 190 անուն թերթեր (կազմելով 38000 միավոր), 1000000 արխիվային նյութեր, 90000 միավոր լուսանկարներ, 40 միավոր ալբոմներ, 120 միավոր աուդիոձայնագրություններ և 40 միավոր տեսաձայնագրություններ: Մի խոսքով՝ կրթության, գիտության, պատմության և ընդհանուր մշակույթի վերաբերյալ տեղեկատվական հսկայածավալ ռեսուրսներ, որոնց ճակատագիրը նույնպես անհայտ է. թալանվել կամ ոչնչացվել են: Այս ամենը հաստատում են Աղբյուրների շարունակվող հակահայկական ու հայատյաց քաղաքականության [Մարտիրոսյան, 2009] մասին շրջանցելով միջազգային և հեղինակային բոլոր օրենքներն ու ֆորումները [Սուքիասյան, 2012, № 180, 6; Шрайберг, 2007; Соколов, 2019, № 3, 231-247; Богуславский, 1979; Столяров, 2007]:

Մեր կարծիքով, համաձայն գործող օրենքների և ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշումների (ներառյալ 1992թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնած «**Աշխարհի հիշողություն**» ստեղծելու միասնական ծրագիրը), որոնց շրջանցելը պարզապես անկարելի է, հայկական մշակութային ժառանգությունը ենթակա է վերադարձման և այդ խնդիրը պահանջում է հրատապ լուծում: Իսկ խնդրո առարկա հար-

ցում, միջազգային գրադարանային հանրության աջակցության ու համագործակցության տեսանկյունից, «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» խորագրով գիտաժողովը՝ նվիրված հայկական գրատպության 510-ամյակին, նույնպես լավագույն առիթ է:

Այսպիսով, նշելով Հայկական գրատպության հերթական 510-ամյա (1512-2022) հոբելյանը [Սուքիասյան, 2021, № 196, 1, 6], վստահ կարելի է ասել, որ մենք ունենք դարերով ձևավորված ու համաշխարհային մասշտաբով զարգացող տպագրական-տեղեկատվական քաղաքակրթություն: Հետևապես, այդ քաղաքակրթությունը պահպանելու և դարից դար սերունդներին փոխանցելու համար պետք է կարևորել ազգային մշակույթի անվտանգության ապահովումը, գրադարանային ֆոնդերի համալրումն ու գրադարանային գործի կառավարման համակարգային զարգացումը, գրականության և ընթերցանության հասարակական դերի էլ ավելի բարձրացումը: Պետք է խորապես գիտակցել գրքի («փաստաթղթի»)՝ որպես տեղեկատվական աղբյուրի և մատենագիտական օբյեկտի դերն ու արդիական նշանակությունը կրթական, գիտագործնական, տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական և սոցիալ-հաղորդակցական ոլորտներում՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Ուշագրավ է նաև, որ այս տարի ՀԱԳ-ի համար նույնպես հոբելյանական տարի է. լրանում է նրա 190-ամյակը (1832-2022 թթ.): Գրադարան, որը հայկական գրադարանների շարքում աչքի է ընկնում առաջնակարգ դերով ու բազմաֆունկցիոնալ գործունեությամբ: 2020 թ. ՀԱԳ-ի ֆոնդի քանակը կազմել է 6.682.679 միավոր, ընթերցողների թիվը՝ 20.279, տացքը՝ 880.076, հաճախումների թիվը՝ 162.996, իսկ աշխատողների թիվը՝ 337 [Հայաստանի գրադարանները, 2021, 72-73]:

Հետևություններ: Հայկական գրատպության պատմության զարգացումը Հայաստանում, հայկական սփյուռքում ու Արցախում կրել է համակարգային բնույթ: Աղբյուրների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ դարերի ընթացքում ստեղծվել է հսկայածավալ տպագիր գրականություն, որի տեղեկատվական ազդեցությունը միջմշակութային, գիտակրթական, տեխնոլոգիական («թվայնացման») և սոցիալական հաղորդակցությունների զարգացման վրա աննկարագրելի մեծ է:

«Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի խորագիրը, մեր կարծիքով, պետք է հավասարապես վերաբերի նաև արցախյան նոր պատերազմի հետևանքով աղբյուրների հսկողության տակ մնացած հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացումից փրկելու խնդրին: Ելնելով ազգային մատենագիտության ամբողջականության սկզբունքից՝ չպետք է թույլ տալ որևէ գրքի, գրադարանային ֆոնդի կամ փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրի կորուստ:

SUMMARY

The history of Armenian book printing is one of the bright pages of the world culture and civilization. A comprehensive analysis has shown that thanks to the development of book printing a large number of books in different languages, periodicals and bibliographic publications were published, which by their meaning and functions influenced and continue influencing the development of intercultural, scientific, educational, technological (“digitalization”) and social communications.

The theme of the conference is “Heritage Preservation for Sustainable Future,” which also should equally refer to the problem of saving the Armenian cultural heritage from destruction, which remained under the control of Azerbaijanis as a result of the new Artsakh war. In order to contribute to this important matter, the author of the lines has proposed cooperation with the international library community participating in this conference.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալպոյաճյան Արշակ Ա., Չորսհարյուրամյակ հայ տպագրության. 1512-1912 // Կոչնակ շաբաթաթերթ: - Նյու Յորք, 1912. հունվ. 13.- № 2.- էջ 43-45; - հունվ. 20.- № 3.- էջ 64-67; - հունվ. 27.- № 4.- էջ 87-91; - փետր. 3.- № 5.- էջ 112-117:

2. Անդրեասյան Բ., Գիտական նիստ՝ նվիրված հայկական տպագրության 450-ամյակին // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1963, № 1 (20), էջ 297-298:
3. Բաբայան Ա. Ս., Հայ տպագրության 450-տարին // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ 1963.- № 1 (20).- էջ 31-44:
4. Գարեգին Բ Կաթողիկոս, Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց..., փորձ մը՝ Հայ գիրքի փիլիսոփայության, Բեյրութ, Անթիլիաս, 1990.- 149 էջ:
5. Դևրիկյան Վ. Գ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում / խմբ.՝ Վ. Եղիշյան:- Մաս Ա. Վենետիկից Հռոմ (16-րդ դար), Երևան, Զանգակ, 2012, 272 էջ:
6. Մաս Բ. Լվովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, Զանգակ, 2014. 398 էջ:
7. Մաս Գ. Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար), Երևան, Զանգակ, 2016, 480 էջ:
8. Իշխանյան Ռ. Ա., Հակոբ Մեղապարտ, Երևան, Հայաստան, 1982, 71 էջ:
9. Իշխանյան Ռ. Ա., Հայ գիրքը 1512-1920, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, 154 էջ:
10. Լևոնյան Գ. Ջ., Հայ գիրքը և տպագրական արվեստը, Երևան, Հայպետհրատ, 1958, 255 էջ:
11. Հայաստանի գրադարանները 2020 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Լ. Մուրադյան, Երևան, ՀԱԳ, 2021, 107 էջ:
12. Հայկազեան համալսարան: Հայ տպագրության 500-ամեակի ձեռնարկներ (5 մայիսի 2012-22 մարտի 2013), Պեյրութ, Անթիլիաս, 2014, 104 էջ:
13. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապ. գիտաժողովի (2010 թ. Ապրիլի 15-16) զեկուցումների ժողովածու / Խմբագիրներ՝ Ա. Վ. Գալստյան, Գ. Ա. Սուքիասյան, Երևան, Մանկավարժ, 2010, 132 էջ:
14. Մարտիրոսյան Ա. Ս., Թուրք-ադրբեջանական հայատյաց քաղաքականությունը և հայերի ուժացումը, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2009, 288 էջ (հայերեն և անգլերեն):
15. Մուրճ: Գրական, գեղարվեստական, քննադատական պարբերական: Բ տարի / Խմբագիր Ազատ Վշտունի (1894-1958), Երևան, Առաջին Կենտր. Խորհրդ. տպ., 1923, № 3, էջ 11:
16. Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկույցներ, Շուշի, Կաճառ գիտ. կենտրոն, 2014, 240 էջ:
17. Սուքիասյան Գ. Ա., Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: Նվիրվում է հայկ. տպագր. 500-ամյակին, Երևան, ՀԱԱ հրատ., 2013, 160 էջ:
18. Սուքիասյան Գ. Ա., Գիտաժողով՝ նվիրված հայ տպագրության 490-ամյակին (1512-2002) // Ազգ, Երևան, 2002, Մայիսի 7. № 83 (2528), էջ 6:
19. Սուքիասյան Գ. Ա., Երկու դար առաջ Շուշին գրատպության կենտրոն էր // Հայաստանի Հանրապետություն, 2018, օգոստոսի 1, № 142 (6898), էջ 4:
20. Սուքիասյան Գ. Ա., Գրադարանավարների միջազգային ֆորում Աստանայում // Հայաստանի Հանրապետություն, 2012, հոկտ. 4, № 180, էջ 6:
21. Սուքիասյան Գ. Ա., Ազգային լեզվով առաջին տպագրությունն իրականացնողները հայերն էին: Հայկական գրատպության 510-ամյակին ընդառաջ // Հայաստանի Հանրապետություն, 2021, նոյեմբեր 16, № 196 (7637), էջ 1, 6:
22. Богуславский М.М., Международная охрана культурных ценностей, Москва, Международные отношения, 1979, 192 с.
23. Владимиров Л.И., Всеобщая история книги, Москва, Книга, 1988, 312 с.
24. История книги: Учебник для вузов, Москва, МГУП, 1998, 346 с.
25. Соколов А. В., Национальная безопасность и национальная библиотека // Библиотековедение, Москва, 2019, Том 68, № 3, С. 231-247.
26. Спафарий-Милеску Н. Г., Сибирь и Китай, Кишинев, Картя Молдовеняскэ, 1960, 516 с.
27. Столяров Ю. Н., Библиотека в экстремальной ситуации: учебно-практ. пособие, Москва, Библиком, 2007, 464 с.
28. Шрайберг Я. Л., Земсков А. И. и др., Авторское право и библиотеки, Москва, ГПНТБ России, 2007, 48 с.

ПШЕНИЧНАЯ ЕВГЕНИЯ ВЛАДИМИРОВНА
Новосибирск, Россия

ВЛАДЕЛЬЦЫ ЛИЧНЫХ БИБЛИОТЕК И КНИЖНАЯ КУЛЬТУРА ТУРКЕСТАНСКОГО КРАЯ НА РУБЕЖЕ XIX - XX ВЕКОВ

Ключевые слова: личные библиотеки, книжная культура, Туркестанский край, Туркестанская публичная библиотека, К. П. фон Кауфман, П. И. Пашино, Н. В. Дмитриевский, А. К. Гейнс, Н. К. Романов, Н. Ф. Петровский.

Keywords: personal libraries, book culture, Turkestan region, Turkestan Public Library, K. P. von Kaufman, P. I. Pashino, N. V. Dmitrovsky, A. K. Gaines, N.K. Romanov, N. F. Petrovsky.

Введение: книжная культура Туркестанского края в конце XIX- начале XX в.

В конце 70-х гг. XIX в. на территории Туркестанского края происходило взаимодействие и взаимовлияние двух разных культур (местной азиатской и русской), что послужило стартом для нового витка развития книжной культуры региона. В это период город Ташкент получил статус административного центра и общепризнанного центра науки, культуры и просвещения. Деятельность научных обществ способствовала краеведческим исследованиям и открытию древних памятников культуры народов Средней Азии. Крупные российские ученые, в число которых входили офицеры, дипломаты, царские чиновники, обладали хорошей исламоведческой подготовкой, в совершенстве владели местными языками и знали быт местных жителей. [Лунин, 1958, 12–22; Добромислов, 1910, 285–312]. В научной деятельности обществ принимали участие и представители местных национальностей, российский историк-востоковед В. В. Бартольд в своих публикациях приветствовал совместную работу русских и местных деятелей и считал, что эта коллаборация несомненно даст ценные научные результаты [Бетгер, 2015, 53–54].

Далее, по рассматриваемому вопросу сотрудники Национальной библиотеки Узбекистана в своей работе, исходя из требований международных стандартов, но при этом используя свои организационно-самобытные наработки, достигли следующих результатов: организовали информационную базу национальных библиографических данных, где собраны все материалы, касающиеся Узбекистана не только из библиотек областного значения, республик СНГ, но и из других зарубежных государств. При этом особо выделялись и аналитически визуально моделировались в

электронную базу данных все научные статьи краеведческого характера, напечатанные в газетах и журналах, издаваемых на территории республики [Рахимова // INFOLIB. 2015: № 1. 36–39].

Вместе с тем в библиотеке ведётся работа по сбору отдельной полнотекстовой библиографии, а также аудио-видео ресурсов на CD-дисках узбекских писателей, поэтов, и ученых различных отраслей науки. Создание полнотекстовых информационных дисков значительно повышает эффективность работы сотрудников библиотек в оказании помощи (консультативных услуг) для пользователей.

В Национальной библиотеке, также в этом направлении ведётся целый ряд работ. В том числе создаются электронно-библиографические пособия состоящие из видео и аудио-ресурсов содержащих статьи, произведения, исследования и биографии общественно-политических деятелей, академиков, представителей науки и искусства, а также литературоведов нашего края [Ҳидоятова 2021: 358-363].

За период 2010–2022 гг. всего – подготовленно 75 библиографических пособий. Из них:

56 персональных электронных библиографий;

10 тематических электронных библиографий;

9 печатных изданий.

На сегодняшний день читатели в информационно-библиотечных учреждениях имеют широкие возможности пользования не только различными печатными изданиями, но и при помощи современных электроно-розыскных программ быстро и удобно получать нужную для себя информацию из внушительного спектра электронных ресурсов или мультимедийных продуктов.

Кроме этого, службой национальной библиографии библиотеки республики своевременно создаются по линии краеведения научно-отраслевые электронные блоки на ретроспективную тематику. Вместе с тем в библиотеке ведётся работа по сбору отдельной полнотекстовой библиографии, а также аудио-видео ресурсов на CD-дисках республиканских писателей, поэтов и учённых различных отраслей науки. Созданы полнотекстовые персональные библиографии, состоящие из рубрик научного творчества известных представителей науки, литературы и культуры, а также государственных и общественных деятелей [Алаутдинова // INFOLIB. 2019: № 4. 76–69].

Например:

1. физика – академика Садыка Азимова
2. энергетика – академика Джуры Абдуллаева
3. историка – академика Рахимы Аминовой
4. биолога – академика Теша Захидова
5. физика-математика – академика Василя Кабулова
6. правоведа – академика Хадичы Сулеймановой
7. физика-математика – академика Пулат Киргизбаевича Хабибуллаева
8. литературоведа – академика Азиза Каюмова
9. литературоведа – академика Алибека Рустомова
10. химика-биолога – академика Абдусаттара Абдукаримова
11. физика-математика – академика Ташмухаммада Сарымсакова
12. экономиста – академика Мурада Шарифходжаева
13. физика – академика Рахима Бекджанова
14. физика-ядерщика – академика Гияса Умарова
15. искусствоведа и композитора – академика Юнуса Раджабий
16. физика – академика Акбар Косимовича Атаходжаева
17. химика-биолога – академика Ёлкин Холматовича Туракулова
18. химика-биолога – академика Хамидуллы Нигматовича Арипова
19. правоведа – академика Шавката Уразаева
20. правоведа – академика Ходжиакбара Рахмонкулова
21. физика-математика – академика Ташмухаммада Ниязовича Кары-Ниязова
22. историка и археолога – академика Эдварда Ртвеладзе
23. именитого учёного и географа – профессора Суюна Кораева
24. учёного языковеда – Аюб Гулямовича Гулямова
25. Народного писателя Узбекистана – Уткура Хошимова
26. Народного писателя Узбекистана – Ибрагим Рахима
27. Народного поэта Узбекистана – Абдуллы Арипова
28. Народного писателя Узбекистана – Абдуллы Каххара
29. композитора – Мухтара Ашрафи
30. композитора – Мутала Бурханова

31. библиотековедение и библиография – Евгения Карловича Бетгера.

Тематические библиографии:

1. Ташкентский зоопарк
2. Состоящий из 4-х частей рекомендательный библиографический указатель «Юридической литературы изданной в Узбекистане с 2010–2014 гг.».
3. Рекомендательный библиографический указатель «Художественной литературы изданной в Узбекистане с 2010–2014 гг.».
4. Библиографический указатель литературы посвящённой 100-летию Узбекского Национального Академического театра драмы.
5. Рекомендованный библиографический указатель литературы по языковедению изданной в Узбекистане с 2010–2014 гг.
6. Музыкальное пособие посвящённое 575-летию со дня рождения Алишера Навои.

В Национальной библиотеке Узбекистана имени А. Навои ведётся целый ряд работ. В том числе создаются электроно-библиографические пособия, состоящие из видео и аудио-ресурсов, содержащих статьи, произведения, исследования и биографии общественно-политических деятелей, академиков, представителей науки и искусства нашего края.

В частности: для увековечения памяти таких великих патриотов просвещения, как – Махмудходжа Бехбудий, Абдулла Авлоний, Исхакхан Ибрat, Абдурауф Фитрат, Абдулхамид Чулпан и Абдулла Кадыри – поставлены (скульптурные) памятники, созданы музеи и действуют многие творческие школы. Кроме этого, с целью выяснения личностей наших соотечественников, несправедливо обвинённых и погибших в годы политических репрессий, проводится множество научно-исследовательских работ, а также создаются художественные и документальные произведения, направленные на изучение и широкое распространение среди общественности, оставленного ими богатого культурно-творческого наследия [О дополнительных мерах...2020].

Вместе с тем в Национальной библиотеке созданы полнотекстовые списки, посвящённые жертвам репрессий: Усман Носир, Мунавваркори Абдурашидов, Боту, Гайратий, Чулпан, Тавалло, Айбек, Фитрат, Бехбудий, Авлоний, Кадыри, Ибрat, Саид Ахмад, Миртемир. Данные полнотекстовые списки включают в себя произведения перечисленных авторов, их биографии, перечень книг и газетно-журнальных статей, интересно освещающих творчество этих великих людей.

Создан полнотекстовый библиографический указатель, который включает в себя историю Национальной библиотеки посвящённую её 150-летию юбилею. Полнотекстовый список, составленный на основе собранных материалов Национальной библиотеки и интернет-сайтов, включает в себя не только информацию о деятельности Национальной библиотеки, но и её показателях, книгах, газетно-журнальных статьях и интервью данных по радио-телевидению, подготовленных различными сотрудниками и руководителями.

Здесь необходимо отметить, что вся вышеуказанная богатейшая информационная база данных постоянно выставляется на сайт библиотеки <https://www.natlib.uz/>.

В 2016 году в Национальной библиотеке к празднованию 25-летнего юбилея независимости Республики Узбекистан был создан «Электронный архив национальных изданий» (press.natlib.uz) , в котором собраны все временные типографские издания интерактивных служб. Такая база была создана с целью систематизации всех имеющихся временных изданий, облегчения процесса поиска нужных статей, а также усовершенствования возможностей пользования ретро изданиями. Вместе с тем в «Электронном архиве национальных изданий» созданы все возможности для более широкого использования информации из полнотекстовых баз временных типографских изданий. Данная информационная база, официально считаясь средством Национальной Библиотеки Узбекистана, при помощи системы быстрого и удобного поиска даёт широкие возможности читателям в короткие сроки находить интересующие статьи всех временных типографских изданий [Рўзиева, 2017, № 4. 58–59].

В информационную базу постоянно вводятся данные обо всех временных типографских изданиях на территории Узбекистана, Каракалпакстана, города Ташкента, областей и районов. Принимая во внимание требования читателей, планирование составления хронологической информационной базы данных с 1935 года основано на газетах, пользующихся большим спросом. В системе поиска «Электронного архива информационной базы» национальных изданий имеются возможности определения по наименованию тем, датам, годам издания, названию, нумерации, количеству издания и ключевым словам. Кроме этого, в базе числятся темы по политике, экономике, культуре, истории, спорту, образованию, здравоохранению и служебной документации. При поиске по тематике, использованные издания выходят в отдельно взятом виде. Они включают в себя возможности просмотра мест издания газет и журналов, т.е. регионально. Информационные базы

созданы на двух языках: узбекском и русском. В последних программах также дополнительно добавлены вспомогательные страницы статистики и много читаемых изданий. Издания можно видеть и выбирать по ID номеру, размеру, названию, году, окончанию, нумерации и текстровке статей. Вместе с собранным полным видом электронных изданий в «Электронном архиве Национальных изданий» даётся краткая аннотация по информированию читателей с суть статей с последующим выводом их полного текста на экран. Кроме этого, на экране выборочно показываются наиболее важные и актуальные статьи. Информационная база постоянно пополняется и обогащается. Сейчас в нашей Республике издаются около 700 наименований газет и более 300 различных журналов. Всего за период 1935–2022 гг. в базу данных было внесено 68569 экземпляров различных наименований газет.

В заключении хочется сказать, что в жизни Национальной библиотеки Узбекистана имени А.Навои со времени создания её фундамента в 1870 году и до сегодняшнего дня в 2022 году, произошли колоссальные изменения прогрессивного значения. Такие люди как Н.В. Дмитриевский, В.И. Межов, Е.К. Бетгер и многие другие, несмотря на многие трудности общественно-политического и материального плана продвигали дело развития библиотеки по всем направлениям. В частности это выражалось также в улучшении систематизации и работы библиографии. Здесь необходимо отметить, что данная работа продолжает модернизироваться и отвечает всем нормам международных стандартов.

SUMMARY

The presentation discusses the issues of organizing services for the formation of the National Library of Uzbekistan's national bibliographic databases.

Among the problems the library faces are the regular replenishment of electronic databases with geoscience periodical publications, the compilation of bibliographic retrospective indexes, as well as individual bibliographic indexes of full-text databases on DVD.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Алаутдинова Н. Миллий библиография маълумотлари базасини шакллантиришда кутубхоналарнинг ҳамкорлиги / Н. Алаутдинова // INFOLIB, Ташкент, 2019, № 4. С. 76–69.
2. О дополнительных мерах по более глубокому изучению наследия и увековечению памяти жертв репрессий : Распоряжение Президента Республики Узбекистан 8 октября 2020 г. № Р-5598 Эл. рес.: <https://lex.uz/docs/5041021>, 22.08.2022.
3. Рахимова Ш. Миллий библиографиямиз – матбуот кўзгуси / Ш. Рахимова // INFOLIB, Ташкент, 2015, № 1, С. 36–39.
4. Рўзиева Ф. Миллий кутубхонада вақтли матбуот нашрларининг электрон архиви / Ф. Рўзиева // INFOLIB, Ташкент, 2017, № 4, С. 58–59.
5. Ҳидоятова М. Миллий кутубхонанинг ўлкашунослик библиографияси фаолияти / М. Ҳидоятова // Фан, таълим, маданият ва бизнесда Интернет ва ахборот-кутубхона ресурслари: XI Халқаро конференция Central Asia – 2021: конференция материаллари, Alisher Navoiy nomidagi O'zbekiston Milliy kutubxonasi nashriyoti, Ташкент, 2021, С. 358-363.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ

Բանալի բառեր՝ պարբերականներ, ամսագիր, մատենագիտություն, գրադարանագիտություն, խմբագիր, խորագրեր, մասնագիտական, տարեգիրք:

Keywords: periodicals, magazine, bibliography, library science, editor, themes, professional, year-book.

Պարբերականների մեծաքանակ բազմազանության պարագայում ժամանակի հրամայականն էր դառնում ստեղծել գրադարանային մասնագիտական ամսագիր: 1941 թ. Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի (այժմ՝ Հայաստանի ազգային գրադարանի) և նախանձախնդիր անհատների՝ Գ. Լևոնյանի, Գ. Հայրյանի և այլոց շնորհիվ ստեղծվեց այդ պարբերականը՝ «Բիբլիոգրաֆիական ամսագիր» անունով:

Ինչպես ամսագրի առաջնորդող հոդվածում ենք նկատում. «Ընթերցողին տպագիր խոսքով օգնելու գործի մեջ լուրջ նշանակություն ունի հանձնարարական բիբլիոգրաֆիան ամենասեղմ, համառոտ տեղեկությունն արժեքավոր գրքերի և մամուլում հրատարակված կարևորագույն հոդվածների, աշխատությունների ու երկերի մասին» [Խմբագրական, 1941, №1, 5]: Բիբլիոգրաֆիական ամսագիրը՝ գրադարանագիտական և մատենագիտական բովանդակությամբ առաջնեկը և միակը լինելու օրինակով ամուր և հիմք հանդիսացավ, որպեսզի տարիներ հետո Հայաստանում լույս տեսնեն այլ վերնագրով և բնույթով նմանատիպ մասնագիտական ամսագրեր:

Շուրջ քսան տարվա ընդմիջումից հետո՝ 1960 թ. Երևանում լույս է տեսնում «Գրադարանավար» ամսագիրը:

Այն հրատարակվել է նախկինում ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության (այժմ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) և Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանի (այժմ՝ Հայաստանի ազգային գրադարան) կողմից: Յուրաքանչյուր խորագրում հետաքրքրաշարժ հոդվածներ են մեր երկրի գրադարանային գործի կազմակերպման, ղեկավարման, նրա հիմնախնդիրների վերաբերյալ: «Գրադարանավար» պարբերականը 1961 թ.-ի 4-րդ համարից կոչվում է «Կուլտուր-լուսավորչական աշխատանք»: «Կուլտուր-լուսավորչական աշխատանքն» ուներ գրեթե նույն խորագրերը՝ ինչ «Գրադարանավար» ամսագիրը և անդրադառնում էր հանրապետության ոչ միայն գրադարանային կյանքին, այլև ամբողջ մշակույթին:

1989 թ.-ից սկսեց լույս տեսնել «Մշակույթ» վերնագրով պարբերականը, որի գլխավոր խմբագիրն էր Էմիլ Դանեղյանը: Ամսագիրը լույս տեսավ մինչև 1990 թ.-ը՝ տարին երեք համարով:

Ինչպես նկատում ենք, 1990 թ.-ին ավարտվում է մասնագիտական պարբերականների մի կարևոր շրջափուլ՝ հիմք հանդիսանալով նոր ժամանակահատվածի՝ Հայաստանի երրորդ հանրապետության, գրադարանագիտական մատենագիտական, գրքագիտական բնույթի պարբերականների համար:

Անկախությունից հետո գրադարանային աշխարհում մեծ իրադարձություն հանդիսացավ Հայկական Գրադարանային միության ստեղծումը: Թեև գրադարանային միության գաղափարը դեռևս 1980-ական թթ.-ից էր գալիս, այն կյանքի կոչվեց 1994 թ.-ին: Երկու տարի անց՝ 1996 թ.-ին, տպագրվեց «Հայաստանի գրադարանային միություն» տեղեկագրի անդրանիկ համարը: Խմբագրական խորհրդի կազմում էին Ներսես Հայրապետյանը, Տիգրան Զարգարյանը, Գևորգ Տեր-Վարդանյանը: Պարբերականն առաջին փորձական համարն էր, որը բազմացվել էր քիչ տպաքանակով և տպագրվել ամերիկահայ գրադարանային ոլորտի աշխատակիցներ, բարերարներ Սիլվա Մանուկյանի և Արաքսի Չուքուրյանի դրամական աջակցությամբ: Այդ համարում զետեղված էին

Միության կանոնադրությունը, [Տեղեկագիր 1996, №1, 14-20], նրա երկամյա գործունեության մասին պատմող նյութեր [Նույն տեղում, 3-18]: Հոդվածները հեղինակել են Ներսես Հայրապետյանը, Ռաֆիկ Ղազարյանը, Ռաֆայել Իշխանյանը և այլք: Ըստ խմբագրակազմի տեղեկացման՝ «ՀՀ արդարադատության նախարարությունում պաշտոնական գրանցում ստանալուց հետո եկող տարվանից «Տեղեկագիրը» լույս կտեսնի կանոնավորապես: Ինչպես նաև խմբագրակազմը չի սահմանափակվելու բացառապես Հայաստանի Գրադարանային միության գործունեության լուսաբանմամբ, այլև անդրադառնալու է գիտական, մեթոդական, գրադարանային կրթության և այլ կարևոր հարցերին: Այս խոստումնալից «վերջաբանով» է ավարտվում համարը: [Նույն տեղում, 46]: Հավատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին՝ պարբերականը ամուր հիմքեր դրեց գրադարանային ոլորտի ասպարեզում՝ դառնալով ժամանակի զարկերակը և խոսնակը: Պարբերականը հանդես է եկել մշտական խորագրերով՝ «Պաշտոնական», «Մեր հրապարակումները», «Կրթական», «Թարգմանական», «Տեղեկատվական հաղորդումներ»՝ «Օգնություն գրադարանավարին»: Ժամանակի ընթացքում հիմնական խորագրերին ավելացան՝ «Գրադարանների առօրյայից», «Հիշարժան տարեցույց», «Գրադարանային օրենսդրություն», «Հոբելյանական», «Մատենագիտական», «Ազգային գրադարանային շաբաթ», «Մարգային գրադարանների առօրյայից», «Հատուկ մասնագիտական գրադարաններ» և այլ խորագրեր: Ամսագիրն իր շուրջն էր համախմբել գրադարանային հանրության բազմաթիվ աշխատակիցների: Պարբերականը հիմնականում տպագրության էին պատրաստում Ներսես Հայրապետյանը և Ռաֆիկ Ղազարյանը: Տեղեկագրի 9-րդ և 10-րդ համարները տպագրության է պատրաստել նույնպես Ռաֆիկ Ղազարյանը, խմբագրել է Դավիթ Սարգսյանը: Իրենց հետաքրքրական և կարևորագույն հոդվածներով հանդես են եկել Ներսես Հայրապետյանը, Ռաֆիկ Ղազարյանը, Բալաբեկ Մելյանը, Տիգրան Զարգարյանը, Աննա Շիրինյանը, Սաթենիկ Ավագյանը և այլք: Տեղեկագիրքը յուրօրինակ հարթակ էր դարձել տարբեր գրադարանների վաստակաշատ գրադարանավարների փորձի փոխանակման, դիտարկումների և մտորումների համար: Գրադարանային հանրության համար կարևորագույն այս պարբերականը լույս է տեսել 1996-2008 թթ.-ին, տասը համարներով: 1-ին, 2-րդ և 3-րդ (1996-1998 թթ.) համարները լույս են տեսել, որպես Հայաստանի Գրադարանային միության տեղեկագիր, 4-րդ, հինգերորդ համարները՝ (1999-2000 թթ.) Հայաստանի Գրադարանային միության տեղեկագիրք և հաջորդ՝ 6-ից 10-րդ համարները՝ (2002-2008 թթ.) հրատարակվել են՝ որպես «Հայկական գրադարան» տարեգիրք: Առաջին երկու համարները իրենց էջերի քանակով փոքրածավալ էին (46-50 էջ), երրորդ համարից սկսած լույս տեսավ 100 էջից ավելի՝ ավելացնելով բազմաբովանդակ խորագրեր և ուշագրավ հոդվածներ և էլ ավելի հետաքրքրական դարձնելով տարեգիրքը: Հանդիսանալով Հայկական Գրադարանային Միության պարբերականը, տպագրում էր Միության գործունեությունը լուսաբանող նյութեր: Պաշտոնական խորագրում՝ Հայկական Գրադարանային Միության Կանոնադրությունն էր, իր բոլոր դրույթներով [Տեղեկագիր, 1998, №3, 3-10]: Տարեգրքում տպագրվում էին նաև Հայկական Գրադարանային Միության համագումարի հաշվետու զեկույցները, որոնք ոչ միայն Միության գործառնությունների և գործունեության մասին հաղորդումներ էին, այլև գրադարանային ոլորտի մի ստվար հատվածի հիմնախնդիրների վերհանում և դրանց լուծում: Միության տարեգրքում տպագրվում են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության Որոշումներ և Օրենքներ մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում Գրադարանավարի և մամուլի օրը նշելու մասին [Հայկական Գրադարան, 2004, №8, 5], Հայաստանի Հանրապետության Օրենքը՝ Փաստաթղթերի (Վավերագրերի) պարտադիր օրինակի մասին [Հայկական Գրադարան, 2005, №9, 17-28], Պետական պատվերով հրատարակված գրականության անվճար բաշխման և իրացման կարգը հաստատելու մասին որոշումը [Հայկական Գրադարան, 2005, №10, 18-20]: Ինչպես նշեցինք, տարեգիրքը դարձել էր մասնագիտական ոլորտի յուրահատուկ միջավայր, որտեղ արծարծվում էին բազմաշերտ հարցեր: Տարեգրքում տպագրվել են հոդվածներ՝ նվիրված Հայաստանի, սփյուռքի, խոշոր մարզային, բուհական և այլ գրադարանների պատմության, խնդիրների, գործունեության, գործառնությունների թվայնացման մասին: Տարեգիրքը չէր կարող շրջանցել Հայաստանի Մայր գրադարանի՝ Ազգային գրադարանի 175-ամյա հոբելյանը: Փոքրիկ պատմական ակնարկից հետո, 2007 թ.-ի նոյեմբերի 29-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կայացած հոբելյանական հանդիսության

տեղեկությունն է և Ազգային գրադարանի նախկին տնօրեն Դավիթ Սարգսյանի խոսքը (որոշակի կրճատումներով) [Սարգսյան, 2008, №10, 41-51]: «Հայկական գրադարան» տարեգիրքը իր «Կրթական» խորագրում տպագրել է շատ ուշագրավ հոդվածներ՝ կապված գրադարանային կրթության հիմնահարցերին: Այս խորագրում որոշ հեղինակներ կիսվել են արտերկրում կրթության իրենց ստացած տպավորություններով: «Հայկական Գրադարան» տարեգիրքը անդրադարձել է Գրադարանավարի մասնագիտական վարքականոններին՝ նախագծի տեսքով: Մասնավորապես՝ օգտվողների արդյունավետ տեղեկատվության ապահովում, պահպանում և հարստացում, հայ ժողովրդի հոգևոր արժեքների պահպանում և այլն [Հայկական Գրադարան, 2002, №6, 54-55]: Միանշանակ, ուսանելի դրույթներ, որոնք զարգացնելով պետք է կիրառել բոլոր գրադարաններում: Թարգմանական բաժնում տպագրվում էին արտերկրի գրադարանային կյանքի, գրադարանային օրենքների, տարատեսակ գրադարանների մասին հոդվածներ, որոնք հիմնականում թարգմանվում էին Ներսես Հայրապետյանի, Կարինե Արապյանի և այլոց ջանքերով: 2008 թ. լույս տեսավ պարբերականի տասներորդ հոբելյանական համարը, ինչի առթիվ շնորհավորական ուղերձներով հանդես եկան Ռաֆիկ Ղազարյանը, Բալաբեկ Մելյանը, Ներսես Հայրապետյանը և Շուշանիկ Ոսկանյանը [Ղազարյան, Մելյան, Հայրապետյան, Ոսկանյան, 2008, №10, 4-10]: Այս համարով եզրափակվում է պարբերականի տպագրությունը: Հայկական Գրադարանային ասոցիացիայի խոսնակը հանդիսացող տեղեկագիր, տեղեկագիրք, տարեգիրքը յուրօրինակ միջավայր էր մասնագիտական լայն շրջանակի համար: Աներկբա, կարող ենք փաստել, որ պարբերականը գրադարանային կյանքին վերաբերող ոչ մի դրվագ չի անտեսել: Այն արդի ժամանակներում ի թիվս բազմաթիվ պարբերականների թվային տարբերակով մատչելի ու հասանելի է ընթերցողների, մասնագետների, ուսանողների ավելի մեծ շրջանակի համար: Քանզի գրադարանային ոլորտին առչվող բազմաթիվ հոդվածներից գատնապես տեղ տպագրվում էին նաև շատ հետաքրքրական ու բովանդակալից այլ թեմաներով նյութեր:

2004 թ. մարտ ամսից «Հայկական Գրադարան» տարեգրքին զուգահեռ լույս էր տեսնում Հայաստանի ազգային գրադարանի «Հոգևոր Հայրենիք» ամսաթերթը: Խմբագրական խորհրդում էին Դավիթ Սարգսյանը, Ռաֆիկ Ղազարյանը և այլք: Ամսաթերթի խմբագիրն էր Արմինե Ղազարյանը: Այստեղ բացի ազգային գրադարանի գործունեության մասին հոդվածներից, զետեղվում էին նաև այլ գրադարանների և մշակույթի մասին հոդվածներ: Պարբերականը դադարում է տպագրվել 2015 թ.-ից: Նույն թվականից Հայաստանի ազգային գրադարանի նախաձեռնությամբ լույս է տեսնում «Բանբեր Հայաստանի գրադարանների» էլեկտրոնային հանդեսը: Գլխավոր խմբագիրն էր Տիգրան Զարգարյանը, խմբագրական խորհրդում են Լևոն Ավդոյանը, Հայկանուշ Ղազարյանը, Գագիկ Սուքիասյանը, Արարատ քահանա Պողոսյանը, Մայա Գրիգորյանը և այլք: Էլեկտրոնային տարբերակով պարբերականը գրադարանագիտության, մատենագիտության և թվայնացման գործընթացների և գրադարանային, մատենագիտական, գրքագիտական հոդվածներ էր պարունակում: 2020 թ.-ից այն դադարել է լույս տեսնել:

Չնայած այն հանգամանքին, որ գրադարանային մասնագետները իրենց հոդվածներով հանդես են գալիս շատ գիտական պարբերականներում, ցանկալի կլիներ, որ վերահրատարակվեր կամ հիմնադրվեր նոր մասնագիտական պարբերական:

SUMMARY

In 1941, State Public Library after Al. Myasnikyan (now the National Library of Armenia) published the “Bibliographical Magazine” that was the basis for library and bibliographic periodicals published later, such as “Librarian,” “Culture-Enlightenment Work,” and “Culture.”

After independence of Armenia, the creation of the Library Association of Armenia played a major role in the library sector. From 1996-2008, the Association’s periodical was published, which reflected not only the life of the library association, but also was an important platform for those of the library sector. Leading specialists, scientists, lecturers, cultural figures, and students published and disseminated their articles.

The article attempts to discuss the role and significance of the only periodical of the Library Association of Armenia, and the analysis and assessment of the articles published in magazines within the context of present day.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայկական Գրադարան: Տարեգիրք / Կազմ.՝ Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան, Խմբ.՝ Դ. Սարգրսյան, Հայկական Գրադարանային Միություն, Երևան, Փրինթինֆո, 2002, № 6, 132 էջ:
2. Հայկական Գրադարան: Տարեգիրք / Կազմ.՝ Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան, Խմբ.՝ Գ. Մինասյան, Հայկական Գրադարանային Միություն, Երևան, Զանգակ-97, 2004, № 8, 142 էջ:
3. Հայկական Գրադարան: Տարեգիրք / Կազմ.՝ Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան, Խմբ.՝ Դ. Սարգրսյան, Հայկական Գրադարանային Ասոցիացիա, Երևան, Ամարաս, 2005, № 9, 162 էջ:
4. Հայկական Գրադարան: Տարեգիրք / Կազմ.՝ Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան, Խմբ.՝ Դ. Սարգրսյան, Հայկական Գրադարանային Ասոցիացիա, Երևան, Լուսակն, 2008, № 10, 120 էջ:
5. Ստեղծել լուրջ և օգտակար հանձնարարական բիրլիոգրաֆիա // Բիրլիոգրաֆիական ամսագիր, Երևան, Վ. Մ. Մոլոտովի անվ. Երևանի պետհամալսարան, 1941, № 1, էջ 5:
6. Տեղեկագիր / Հրատ.՝ Հայաստանի Գրադարանային Միություն, Խմբ. խորհ.՝ Ն. Հայրապետյան և ուրիշն., Երևան, ՀԱԳ հրատ., 1996, № 1, 46 էջ:
7. Տեղեկագիր / Հրատ.՝ Հայաստանի Գրադարանային Միություն, Տպ. պատր.՝ Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան, Երևան, ՀԱԳ հրատ., 1998, № 3, 114 էջ:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ANNOUNCES
ДОКЛАДЫ

DOI: <https://doi.org/10.52027/18294685-agh2023.sp>

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԱՐԻԿ
Երևան, Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂԲԵՋԱՆԵՐԵՆ ՄԱՍՈՒԼԸ .
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՂԲԵՋԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, աղբեջաններեն մամուլ, Խորհրդային մամուլ, Հայաստան, Աղբեջան, ամսագիր, թերթ:

Keywords: National Library of Armenia, Azerbaijani-language periodicals, Soviet press, Armenia, Azerbaijan, newspaper, magazine.

Սույն հոդվածում համառոտ դիտարկելու ենք Հայաստանի ազգային գրադարանում (այսուհետ՝ ՀԱԳ) պահպանվող աղբեջանալեզու թերթերն ու ամսագրերը: Ընտրված նյութի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար փորձել ենք համառոտ անդրադարձ կատարել աղբեջաններեն մամուլի սկզբնավորման պատմությանն ընդհանրապես՝ հատկապես ներկայացնելով Խորհրդային Հայաստանում ու Աղբեջանում հրապարակված աղբեջանալեզու թերթերի պատմությունը: Փորձ ենք կատարել նաև դրանք ներկայացնել աղյուսակի տեսքով՝ հնարավորինս համակարգված ներկայացնելու նպատակով: Ներկա աշխատանքը վերաբերում է ՀԱԳ-ի գրապահոցներում առկա մամուլին ու դրա պատմությանը՝ սկսած 1940-ական թվականներից 1990 թվականը ներառյալ: ՀԱԳ-ը, որպես գրատպության խոշորագույն պահոց և գրադարանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական կենտրոն, ստեղծում է բոլոր պայմանները տեղեկատվության հավաքագրման, մշակման և ընթերցողներին այն հնարավոր բոլոր տարբերակներով հասանելի դարձնելու համար [ՀԱԳ կայք]: ՀԱԳ-ում պահպանվում են 1940-1990 թթ. ժամանակաշրջանի ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղբեջանում ու Վրաստանում հրատարակված մամուլի օրինակներ: Այստեղ առկա են «Ազերբայջան Կենչլերի» (Աղբեջանի երիտասարդություն), «Ազերբայջան Մյուլլիմի» (Աղբեջանի մանկավարժ), «Բակի Ախշամ» (Երեկոյան Բաքու), Ազերբայջան փոների (Աղբեջանի պիոներ), «Sovet Ermənistan» (Սովետական Հայաստան), «Ազերբայջան Բեդեն Թերբիյեչիսի» (Աղբեջանի ֆիզկուլտուրնիկ), «Բաֆան» (Այդեգորձ, Այգեգորձ), «Կոսիալիստ Սումգայիտի» (Սումգայիթի սոցիալիստ), «Մերգ Դապիս» (Արևելյան դարպասներ), «Մերգին Մեֆեգի» (Արևելքի լուսաբացը), «Կոսեթ Կենդի» (Խորհրդային գյուղը), «Բոլլուգ Միլլունդ» (Առատության համար, հետագայում՝ Վարդենիս), «Վարդենիս» (Վարդենիս), (Բարձր բերքի համար), «Ծեֆեյիյատ Օլջեթեսի» (Գրական թերթ, հետագայում՝ Ծեֆեյիյատ Ենչեսենոթ) (Գրականություն և արվեստ), «Կոմունիստ» (Շունունիստ), «Դանիշիր Բակի» (Բաքվի զրուցակից), Ծեֆեյիյատ (Աշխատանք), «Դաֆան» (Ղափան), «Ենի Յոլ» (Նոր ուղի), «Միլլի զամար», (Պղնձի համար), «Դուկասյան Կոլտեսեկան» (Ղուկասյանի կոլտեսեկան), «Իման» (Սպորտ), «Դոստլուգ» (Բարեկամություն) թերթերը: Խորհրդային Հայաստանում և Խորհրդային Աղբեջանում հրատարակվել են հայերեն գրքեր, թերթեր, ամսագրեր, դասագրքեր և այլն: Նախքան բուն աշխատանքին անցնելը մի քանի խոսք աղբեջանական մամուլի անցած փուլերի ու պատմության մասին:

Հայաստանում հրատարակված աղբյուրներեն մամուլը

Ինչ վերաբերում է համատեղ գործունեությանը, ապա կարող ենք նշել այն փաստը, որ խորհրդային մամուլում ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքների, նրանց հուզող խնդիրների վերաբերյալ ելույթներ էին ունենում այնպիսի քաղաքական ու հասարակական գործիչներ, ինչպիսիք էին Բ. Էֆենդիևը, Ա. Շամիլովը, Ա. Քարիմովը, Ումարովը և այդ ժամանակների եղբայրական ժողովուրդների այլ ներկայացուցիչներ, ովքեր ապրում և աշխատում էին Հայաստանում: Ազգային փոքրամասնությունների մեջ խորհրդային իշխանության գաղափարների տարածման, քաղաքական կյանքի աշխուժացման, նոր կենցաղային ու հասարակական հարաբերություններին նրանց հաղորդակից դարձնելու, մի խոսքով նրանց մշակութաքաղաքական ու տնտեսական առաջընթացն ապահովելու գործում խոշոր դեր կատարեցին Հայաստանում նրանց լեզվով հրատարակվող պարբերականները: Եվ ահա 1921 թվականի կեսերից Երևանում սկսեց լույս տեսնել «ՔԵՆԿԵՐ» (Ռանչպար հետագայում՝ Կոմունիստ, Սովեթ Էրմանիսթանի) թերթը, որը հրատարակվում էր անկանոն պարբերականությամբ և երբեմն էլ երկարատև ընդմիջումներով՝ գրական-ժուռնալիստական ուժերի բացակայության պատճառով: 1923 թվականի ապրիլին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղարությունը քննեց Ազիտպրոպ բաժնի աղբյուրների սեկցիան բարելավելու հարցը: Որոշվեց ենթաբաժնին կից ստեղծել հրատարակչական հանձնաժողով, որը կազմակերպելու էր տեղական նշանակություն ունեցող բրոշյուրների թարգմանության ու հրատարակչության գործը: Անհրաժեշտություն եղավ նաև վերսկսել աղբյուրներեն «Ռանչպար» շաբաթաթերթի հրատարակումը և խնդրել՝ Անդրերկրյանին՝ Հայաստան, Կենտկոմի տրամադրության տակ գործուղել աղբյուրների գրողներից մեկին՝ աղբյուրներեն հրատարակությունների գործը գլխավորելու համար: Այդ գրողը Բալա Էֆենդիևն էր, իսկ «Ռանչպար»-ը քաղաքական բնույթի գյուղացիական պարբերական էր, որ լույս տեսավ մինչև 1924 թվականի կեսերը: 1925 թվականի նոյեմբերի 29-ից սկսեց հրատարակվել «Занки» (Զանգու) շաբաթաթերթը, որը լույս էր տեսնում բավականին կանոնավոր պարբերականությամբ ու առաջին ամիսներին իր նախորդ՝ «Ռանչպար»-ի նման, մեծ մասամբ անվճար տարածվում էր Հայաստանում բնակվող աղբյուրների շրջանում: Թերթի պատասխանատու խմբագիրը Ալեքսեյ Ռիզան էր [Ֆելեքյան, 1970, 67-68]: Այնուհետև Հայաստանում սկսեցին լույս տեսնել աղբյուրներեն լեզվով այնպիսի թերթեր, ինչպիսիք են «Սովեթ Էրմանիսթանի», «Բարձր Բերքի համար», «Առատության համար», «Վարդենիս», «Նոր ուղի», «Ղափան» թերթերը: Բացի Հայաստանից աղբյուրներեն լեզվով մամուլ հրատարակվել է նաև հարևան Վրաստանի Հանրապետությունում՝ «Шәргин Шәфәги» (Շարգին Շաֆագի, Արևելքի Արշալույսը): Թերթերում պարբերաբար հրատարակվել են մշակութային, քաղաքական անցուղարձի արտաքին ու ներքին քաղաքականության, մարզական, գյուղատնտեսական, արդյունաբերական ու տնտեսական նորությունների մասին հոդվածներ: Թերթերում հիշատակության են արժանի ամսվա ու տարվա քաղաքական, մշակութային, քաղաքական ու հասարակական գործիչներին հորելյաններին նվիրված համատեղ միջոցառումների, հայրենասիրություն, մարդասիրություն քարոզող հոդվածները: Այստեղ պարբերաբար հրատարակվել են քաղաքական, մշակութային ու հասարակական գործիչների փոխայցելությունների, հիշարժան տարեթվերի, տոնական միջոցառումներին, մասնավորապես՝ աշխատավորների, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված շքերթները: Թերթերում ամփոփ կերպով կարելի է հանդիպել Խորհրդային Միության հասարակական ու քաղաքական գործիչների կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետու զեկույցները, նրանց փոխայցելությունների, հանդիպումների, ստորագրած հուշագրերի մասին ծավալուն ակնարկներ: Այստեղ կարելի է ծանոթանալ հրատարակվող գրքերի մասին ակնարկներ: Եղել են աղբյուրնալեզու այնպիսի թերթեր, որոնք համանուն էին Հայաստանում հրատարակվող թերթերի հետ: Նշված թերթերից էին «Սովեթ Էրմանիսթանը», (համապատասխանաբար Սովետական Հայաստան), «Վարդենիս» (հետագայում՝ Բարձր Բերքի համար, Կարմիր Բասարգեշար, Ստալինյան ուղի), «Բաղբան» (Այգեգործ), «Պղնձի համար» (հետագայում՝ Ղափան), «Յենի յոլ» (Նոր ուղի) և այլ թերթեր:

Ուսումնասիրված թերթերի ցանկը

հ/հ Վերնագիր	Հրատ. տարեթիվ	ՀԱԳ-ում առկա տարեթվեր	Ուղղվածություն և բնույթ	Խմբագիրներ	Հրատ. վայր
1. Боллуг Угрунда, 1964-1973, (Առատու- թյան հա- մար) 1964- 1972 Варде- нис (Վար- դենի) 1930- 1988 (Հե- տագայում՝ - Բարձր Բեր- քի համար 1957-1962	Վարդենիս 1930-1988 Բարձր բերքի համար 1957- 1962 Առա- տության հա- մար 1964- 1973 [Հայ պարբերա- կան մամուլը մատենագի- տական հա- մահավաք ցուցակ (1794-1980)	Վարդենիս 1973-1988 Բարձր բերքի համար 1957- 1962 Առա- տության հա- մար 1964- 1973	Մշակույթ, ար- դյունաբերու- թյուն, քաղաքա- կանություն, կոլտնտեսու- թյուն, մարզա- կան, գյուղատնտեսու- թյուն	Ի. Ալիև, Մ. Ահ- մադով, Յ. Աբ- դուլան	Բասարգե- չար (Վար- դենիս)
2. Гафан Գաֆան (Կապան, հետագա- յում՝ Պայ- քար պղնձի համար 1930-1935 թթ., Պղնձի համար (1946-1979 թթ.)	Ղափան Պայքար պղնձի հա- մար 1930- 1988 ПҒНДЗИ համար (Պղնձի համար) 1946-1979 [Հայ պարբե- րական մա- մուլը մատե- նագիտական համահա- վաք ցուցակ 1794-1980, էջ 456]	Ղափան 1979-1988 ПҒНДЗИ համար (Պղնձի հա- մար) 1958- 1979	Մշակույթ, տնտեսություն, քաղաքականու- թյուն, կոլտնտե- սություն, մար- զական, հասա- րակություն	Է. Սարդարյան	Կապան
3. Достлуг (Բարեկա- մություն)	1938-1985 [Նույն տե- ղում, 457]	1966 – 1985	Մշակույթ, հա- սարակություն, տնտեսություն, քաղաքականու- թյուն, արդյունա- բերություն	Ս. Ծատու- րյան, Գ. Աղա- բեկյան, Գ. Գուլումյան	Կրասնա- սելո (Ճամ- բարակ)
4. Јени Јол (Նոր ուղի)	1969-1988 [Նույն տե- ղում, 457]	1969-1988	Մշակույթ, հա- սարակություն, տնտեսություն, քաղաքականու- թյուն, արդյունա- բերություն	Մ. Հովսեփյան	Մասիս

SUMMARY

The article presents a brief summary of the Azerbaijani-language newspaper collection preserved at the National Library of Armenia.

The history of the beginning of the Azerbaijani-language periodicals is briefly discussed in order to provide a thorough understanding of the material we chose, with a particular focus on those published in Soviet Armenia, Azerbaijan and Georgia.

We will focus on the history of Azerbaijani-language periodicals from the 1940s through 1989, which are available at the National Library of Armenia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 470 էջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/9yQ7sM>, 29.11.2022:
2. Հայաստանի ազգային գրադարանի կայք, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://nla.am/>, 29.11.2022:
3. Ֆելեքյան Հ., Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 556 էջ:

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ ՄՊԻՏԱԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ**

Բանալի բառեր՝ գրադարան, կառավարման մեթոդ, նորարար առաջնորդ, հաղորդակցման ոճ, մարքեթինգ:

Keywords: library, management method, innovative leader, communication style, marketing.

Գրադարաններում համացանցի, գրադարանային-մատենագիտական գործունեության, գրքային և տեղեկատվական ֆոնդերի կառավարման մակարդակից է կախված աշխատանքների արդյունավետությունը:

Գրադարանների աշխատանքի որակի և արդյունավետության չափանիշների գնահատման, բնակչության ընթերցանության դինամիկայի ուսումնասիրման, տարբեր բնույթի և տեսակի գրադարանների հետ համագործակցության կազմակերպման, գրադարանային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, գրադարանային գործի ղեկավարման կատարելագործման, հանրային կյանքում գրադարանի դերի բարձրացման աշխատանքներում կարևորվում է մասնագետների դերակատարումը, ինչպես նաև ղեկավարի գործունեությունը: Գրադարանի ղեկավարը պետք է կարողանա ձևավորել ներազդման այնպիսի համակարգ, որ մարդկանց շահագրգռի առավելագույն արդյունավետությամբ իրագործելու կազմակերպության նպատակները, միաժամանակ գիտակցելով, որ յուրաքանչյուր աշխատող անհատականություն է, անկրկնելի ունակություններով, պահանջմունքներով, ինչն էլ պայմանավորում է նրա աշխատանքային վարքագիծը: Մարդկային գործունի անտեսումը, ներազդման մեթոդների ձկուն համակարգի բացակայությունը կամ չկիրառելը չի կարող ապահովել կազմակերպության արդյունավետ գործունեությունը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Կառավարչական ներազդման ձևերի և եղանակների ամբողջությունը կառավարման մեթոդներն են:

Սպիտակի քաղաքային գրադարանը 83 տարեկան է: Ունի հանրային կարգավիճակ: 2021թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ճանաչվել է որպես «Լավագույն համայնքային գրադարան»: Երկար տարիներ գրադարանը ղեկավարում է «Մովսես Խորենացի» մեդալակիր Քնարիկ Գրիգորյանը:

Գրադարանի կառավարման գործում կիրառվում է առաջնորդության 5 կարևոր պայման.

1. **Անկեղծություն**
2. **Էթիկա**
3. **Խիզախություն**
4. **Վարպետություն**
5. **Այժմ՝ նաև նորարարություն**

Կառավարման մեթոդների ճիշտ ընտրությունը, համակցումը և կիրառումը կարևոր նշանակություն ունեն աշխատանքի արդյունավետ գործունեության կարգավորման համար և համարվում են ղեկավարի գործունեության առանցքը:

Բնութագրենք գրադարանների կառավարման մեթոդները³⁵.

³⁵ Գրադարանների նորարարական կառավարման մեթոդները. Վերապատրաստման դասընթացներ գրադարանավարների համար, 2016:

ՄԻԱՎՈՐՈՂ. այս առաջնորդը շատ անմիջական է շփման մեջ, թիմի կայացման համար շատ է աշխատում, վստահում է նրանց, հնարավորություն է տալիս ազատ առաջնորդվել իրենց աշխատանքը կատարելիս: Նա հասկանում է, որ թիմային արդյունավետ աշխատանքի հիմքը թիմի անդամների միջև լավ հարաբերությունների և հաղորդակցման խթանումն է:

Ուժեղ կողմերն են. համերաշխությունը, մարդկանց հետ շատ լավ կապ հաստատելը:

Թույլ կողմերն են. Խուսափումը բախումներից և խրթին իրավիճակներից:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ. այս առաջնորդը աջակցում է համերաշխ աշխատանքային միջավայրի ստեղծմանը, լսում ու հաշվի է

առնում թիմի անդամների կարծիքները, միջնորդում է թիմի անդամներին ներդրում կատարելու թիմում:

Ուժեղ կողմերն են. դիմացինին լսելու ունակությունը, համագործակցությունը, աշխատանքը թիմի հետ:

Թույլ կողմերն են. երբեք որոշում չի կայացնում:

ՄՐՑՈՂ. եռանդուն է, ինքնավստահ, նպատակասլաց, թելադրում է աշխատանքի կատարման արագությունը և ժամանակահատվածը: Ունի կատարողական բարձր որակի չափանիշներ:

Ուժեղ կողմերն են. նպատակասլացությունը, թիմի վատ աշխատողների արագ հայտնաբերումը:

Թույլ կողմերն են. ցուցումներ չի տալիս, հստակ չի հաղորդակցվում, կարճ ժամանակահատվածում ավելի շատ աշխատանք է ցանկանում ստանալ:

ԻՇԽՈՂ. իշխող առաջնորդը տալիս է հստակ հրահանգներ, ինքնուրույն է կայացնում որոշումները, հազվադեպ է հաշվի առնում մյուսների կարծիքը, քայլեր է ձեռնարկում, որպեսզի թիմի անդամներն իրեն հաշվետու լինեն: Հանդիմանում է թերացող աշխատողներին, պարզևատրում է իրենց աշխատանքը գերազանց կատարողներին:

Ուժեղ կողմերն են. ճգնաժամային իրավիճակներում շատ արագ է կողմնորոշվում և կայացնում է ինքնուրույն որոշումներ:

Թույլ կողմերն են. մարդիկ զգում են, որ իրենց կարծիքը հաշվի չի առնվում և հիասթափվում են:

ԱԶԱԿՑՈՂ. աջակցում է թիմի անդամներին՝ իրենց նվաճումներում, աշխատանքի ընթացքում աջակցում է նրանց ճանաչելու իրենց թույլ ու ուժեղ կողմերը, ներուժը, աջակցում է թիմի նոր և անփորձ անդամներին, լսում է նրանց, ուղղում բաց հարցեր, փորձում է բացահայտել թերի աշխատանքի պատճառը, օժանդակում է նրանց մասնագիտացմանը և նոր հմտությունների ձեռք բերմանը:

Ուժեղ կողմերն են. օգնում է մյուսներին բարելավելու իրենց հմտությունները, հետևում է կազմակերպության նպատակներին:

Թույլ կողմերն են. կատարվող աշխատանքը վերահսկում է մանրամասնորեն:

ՆՈՐԱՐԱՐ. նորարար առաջնորդը կենտրոնանում է երկարաժամկետ հեռանկարների, ընդհանուր տեսլականի վրա, իր գաղափարներն ու ծրագրերը շատ հստակ ներկայացնում է թիմի անդամներին, ոգեշնչում է, համախմբում է թիմի անդամներին՝ հանձնարարությունները կատարելու համար:

Ուժեղ կողմերն են. կարողանում է բոլորին դրդել իրականացնելու տեսլականը:

Թույլ կողմերն են. քիչ ժամանակ է ծախսում մտածելու վրա և ուշադրություն է դարձնում անմիջական խնդիրների լուծմանը:

Սպիտակի քաղաքային գրադարանում կիրառվում են ժողովրդավար, միավորող, աջակցող, այժմ նաև՝ նորարար մեթոդները, առաջնորդության, մտահղացող գործնական ոճերով:

Առաջնորդման հիմնական ոճերը

Որոշումների ընդունման գործընթացում կարևոր է դեկլարի դերը՝ որպես նախաձեռնող, խախտումներ վերացնող, ռեսուրսներ բաշխող, բանակցություններ վարող:

Առաջնորդումը կառավարման անբաժան գծերից մեկն է: Դա անձի կարողությունն է՝ անհատների կամ նրանց խմբերի վարքի վրա ազդելու՝ հանուն կազմակերպության նպատակների իրականացման:

Առաջնորդները ըստ կառավարման բնույթի գործնական են, հուզական են և տարբերվում են իրենց հաղորդակցման ոճերով:

Գրադարանային գործունեության մեջ գործում են 4 հաղորդակցման ոճեր.

1. **Գործնական.** այս ոճի տեր ղեկավարները խոսում են արդյունքների, նպատակների կատարման մասին: Գործնական են, ուղղամիտ, անհամբեր:

2. **Մարդակենտրոն.** այս ոճի տեր ղեկավարները ունեն ըմբռնելու կարողություն, մարդկանց կարիքների նկատմամբ ուշադիր են, սիրում են թիմային աշխատանքը, անմիջական են, կարեկցող և նրբազգաց:

3. **Մտահղացող.** այս ոճի տեր ղեկավարները գաղափարների, նորարարության, նոր մեթոդների, կատարելագործվելու, նոր ուղիների կողմնակից են: Ունեն վառ երևակայություն, ստեղծագործ են և խաղաղասեր:

4. **Գործընթացային.** այս ոճի տեր ղեկավարները խոսում են փաստերի, ծրագրելու, ընթացակարգերի, կառավարելու մասին: Հետևողական են, տրամաբանող են, հիմնվում են փաստերի վրա, համբերատար են և շատախոս:

Կառավարման գործընթացում կիրառվող մեթոդները միշտ գտնվում են կապի մեջ, գործում են միաժամանակ, փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ կազմելով միասնական համակարգ, տարբեր իրադրություններում և ժամանակահատվածներում կիրառվում տարբեր համամասնություններով:

Կառավարման ճիշտ կազմակերպումից է կախված գրադարանային ողջ աշխատանքի գրավականը:

Գրադարանում սկզբունքային նշանակություն ունի գրքի ճանաչողական և ընթերցանության զարգացման նպատակով ընթերցողների ուսումնասիրումը, որի ընթացքում բացահայտվում է տարբեր տարիքի ու սեռի ընթերցողների, նրանց պահանջների, ճաշակի առանձնահատկությունները և բնականաբար, մշակվում են այդ գործունեության կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Ընթերցողների սպասարկումը կազմակերպվում է շերտավորված ձևով՝ ըստ առանձին ընթերցողական խմբերի, իսկ դպրոցականներինը՝ ըստ տարիքային առանձնահատկությունների (թիրախային խմբերով): Հատուկ սպասարկման ձևեր են օգտագործվում սայլակավոր հաշմանդամների համար (տնային այցելություններ, գրքատարություն): Գրադարանը համագործակցում է նաև «Սպիտակի տարեցների խնամքի տան», «Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն»-ի, քաղաքի բոլոր կրթօջախների, հասարակական և այլ մշակութային կազմակերպությունների, Ազգային գրադարանի, Խնկո Ապոբ անվան ազգային մանկական գրադարանի, Գիտական, բուհական, մարզային և այլ գրադարանների հետ: Ըստ պահանջի՝ տրամադրվում են գրադարանի տեղեկատու մատենագիտական հրատարակությունները: Ընթերցողները օգտվում են ինչպես գրացուցակներից, այնպես էլ համացանցից, ինչպես նաև՝ մատենագիտական տեղեկանքների ֆոնդից (արխիվ): Ընթերցողներին տրվում են նաև թեմատիկ ինֆորմացիոն թերթիկներ՝ ըստ պահանջի:

Նորարարությունը ենթադրում է կառավարման նոր համակարգերի հիմնում. մի նոր հնարավորություն է գրադարանի համար՝ հասնելու իր ռազմավարական նպատակներին:

Գրադարանը որքան հնարավորություն ունի, օգտագործում է տեխնոլոգիական նորությունները՝ տարբեր *փոդքասթներ* podcasts, որպես գրադարանի կառուցման գործիք, գրադարանի իմիջի և բրենդինգի զարգացման համար: *Փոդքասթների* միջոցով հարցազրույցներ են վարվում գրադարանի հիմնական օգտվողների հետ՝ պարզելու նրանց անհրաժեշտ ռեսուրսները, որպես բրենդինգի զարգացման ձև՝ հասարակությանը որոշակի ինֆորմացիա է հաղորդվում գրադարանի մասին:

Օգտագործվում են մարքեթինգի գործիքները, հատկապես *ֆանդայզինգը*՝ դրամահավաքը, որի շնորհիվ հաջողությամբ գտնվում են ոչ նյութական ռեսուրսներ՝ մասնագետներ, սարքավորումներ: Իհարկե, ցանկալի է նաև լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ, որոնք այսօր ավելի արդիական են և այդ նպատակով անցկացվում են տարբեր միջոցառումներ և հանդիպումներ հայտնի մարդկանց հետ:

Գրադարանի լավագույն ձեռքբերումներից են գրադարանում ստեղծված «Գրական խմբակ»-ը, «Բանավեճի ակումբ»-ը՝ ուսանողների ներգրավմամբ: Գրադարանն իր գործունեության մեջ կարևորում է բնակչության համար ամենօրյա կտրվածքով, համապատասխան միջավայր ձևավորելով կազմակերպել այնպիսի ծրագրեր, որոնք նպաստում են ինքնության պահպանմանը, ունենալով ազգագրության ոլորտի բաղադրիչներ և նպատակ ունի զարգացնել ոչ միայն մշակութային ժառանգության ոլորտի, այլև տնտեսական և սոցիալական ոլորտների (կրթություն, զբոսաշրջություն, հասարակական կազմակերպություններ...), տեղական ներկայացուցիչների միջև արդյունավետ գործընկերական կապեր:

Գրադարանում կազմակերպվում են նաև ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ:

Գրադարանում մեծ աշխատանք է տարվում հովանավորների հետ հարաբերությունների պահպանման համար. կիրառվում են տարբեր խրախուսական միջոցներ՝ շնորհակալագրերի հանձնում, շնորհակալական գրառումների հրապարակում ֆեյսբուքյան էջում, նպաստելով հանրային կարծիքի ձևավորմանը, որից և կախված է գրադարանի ապագան: Գրադարանի խորհրդի կողմից «Լավագույն ընթերցողներ» ճանաչվողները պարգևատրվում են գրքերով:

Գրադարանի առջև ծառացած խնդիրները համարելով ողջ անձնակազմին, քննարկվում է կոլեկտիվի հետ, վերլուծվում և տրվում են հանձնարարականներ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին՝ ըստ կարողությունների: Աշխատակիցների ստեղծագործական մոտեցումներից, առաջարկություններից կազմվում է ընդհանուր ծրագիր և հետևողականորեն իրականացվում այն:

Աշխատանքի ընթացքում խրախուսվում են քննարկումները և կարևորվում յուրաքանչյուր մասնակցի դերը խմբում: Գրադարանի կոլեկտիվին մշտապես տեղեկացվում է ընթացիկ և վերջին նորամուծությունների, առաջընթացի մասին, որոնք նպաստում են նոր առաջնորդներ հայտնաբերելուն, աշխատանքի կատարման նոր ուղիների որոնելուն, հնարավորություն է ընձոտվում մասնակցելու նորարարական բոլոր տիպի դասընթացներին, նորարարությանը խթանելու համար պարգևատրվում են լավագույն գաղափարների համար:

Ընթերցողների տարբեր խմբերի մոտ ընթերցանության հմտությունների ձևավորումը, զարգացումը և պահպանումը չափազանց կարևոր է հասարակության և կրթական համակարգի զարգացման ներկա մակարդակի համար:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի ընթերցանությունը խթանող նախագծերը:

Գրադարանի ծրագրային և նախագծային գործունեությունն ուղղված է գրադարանային աշխատանքի կառավարման արդիականացմանը, համայնքի հրատապ, սոցիալական խնդիրների լուծմանը, իսկ փորձի կուտակումը կարևոր է նաև առաջիկայում Սպիտակ խոշորացված համայնքի գյուղական համայնքներում գրադարանային գործունեության կազմակերպման համար, նաև նրանց համար, ովքեր հետաքրքրված են ծրագրային ու նախագծային տեխնոլոգիաների մշտական կիրառմամբ:

Գրադարանի մեծությունը որոշվում է ոչ միայն նրա հավաքածուի հարստությամբ, այլև նրա ծառայությունների օգտագործման մատչելիությամբ:

Օգտագործվում է գրքերի թրեյլերը, որպես նոր հրատարակությունների գովազդ և ընթերցանության խթանիչ: Նրանց հիմնական խնդիրն է հետաքրքրել և զարմացնել ընթերցողին, ուշադրություն հրավիրել բովանդակության և հերոսների վրա:

Ավանդույթ են գրքի նվիրատվության ակցիաները, «Գրադարանի բարեկամներ» ամենամյա հավաքը և յուրաքանչյուր տարի փետրվարի 19-ին անցկացվող գիրք նվիրելու օրը:

Պարբերաբար ուսումնասիրվում է գրադարանային հավաքածուն, քանի որ գրադարանի լի- նելիությունը պայմանավորված է դրանից, ձևավորված քարտարանային համակարգից, գրացու- ցակներից, իսկ գրավչությունը՝ հավաքածուի թարմացումից:

Նոր գրքերի ստացումների մասին պարբերաբար տեղեկատվություն է տրվում կազմակերպ- վող «Նոր գրքեր» ցուցահանդեսի և «Նոր գրքեր» մատենագիտական ցանկի, հեռախոսակապի և գրադարանի ֆեյսբուքյան էջի միջոցով:

Մեր օրերում մեծ փոփոխությունները գտիչի դեր են կատարում: Հինը քանդելու, նորը կա- ռուցելու այդ անցումային գործընթացը լի է սթրեսով, բարդ է, բայց արդյունքում ծնվում է շատ ավելի լավ բան:

Նորարարական զարգացումը թույլ է տալիս թարմ, նոր գաղափարներ կյանքի կոչելու՝ ապահովելով գրադարանի վերակազմակերպումն ու արդիականացումը:

Գրադարանի տեսլականը կառուցելիս կատարվում է առկա ռեսուրսների և ապագա պա- հանջի գնահատում:

Փոփոխական ժամանակների մարտահրավերներում պիտի լինել է՝ լավելի համարձակ:

Վերակազմակերպման արդյունքում գրադարանին միացել է «Մպիտակի թանգարան» ՀՈԱԿ-ը, որը նոր հնարավորություններ է տվել ինչ-որ չափով քաղաքում զարգացնելու նաև զբո- սաշրջությունը:

Աշխատողներ ընտրելիս՝ հարցազրույցի, ստուգումների միջոցով հաշվի է առնվում կրթա- կան, մասնագիտական, կատարողական ունակությունների մակարդակը, նախկին աշխատանք- քային փորձը, անձնական բնութագիրը:

Օգտագործվում է **մենթորությունը**՝ ուսուցման և զարգացման համագործակցությունը, որ- պես կադրերի զարգացման լավագույն արդյունք ապահովող ձև: Փորձառու մենթորը ուսուցանում է սկսնակ մասնագետներին առկա և հեռավար դասընթացի միջոցով:

Կազմակերպվում են մեդիագրագիտության դասեր ինչպես առցանց, այնպես էլ առերես:

Կադրերի ուսուցումը, վերապատրաստումը, սպասարկման նոր մեթոդների կիրառումը ուղղված են աջակցելու օգտվողներին՝ դրա հետ մեկտեղ յուրացնելով թվային տեխնոլոգիաների օգտագործման հմտությունները:

Կիրառվում է նաև **գեյմիֆիկացիան**՝ որպես կառավարման հնարք, որը զգալիորեն փոխում է ներգրավվածության կանոնները և ոգեշնչում է աշխատակիցներին փոխել վարքագիծը:

Կազմակերպվող կրթաճանաչողական, ուսուցողական, կադրերի վերապատրաստման, մասնագիտական զարգացման տարբեր տեսակի ու ձևի միջոցառումները՝ հանդիպման երեկո- ներ, մրցույթներ, ընթերցանության շաբաթներ, գրական-գեղարվեստական երեկոներ, գրական, ինտելեկտուալ խաղեր, մեծացնում են գրադարանի դերը համայնքում, բարելավվում է ընթերցող- ներին մատուցվող ծառայությունների որակը, ի հայտ են գալիս աշխատանքի նոր հեռանկարներ, նոր կարող ուժ, կրթական, տեղեկատվական, մշակութային ծառայություններ:

Հաճախորդները, մեզ շրջապատող մարդիկ կարիք ունեն թարմ ու նոր գաղափարների, դրա համար էլ միշտ պետք է շարժել երևակայությունը և զարգացնել սեփական հմտությունները, հարցնել ինքդ քեզ. «Ինչ կարող եմ այսօր կատարելագործել», անել այնպես, որ այս օրը երեկվանից ավելի լավը լինի:

Որքան էլ զարգանան տեխնոլոգիաները, չպետք է թուլացնել մարդկային հարաբերություն- ները: Անհրաժեշտ է կենտրոնանալ մարդկանց վրա, հավատալ նրանց, ներգրավել, հաղորդակց- վել նրանց հետ, գնահատել նրանց: Փայլուն հարաբերություններ կառուցելու համար պետք է ոչ միայն պատրաստ լինել մարդկանց ձեռք մեկնել, այլ նաև տիրապետել նրանց հասկանալու ար- վեստին, առաջնորդության հմտություններից մեկի՝ ուշադիր լսելու միջոցով:

SUMMARY

The article discusses management methods in the library sector, brief characteristics, the main di- rections of management and development of library work, and modern trends at the Spitak City Library. The article presents the innovative leader program implementation, leadership skills, communication

styles, professionalism, knowledge, the ability to use different information means, the stages of developing the innovative ideas and, projects, and making action plans.

The purpose of creating a public library as an education supporting institution, content and management methods, and the role in the digital age as a structure that ensures continuous education is also discussed.

Additionally, marketing as a modern tool of library management is discussed, including directions for effective implementation of library activities, tools that can expand the range of users and make the library more accessible, and changes that the library needs along with the development of new technologies and social networks.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրադարանների նորարարական կառավարման մեթոդները. Վերապատրաստման դասընթացների գրադարանավարների համար, 2016, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://alarmenia.am/?p=132&lang=hy>, 12.06.2023:

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԲԱԺՆԻ ՔԱՐՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ հայագիտություն, մատենագիտություն, երկրագիտական քարտարաններ, վերլուծական նկարագրություն, մատենագիտական սպասարկում, էլեկտրոնային շտեմարաններ:

Keywords: Armenian studies, bibliography, geological card catalogues, analytical description, bibliographic service, electronic databases.

Արդի մշակութային երկխոսության համատեքստում կարևորվում է նաև գրադարանների առաքելությունը, այն է՝ բավարարել օգտվողների հետաքրքրությունը, տալ նոր գիտելիքներ և սերմանել սեր իր երկրի, գործի և ընտանիքի նկատմամբ: Սույն հոդվածում կներկայացնենք ու կարծևորենք Հայագիտական և տեղ եկատու մատենագիտության ենթաբաժնի քարտարանների դերն ու նշանակությունը: Արդի ժամանակաշրջանում տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հարաճուն զարգացման պայմաններում նոր հնարավորություններ են ի հայտ գալիս հայագիտական բնույթի նյութի առավել համակողմանի ուսումնասիրման և հանրահռչակման առումով:

Հայագիտական և տեղեկատու մատենագիտության ենթաբաժինը Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի ենթաբաժիններից է: Սույն բաժնում իրականացվում են կարևոր աշխատանքներ, գործառույթներ. օրինակ՝ մատենագիտությունների և կենսամատենագիտությունների կազմում, մատենագիտական սպասարկում, գրականության թվայնացում, էլեկտրոնային շտեմարանների ստեղծում ու համալրում և այլն: Վերոնշյալ ենթաբաժնի քարտարաններին ներհատուկ է աղբյուրագիտական և տեղեկատվական բացառիկ նշանակությունը: Սույն ենթաբաժնում մշակվում և քարտազրվում են Հայաստանի, մարզերի, հայ ժողովրդի ու սփյուռքահայ գաղթօջախների մասին պարբերական մամուլում և ժողովածուներում տպագրված հոդվածները: Ենթաբաժնում է գտնվում նաև անհատական քարտարանը, որը պարունակում է հայ մշակույթի և գիտության նշանավոր գործիչների վերաբերյալ տեղեկատվություն: 2013 թ.-ից կատարվում է հոդվածների վերլուծական նկարագրություն և գետեղվում Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Մամուլի հոդվածներ» շտեմարանում:

Ըստ համապատասխան փաստաթղթի՝ հայագիտությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Հայագիտությունը գիտությունների համակարգ է, որն ուսումնասիրում է հայոց լեզուն և գրականությունը, պատմությունը, հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը: Հայագիտությունը ներառում է հայ լեզվաբանությունը (հայոց լեզուն իր բոլոր դրսևորումներով՝ գրաբար, միջին հայերեն, արդի գրական հայերենն իր երկու ճյուղերով ու համակարգերով՝ արևելահայերեն ու արևմտահայերեն, խոսքի մշակույթ, բարբառագիտություն և այլն), հայ գրականագիտությունն իր բոլոր դրսևորումներով ու զարգացման շրջափուլերով (հայոց հին և միջնադարյան, նոր ու նորագույն, սփյուռքահայ և օտարագիր, ժողովրդական բանահյուսություն, գրական-քննադատական մտքի պատմություն և այլն), հայ պատմագիտությունն իր օժանդակ գիտություններով (հնագիտություն, ազգագրություն, աղբյուրագիտություն, պատմագրություն, մատենագրություն և մատենագիտություն, վիճագրագիտություն, վավերագիտություն ու դրամագիտություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պատմական ժողովրդագրություն, մարդաբանություն և այլն), պատմական բժշկագիտությունը, հայ իրավագիտությունը, հայ հասարակական-քաղաքական և տնտեսագիտական մտքի պատմությունը, հայ իմաստասիրությունն ու արվեստագիտությունը: Հայագիտության կարևոր բնագավառներից են սփյուռքագիտությունը, հարևան ժողովուրդների

հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը» [Հայեցակարգ հայագիտության զարգացման, 2012]:

Հայագիտական և երկրագիտական քարտարանների միջոցով իրագործվում է ընթերցողների բոլոր խմբերի տեղեկատու մատենագիտական նյութերի սպասարկումը: Հայագիտական և տեղեկատու մատենագիտական քարտարանների համակարգը տեղեկատվական աշխատանքների կարևորագույն օղակներից է՝ միմյանց լրացնող, փոխկապակցված ամբողջություն: Այն կազմակերպվում է գիտականության ու մատչելիության սկզբունքների հիման վրա: Մատչելիության սկզբունքը իրականացվում է ընթերցողներին կողմնորոշելու ու տեղեկատվություն հաղորդելու միջոցով: Պարբերական մամուլից և ժողովածուներից վերցված անհատական նկարագրությունը մատենագիտական քարտարանում կարող է փոխարինվել տվյալ նյութի բովանդակությունը բացահայտող բազմաթիվ վերլուծական նկարագրություններով: Անհրաժեշտության դեպքում վերլուծական նկարագրության միջոցով մատենագիտական քարտարանում արտացոլվում են նյութի ոչ միայն առանձին հատվածներ կամ բաժիններ, այլև առանձին թեմաներ ու ենթաթեմաներ: Մատենագիտական նկարագրության բաժանարարի ներքո կարելի է արտացոլել մի քանի լեզվով հրատարակչական տարբեր տեսակի նյութեր: Հայաստանի ազգային գրադարանում մատենագիտական քարտարաններ ստեղծելու աշխատանքները սկսվել են դեռևս 1935 թվականից: Երկրագիտական քարտարանը մատենագիտական քարտարանների առանցքն է: Այն ազգային գրականության մասին տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է: Քարտագրման աշխատանքները սկսվել են 1950-ական թվականների երկրորդ կեսից՝ «Հայաստանի և հայ ժողովրդի մասին» թեմատիկ քարտարանով: Այսօր այն իր ծավալով և նշանակությամբ գրադարանի կարևոր քարտարաններից է: Հայագիտական և երկրագիտական քարտարանները բաղկացած են չորս բաժնից՝ 1. Տեղական հրատարակությունների մատենագիտության, 2. Երկրագիտական գրականության, այսինքն՝ տվյալ երկրի, հանրապետության, մարզի, շրջանի, քաղաքի և գյուղի մասին առկա գրականության, 3. Այդ ժողովրդի տարբեր բնագավառների հայտնի գործիչների մասին եղած գրականության անհատական մատենագիտության (պերսոնալիա) և 4. Հայաստանը և հայ ժողովուրդը գեղարվեստական գրականության մեջ: Նյութերի արտացոլման շրջանակներն այս քարտարանում անսահմանափակ են: Ի տարբերություն մատենագիտական այլ քարտարանների, որոնք արտացոլում են միայն ամսագրային ու լրագրային հոդվածները, երկրագիտական քարտարանը արտացոլում է հանրապետության մասին առկա ամբողջ գրականությունը՝ անկախ նրա հրատարակչական ձևից, հրատարակության վայրից և լեզվից: Հայագիտական և երկրագիտական քարտարանի կառուցվածքը կարգային է (թեմատիկ), նրա կազմի մեջ մտնող տպագիր երկերի և այլ նյութերի դասակարգման հիմքը տասնորդական համակարգն է, որի առանձին բաժինները և ենթաբաժինները ոչ միայն խոշորացված են, այլև առանձին հարցեր տասնորդական համակարգում գրված իրենց տեղից տեղափոխվել են այլ բաժիններ կամ ենթաբաժիններ: Օրինակ՝ Հայ առաքելական եկեղեցու պատմությունը 2-րդ բաժնից տեղափոխվել է 903 ենթաբաժինը, բարեգործական ընկերությունները 361 ենթաբաժնից՝ 902.81 ենթաբաժին և այլն: Քարտարանն ունի 0-9-ը ընդհանուր բաժիններ: Նյութերի դասավորությունը կատարված է հետևյալ կերպ: Նախ, դասավորված են գրքերի և գրախոսությունների նկարագրությունը, ապա՝ ամսագրային և լրագրային հոդվածների նկարագրությունները: Այս հոդվածներից յուրաքանչյուրի ներքո գոյություն ունի դասավորության լեզվային կարգ՝ հայերեն, ռուսերեն, ապա այլ օտար լեզուներով քարտեր: Քարտարանին կից ստեղծված են այբբենական-առարկայական, ինչպես նաև նշանավոր գործիչների անվանական-այբբենական բանալիներ, որոնցում յուրաքանչյուր անհատի կամ թեմայի անվան դիմաց նշված է քարտարանի այն բաժնի կամ ենթաբաժնի դասիչը, որի ներքո հավաքված են այդ անհատի, թեմայի կամ առարկայի մասին առկա նյութերը: Քարտարանն ունի կարգային բանալի, որի նպատակն է խմբավորել քարտարանի կազմի մեջ մտնող անհատ գործիչներին ըստ գիտության բնագավառների: Բանալու մեջ անվանական նկարագրություններն ունեն համառոտ անտաքցիա անհատի՝ գիտության այս կամ այն ճյուղին պատկանելու մասին: Երկրագիտական քարտարանին կից առկա է երկու քարտարան՝ անհատական և «Հայաստանի քաղաքներն ու շրջան-

ները», որոնցից յուրաքանչյուրն ունի իր կազմակերպման առանձնահատուկ մեթոդաբանությունը, ներքին կառուցվածքը, որոնք լրացնում են երկրագիտական քարտարանի բովանդակությունը:

Անհատական քարտարան (պերսոնալիա. շուրջ 232 արկղ): Անհատական է կոչվում, քանի որ արտացոլում է պարբերականներում տպագրված առանձին հայտնի անհատների ստեղծագործությունները և նրանց մասին առկա գրականությունը: Քարտարանում նկարագրությունները խմբավորվում են այդ գործիչների անվանական բաժանարարների ներքո՝ ըստ բաժանարարների այբբենական կարգի: Անհատական քարտարանը գրադարանի մատենագիտական քարտարանների մեջ ամենահինն է: Նրա կազմակերպման մասին առաջին անգամ հիշատակված է գրադարանի 1938 թ. տարեկան հաշվետվության մեջ: Անհատական քարտարանում արտացոլված են նախ տվյալ անձնավորության երկերը, նրա կատարած թարգմանությունները, իսկ երկրագիտական քարտարանի համապատասխան բաժնում՝ այդ անհատների մասին առկա գրականությունը:

«Հայաստանի քաղաքները և շրջանները» քարտարանն ընդգրկում է Հայաստանի նախկին շրջանների, քաղաքների մասին եղած նյութերի նկարագրությունները (շուրջ 126 արկղ): Քարտարանն ունի այբբենական կառուցվածք, որի համար հիմք են հանդիսանում քաղաքների և շրջանների անուններով կազմված բաժանարարները:

Ամսագրային և լրագրային հոդվածների քարտարաններն արտացոլում են հասարակական գիտությունների վերաբերյալ ռուս և հայ պարբերական մամուլում տպագրվող հոդվածների վերլուծական նկարագրությունները (շուրջ 862 արկղ):

Հայագիտական և երկրագիտական քարտարաններում տրվող յուրաքանչյուր մատենագիտական տեղեկանք երկարատև պրպտումների արդյունք է, որն աշխատատար է և ժամանակատար: Բաժնում պահպանվում են տրված մատենագիտական տեղեկանքների պատճենները, որոնց ամբողջությունը տրված մատենագիտական տեղեկանքների արխիվն է: Այստեղ յուրաքանչյուր տեղեկանք գետեղված է առանձին ծրարում, համարակալված և դասավորված է ըստ համարների հերթական կարգի (մոտավորապես 1175 տեղեկանք):

Բացի վերոհիշյալ մատենագիտական քարտարաններից, հայագիտական և երկրագիտական քարտարանների ենթաբաժինը կազմում է նաև մի շարք կենսամատենագիտություններ և մատենագիտություններ, իրականացնում է այլ ընթացիկ աշխատանքներ:

Երկրագիտական տեղեկատվություն արտացոլող քարտարանների և շտեմարանների ստեղծման գործընթացում ի հայտ եկան որոշ դժվարություններ, բայց հենվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա, այդ ուղղությամբ կատարվել են կարևոր աշխատանքներ, ուստի վերջնարդյունքն արդեն իսկ տեսանելի է [Жолудева, 2022, 16]:

«Հայ մատենագրութեան թուանշային գրադարան» ծրագրով Հայաստանում սկիզբ դրվեց նորագույն տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ հայագիտական աշխատանքներին՝ հայ գրքային մշակույթը առավել մատչելի դարձնելու համար: Համակարգչային թվանշային համակարգերը կարևոր դեր ունեն դասական գրավոր ժառանգության պահպանման, զարգացման և հաջորդ սերունդներին փոխանցելու գործում: Այս համակարգը հնարավորություն է տալիս Հայաստանի և Սփյուռքի կառույցներին (դպրոցներ, համալսարանական ամբիոններ, կազմակերպություններ, հոգևոր հաստատություններ, անհատներ), ինչպես նաև հասարակության լայն շերտերին չմիջնորդավորված կերպով հաղորդակցվելու հայկական տպագիր մշակութային ժառանգությանը:

Հաշվի առնելով ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման պահանջները՝ 2013 թ.-ից ստեղծվել է «Մամուլի հոդվածներ» մատենագիտական էլեկտրոնային շտեմարանը, որը, ի թիվս այլ շտեմարանների, գետեղված է ՀԱԳ-ի կայքում:

Այն մեքենաընթեռնելի տեսքով կազմակերպված տվյալների հավաքածու է, որը ծառայում է տեղեկատվության հեշտ և արագ որոնմանը: Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնությունն առաջարկում է օգտագործել «Մատենագիտական նկարագրության միջազգային ստանդարտը»: Մատենագիտական շտեմարանը օգտվողին ցույց է տալիս այն աղբյուրները, որոնցից կարելի է ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ հետաքրքրող թեմայի վերաբերյալ: Մատենագիտական շտեմարանում ընդգրկված են լրագրային և ամսագրային

հողվածների օրինակներ: Մատենագիտական շտեմարանում նյութի համառոտ շարադրման արդյունքում տրվում է տեղեկություն մարդկանց, կազմակերպությունների և երկրների մասին: Մատենագիտական տվյալների շտեմարանում որպես առանձին դաշտեր կարող են հանդես գալ՝ հեղինակի, վերնագրի, հրատարակիչների մասին տեղեկություններ պարունակող տվյալները: Մատենագիտական շտեմարանները նախատեսված են տարաբնույթ օգտվողների համար՝ ընթերցողներ, գրադարանավարներ, քարտագրողներ, վարչական աշխատողներ և այլն: Մատենագիտական շտեմարանում պետք է հնարավոր լինի տեղեկատվությունն արտածել տարբեր ձևաչափերով՝ օգտվողների յուրաքանչյուր խմբին մատչելի դարձնելով դաշտերի այն բազմությունը, որն անհրաժեշտ է միայն այդ խմբին և ելնելով նկարագրման օրենքների պահանջներից՝ փոփոխել պայմանական անջատման նշանների կիրառման հաջորդականությունը՝ առանց փոփոխելու դաշտերի պարունակությունը: Մատենագիտական շտեմարանները ձևուն են: Մատենագետը պետք է ինքնուրույն որոշի արագ փնտրման դաշտերի ցանկը, այսպես կոչված բանալի բառերը. նպատակն է հարցման արդյունքն արագ և լիարժեք ստանալը:

Ներկայում կարևորվում է նաև էլեկտրոնային երկրագիտության դերն ու նշանակությունը, որն ապահովում է ազատ մուտք դեպի տվյալ տարածաշրջանի փաստաթղթային ժառանգություն: Արդի մատենագիտության և գրադարանագիտության տեսանկյունից պետք է կարևորել գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) համակարգերի ու դրանց գործունեության կատարելագործման խթանման հարցերը, նպաստել ԱՊՀ երկրների մշակութային քաղաքականության զարգացման ու համագործակցության խորացմանը, ուսումնական և գիտական կապերի ամրապնդմանն ու փոխզարգացմանը: Պետք է ստեղծել Հայաստանի, ԱՊՀ երկրների և հայկական սփյուռքի միջև տեղեկատվական ձևուն միջավայր, կարևորել միջմշակութային հաղորդակցության և գրադարանագիտության զարգացման, գրադարանային հավաքածուների շարունակական համալրման, տեղեկատվական ռեսուրսների լայն սպասարկման հարցերը: Գլոբալ տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի զարգացման պայմաններում մեր գլխավոր խնդիրը քաղաքակրթությունների պահպանումն է և մշակութային ժառանգության փոխանցումը ապագա սերունդներին:

Գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական աշխատանքների տարբեր ուղղություններում պետք է իրականացնել փորձի ուսումնասիրում, ցուցաբերել հետազոտական-վերլուծական, ստեղծագործական մոտեցում: Պետք է գործնական մոտեցում ցուցաբերել մատենագիտական-երկրագիտական քարտարանների կազմակերպման ռազմավարական, կառավարման և հեռանկարային զարգացման հարցերում՝ ուսումնասիրման, պահպանման և օգտագործման մեջ կարևորելով տեխնոլոգիական արդի միջոցների ու մեթոդների գործնական կիրառությունը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով մատենագիտական-երկրագիտական քարտարանների տեղեկատվության արդի զարգացումները՝ պետք է մասնակցել միջազգային ծրագրերում ինտեգրման գործընթացներին: Իրականացնել տեղեկատվական սպասարկում, կատարել հետազոտական որոշակի աշխատանք տեսական գիտելիքների և ձեռք բերած պրակտիկ փորձի հիման վրա:

SUMMARY

Thus, Armenian studies and Earth science are of great importance in the preservation, development and transmission of written heritage to the next generations. Bibliographic theories, seminars, discussions and exhibitions are organized on the basis of theoretical knowledge and acquired experience. In the era of modern technological developments, Armenian studies and reference bibliographic works are carried out most effectively. In addition to paper card files, electronic card files and repositories are also of great informational importance, which enable a wide range of readers to use the Armenian printed cultural heritage without mediation. It should be added that a number of issues of updating and management of bibliographic and information files related to the digitization of files remain controversial.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հավելված №1, ՀՀ կառավարության 2012 թ. հունվարի 12-ի նիստի №1 արձանագրային որոշում: Հայեցակարգ հայագիտության զարգացման, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/plOiI7>, 27.11.2022:
2. Жолудева С., Разработка структуры краеведческой коллекции // Библиотечное дело, Санкт-Петербург, ООО «Агенство-Информ Планета», 2022, № 3, С. 16–19.

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐ
ՆԱԽԱԳԾԵՐ՝ ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բանալի բառեր՝ գրադարան, ընթերցանության խթանում, նախագիծ, մայրիկ, բալիկ, ընթերցասրահ, հոգեբան, գրադարանային գիշեր, կինոցուցադրություն, գրական ակումբ:

Keywords: library, reading promotion, project, mother, baby, reading room, psychologist, library night, movie screening, literary club.

Ընթերցանության խթանում կոչվածը բազմաշերտ պրոցես է, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է տվյալ հասարակության տվյալ ժամանակահատվածի հոգեբանական վիճակի, պահանջների, գրական ճաշակների վերլուծություն-ուսումնասիրություն: Կարևոր են նաև պետության ու տվյալ կառույցի նյութական հնարավորությունները՝ այդ խթանմանն ուղղված նախագծերի իրականացման համար:

Մեր հասարակության համար այս պահին չափազանց բարդ շրջան է. պատերազմական շուկային ապրումների կողքին միշտ կա սպասում, որ մեծ ու փոքր քայլերով գնալու ենք դեպի նոր, կառուցողական փոփոխություններ: Այդ փոփոխությունները պիտի լինեն բոլոր ոլորտներում, իսկ գրադարաններում՝ հատկապես: Կորոնավիրուսային համաճարակից, պատերազմից և սոցիալական կայքերից կախվածության զգալի աճից հետո գրադարանային այցելություններն, իհարկե, նկատելիորեն նվազել են: Սակայն դրան զուգահեռ սերն ընթերցանության հանդեպ աճում է: Դա ակնհայտ է դառնում գրատներում գրական քննարկումների բազմամարդության, գրախանութների բավական մեծ պահանջարկով, հաճախակի կազմակերպվող գրական շնորհանդեսներով և գրքերի վաճառքի աճով:

Այսպիսով, ինչ անել, որպեսզի գրադարանը ևս դառնա պահանջված ու բազմաբովանդակ վայր: Անշուշտ, հասարակության ամենակիրթ զանգվածի համար բացարձակ կարևոր չի գրադարանի գրավչությունը: Իրենք, ինչպես անցյալում այցելել են, այդպես էլ շարունակելու են այցելել, քանի որ գալիս են իրենց խիստ անհրաժեշտ գիտելիքների ետևից: Բայց, ընդհանուր առմամբ, ինչքան հետաքրքիր ու անսպասելի դարձնենք միջավայրը, այնքան ավելի մեծ քանակի հաճախումներ կունենանք:

2022 թվականի գարնանը ինձ բախտ վիճակվեց մեկնել Մոսկվա և Նիժնի-Նովգորոդ՝ մասնակցելու «Образовательная коллаборация библиотек содружества» կրթական ծրագրին՝ ուղղված մասնագիտական որակավորման բարձրացմանը:

Քննարկված թեմաներն էին՝

- նորարարությունները գրադարանում,
- գրադարաններում նորարարությունների ներդրման ձևերն ու մեթոդները,
- թվային միջավայր և գրադարան,
- կազմակերպությունում հաղորդակցման գործընթացի բնութագրերը,
- առաջնորդի արդյունավետության գործակից. կառավարման հոգեբանության մեթոդոլոգիա և տեխնիկա:

Բոլոր դասախոսություններին մասնակցելուց հետո մի քանի շատ կարևոր բան հասկացա՝

1. նոր գիտելիքների հանդեպ բաց լինելն է մարդուն մղում բացահայտումների,
2. աշխատանքի մեջ արագ ռիթմը և ժամանակի գնահատումը բացում են նոր ասպարեզներ,
3. ամեն տեսակի քննարկումները, այդ թվում գրադարանային, տալիս են շատ հարցերի պատասխաններ:

Պիտի ասեմ, որ Ռուսաստանի պետական գրադարանը շատ նման էր մեր Ազգային գրադարանին՝ համակարգը, խնդիրները, ավանդույթները, նյութերի պահպանման ձևն ու գրապահոցները, մթնոլորտը, պատմական անցյալն ու թանգարանային ոգին: Իսկ մնացած գրադարաններում, օրինակ՝ Մոսկվայի Երիտասարդական կամ Մանկական գրադարաններում, Նիժնի Նովգորոդի Դոստոևսկու անվան գրադարանում, ավելի շատ էին նորարարությունները, ձգտումը՝ ավելի ու ավելի հետաքրքիր նախագծեր ներմուծել գրադարանային առօրյա: Տեսաձներիցս երեքը՝ որոշ փոփոխություններով, ես կուզեի տեսնել նաև Հայաստանում, ևս երկու նախագիծ (ստորև թվարկվածներից վերջին երկուսը) կառաջարկեմ իմ կողմից:

Եվ այսպես, նախագիծ 1-ին՝

Մայրիկ-բալիկ շրջանաձև ընթերցասրահ

Պատկերացրեք շրջանաձև ընթերցասրահ: Կենտրոնում խաղալիքներով ու գրքերով զբաղվում են փոքրիկները՝ հիմնականում մինչև 3 տարեկան, նրանց հսկում են երկու վարձու դայակ: Շրջանաձև ընթերցասրահի պատերին գրադարակներն են՝ գրքերով, դրանց ներքևում շարված են հարմարավետ աթոռ-բազկաթոռներ՝ նախատեսված մայրիկների համար: Ընթերցասրահին կից փոքրիկ սենյակ կա՝ երեխաների խնամքի և կերակրման համար: Քանի որ տնային պայմաններում նորաթուխ մայրիկները հիմնականում դժվարանում են ընթերցել (դե փոքրիկ բալիկները անդադար ուշադրություն են պահանջում), կարելի է նրանց օգնել՝ ստեղծելով նմանատիպ միջավայր, որտեղ և՛ ընթերցասեր ծնողը, և՛ երեխան կունենան նոր ծանոթություններ, օրը կանցկացնեն նոր միջավայրում, կստանան նոր գիտելիքներ: Ասեմ, որ ընթերցասրահի մուտքը վճարովի է լինելու, որպեսզի գրադարանը կարողանա վարձատրել դայակներին և հոգա առանձնահատուկ ընթերցասրահի մյուս ծախսերը:

Նախագիծ 2-րդ՝ Հոգեբանի սենյակ

Մեր հասարակությունը հաճախ էական նշանակություն չի տալիս հոգեվերլուծությանը, բայց պարզից էլ պարզ է, որ շատ խնդիրներ ծագում են հենց այստեղից: Հոգեբանի սենյակը հնարավորություն կտա գրադարանի աշխատակիցների միջանձնային հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև՝ ընթերցողների շրջանում նոր հետաքրքրություններ առաջացնելու հարցերում:

Գրադարանային հոգեբանի մոտ պետք է գրանցվել նախապես՝ օնլայն կամ տեղում՝ գրադարանի ընդունարանում: Մատուցվող ծառայությունը գրադարանի աշխատակիցների համար կլինի անվճար, իսկ ընթերցողները կվճարեն սիմվոլիկ գումար, որը կուղղվի նախագծի իրականացմանը:

Նախագիծ 3-րդ՝ Գրադարանային գիշեր

Կախարդական գիշեր, որի ընթացքում գրադարանում կշրջեն հայտնի գրական հերոսներ, արձակագիրներ, պոետներ, արվեստի հայտնի գործիչներ՝ վարձու դերասանների մարմնավորմամբ, կոգեշնչեն ընթերցողներին, կընթանան թատերականացված միջոցառումներ, ընթերցողները գիշերային ընթերցման հնարավորություն կունենան: Գրադարանային գիշերը կանցկացվի տարին մեկ անգամ, կտևի մինչև ուշ գիշեր: Միջոցառման ավարտից հետո գրադարանն իր աշխատակիցներին կապահովի հատուկ ավտոբուսներով, որոնք նրանց մինչև տուն կհասցնեն:

Գրադարանային գիշերվա ընթացքում կարող են լինել համերգներ, հյուրասիրություններ, վարպետության դասեր, ինտելեկտուալ խաղեր: Կարելի է նաև նախապես ձեռք բերել վիրտուալ իրականության 3D ակնոցներ, որոնցով ընթերցողները կտեղափոխվեն տարբեր իրականություններ՝ բացահայտելու գրական ամենատարբեր ժամանակահատվածների հանճարներին:

Ֆինանսական լուրջ հնարավորությունների դեպքում կարելի է յուրահատուկ փերֆորմանսներ կազմակերպել, օրինակ՝ ընթերցանություն 3D ակնոցներով գիշերային անտառում:

Նախագիծ 4-րդ՝ Հայտնի գրական գործերի էկրանավորումների ցուցադրություն

Հավանաբար արդեն շատերը գիտեն, որ Հայաստանի ազգային գրադարանում Ֆրանսիայի դեսպանատան հետ համատեղ և «Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ամիսը մեկ անգամ կինոցուցադրություններ են ընթանում՝ հիմնականում Կաննի փառատոնում մասնակցություն ունեցած ֆիլմերի: Առաջարկում եմ

ավելացնել նաև հայտնի գրական գործերի էկրանավորումների կինոցուցադրություններ, որպեսզի գրականություն-կինո կամուրջը իր իսկական տեղը գտնի գրադարանի էկրանին: Չեմ բացառում նաև քննարկումները՝ ցուցադրության ավարտից հետո:

Նախագիծ 5-րդ՝ **Գրական քննարկումներ**

Նախ՝ վերտալ տիրություն կհայտարարվի սպասվելիք գրական միջոցառումների մասին: Օնլայն գրանցումով կստեղծվի գրական ակումբ՝ կազմված երիտասարդ գրողներից: Եթե դիմողների քանակը շատ մեծ լինի, կանցկացվի ընտրություն: Միջոցառումը կանցկացվի շաբաթը մեկ անգամ: Քննարկումները տեղի կունենան արդեն իսկ ընթերցված գրական գործերի հիման վրա: Հաջորդ փուլում երիտասարդ գրողներն արդեն կարող են փորձել միմյանց ներկայացնել սեփական գրական գործերը և բուռն քննարկման արդյունքում դրանք հղկել, խմբագրել կամ թողնել հենց այնպես, ինչպես ներկայացրել են: Արդյունքում գրադարանը կխթանի նաև գրական ոլորտի ակտիվացմանը:

SUMMARY

The article suggests five initiatives for libraries in Armenia to promote learning.

- A circle-shaped mother-child reading room, where the child can play with toys and books while the mother reads. Target audience for this project are mothers with children under 3.
- Psychologist's office for library users and personnel (with registration).
- During "Library Night" famous literary heroes (performance by actors) will visit the library, inspire readers, and take part in theatrical events. Library users will have a chance to read at night in the library.
- Screenings of films based on famous books once a month.
- Literary discussions based on previously read literature.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Բանալի քառեր՝ համաշխարհային գրական ժառանգություն, օտարալեզու հավաքածուներ, հայագիտություն, թարգմանություն, գրացուցակ, էլեկտրոնային շտեմարաններ:

Keywords: world literary heritage, collections in foreign languages, armenology, translation, catalog, electronic databases.

Հայաստանի ազգային գրադարանը, որպես ՀՀ-ում գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության գիտահետազոտական կենտրոն [ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին», 2012], ստեղծում է անհրաժեշտ պայմաններ տեղեկության հավաքագրման, մշակման և այն ընթերցողներին բոլոր հնարավոր ուղիներով հասանելի դարձնելու համար: Լինելով համաշխարհային և ազգային մշակութային ժառանգության կենտրոն [նույն տեղում, 2012]՝ առանձնահատուկ կարևորությամբ է համալրվում և պահպանվում հատկապես հայերեն լեզվով հրատարակվող տպագիր և էլեկտրոնային գրականությունը, այդ թվում գրքային, ոչ գրքային հրատարակությունները և պարբերականները, սակայն առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև օտարալեզու գրականությանը: Շատ հարուստ է օտար լեզուներով հնատիպ գրքերի ֆոնդը՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, հունարեն և այլ լեզուներով:

Ազգային գրադարանի ֆոնդերը ձևավորվել են Երևանի արական գիմնազիայի գրադարանի, ինչպես նաև այլ կրթական հաստատությունների, մշակութային ընկերությունների ու այլ կառույցների, ինչպես և անհատական գրադարանների գրականության հիման վրա [Հայաստանի ազգային գրադարան 175, 2008, 79], որտեղ առկա են եղել նաև մեծ քանակությամբ օտարալեզու գրքեր, իսկ հետագայում համալրումները շարունակվել են:

Մեծ խնամքով են իրականացվում ամբողջ աշխարհում լույս տեսնող օտարալեզու, մասնավորապես օտարալեզու հայագիտական հրատարակությունների հավաքագրումը, գրանցումը, մշակումը և ֆոնդերի համալրումը: Ահռելի ջանքեր են գործադրվում ձեռք բերելու աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի տպագիր արտադրանքի նմուշները և այդ առաքելությունը լիարժեք կատարելու նպատակով տարեցտարի կատարելագործվում և ամրապնդվում են երկկողմանի կապերը արտասահմանյան երկրների գրադարանների, համալսարանների, տեղեկատվական կենտրոնների և անհատների հետ [նույն տեղում, 2008, 49]: Ուստի, ավելի քան կարևորվում են Հայաստանում, Սփյուռքում և Արցախում բնակվող հայ հեղինակների կողմից ստեղծված օտարալեզու հայագիտական հրատարակությունները:

ՀԱԳ-ն ունի հարուստ օտարալեզու հավաքածու (գիրք, հանդես, թերթ, ազդագիր, ձայնապնակ, էլեկտրոնային կրիչներ, ատենախոսություններ, սեղմագրեր, բացիկներ, քարտեզներ, ատլասներ և այլն), որոնք միտված են բավարարելու գրադարանի ընթերցողների լայն շրջանակների պահանջմունքները: 2022 թ. տվյալներով, ՀԱԳ-ում պահպանվում է ավելի քան 100 լեզվով գրականություն, այդ թվում՝ ադիգիերեն, ասորերեն, ավարերեն, ավեստերեն, արամեերեն, ինչպես նաև աքքադերեն, բաշկիրերեն, դարի, էսպերանտո, էսկիմոսերեն, թագալերեն (թագալի), թայերեն, տելուգու, լաոսերեն, կարաիմերեն, կարակալպակերեն, հաուսերեն, պահլավերեն, սանսկրիտ, սուահիլի, ուրդու, չադաթայերեն, մալայերեն, մարաթի և այլն:

Ռուսերենը մեծամասնություն է կազմում ՀԱԳ հավաքածուներում: Մեծամասնություն կազմող այլ օտար լեզուներից են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և պարսկերեն հավաքածուները:

Տարեկան գրադարանի ֆոնդեր են մտնում ավելի քան 10.000 միավոր օտարալեզու տպագիր արտադրանք և էլեկտրոնային կրիչներ [Հաշվետվություն 2019 թ.-ին կատարած աշխատանքների, 2020, 42]. շուրջ 60%՝ ռուսերեն լեզվով, իսկ 40%՝ այլ օտար լեզուներով:

Լայնորեն ներկայացված են լեզվաբանության վերաբերյալ արտասահմանյան հրատարակություններ, այդ թվում՝ լեզուների դասավանդման մեթոդների, ինչպես նաև պատմական, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, գեղագիտության, իրավունքի, կրոնի, կրթության, գրադարանագիտության և այլ ոլորտների գրականության հավաքածուներ:

Գրադարանն ունի եզակի արտասահմանյան գրականություն, այդ թվում հազվագյուտ գրքեր, պարբերականներ, քարտեզներ: Օտարալեզու ֆոնդերում առանձնահատուկ տեղ է գրավում, օրինակ, «Ասիայի աղյուսակը քարտեզը (Tabula Asiae III)»: Այն տպագրվել է Վենետիկում, 1561-1564 թվականներին: Գունավորված է ձեռքով: Հեղինակն է Ժիրոլամո Ռուշելլին (Girolamo Ruscelli): Քարտեզը լատիներեն է: Ներկայացված է Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածաշրջանի հնագույն պատկերը, որը տարածվում է դեպի հարավ՝ ներառելով ամբողջ Մեծ Հայքը և Փոքր Հայքի մի մասը՝ հիմնված Կլավդիոս Պտղոմեոսի աշխարհագրության վրա՝ մ.թ.ա. երկրորդ դարից:

Սկսած հնագույն ժամանակներից՝ Հայաստանը պատկերվել է հազարավոր վիմագիր, ձեռագիր և տպագիր քարտեզներում: Տարբեր լեզուներով հանդիպող «Հայաստան» անունը ամենաշատ տարածված աշխարհագրական անվանումներից է:

Մեկ այլ արժեքավոր հրատարակություն է «Adams' Illustrated Panorama of History» աղյուսակը, որը համընդհանուր պատմության ժամանակագրական պատկերազարդ աղյուսակ է: Այն գծել է Սեբաստիան Ադամսը: Հրատարակվել է 1878թ.-ին: «Ադամսի պատմության պատկերազարդ համայնապատկերն» ունի 68.5 սմ բարձրություն և 660.4 սմ երկարություն: Այս հսկա աղյուսակում հեղինակը նախ ներկայացրել է աշխարհի պատմությունը աստվածաշնչյան տեսանկյունից՝ սկսած Ադամի արարումից մինչև 1878 թ., ապա անցում է կատարել պատմական ժամանակաշրջանին: Աղյուսակում, որտեղ պատկերված է նաև Հայաստանը (Armenia), նա նշել է բոլոր կարևոր իրադարձությունները և անհրաժեշտության դեպքում տվել պատմական և աստվածաշնչյան մեկնաբանություն: Գծապատկերի վերջում Ադամսը ցույց է տվել իշխող համաշխարհային կառավարիչներին: Հին, նորագույն և աստվածաշնչյան պատմության ժամանակագրական այս զարմանալի գծապատկերը հրապարակվել է Եվրոպայի նշանավոր հրատարակիչ Ա. Հ. Ուոքերի կողմից՝ Լոնդոնում և Փարիզում: Սա 3-րդ հրատարակությունն է. 1-ին հրատարակությունը տպագրվել է 1871 թվականին:

Գրադարանում կան շատ այլ արժեքավոր հրատարակություններ՝ օտար լեզուներով: Առանձնահատուկ կարևոր է հատկապես այն, որ դեռևս հնագույն ժամանակներից տարբեր ազգերի գրականությունը թարգմանվել է՝ հասանելի դառնալով այլազգի ընթերցողներին ևս:

Հայ գրականությունը այլ լեզուներով սկսել է թարգմանվել շատ վաղուց. հնագույն թարգմանությունները վերաբերում են 5-րդ դարին: Դրանք մեծ արժեք են ներկայացնում և հասանելի են դառնում օտարազգի ընթերցողներին և առհասարակ հայ գրականությամբ հետաքրքրվող բոլոր օտարազգիներին, ովքեր կարող են կարդալ միայն իրենց մայրենի լեզվով կամ եվրոպական այլ-ևայլ լեզուներով:

Անշուշտ, կատարված բոլոր թարգմանությունները նույն մակարդակի չեն, և միևնույն հարազատությամբ չեն արտահայտում բնագիրը, սակայն բոլոր թարգմանիչները միևնույն բարի և վսեմ նպատակով են առաջնորդվել. այն է՝ փոքր հայ ժողովրդի գրական մեծ ու պայծառ արվեստը մատուցել այլ ազգերի և ընթերցման ավելի լայն ասպարեզ հանել: Հայ գրականության բոլոր թարգմանիչների անուններն էլ այսօր թանկ են ու սիրելի հայերի համար [The Armenian literature in foreign languages, 1971, 14]: Միայն հայ բանաստեղծ, արձակագիր, գրական, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններից ՀԱԳ-ում առկա են թարգմանություններ՝ ռուսերեն, անգլերեն, վրացերեն, իտալերեն, պարսկերեն, քրդերեն, ռումիներեն, չեխերեն, հունգարերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ուկրաիներեն, արաբերեն, ադրբեջաներեն, բե-

լառուսերեն, բուլղարերեն, հունարեն, թուրքերեն, իսպաներեն, ճապոներեն, դրոգերեն, սերբերեն, տելուգու, կորեերեն, հոլանդերեն, հնդկերեն, լատվիերեն և լիտվերեն լեզուներով:

Հայ ժողովրդի ազգային էպոսը՝ «Մասունցի Դավիթը», թարգմանվել է բազմաթիվ օտար լեզուներով՝ աշխարհի տարբեր վայրերում (ՀԱԳ-ում առկա են 14 լեզվով թարգմանություններ): Կան նաև բացառիկ օտարալեզու գրքեր, որ պատմում են հայկական ձեռագրերի, հայ գրքի և առհասարակ հայկական գրատպության մասին՝ անգլերեն, գերմաներեն, դանիերեն, ռումիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, լեհերեն, հունարեն և այլ լեզուներով:

Օտար ազգերին է ներկայացվել նաև հայկական խոհանոցը՝ անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, հունգարերեն, իտալերեն, պորտուգալերեն, ռումիներեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով: Ներկայացվել են նաև գրքեր հայկական դուդուկի մասին՝ անգլերեն լեզվով, խաչքարի մասին՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, լավաշի մասին՝ անգլերեն լեզվով, ինչպես նաև բազմաթիվ են հայոց պատմության մասին թարգմանությունները կամ օտար լեզուներով հրատարակությունները, որոնք հասանելի են նաև այլազգի ընթերցողներին և արժեքավոր են ուսումնասիրման տեսանկյունից:

Վերջին տարիներին ՀԱԳ-ում մեծ աշխատանքներ են տարվում հայերեն և օտարալեզու ֆոնդերը հանրահռչակելու, նոր հավաքածուներ ստեղծելու, այսինքն՝ համացանցային ոլորտի զարգացմանը խթան հանդիսացող միջոցներ ստեղծելու ուղղությամբ: Իրականացվող աշխատանքների շնորհիվ ողջ գրադարանային ֆոնդն արտացոլվում է թե՛ գրացուցակներում և քարտարաններում և թե՛ էլեկտրոնային շտեմարաններում:

Հատկանշական է նաև այն, որ ՀԱԳ օտարալեզու գրականությունը հասանելի է նաև բաց դարակներում, որտեղ ներկայացված են արտասահմանյան գրականությունը, բառարանները, դասագրքերը և այլ առաջնահերթ պահանջարկ ունեցող գրքեր՝ նախատեսված ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀԱԳ ընթերցասարահներում առկա են մեծածավալ օտարալեզու տեղեկատու գրքեր՝ հանրագիտարաններ, բառարաններ, գիտական կամ գիտահանրամատչելի *տեղեկատու փաստաթղթեր*՝ բաց ու հասանելի ընթերցողի համար: Կան նաև արտասահմանյան գրականության անկյուններ և դարակներ՝ Ամերիկյան, Ղազախական, Չինական, Ուրուգվայական, Ավստրո-գերմանական, Ռուսական, Եվրոպական և այլն:

Գրադարանում պահպանվող փաստաթղթերի մասին տեղեկատվության հասանելիության հարթակների ստեղծումը մեր գործունեության հիմնական ուղղություններից է: Մշտապես փնտրում ենք նոր լուծումներ, որոնք թույլ կտան ավելի լավ բացահայտել ֆոնդը, այն ավելի մատչելի դարձնել ընթերցողների համար և ապահովել առավել հուսալի անվտանգություն: Առանձնահատուկ նշանակություն ունեն հավաքածուների նկարագրությունը, պահպանումը, թվայնացումը և հասանելիությունը համացանցում:

ՀԱԳ-ում այսօր մեծածավալ աշխատանքներ են իրականացվում «Հայաստանյան գրադարանների համահավաք գրացուցակ», «Հայ մամուլ», «Հայ գիրք» և այլ շտեմարաններում՝ լիարժեք և բազմաբովանդակ տեղեկատվության համալրման և պահպանման ուղղությամբ: «Համաշխարհային գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում» շտեմարանն ընդգրկում է տարբեր երկրների փաստաթղթային հավաքածուներ՝ տարբեր լեզուներով, այդ թվում նաև՝ հայերեն լեզվով: Այդ հավաքածուներից են՝ Իրանական, Լեհական, Լիտվական, Շվեյցարական, Ճապոնական, Չինական, Ուկրաինական, Ղազախական, Ռուսական և այլ հավաքածուներ: Տարաբնույթ գրականությունն արտացոլում է այդ երկրի որոշակի դարաշրջանի մշակույթը, պատմությունը, ժամանակի հոգևոր կյանքը, արվեստը, այդ թվում՝ երաժշտությունը, կինոն և թատրոնը, ինչպես նաև գրականությունը, քաղաքականությունը, գիտությունը, լեզուն, կրթությունը, բժշկությունը և այլն: Իրանական հավաքածուն, օրինակ, ընդգրկում է ամփոփ տեղեկատվություն Իրանի պատմության, մշակույթի, լեզվի, կրոնի և այլ ոլորտների մասին: Համաշխարհային գրականության հավաքածուում ընդգրկված յուրաքանչյուր փաստաթուղթ ամփոփ տեղեկատվություն է տվյալ երկրի մասին. այսինքն՝ ունի երկրագիտական նշանակություն:

Համաշխարհային գրականության հավաքածուներից զատ ստեղծվել է նաև «Արմենիկա» հայագիտական հավաքածուն՝ նույն սկզբունքով: 01.10.2022 թ.-ի դրությամբ՝ «Արմենիկա» հավաքածուն ընդգրկում է 7477 հրատարակություն ռուսերեն և 7045 այլ օտար լեզուներով հրատարակություններ:

Ըստ 2022 թվականի Google Analytics վիճակագրության՝ գրադարանի կայքէջ առավելագույնս այցելել են հետևյալ երկրներից՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Չինաստանից, Ֆրանսիայից, Ադրբեջանից, Գերմանիայից:

Այցելուներն առավել շատ օգտվել են ՀԱԳ շտեմարաններից, ծանոթացել են ՀԱԳ գրանցման կարգի հետ, օգտվել են ՀԱԳ հրատարակություններից:

Կարելի է փաստել, որ համակարգչային աշխատանքներն իրականացվում են ոչ միայն ներկա, այլ նաև հետագա սերունդների համար և զարգացման միտում ունեն:

Գրադարանում իրականացված աշխատանքների շնորհիվ օտարալեզու ֆոնդերն առավել հասանելի են հասարակությանը և հնարավորություն են ընձեռում ստանալ օպերատիվ և դինամիկ տեղեկատվություն՝ արագ, մատչելի և առանց ավելորդ ջանքերի:

SUMMARY

The article includes information about the library's digital collections and foreign literature in the UniArmenian catalogue. The information about collections on Armenian studies in foreign languages, supported and non-supported languages, and types of foreign language print materials available at the National Library of Armenia is presented. The article also discusses the value of foreign language literature and how in demand it is in Armenia, as well as the role and importance of foreign language Armenian press and what efforts are being done in that direction. A summary is provided on how much the National Library of Armenia has contributed to the replenishment of foreign language collections according to statistics of the last ten years, when the greatest number of foreign language literature was acquired, as well as what unique books are kept in the collection. The role and importance of press on Armenian studies in foreign languages and what efforts are being done in that direction also discussed.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ազգային գրադարան 175, Երևան, Լուսակն, 2008, 90 էջ:
2. ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին» // Ընդունված է 2012 թ.-ի մարտի 21-ին, [Էլեկտրոնային հրատարակություն]
3. URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198>, 29.11.2022
4. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Հաշվետվություն 2019 թ.-ին կատարած աշխատանքների, Երևան, 2020, 124 էջ:
5. The Armenian literature in foreign languages, Yerevan, 1971, 375 p.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԴԵՐԸ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ թանգարան, հայ գրատպություն, տպագիր ժառանգություն, մշակութային արժեք, հանրահռչակում, հոբելյանական իրադարձություններ, ռազմավարություն, հիշարժան տարեթվեր, միջոցառումներ, ցուցադրություններ:

Keywords: museum, armenian printing, printed heritage, cultural value, popularization, jubilee events, strategy, memorable dates, events, exhibitions.

Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարանը, որպես հայ տպագիր ժառանգության պահպանման օջախ, հավաքագրում, ցուցադրում և ներկայացնում է հայ գրատպության 510-ամյա պատմությունը: Ազգային մշակութային արժեքների, հայերեն տպագիր ժառանգության արժևորումը և հանրահռչակումը Գրատպության թանգարանի ռազմավարական ծրագրերից է:

Թանգարանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկն էլ միջթանգարանային առնչումները խթանող միջոցառումներն ու ցուցադրություններն են՝ տպագրության պատմության, հոբելյանական իրադարձությունների, հիշարժան տարեթվերի, ինչպես նաև գրքի և մշակույթի հետ կապված թեմաներով:

Թանգարանի առաքելությունը ոչ միայն իրեն վստահված ժառանգությունը պահպանելն է, այլ նաև այն հանրությանը հասանելի դարձնելն ու հանրահռչակելն է:

Բոլորովին վերջերս՝ սեպտեմբերի 25-ին, լրացավ Գրատպության թանգարանի գործունեության 5-ամյակը:

Սույն ուսումնասիրության մեջ փորձելու ենք ներկայացնել թանգարանի 5-ամյա գործունեության ընթացքում հոբելյանական իրադարձությունների անդրադարձները (Հովհաննես Թումանյան-150, Կոմիտաս-150, Հայաստանի Առաջին Հանրապետություն-100, Զորավար Անդրանիկ-155, Ալ. Սպենդիարյան-150, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան-200, Եղ. Չարենց-125 և այլն):

Առհասարակ, թանգարանն իր գործունեության հինգ տարիների ընթացքում մի շարք մշակութային ծրագրեր է իրականացրել: Այստեղ կազմակերպվել և կազմակերպվում են տարաբնույթ կրթական ծրագրեր, խաղ-վիկտորինաներ, քննարկումներ, ընթերցումներ, բաց-դասեր, դասախոսություններ, ցուցադրություններ և այլն:

Ցուցադրությունների կազմակերպումը յուրաքանչյուր թանգարանի գործունեության հիմնական խնդիրներից է:

Թանգարանային ցուցադրություն ասելով՝ հասկանում ենք մի ամբողջական տարածա-առարկայական համակարգ, որտեղ ցուցադրվող նյութերը միտված են որևէ գաղափարի: Ցուցադրությունները, թեկուզ և ժամանակավոր, այցելուի հետ առնչվելու հիմնական միջոցներից են: Այցելուն ցուցադրությունից ակնկալում է ստանալ նոր տեղեկություն և գիտելիք:

Թանգարանի գլխավոր նպատակն է ընկալելի և ամբողջական ցուցադրություն ներկայացնել այցելուներին՝ մեկ անգամ ևս արժևորելով և հաղորդակից դարձնելով հայ ժողովրդի հարուստ մշակութային ժառանգությանը:

Հատկանշական է, որ 1600 տարի առաջ մաշտոցյան գրերի ստեղծումով, նախ ձեռագիր գրքի, իսկ ավելի ուշ գրատպության միջոցով հայ մշակույթը թևակոխել է զարգացման որակապես նոր փուլ՝ ի դեմս գրատպության արվեստի:

1. Թումանյան-Կոմիտաս-150 հոբելյանական տարվա շրջանակում 2019 թվականի փետրվարին Գրատպության թանգարանում ցուցադրվեցին նյութեր, որոնք նորովի մեկնաբանեցին հայ

գրականության և մշակույթի երկու տիտաններին՝ ներկայացնելով *Թումանյանի գրական ժառանգությունը*, նրա մասին նյութերը, ինքնագրերը, Տերյանի անտիպ նամակներից՝ ուղղված Թումանյանին, Թումանյանի մասին կարծիքներ և այլն:

Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների» օրացույցում նշված հոբելյաններն ընդգրկելու վերաբերյալ Հայաստանի ներկայացրած հայտը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի 39-րդ նրստաշրջանում արժանացել էր հավանության և հայտերն ընդգրկվել էին «Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների» ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրացույցում³⁶:

Մեծ վարդապետ, երաժշտագետ, երգահան ու ազգագրագետ Կոմիտասին նվիրված ցուցադրություն կազմակերպվեց թանգարանում՝ վերստին մեր խոնարհումը բերելով մեծ արվեստագետի ու ազնվագույն հայորդու հիշատակին, արժևորելով նրա դերն ու ավանդը: Ցուցադրության մեջ ներառված էին «*Կոմիտաս Վարդապետ: Կյանքը գրքերում*» թեմաներով զեկույցներ, Կոմիտասի անտիպ նամակը՝ ուղղված Արշակ Չոպանյանին, հիշողություններ Կոմիտաս վարդապետի մասին, գրախոսություններ և այլն:

2. Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակ

2021 թվականին լրացավ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր, հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը: Այս կարևոր հոբելյանն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-2021 թվականների օրացույցում³⁷:

2021 թվականի «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում՝ Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի, Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարանի և Եդ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի համատեղ նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում բացվեց «Հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը» խորագրով բացառիկ ժամանակավոր ցուցադրություն:

Ներկայացված էին Ալեքսանդր Սպենդիարյանին առնչվող բացառիկ բնօրինակ նյութեր՝ լուսանկարներ, նամակներ, ստեղծագործությունների առաջին հրատարակություններ, կոմպոզիտորի կյանքին ու ստեղծագործական ուղուն նվիրված գրականություն, սկավառակներ, ձայնապնակներ, պաստառներ, համերգային ծրագրեր և ազդագրեր. Փարիզում կայացած «Ալմաստ» օպերայի 1951 թ. ազդագիրը, «Ալմաստ» օպերայի Երևանյան առաջին բեմադրության ազդագիրը, Կոնսերվատորիայի առաջին համերգի ազդագիրը և այլն: Ցուցադրվող նյութերի ընտրության հարցում շեշտադրվել է եվրոպական միջավայրում Սպենդիարյանի ստեղծագործությունների տարածումը, գնահատումը և նրա ստեղծագործությունների կատարումը եվրոպացի ականավոր երաժիշտ կատարողների, դիրիժորների, պարարվեստի գործիչների կողմից:

Ցուցահանդեսի մաս էր կազմում նաև Հայաստանի ազգային գրադարանի Արվեստի բաժնի նոտային-երաժշտական գրականության ենթաբաժնի ֆոնդերի հարուստ նոտաների հավաքածուն:

3. Անդրանիկ Օզանյանի 155-ամյակ

2020 թ. փետրվարի 25-ին լրացավ տաղանդավոր գորավար ու հայ ազգի մեծ նվիրյալ Անդրանիկ Օզանյանի ծննդյան 155-րդ տարեդարձը: Անգնահատելի է Անդրանիկ Օզանյանի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում: Իր հերոսական կյանքի ընթացքում միշտ նեցուկ եղավ սեփական ազգին՝ մի կողմ դնելով անձնական շահն ու երջանկությունը:

Միջթանգարանային համագործակցության շրջանակում՝ «Զորավար Անդրանիկ» ֆիդայական շարժման թանգարանի հետ համատեղ Գրատպության թանգարանում կազմակերպվեց գորահրամանատար Անդրանիկ Օզանյանի անձնական իրերի բացառիկ ցուցադրությունը: Ցու-

³⁶<https://escs.am/am/news/5275> – ՀՀ ԿԳՄՄ նախարար Ա. Հարությունյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կմասնակցի Կոմիտասի և Հովհ. Թումանյանի 150-ամյակներին նվիրված միջոցառումներին. (25.09.2022թ.)

³⁷ <https://escs.am/am/news/8962> - «Մեկնարկում են «Սպենդիարյան-150» հոբելյանական միջոցառումները», (25.09.2022թ.)

ցաղրվող իրերի շարքում էին Անդրանիկ Օզանյանի ծխամորձը, զինվորական կնիքը, նագանը, դաշույնը, հեռադիտակը, շքանշանները և այլն: Այցելուներն առանձնակի հետաքրքրությամբ ուսումնասիրեցին Ջորավար Անդրանիկի ձեռագիր նամակները, գրությունները, ընտանեկան լուսանկարները և այլն: Ցուցանմուշների մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում 1907 թ.-ի «Աստվածաշունչը», որը գորավարը 1926 թ. նվիրել է իր սանիկին ծննդյան օրվա առթիվ: Ավետարանի վրա ընտանիքի կնքահայրը մակագրություն է թողել: Ջորավարի մակագրությունը, սակայն, ժամանակին թաքցրել են: Այդ էջի վրա թուղթ էին սոսնձել, որը մինչ օրս բացել չէին կարողանում: «Աստվածաշունչը» 2012 թ.-ին թանգարանին է նվիրաբերել ընտանիքի հետնորդներից մեկը: Ողջունելի է, այն փաստը, որ ՀԱԳ-ի Տպագիր արտադրանքի վերականգնման բաժնի աշխատակիցների կողմից հնարավոր եղավ վերականգնել «Աստվածաշունչը»:

4. Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման 100 ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի շրջանակում՝ 2018 թ. մայիսին կազմակերպվեց «Հայաստանի առաջին հանրապետությունը մամուլում և գրքերում» խորագրով գրականության և մամուլի ցուցադրությունը:

Ցուցադրության նպատակն է հանրությանը նորովի ներկայացնել հայոց պատմության այս կարևոր ժամանակաշրջանի իրադարձությունները, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան մեր պետականության ստեղծման համար: Ցուցահանդեսում ներկայացված էին նաև քարտեզներ, լուսանկարներ, պառլամենտի կողմից ընդունված առաջին օրենքները, փաստաթղթերը և այլն:

5. 2021 թվականին ՀԱԳ-ի մեծ ցուցասրահում Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման և գործունեության 200-ամյակին նվիրված ցուցադրություն կազմակերպվեց:

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը սփյուռքի ամենահին և ցայսօր գործող կրթական հաստատություններից է, որը լուրջ դերակատարություն է ունեցել Հնդկաստանի հայ համայնքի պահպանման ու զարգացման գործում: Ճեմարանը հիմնադրվել է 1821 թվականին բարերարներ Աստվածատուր Մուրադխանյանի և Մնացական Վարդանյանի նախաձեռնությամբ³⁸:

1999 թ. Կալկաթայի Գերագույն դատարանի որոշմամբ Հայոց Մարդասիրական ճեմարանը հանձնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խնամակալությանը: Դասախոսությանը զուգահեռ ՀԱԳ փոքր ցուցասրահում ներկայացվեց Ազգային գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժնի ֆոնդերում պահվող Կալկաթայում ժամանակին գործող տպարանների՝ «Հայկական մարդասիրական ճեմարանի», «Ազգասիրի Արարատյան ընկերության», «Անգլիական Եպիսկոպոսական ճեմարանի», «Աւետ Զնթրումեանի», «Խաչկեան Քահանայի», «Կ. Պոլսոյ Առևտրական սենեկի լրագրոյ», «Միսիոներների Յովսէփ Ստեփանոսեան», «Ս. Նազարէթ եկեղեցու», «Վիջենեանի Արծիվ», «Օլիմպյան Պրես» ավելի քան 30 հրատարակություն՝ գրքեր և ամսագրեր:

6. 2022 թվականը Չարենցյան տարի է

Գիրք նվիրելու օրվան ընդառաջ՝ միջմշակութային և միջթանգարանային համագործակցության շրջանակում կազմակերպվեց «Չարենցը Ազգայինում. 125 ցուցանմուշ» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը՝ Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում՝ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի հետ համատեղ:

Ժամանակավոր ցուցադրությանը ներկայացված 125 ցուցանմուշից 25-ը Չարենցի անձնական իրերն են (ինքնաշեն գրիչ, թանաքամաններ, մոխրաման, ածելի սրելու գործիք, Բուդդայի արձանիկ, թասակ, բացառիկ լուսանկարներ, Չարենցի ընտանիքի խմբանկարը, Չարենցի «Երկերի ժողովածուն», 1922 թ., Մոսկվա, (հատոր 1, հատոր 2), «Արփիկին» բանաստեղծությունը՝ ձեռագիր և այլն:

Ներկաների համար Չարենցը ներկայացվեց ու բացահայտվեց նոր ու ինքնատիպ մոտեցումներով, հետաքրքիր մանրամասնություններ հնչեցին նրա պոեմների, նամակների, գրառումների, նրա թողած գրական ժառանգության մասին և այլն:

Թանգարանները կարևոր մշակութային-կրթական կենտրոններ են, որոնց առաքելությունը միտված է ազգային և համամարդկային մշակույթի պահպանմանն ու տարածմանը: Թանգարանները, վերարժևորելով իրենց հավաքածուները և մշակութային ժառանգությունը, նորովի են ներկայաց-

³⁸ <https://nla.am/events/7879/> - «Հնդկահայ գաղութը և հայոց մարդասիրական ճեմարանը», (26.09.2022թ.)

նում անցյալը և փորձում են փոխանցել նոր գաղափարներ՝ կառուցելու ավելի լուսավոր և կայուն ապագա:

SUMMARY

The Printing Museum of the National Library of Armenia, as a center for the preservation of Armenian printed heritage, collects, exhibits and presents the 510-year history of Armenian printing. Preserving and promoting national cultural heritage is one of the Printing Museum's strategic missions, along with the organization of events and exhibits to promote inter-museum relations on topics related to the history of printing, commemorative events, and memorable dates.

The article presents the Museum's itinerary of anniversary events during the last five years (Hovhannes Tumanyan-150th anniversary, Komitas-150th anniversary, The First Republic of Armenia-100th anniversary, Yeghishe Charents-125th anniversary, etc.).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կմասնակցի Կոմիտասի և Հովհ. Թումանյանի 150-ամյակներին նվիրված միջոցառումներին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://escs.am/am/news/5275>
2. «Հնդկահայ գաղութը և հայոց մարդասիրական ճեմարանը», [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://nla.am/events/7879/>
3. «Մեկնարկում են «Սպենդիարյան-150» հոբելյանական միջոցառումները», [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://escs.am/am/news/8962>

«ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ»՝ ՈՐՊԵՍ
ՄԵԹՈԴ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Բանալի բառեր՝ Ազգային մանկական գրադարան, հիշարժան տարեթվեր, օրացույց, մատենագիտական ձեռնարկ, հավաքածու, մատենագիտական ցանկ:

Keywords: National children's library, memorable dates, calendar, bibliographic manual, collection, bibliographic list.

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը աշխարհի սակավաթիվ գրադարաններից է, որը նախատեսված է մանուկներին ու պատանիներին սպասարկելու համար: Շուրջ 90 ամյա պատմություն, հարուստ հավաքածու և կենսագրություն ունեցող գրադարանը ստեղծվել է 1933 թ.:

1963 թ.-ից հանրապետության մանկական և դպրոցական գրադարանների համար հանդիսանալով գիտամեթոդական, մատենագիտական և տեղեկատվական կենտրոն՝ տասնամյակներ շարունակ իրականացրել է հրատարակչական բեղուն գործունեություն:

Լավագույն օրինակներից է 1963 թ.-ից մինչ օրս տպագրվող «Հիշարժան տարեթվեր» մեթոդ-մատենագիտական ձեռնարկը, որն ունի գրեթե 60 տարվա պատմություն: Այն սկզբում կոչվել է «Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց», միայն 1977 թվականից սկսած՝ լույս է տեսել որպես «Հիշարժան տարեթվեր»:

Հարկ է նշել, որ օրացույցը 1963-64 թթ. եղել է մեքենագիր, տպաքանակը՝ 60-80 օրինակ, 1966 թվականից՝ թիթեղատիպ, տպաքանակը՝ 300-500 օրինակ, իսկ 1968 թվականից արդեն հրատարակվել է տպարանում՝ 1000-1500 օրինակ տպաքանակով:

Օրացույցի առաջին համարը կազմվել է 1963 թվականի երկրորդ կեսին վաստակավոր մատենագետ, գրադարանի այդ տարիների փոխտնօրեն Բալաբեկ Մելյանի կողմից, խմբագրությամբ ականավոր գրականագետ, լեզվաբան Ռաֆայել Իշխանյանի: Համարում ընդգրկվել են 1964 թվականի 1-ին եռամսյակի հիշարժան տարեթվերը, ինչպես նաև համառոտ տեղեկատվական նյութեր Ռուբեն Ղարիբյանի, Սիլվա Կապուտիկյանի, Հովհաննես Թումանյանի, Իվան Կոռնիլովի և այլոց մասին: Յուրաքանչյուր նյութի վերջում տրվել են համապատասխան թեմայի վերաբերյալ գրականության մատենագիտական ցանկերն ու քաղվածքներ:

Օրացույցը մինչև 1972 թվականը հրատարակվել է եռամսյակը մեկ, 1973-2002 թթ.-ին՝ տարին երկու անգամ, իսկ 2003 թ.-ից մինչ օրս լույս է տեսնում ամենամյա ձևաչափով:

Շուրջ 6 տասնամյակ շարունակ մատենագիտական այս կարևոր ձեռնարկը կազմել և խմբագրել են ականավոր և վաստակաշատ մասնագետներ, մատենագետներ, գրադարանավարներ, բանասերներ, գրականագետներ, գրողներ, որոնց թվում են Ռաֆայել Իշխանյանը, Վազգեն Տալանը, Բալաբեկ Մելյանը, Հայկանուշ Դանիելյանը, Գոհար Մկրտչյանը և այլք:

«Հիշարժան տարեթվեր»-ը, հանդիսանալով մեթոդ-մատենագիտական ձեռնարկ, որպես կանոն ընդգրկում է տվյալ տարվա հոբելյանական տարեթվերն ու ամսաթվերը, հոբելյար գրքերն ու ստեղծագործությունները, ազգային ու միջազգային տոները, ինչպես նաև մանուկ և պատանի ընթերցողներին, նրանց ընթերցանությունը կազմակերպողներին հուզող, հետաքրքրող թեմաները: Կառուցվածքային, ծավալային և բովանդակային առումով այն փոփոխությունների է ենթարկվել տարիների ընթացքում՝ համապատասխանելով տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Եթե սկզբնական շրջանում թեմաները եղել են մի քանիսը, ապա դրանց թիվը ժամանակի ընթացքում ընդլայնվել է՝ հասնելով 3 տասնյակի: Թեմաները վերաբերվել են թե՛ հայ, թե՛ օտարազգի նշանավոր հոբելյարներին՝ գրողներ, կինոյի և թատրոնի գործիչներ, կրթամշակութային ու արվեստի ոլորտի երևելիներ, բժիշկներ, մանկավարժներ, ակադեմիկոսներ, ռազմական ու կրոնա-

կան գործիչներ և այլք: Բացի այդ, առանձին թեմաներ նվիրվել են հայ պարբերական մամուլին («Ազդարար-205», «Մուրճ», «Հասկեր»), ինչպես նաև տարբեր տոներին և կարևոր պատմական իրադարձություններին (Երեխաների պաշտպանության միջազգային օր, Մանկական գրքի միջազգային օր, Ավարայրի ճակատամարտ և այլն):

Առանձնակի տեղ են զբաղեցրել հայ և օտարազգի մանկագիր հոբելյարներին ու նրանց ստեղծագործություններին նվիրված թեմաները:

2023 թվականի օրացույցը կազմվել է տարբեր տարիների հիշարժան տարեթվերի ստեղծման պատմության ու փորձի ուսումնասիրմամբ՝ ենթարկվելով որոշակի կառուցվածքային փոփոխությունների:

Մասնավորապես՝ եթե նախկինում օրացույցը սկսվել է «Հոբելյանական և հիշարժան տարեթվեր» վերնագրով, ապա այժմ այն փոխարինվել է «Տարվա հիշարժան տարեթվեր» և «Հոբելյաններ, որոնց ծննդյան ամսաթիվը անհայտ է» վերնագրերով:

Առաջին մասում ընդգրկվել են հազարամյակների ու դարերի ընթացքում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները՝ Էրեբունի-Երևանի 2805 ամյակ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1720 ամյակ, Զվարթնոց հայկական վաղ միջնադարյան ճարտարապետական հուշարձանի կառուցման 1380 ամյակ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (Թուրքմենչայի պայմանագիր) պատմական իրադարձության 195 ամյակ, Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման և Սարդարապատի ճակատամարտի 105 ամյակ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծման 80 ամյակ, Վենետիկում լույս տեսած «Բազմավեպ» հանդեսի 180 ամյակ, Կալկաթայում տպագրված «Ազգասեր Արարատյան» պարբերականի 175-ամյակ (1848-1852), Մոսկվայում տպագրված «Հյուսիսափայլ» ամսագրի 165 ամյակ և այլն:

Երկրորդում՝ «Հոբելյաններ, որոնց ծննդյան ամսաթիվը անհայտ է» վերնագրի տակ, ինչպես որ հուշում է վերնագրի անվանումը, ընդգրկված են երևելիներ, որոնց ծննդյան ամսաթիվը հայտնի չէ՝ Օմար Խայամ, Ներսես Լամբրոնացի, Վարդան Արևելցի, Խոսրով Ամիր, Ջորդանո Բրունո, Բադդասար Դպիր, Շահամիր Շահամիրյան, Յոհաննես Լեփսիուս, Արաբո, Հովսեփ Արղության, Արմենակ Շահմուրադյան, Լեո Կամսար, Բագրատ Ստաֆֆի և այլք:

Հաջորդիվ գալիս է «Հոբելյան գրքեր և ստեղծագործություններ» բաժինը: Այս վերնագիրը ևս հուշում է բովանդակությունը. այստեղ ընդգրկված են տարվա հոբելյան գրքերը, ինչպես նաև առանձին ստեղծագործությունները՝ «Պատարագատետր», «Աղթարք», «Տաղարան» - 510 (Վենետիկ, 1513), Շահամիր Շահամիրյան «Որոգայթ փառաց» (Հայաստանի առաջին տպագիր սահմանադրություն) - 250 (Մադրաս, 1773), Ներսես Շնորհալի «Գիրք, որ կոչի ընդհանրական»-235 (Սանկտ Պետերբուրգ, 1788), Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի» - 165 (Թիֆլիս, 1858), Տիգրան Զուխաջյան «Արշակ Բ» օպերա (հայկական ազգային դասական առաջին օպերա, ստեղծում) - 155 (Կ. Պոլիս, 1868) Գարեգին Զարբհանալյան «Հայկական մատենագիտություն» - 140 (Վենետիկ, 1883), Բաֆֆի «Կայծեր» - 140, (Թիֆլիս, 1883), Հենրի Ռայդեր Հազարդ «Մոնթեսումայի դուստրը» - 130 (Նյու Յորք, 1893), Վահան Տեյյան «Սթնշաղի անուրջներ» - 115, (Թիֆլիս, 1908):

Հաջորդը համապատասխան տարվա հոբելյանական ամսաթվերն են՝ հունվարից դեկտեմբեր: Յուրաքանչյուր ամսվա տակ նշված են ՀՀ ազգային տոներն ու ՄԱԿ-ի տոնացույցով նշված օրերը, ինչպես նաև հայ և օտարազգի հոբելյանները: Վերջում արդեն անվանացանկն է՝ որպես մատենագիտական հրատարակության օժանդակ ցանկ:

Կարևոր է արձանագրել, որ «Հիշարժան տարեթվեր»-ը կազմելիս օգտագործվել են հանրագիտարաններ, կենսագրական բառարաններ, համապատասխան տեղեկատուներ, պաշտոնական կայքեր առցանց հարթակում և այլն:

Ընդհանուր առմամբ, Խնկո Ապր անվան ազգային մանկական գրադարանի կողմից հրատարակվող «Հիշարժան տարեթվեր» մեթոդ-մատենագիտական ձեռնարկը չի դադարում կորցնել իր արդիականությունը, կարևորությունը և անհրաժեշտությունը՝ օգնելով հասարակության տարբեր շերտերին (ԶԼՄ-ներ, կրթական ու կրոնական հաստատություններ, մշակութային կազմակերպություններ և այլն), հատկապես մանկական ու դպրոցական գրադարաններին՝ իրենց աշ-

խատանքները պլանավորելու և միջոցառումներ, գրքերի ցուցահանդեսներ կազմակերպելու համար:

SUMMARY

The National Children's Library after Khnko Aper, is the methodical center of children's libraries of our country, carries out various methodological-bibliographic publishing works.

From 1963 up to now, the library's Bibliography Department has been creating a "Memorable Dates" reference manual, which includes the famous dates of the given year, commemorative books and works, national and international holidays, as well as topics of interest to children and young readers. It helps different levels of society plan their work and organize events and book exhibitions. Encyclopedias, biographical dictionaries, relevant reference books, official websites on the online platform, etc. are used in compiling the manual.

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԵՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Բանալի բառեր՝ Արգենտինայի և Բրազիլիայի հայ համայնքներ, հայ մամուլ, Արգենտինայի և Բրազիլիայի հայ մամուլ, սփյուռքահայ տպագիր-մշակութային ժառանգություն:

Keywords: Armenian communities of Argentina and Brazil, Armenian press, Armenian press of Argentina and Brazil, printed and cultural heritage of the Armenian diaspora.

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել ու արժևորել Արգենտինայի և Բրազիլիայի հայ մամուլը, այդ մամուլի դերն ու առաքելությունն արգենտինահայ և բրազիլահայ համայնքների կյանքում, արժարժված թեմաները և հարակից այլ հարցեր: Հպանցիկ պատմական անդրադարձ է կատարվել նաև նշյալ երկրների հայ համայնքներին:

Հոդվածում առաջադրված խնդիրներն են արգենտինահայ ու բրազիլահայ մամուլի ազգապահպան դերի և նշանակության կարևորումը հայոց ինքնության, լեզվի, մշակույթի և պատմության, ինչպես նաև այդ համայնքների ու Մայր հայրենիքի միջև առնչությունների ու փոխգործակցության տեսանկյունից:

Հայոց պարբերական մամուլը արտացոլում է հայ ժողովրդի պատմական ուղին [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն: Համահավաք ցանկ, 1970, 5]: Հայոց պարբերական մամուլը սկզբնավորվել է 18-րդ դարի վերջին Հնդկաստանում: 1794-1796 թթ. Մադրաս քաղաքում լույս է տեսել հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարար» ամսաթերթը, խմբագիրն էր քահանա Հարություն Շմավոնյանը [Հայոց պարբերական մամուլ: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը, 1934, 18-19]: Տարածվել է ավելի հեռավոր վայրեր՝ Նոր Նախիջևան, Էջմիածին և այլն: Այնուհետև հայերեն պարբերականներ են լույս տեսել Իտալիայում, Թուրքիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Իրանում, Հունաստանում, Մերձավոր Արևելքում, Ֆրանսիայում և այլուր [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն: Համահավաք ցանկ: 1970, 5]:

Հայ սփյուռք. Արգենտինայի և Բրազիլիայի հայ համայնքները

Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և քաղաքական, որոնք ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում մշտապես ուղեկցվել են օտարազգի իշխանությունների կողմից իրականացվող բռնաճնշումներով և հալածանքներով [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7]:

Արգենտինահայ համայնքը սկսել է ձևավորվել XX դ. սկզբին՝ Ադանայում (Կիլիկիա) թուրքական իշխանությունների կողմից 1909 թ. կազմակերպած ջարդերից հետո:

1914 թ. Արգենտինայում բնակվել է շուրջ 2 հազար հայ: Համայնքը համալրվել է 1922-1930 թթ. Կիլիկիայից և Իզմիրից գաղթած հայերով: 1942-1943 թթ. հայերի թիվը Արգենտինայում կազմել է 19 հազար:

Հայեր են բնակվում Բուենոս Այրեսում, Կորդովայում (Կորդոբա), Մար դել Պլատայում, Ռոսարիոյում [Նույն տեղում, 102]: Արգենտինահայ համայնքում գործում են նաև հայկական եկեղեցիներ՝ Բուենոս Այրեսի Ս. Հակոբ եկեղեցին, Ս. Գևորգ եկեղեցին, Վարագա Ս.Խաչ եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին, Կորդովայի Ս. Գևորգ եկեղեցին [Նույն տեղում, 101-103]:

Եկեղեցիներին կից ստեղծվել են մեկօրյա, ապա՝ ամենօրյա դպրոցներ: Նշենք Արծրունի ազգային վարժարանը, Ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատությունը, Խրիմյան կրթական հիմնարկությունը, Մխիթարյան վարժարանը, Պահչեճյան ազգային վարժարանը, Վիսենտե Լոպեսի ազգային վարժարանը, Արմենիո-Արգենտինա վարժարանը, Մարի Մանուկյան կրթական հաստատությունը [Նույն տեղում, 103]:

Արգենտինահայության ազգային կյանքը կազմակերպում են քաղաքական, բարեգործական, հայրենակցական, մշակութային, երիտասարդական-մարզական բազմաթիվ կազմակերպություններ: Նշենք մի քանիսը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Շարժում» մշակութային միությունը, Հաճընի հայրենակցական միությունը, Այնթապի հայրենակցական միությունը, Մարաշի հայրենակցական միությունը, «Արմենիա» երիտասարդական միությունը [Նույն տեղում, 104-105]:

Արգենտինահայ համայնքում զարգացած են գիտությունը, մշակույթը, գրականությունը, թատրոնը և երաժշտությունը: Հայտնի է «Ժորժ Սարգիսյան» թատերախումբը, «Կոմիտաս», «Արաքս», «Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Շնորհալի» երգչախմբերը, «Գայանե», «Նաիրի» և «Մասիս» պարախմբերը [Նույն տեղում, 106-109]:

Հայերը Բրազիլիայում սկսել են հաստատվել XIX դ. 2-րդ կեսին: Հայերի ավելի ստվար խմբեր (հիմնականում՝ Կիլիկիայից բռնագաղթվածներ) եկել են 1920-ական թթ. և բնակություն հաստատել առավելապես Սան Պաուլո քաղաքում և շրջակա քաղաքներում (Օզասկո, Պրեզիդենտե Ալտինո): Հայեր են ապրում Ռիո դե Ժանեյրոյում, մայրաքաղաք Բրազիլիայում: Երկրի տարբեր նահանգներում (Պարանա, Սեարա, Բահիա, Մատու Գրոսու, Մինաս Ժերաիս, Սանտա Կատարինա) [Նույն տեղում, 118-119]:

Գործում են հայկական չորս եկեղեցիներ՝ Սան Պաուլոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ կաթոլիկ եկեղեցին, Սան Պաուլոյի Ս. Գևորգ եկեղեցին, Սան Պաուլոյի հայ ավետարանական եկեղեցին, Օզասկոյի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Դուրյան, Փառեն և Ռեզինա Պազարյան ազգային ամենօրյա վարժարանները, գործել են մեկօրյա դպրոցներ, հայտնի են Կիլիկիա, Նուբարյան, Սահակ-Մեսրոպյան վարժարանները, հայկական ծերանոց, «Արարատ» հիվանդանոցը [Նույն տեղում, 119-121]:

Բրազիլահայ համայնքում զարգացած են նաև գիտությունը, մշակույթը: Ստեղծվել են «Արմենիա», «Գուսան» երգչախմբերը, գործում են «Սայաթ-Նովա», «Էրեբունի» երգչախմբերը, պարախմբեր, թատերախմբեր և այլն [Նույն տեղում, 122]:

Բրազիլահայ համայնքի ազգային կյանքը կազմակերպող գլխավոր մարմինը Կենտրոնական վարչական խորհուրդն է [Նույն տեղում, 121]:

1915-1917 թթ. գործել է Հայոց Կարմիր Խաչ Շնչերությունը, որին հաջորդել է Հայ Բարեգործական Միությունը (1917-1921) [Հայ գաղթաշխարհի պատմություն: Միջնադարից մինչև 1920-ական թթ., 2013, երրորդ հատոր, 313]:

Արգենտինայի և Բրազիլիայի հայ համայնքները մեծ հեղինակություն են վայելում և համարվում են տվյալ երկրների ամենալավ կազմակերպված, ամենահարուստ ազգային փոքրամասնություններից: Սույն համայնքները նպաստում են նաև տվյալ երկրների և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացմանը:

Արգենտինայի հայ մամուլը

Արգենտինայում հրատարակվել են շուրջ 100 անուն պարբերականներ: Առաջին հայերեն պարբերականը «Արժենթինյան մամուլ» շաբաթաթերթն է, որը լույս է տեսել 1923-1924 թթ.:

«Արարատ» ամսագիրը լույս է տեսել 1943-1947 թթ., Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն: Տպագրել է ուսումնասիրություններ, էսսեներ, գրական նյութեր, մշակութային լուրեր, իսպաներեն հավելվածում՝ հիմնականում հայագիտական կարևոր երկերի թարգմանություններ, հայ բանաստեղծության նմուշներ:

«Արմենիա»՝ լույս է տեսնում 1931 թ.-ից, Բուենոս Այրեսում, 1954-1989 թթ.-ին՝ օրաթերթ, 1989 թ.-ից՝ շաբաթաթերթ՝ հայերեն, իսպաներեն: Լուսաբանում է արգենտինահայ գաղութի հասարակական-քաղաքական կյանքը, տպագրում միջազգային լուրեր, գրական նյութեր, տեղեկություններ Հայաստանից:

«Հայ Կեդրոն» ամսագիրը լույս է տեսել 1932-1970 թթ.-ին, Բուենոս Այրեսում հայերեն: Հրատարակել է կրոնաքաղաքական, մշակութային նյութեր: Հրատարակել է գաղութի պատմության մասին նյութեր: 1997թ.-ին սկսել է վերահրատարակվել՝ հիմնականում իսպաներեն:

«Մարաշ» պարբերականը լույս է տեսել 1954-1966 թթ.-ին, Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն, տպագրել է աշխարհում ցրված մարաշցիների հետ կապված տեղեկություններ:

«Նոր Հաճըն»՝ եռամսյա թերթ (երկար ժամանակ եղել է ամսաթերթ): Լույս է տեսնում 1933 թ.-ից, Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն: Տպագրում է Հաճընի պատմությանը և սովորություններին վերաբերող նյութեր, Արգենտինայում և այլ գաղթավայրերում ապրող հաճընցիների մասին լուրեր, Հայաստանի Նոր Հաճըն ավանին նվիրված լրատվություններ:

«Շարժում» շաբաթաթերթը լույս է տեսել 1937-1991 թթ.-ին, Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն: Լուսաբանել է հայկական և միջազգային հասարակական-քաղաքական կյանքը, տվել Հայաստանի, սփյուռքի և համայնքի մասին լուրեր, առանձին բաժնում զետեղել մշակույթին վերաբերող հոդվածներ:

«Շիրակ» շաբաթաթերթը լույս է տեսել 1929-1936 թթ.-ին, Բուենոս Այրեսում: Տպագրել է լուրեր Խորհրդային Հայաստանի վերաբերյալ, լուսաբանել միջազգային քաղաքական կյանքը:

«Սարտարապատ» շաբաթաթերթը լույս է տեսնում 1975 թ.-ից, Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն: Հրատարակում է Հայաստանի, սփյուռքի և գաղութի վերաբերյալ լուրեր, մշակութային նյութեր, լուսաբանում հայկական կյանքը:

«Սևան» շաբաթաթերթը լույս է տեսել 1961-1990 թթ.-ին, Բուենոս Այրեսում՝ հայերեն, իսպաներեն: Հրատարակել է Հայաստանի վերաբերյալ լուրեր, անդրադարձել միջազգային և լատինաամերիկյան քաղաքական իրադարձություններին [Հայ սփյուռք հանրագիտարան 2003, 109-110]:

Բրազիլիայի հայ մամուլը

Բրազիլիայում տարբեր տարիների լույս են տեսել շուրջ 15 անուն հայերեն պարբերականներ, որոնք կարճատև կյանք են ունեցել: Առաջին տպագիր պարբերականը Հնչակյան ուսանողական միության պաշտոնաթերթ «Կայծ» ազգային, գրական, գեղարվեստական ամսագիրն է: Լույս է տեսել 1933-1937 թթ., Սան Պաուլոյում, խմբագիր Ե. Կարմրակ (Երվանդ Մխիթարյան):

Հետագա տարիներին հրատարակվել են «Վերելք» (1946-1947 թթ.), որը տպագրվել է երկու լեզվով՝ հայերեն և պորտուգալերեն, օրինակ՝ հոդվածներ սփյուռքահայության, Հայաստանի մասին և այլն, «Հայաստան» (1965-1967 թթ.), «Հայաստանի ձայն» (1947-1950 թթ.), «Միփան» (1983-1987 թթ.), «Նոր Անի», (հայերեն, պորտուգալերեն) «Տրիբունա Արմենիա» (պորտուգալերեն) պարբերականները: Լույս է տեսնում նաև «Իրիս» («Ծիածան») պարբերականը (հայերեն և պորտուգալերեն), որը տպագրել է նյութեր հայ գրականության, պատմության, մշակույթի, սպորտի վերաբերյալ: «Մասիս», «Լրատու» (հայերեն, պորտուգալերեն) պարբերականները: 1995 թ.-ից սկսել է վերահրատարակվել բրազիլահայ թեմի «Միփան» երկամսյա պաշտոնաթերթը (հայերեն, պորտուգալերեն, տպագրել է հոդվածներ՝ ազգային-եկեղեցական ներքին կյանքի, համայնքում կատարված կարևոր իրադարձությունների մասին և այլն [Հայ գրաստություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 225]:

Այժմ ներկայացնենք վերոնշյալ երկրներում տպագրված հայ մամուլից որոշ արժեքավոր նյութեր և հոդվածներ:

«Նոր Հաճըն» թերթի բացառիկ համարում (Բուենոս Այրես, 1963 թ.) տպագրված են Միլվա Կապուտիկյանի հեղինակած «Հանճարի ծնունդը» վերնագրով հոդվածը, Պարույր Սևակի հեղինակած «Թրի դեմ» գրիչ: Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600 ամեակը՝ վերնագրով հոդվածը՝ նվիր-

ված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600 ամյակին: Նույն համարում տպագրված է նաև Վ. Մելիք-սեթյանի հեղինակած «Զեյթուն հարիւր տարի առաջ» վերնագրով հոդվածը. (1862 թվականին Զեյթունի պաշարման, զեյթունցիների հաղթանակների վերաբերյալ):

«Նոր Հաճրն» թերթում (Բուենոս Այրես, 1990թ., երրորդ համար) տպագրված է «Ստորագրուեցավ գործակցութեան պաշտօնական համաձայնագիր մը Պուենոս Այրեսի եւ Երեւանի պետական համալսարաններուն միջեւ» վերնագրով հոդվածը:

«Հայ կեդրոն» ամսագրում (Բուենոս Այրես, 1966 թ., համար 10-11-12) տպագրված է «Նօթեր հայ մանրանկարչութեան մասին» վերնագրով հոդվածը:

«Սարտարապատ» շաբաթաթերթում (Բուենոս Այրես, 2015 թ., համար 1789) տպագրված է Տէր Առնակ քահանայ Յարութիւնեանի հեղինակած «Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» աղօթագրքի շուրջ» վերնագրով հոդվածը [Ակնարկ]:

«Սիփան» պաշտոնաթերթում (Սան Պաուլո, 2004 թ., համար 43) տպագրված է «Էջմիածնի գանձեր 17 դարերու հայ քրիստոնէութիւն ցուցահանդէսին առիթով» վերնագրով հոդվածը (Սան Պաուլոյի պետական պատկերասրահում կազմակերպած ցուցահանդեսում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր գանձերից ութսուն նմուշներ ցուցադրվելու վերաբերյալ):

«Սիփան» պաշտոնաթերթում (Սան Պաուլո, 2004 թ., համար 43) տպագրված է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին հայրապետական անդրանիկ այցելութիւնը պրագիլահայ թեմին եւ համայնքին 4-10 մայիս 2004» վերնագրով հոդվածը:

«Սիփան» պաշտոնաթերթում (Սան Պաուլո, 2001 թ., համար 36) տպագրված է «Ուխտագնացութիւն դէպի Հայաստան եւ Սուրբ Էջմիածին» վերնագրով հոդվածը (2001 թվականին Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1.700-ամյակի առիթով Սան Պաուլոյից ուխտավորական խմբի Հայաստան ժամանելու վերաբերյալ):

«Սիփան» պաշտոնաթերթում (Սան Պաուլո, 2003 թ., համար 42) տպագրված է «Հանդիսութիւն՝ նուիրում Արամ Խաչատրյանի 100-ամեակին» վերնագրով հոդվածը [Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Հայ մամուլ» շտեմարան]:

SUMMARY

Thus, we touched upon the Armenian communities of Argentina and Brazil, the Armenian press, as well as the Armenian press of Argentina and Brazil.

Under the dictates of historical and political circumstances, Armenians also settled in Brazil and Argentina. They have created their respective community structures, published the Armenian press, etc. This press touches on various issues: community life, Homeland-Diaspora relations, etc. The coverage of the problems of the Armenian press in general is of great relevance.

The Armenian press of Argentina and Brazil is also developing activities in the Armenian communities to preserve the Armenian identity, especially among the younger generation, contributes to the preservation of the Armenian language, traditions and customs.

The “Armenian Press” database on the website of the National Library of Armenia contains bibliographic data of the Armenian periodicals of Argentina and Brazil in serial numbers. There is a link “read online” where digital copies of periodicals are available.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ գաղթաշխարհի պատմություն: Միջնադարից մինչև 1920-ական թթ., Երևան, Պատմության ինստիտուտ, 2013, Երրորդ հատոր, 372 էջ:
2. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ:
3. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ: ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրություն, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական

- գրադարանի կոմպլեկտավորման բաժին / Կազմ.՝ Ա. Կիրակոսյան Երևան, ա. հ., 1970, 621 էջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/2Xq2IC>, 24.11.2022:
4. Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934) // Կազմ.՝ Գ. Լևոնյան, Յերեվան, Երևան, հրատարակչություն Մելքոնյան ֆոնդ, 1934, 264 էջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/honmhv>, 24.11.2022:
 5. Հայ սփյուռք հանրագիտարան // Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան, 2003, 731 էջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/BNYfjV>, 24.11.2022:
 6. Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Հայ մամուլ» շտեմարան [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Azdak1927/1927/1.pdf>, 24.11.2022:

«ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ» ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բանալի բառեր՝ մատենագիտություն, տարեգիրք, տպագիր արտադրանք, գիրք, պարբերականների հոդվածներ, սփյուռքի մամուլ, գրախոսություններ, ատենախոսությունների սեղմագրեր:

Keywords: bibliography, yearbook, print editions, book, periodical articles, Armenian Diaspora press, reviews, abstracts of dissertations.

Թեմայում քննարկվել և արժևորվել է «Հայ տպագրության տարեգիրքը» որպես ազգային մատենագիտության կարևոր բաղկացուցիչ մաս, ինչպես նաև ներկայացվելու է կարևորությունը հայագիտության տեսանկյունից: Նյութը շարադրելիս հիմնվել են առավելապես մեր աշխատանքային փորձի վրա:

«Հայ տպագրության տարեգիրքը», որպես հայ առաջին մատենագիտական պարբերական, լույս է տեսել 1925 թ.-ին ՀՍՍՀ գրապալատում, որը համարվում էր պետական մատենագիտության կենտրոնացված քարտադրման, մամուլի վիճակագրության գիտական կենտրոն: Առաջնակարգ խնդիր է եղել Հայաստանի տպագիր արտադրանքի՝ բոլոր լեզուներով լույս տեսած գրքերի, պարբերականների, կերպարվեստի ու երաժշտական ստեղծագործությունների շարունակվող հրատարակությունների պետական-մատենագիտական գրանցումը, նկարագրությունները և այդ նյութերի հիման վրա տարեգրքերի և ժողովածուների հրատարակումը: Դրանք են «Տպագրության տարեգիրք», «Հոդվածների և գրախոսությունների տարեգիրք», «Գիրքը և պարբերական մամուլը ՀՍՍՀ-ում» տարեգիրք և մատենագիտական այլ կարևոր ժողովածուներ:

Տարիների ընթացքում քարտադրանքներում հավաքված նյութերի՝ գրապահոցում հավաքված միավորների մասին տեղեկատվության հիման վրա պատրաստվել են ընդհանուր մատենագիտական ժողովածուներ, որոնք կարևոր նշանակություն են ունեցել գրքի և պարբերական մամուլի, շարունակվող հրատարակությունների ուսումնասիրման ու պատմության ստեղծման համար: Այդ ժողովածուներում ամփոփվել են անցյալ տասնամյակների հրատարակչական գործերի արդյունքները [Բեքմեզյան, 2017, 18]: Մատենագիտության անհրաժեշտությունն ու զարգացումը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական կարևոր իրադարձությունների, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման հետ: Մատենագիտական առաջին տպագիր արտադրանքը «Տպագրության տարեգիրք» հայ ազգային մատենագիտության հաջողության արդյունքն է, որը մինչև 1971 թ. որոշակի պարբերականությամբ տպագրվել է «Գրքի տարեգիր», իսկ 1971 թ. լույս տեսել «Տպագրության տարեգիր» վերնագրով [Նույն տեղում, 3]:

1972 թ.-ից «Հոդվածների և գրախոսությունների տարեգիր» մեկ ընդհանուր վերնագրի ներքո, լույս է տեսնել «Ժուռնալային հոդվածների տարեգիրք» և «Լրագրային հոդվածների տարեգիրք»: 1995 թ. այն շարունակվեց լույս տեսնել «Հայ տպագրության տարեգիրք» ընդհանուր վերնագրով, որն իր մեջ ներառում էր նաև երաժշտական և կերպարվեստի հրատարակությունների, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ և սոցիալիստական երկրների մամուլում Հայաստանի մասին հրատարակված նյութերի մատենագիտական նկարագրությունները: 2005 թ.-ից «Հայ տպագրության տարեգիրքի» բոլոր համարները Հայաստանի ազգային գրապալատի կայքում հասանելի են եղել [Նույն տեղում, 10]:

Ըստ հրատարակման ժամանակագրության «Հայ տպագրության տարեգիրքը» անցել է հետևյալ ուղին՝

«Տպագրության տարեգիր»՝ 1925-1935 և 1972-1993 թթ.

«Գրքի տարեգիր»՝ 1934-1971 թթ.

«Ժուռնալային հոդվածների տարեգիրք»՝ 1939-1941 և 1947-1971 թթ.
 «Լրագրային հոդվածների տարեգիրք»՝ 1949-1971 թթ.
 «Գրախոսությունների տարեգիրք»՝ 1951 թ.
 «Նոտագրական հրատարակությունների տարեգիրք»՝ 1951 թ.
 «Գրախոսությունների տարեգիրք»՝ 1951 թ.
 «Պատկերահրատարակությունների տարեգիրք»՝ 1952 թ.
 «Հոդվածների և գրախոսությունների տարեգիրք»՝ 1972-1993 թթ.
 «Հայ տպագրության տարեգիրք» 1995 թ. (1994 թ. համարը լույս է տեսել 2003 թ.)
 «Ատենախոսությունների սեղմագրերի տարեգիրք» (տպագրվում է 1997 թ.)
 «Սփյուռքահայ մամուլի և գրքի տարեգիրք» (տպագրվում է 1995 թ.)

2017 թ.-ից՝ Հայաստանի ազգային գրապալատի վերակազմակերպումից հետո, «Հայ տպագրության տարեգիրքը» շարունակվեց լույս տեսնել Հայաստանի ազգային գրադարանում և ամենամսյա պարբերականությամբ շարունակվում է հրատարակվել մինչև այսօր: «Հայ տպագրության տարեգիրք» ամենամսյա մատենագիտական ցանկում արտացոլվում են Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքահայ գաղթօջախներում լույս տեսնող գրքերի, թերթերում, ամսագրերում, պարբերական և շարունակվող հրատարակություններում հրատարակված հոդվածների, գրախոսությունների, ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտական նկարագրությունները, որոնք կատարվում են համաձայն «Библиографическое описание документа» Гост 7.1-2003 ստանդարտի: Նկարագրությունների մեջ բառերի և բառակապակցությունների կրճատումները կատարվում են ըստ Հայաստանի ազգային գրապալատի «Տպագիր արտադրանքի մատենագիտական նկարագրություններում հայերեն բառերի և բառակապակցությունների կրճատումներ» ցանկի և «Сокращение русских слов и словосочетаний в библиографическом описании произведений печати» 7.12-77 ստանդարտի: Մատենագիտական գրանցումների խմբավորումը կատարվում է համաձայն միջազգային «Համընդհանուր տասնորդական դասակարգման» համակարգի: Ճյուղային բաժինների ներսում կիրառվում են ժամանակավոր թեմատիկ ենթավերնագրեր, որոնց օգնությամբ առանձնացվում են քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին, կազմակերպությունների և անհատ անձանց հոբելյաններին նվիրված նյութերը [Բեքմեզյան, 2017, 9]: Ներկայումս «Հայ տպագրության տարեգիրքը» ընդգրկում է գրքի, լրագրային հոդվածների, ամսագրային հոդվածների, սփյուռքի մամուլի, գրախոսությունների և ատենախոսությունների սեղմագրերի տարեգրքերը: Գրախոսությունների տարեգիրքը լույս է տեսնում տարվա մեջ մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա վերջին՝ 12-րդ համարում, սփյուռքի տարեգրքերը՝ տարվա մեջ երկու անգամ՝ 6-րդ և 12-րդ համարներում, մյուս տարեգրքերը ամենամսյա են: Տարեգրքերից յուրաքանչյուրն ունի իր ուրույն համարակալումը տարվա ընթացքում՝ 1-12 հաջորդականությամբ: Համարակալվում են նաև մատենագիտական նկարագրությունները, սկսելով 1-ից, ավարտելով վերջին 12-րդ համարում համապատասխան վերջին գրանցումով: Տարեգրքի բոլոր համարները ունեն անվանացանկ, աշխարհագրական և տվյալ համարում նկարագրված թերթերի, ամսագրերի, պարբերական և շարունակվող հրատարակությունների, հեղինակ չունեցող գրքերի վերնագրերի ցանկեր: Անվանացանկերում ամփոփվում են հեղինակների ազգանունները և այն անձանց ազգանունները, ում նվիրված է տվյալ նյութը: Վերջիններիս ազգանունների դիմացի համարները գրվում են փակագծերում: Նույն ազգանունները, անվան և հայրանվան միևնույն սկզբնատառեր ունեցող հեղինակներին վերաբերող համարները դրվում են նույն ազգանվան դիմաց: Աշխարհագրական ցանկում ամփոփվում են մատենագիտական նկարագրության մեջ նշված աշխարհագրական անունների անվանումները:

Հաշվի առնելով հայերեն տպագիր խոսքում ժամանակակից և դասական ուղղագրության գույքահեռ գործածման հանգամանքը՝ մատենագիտական նկարագրություններում կիրառվում է հետևյալ սկզբունքը. հեղինակը, նյութի խորագիրը և հրատարակման տվյալները (աղբյուրը) գրվում են բնագրի ուղղագրությամբ, իսկ նյութի բովանդակության մեկնաբանումը (անոտացիան)՝ ժամանակակից ուղղագրությամբ: Մատենագիտական նկարագրությունների այբբենական դասավորումը տարեգրքերի բաժիններում կատարվում է ըստ մաշտոցյան այբուբենի: Ցան-

կերում ազգանունները խմբավորվում և դասավորվում են ըստ ժամանակակից ուղղագրության կանոնների (բացառությամբ սփյուռքի տարեգրքի):

Մինչև 2017թ. «Հայ տպագրության տարեգրքում» ընդգրկված հայերեն բոլոր մատենագիտական նկարագրությունները պարտադիր ունեցել են իրենց ռուսերեն թարգմանությունները, իսկ այլ լեզուներով տպագրված գրքերի նկարագրությունները թարգմանվել են հայերեն:

Ազգային մատենագիտության հիմք հանդիսացող «Հայ տպագրության տարեգրքը» նպատակ ունի ամբողջական ու համապարփակ արտացոլելու Հայաստանի Հանրապետությունում և աշխարհասփյուռ հայ գաղթօջախներում լույս տեսնող նյութերը: Տարեգրքի ամբողջականությունն ու համապարփակությունը կախված է Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում լույս տեսնող մամուլի և գրականության՝ Հայաստանի ազգային գրադարան ժամանակին համալրումից: Այն համարվում է մատենագետների և ընթերցող լայն մասսաների համար առաջնային աղբյուր՝ ավելի հեշտ և դասակարգված փնտրում կատարելու՝ զանազան մատենագիտական ցանկեր, ժողովածուներ և կենսամատենագիտություններ կազմելու համար: Հայաստանի ազգային գրադարանի կայքի էլեկտրոնային շտեմարաններում այն հասանելի է թե՛ մատենագետներին և թե՛ գիտությամբ զբաղվող մատենագիտական տարբեր աղբյուրներ ուսումնասիրող հետազոտողներին: «Հայ տպագրության տարեգրքը» իր 100-ամյա պատմությամբ ունի իր անչափ կարևոր առաքելությունը հայ մատենագիտության և գրադարանագիտության ոլորտում: Նրա կազմման աշխատանքները իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի նվիրյալ և հմուտ մատենագետների կողմից ամենամսյա պարբերականությամբ: Չնայած տարեցտարի նվազող տպաքանակին, այն չի կորցնում իր արդիականությունը և ունի մեծ պահանջարկ ինչպես տարբեր գիտություններ ուսումնասիրողների, այնպես էլ մարզային և քաղաքային տարբեր գրադարաններում տարաբնույթ մատենագիտական ցանկեր և ժողովածուներ կազմող մատենագետների համար: Մոտ ապագայում՝ 2025 թ. կլրանա «Հայ տպագրության տարեգրքի» հրատարակման հարյուր տարին և մենք հույս ունենք և վստահ ենք, որ այն մշտապես կլինի շարունակական, և անկախ տարբեր հանգամանքներից, երբեք չի դադարի իր անչափ կարևոր գործունեությունը:

SUMMARY

The article presents the “Yearbook of Armenian Printing.” In 1925, the first Armenian bibliographic periodical “Book Chronicle” was published in the Soviet Armenia Book Chamber. Based on the collected printed materials, a state bibliography of publications was compiled. “Book Chronicle” was published monthly from 1971 with the title “Printing Yearbook” including also bibliographic descriptions of music and fine art publications, as well as materials published in periodicals of the USSR and socialist countries about Soviet Armenia. “Journal Articles Yearbook” and “Newspaper Articles Yearbook” were published under the common title “Articles and Reviews Yearbook” from 1972, and under the general title “Armenian Printing Yearbook” from 1995. Since 2017, the publishing of this yearbook has been continued at the National Library of Armenia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բեքմեզյան Հ., Հայաստանի ազգային գրապալատ (Գործունեությունը և դերը Հայաստանի գիտական-մշակութային կյանքում) // Բանբեր Հայաստանի գրադարանների գիտամեթոդական հանդես, Երևան, «Գիրք», 2017, հտ. 3, № 2, էջ 2-18, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/xi1guU>, 02.12.2022:
2. Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Հայ մամուլ» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://nla.am/>, <https://is.gd/gvYVIY>, <https://is.gd/WDiDLQ>, <https://is.gd/oO44Q8>, 02.12.2022:
3. Հայաստանի ազգային գրապալատ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/TPNO4Z>, 02.12.2022:
4. Национальная книжная палата Армении. Эл. рес.: URL: <https://is.gd/AU4tlu>, 02.12.2022:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Բանալի բառեր՝ ժառանգություն, Աստուածաշունչ, գրահրատարակչական առաքելություն, պաշտոնաթերթ, տարեգիրք, Կաթողիկոս, մատենադարան, տպարան:

Keywords: heritage, Bible, publishing mission, official newspaper, yearbook, Catholicos, library, printing house.

Ներածական

Այս զեկոյցը ինքնին ընդհանուր ներածական մըն է Կաթողիկոսութեան «գրահրատարակչական առաքելութեան» պատմական ընթացքին եւ ներկայ իրավիճակին մասին: Ձեկոյցը զիրար ամբողջացնող հինգ մասերէ կը բաղկանայ՝ սկզբնաւորութիւն, բաժանմունքներ (յաջորդաբար կը նկարագրեն գիրին ու գիրքին աղերսուած մշակութային գլխաւոր հաստատութիւնները), արդիւնքներ, հրատարակչական հիմնադրամներ եւ մեր կատարելիքները: Յիշեցնեմ, որ մեր Թեմերը եւս իրենց հրատարակչական աշխատանքները Կաթողիկոսարանի առաքելութեան նոյն ոգիով իրականացնող կառոյցներ են, որոնք սակայն այս գիտաժողովի զեկոյցին եւ քննարկման առարկաները չեն: Այս նիւթին աղերսուած լայն տեղեկութիւններ կարելի է քաղել Կաթողիկոսութեան ՀԱՍԿ պաշտոնաթերթէն, իսկ վերլուծական բնոյթի ամփոփումներ գտնել յատկապէս Արամ Ա. Վեհափառ Հայրապետի 25-ամեայ գահակալութեան նուիրուած ծաւալուն հատորի էջերուն մէջ¹:

Սկզբնաւորութիւն

Հայոց Ցեղասպանութեամբ սկսած (1915) եւ հայկական Կիլիկիոյ պարպումէն ետք (1921/1923), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որպէս գաղթական, իննամեայ թափառումներէ ետք, Անթիլիասի մէջ հաստատման թուականէն (1930) սկսեալ, հայ գիրքի եւ մամուլի հրատարակութիւնները Կաթողիկոսարանի ազգային-եկեղեցական առաքելութեան կարելորդ երեսներէն կամ մարզերէն մէկը եղան: Այս «գրահրատարակչական առաքելութիւն»ը Կաթողիկոսարանին համար անհրաժեշտութիւն մըն էր եւ է, որպէս մեր հաւատքի ու տեսիլքի դրսեւորումը, որպէս դրօշակիրն ու նպաստողը հայկական գիրին, գիրքին ու մշակոյթին՝ պահպանութեան ու վերելքին, բայց մանաւանդ, որպէս նոր սերունդներու հայեցի-քրիստոնէական դաստիարակութեան զօրեղագոյն միջոցներէն մէկը:

Կիլիկեան Ս. Աթոռին Անթիլիաս հաստատուելէն առաջ, Սահակ Բ. Խապայեան (ծն. 1849, կթդ. 1903-1939) «գաղթականաց» Կաթողիկոսը սփիւռքի մէջ հրապարակած իր անդրանիկ Կոնդակը կը տպէ Դամասկոսի մէջ (28 Փետրուար 1922): Վեհափառը, յաջորդ տարիներուն, երկրորդ կարելորդ գրութիւն մըն ալ կը հրապարակէ Հալէպի մէջ, որպէս Ս. Աթոռի վերընձիւղումի պատկերացում, տեսիլք եւ յայտագիր, եւ որ ծանօթ է «Կտակ» անուանումով (1928), որ տազնապի տարիներու ընթացքին հայ եկեղեցոյ վերանորոգուող դերակատարութեան ի խնդիր, Ս. Աթոռին գոյերթը եւ կեդրոնական դերակատարութիւնը քննարկման առարկայ կը դարձնէ: «Կտակ»ը կը հասնի հայկական սփիւռքի ա՛յդ օրերու բոլոր կեդրոնները եւ արձագանգներ ու կարծիքներ կը լսուին, որոնց վերլուծումով վշտակիր Հայրապետը կը վերակազմակերպէ Միջին Արեւելքի հայ եկեղեցոյ թեմական կառոյցները եւ հիմքը կը դնէ «նոր» սփիւռքի տարածքին հայ եկեղեցին: Այդ

¹ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Հայրապետական 25-ամեայ Գահակալութիւն (1995-2020), Արժեւորում եւ Վկայութիւններ, Անթիլիաս, 2021:

օրուրնէ ցայսօր Կիլիկեան Ս. Աթոռը կը շարունակէ հաւատքի առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Բաժանմունքներ

Այսօրուան դրութեամբ Կաթողիկոսարանի մշակութային առաքելութիւնը իրականացնող բաժանմունքներն են.

ա) Գրապահպանութեան տեսակէտով առաջինը՝ «Կիլիկիա» Մատենադարանն է, իր հինգ մասերով՝ Ձեռագիրներու, Հնատիպերու, Մամուլի, Հայալեզու եւ Օտարալեզու գիրքերու բաժանմունքներով:

Անթիլիասի մէջ առաջին հիմնարկը, երիտասարդ հոգեւորականներու եւ ուսուցիչներու պատրաստութեան սփիւռքեան առաջին կեդրոնը՝ Դպրեվանքն էր (1930), որուն մէջ կամ կողքին գրադարան մը ունենալը անհրաժեշտութիւն էր: Ուստի, Աթոռակից Բաբգէն Կիլիկեան Կաթողիկոս (ծն. 1868, Աթոռակից՝ 1928-1936) եւ Վերատեսուչ Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան (1882-1935) կը հիմնեն Դպրեվանքի կամ Կաթողիկոսարանի Մատենադարանը (1931): Այդ տարիներու ամենադժուարին պայմաններուն ներքեւ կը գնեն լուսահոգի Յովհաննէս Ա. քնյ. Մկրեանի (1831-1909) գրադարանը եւ կը փոխադրեն Կ. Պոլիսէն: Յաջորդող տարիներուն Մատենադարանը կը տեղափոխուի նոր շէնք՝ 1951ին, ապա գիրքերու ամբողջական դասաւորումը կը կատարուի (տասանորդային - Dewey Decimal Classification, հայերէնին պատշաճեցումով) 1984-ին: Մատենադարանի նոյն շէնքը կը նորոգուի եւ յարկ մը կը բարձրանայ՝ 1998-ին, իսկ վերանորոգումը կը կատարուի 2021-ին՝ միշտ մշակութասէր բարերարներու օժանդակութեամբ:

Յիշենք, որ Դպրեվանքին Անթիլիասէն Պիքֆայա փոխադրութեան ընթացքին, անհրաժեշտ կ'ըլլայ գրադարան մը պատրաստել, որուն կազմութեան մէկ բաժինը կը ստանձնէ «Կիլիկիա» Մատենադարանը՝ ուսանողներուն յատուկ գիրքեր տրամադրելով, միւս մասը՝ միաբաններէ եւ անհատ նուիրատուներէ տրամադրուած գիրքերն ու մամուլը: 2017-ին նորոգուեցաւ այդ գրադարանը եւ անուանուեցաւ Դպրեվանքի «Նազարեան» Մատենադարան:

«Կիլիկիա» Մատենադարանը իր հիմնադրութեան օրէն սկսեալ, միշտ ալ վայելած է Վեհափառ Հայրապետներու անմիջական հովանաւորութիւնը: Իսկ շնորհիւ կիլիկեան միաբաններու, հոգեւորականներու, մտաւորականներու, հրատարակչատուներու եւ գրասէրներու, այսօր ունինք քառայարկ «Կիլիկիա» Մատենադարանը: Հատորային կամ քանակական առումով ճիշդ է որ հարիւր հազար կը հաշուուի, բացի ձեռագիրներէն, որոնք տարիներու ընթացքին աճ արձանագրած են, սակայն հարուստ է հին ու հազուագիւտ հրատարակութիւններով, հին մամուլով եւ հնատիպերով (2000 հայերէն, 1000 օտարալեզու եւ մամուլ): Այսօր «Կիլիկիա» Մատենադարանը իր ուրոյն տեղը ունի հայ գրադարաններու կամ մատենադարաններու կեանքին ու պատմութեան մէջ:

բ) Կաթողիկոսարանի առաքելութեան գործնականացման եւ ծաւալումին երկրորդ կենսական միջոցը Տպարանի հիմնադրութիւնն էր (1932): Յաջորդող տարիներուն Տպարանը արդիական սարքերով օժտելու առաջադրութեամբ, Վեհափառ Կաթողիկոսները հնարաւոր բոլոր միջոցները գործածեցին, Տպարանը արդիականացաւ՝ 1963-ին, ապա՝ նորակառոյց Վեհարանին ներքնամասին ունեցաւ իր «նոր տունը»՝ 1968-ին: Համակարգչային «Հայ Տիպ Քոմփիլերաֆ» ծրագիրը որդէ-գրուեցաւ՝ 1986-ին: Արամ Ա. Վեհափառի գահակալութեան առաջին իսկ տարուան ընթացքին՝ 1996-ին, այժմու արդիական Տպարանը վերակազմուեցաւ, համակարգչային նոր դրութեամբ: «Գալուստ Կիլիպէնկեան» Հիմնարկութիւնը առատաձեռն նուիրաբերումով գերմանական երկու նոր մամուլներ նուիրեց, մին՝ փոքր ծաւալով գործերու հրատարակութեան, միւսը՝ մեծածաւալ աշխատանքներու լոյս ընծայման համար: Գրատպութեան տեսակէտով Կաթողիկոսարանի Տպարանը կը շարունակէ սպասարկել ընդհանրապէս Կաթողիկոսարանին ու Թեմերուն, բայց նաեւ անհատ մտաւորականներու գիրքերու հրատարակութեան: Տպարանը իր կարգին կարելոր տեղ ունի հայ տպագրութեան եւ տպարաններու պատմութեան մէջ: Տպարանէն տարեկան, միջին հաշուով, 15 գիրք լոյս կ'ընծայուի: Վերջին տարիներուն, Լիբանանի տնտեսական-ֆինանսական ահաւոր տագնապին ու Քորոնա ժահրի արգելափակումին հետեւանքով, հրատարակչական աշ-

խուժությունը ակամայ նուազեցավ, բայց չընդհատուեցավ: Եթե 2019-ին տպագրուեցան 16 գիրք (չհաշուած ՀԱՄԿ, օրացոյց, պոռժիր, բացիկ, հրաւիրատոմս, եւայլն), 2020-ին՝ 7 գիրք, 2021ին՝ 12 գիրք, 2022-ին մինչ օրս՝ 4 գիրք:

Կաթողիկոսարանի տպարանէն լոյս ընծայուած են.

1 Դասագիրքեր, 2 Հոգեւոր, կրօնական, աստուածաբանական, ծիսական նիւթեր, 3 Հայ եկեղեցւոյ պատմութիւն, 4 Հայ մատենագրութիւն, 5 Հայ գրականութիւն, 6 Արուեստներու վերաբերող նիւթեր, 7 Հայագիտական հետազօտութիւններ, 8 Հայոց Յեղասպանութեան եւ Հայ դատին վերաբերող նիւթեր, 9 Զանազանք՝ եկեղեցական գրպանի Օրացոյց, պատը կախուող ժողովրդային Օրացոյց, մամուլ՝ ՀԱՄԿ, ակումբներ, եւայլն:

Վեհափառ Հայրապետներու անմիջական քաջալերանքով, ազնիւ բարերարներու ներդրումով, միաբաններու եւ սփիւռքահայ մտաւորականութեան գործօն մասնակցութեամբ, Կաթողիկոսարանը փաստօրէն վերածուեցաւ գրահրատարակչական նոր կեդրոնի մը: Այսօր, Կաթողիկոսարանի Տպարանը իր կարելոր տեղը ունի հայ տպագրութեան եւ տպարաններու պատմութեան մէջ:

Նոր ճարտարագիտութեան եւ գրադարաններու հետ համագործակցութեամբ գիրք, խօսքը եւ հոգեւոր-ազգային ժառանգութիւնը նոր սերունդին փոխանցելու նոր ձեւեր որոնելը, մեր ներկայի հրամայականն է:

զ) Կաթողիկոսութեան խօսքին, գաղափարին եւ առաքելութեան տարածման կարելոր միջոցը հանդիսացաւ ՀԱՄԿ պաշտօնաթերթը (հիմնուած 1932-ին): Այսօր, ՀԱՄԿը իր անխափան երթի 90ամեայ վաստակով հարուստ իրականութիւն է հայ մամուլի սպասարկութեան եւ տարեգրութեան մէջ: ՀԱՄԿի մատենագիտութիւնը պատրաստուեցաւ միաբան հօր մը կողմէ, ամբողջացումէ ետք պիտի հրատարակուի:

Պաշտօնաթերթին կողքին ունինք ՀԱՄԿ Հայագիտական Տարեգիրքի (1948 եւ 1980՝ նոր շրջան) հրատարակութիւնը, որ ընդմիջումներով մեզի հասած եւ այսօր շարունակման խնդիրը իր պատասխանին կը սպասէ:

Կաթողիկոսարանի Մամուլը, սակայն, միայն «ՀԱՄԿ»ն ու «Հայագիտական տարեգիրք»ը չեն, այլեւ ունինք Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու «Դրագարկ» տարեգիրքը՝ 1961-1962ին եւ 1976էն (առայժմ դադրած), Դպրեվանքի «Գլաձոր» տարեգիրքը՝ 1956էն, «Դպրեվանքեան Ղօղանջ» աշակերտական պարբերաթերթը, Պիքֆայա, 1978էն (առայժմ դադրած), ՀԵՀՈՄԻ (Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողական Միութիւն) «Տեղեկատու»ն, որոնք իրենց կարելոր տեղն ու նշանակութիւնը ունին հայ մամուլի պատմութեան մէջ:

դ) Այս բոլորը ընթերցողներուն հասցնելու համար կարելորութեամբ պէտք է յիշել Կիլիկիա Գրատունը, որ արդէն կէս դարու ծառայութեամբ հարուստ է եւ ո՛չ սովորական առումով վաճառականական կեդրոն մը: Ան արդի պայմաններուն պատշաճող եւ համացանցային միջոցներուն յարմարող գործունէութիւն կը ծաւալէ: Կիլիկիոյ Կաթողիկոսարանի տպարանէն լոյս ընծայուած եւ տրամադրելի հայալեզու եւ օտարալեզու գիրքերը, նաեւ էլէքտրոնային տարբերակներ (pdf) կրնաք գտնել Կաթողիկոսարանի «Կիլիկիա Գրատուն» կայքէջին www.ciliciabookstore.com վրայ: Յիշենք որ Կաթողիկոսարանի Տպարանէն լոյս ընծայուած գիրքերը ձրիաբար կը տրամադրուին մտաւորականներու, գրադարաններու եւ հայ դպրոցներու:

Արդիւնքներ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գրահրատարակչական առաքելութիւնը արդէն թելադրած է 90ամեակը: Անոր գործունէութիւնը քննելու եւ արժեւորելու իմաստով, տակաւին կատարուելիք բաւական լուրջ աշխատանք կայ՝ ուսումնասիրելու եւ պատմութիւնը մշակելու տեսակէտէն: Մենք առայժմ հոն հասած չենք: Տպագրուածներուն թուաքանակն ու ներդրումը, մասնաւորաբար սփիւռքահայ կեանքին մէջ անուրանալի իրողութիւն է: Որակային տեսակէտէ կարելի է ըսել, որ յատկապէս տպագրական ծառայութեան մէջ, եւ համեմատած ժամանակակից տպարաններու, ամէն գնահատանքի արժանի է: Աւելին, տրուած ըլլալով որ ոչ-պետական կառոյց մըն է, հայրենիքէն դուրս՝ օտարութեան մէջ ապրիլը կամ վերապրիլը, եւ կարենալ կազմակերպ

ձեռով հայ գիրն ու գիրքը մեր ժողովուրդին հասցնելը, կրկին հսկայական նշանակություն ունեցող իրականություն է: Հակառակ նիւթական դժուարութեանց՝ անցեալին, բայց մանաւանդ այսօր, յատկապէս Միջին Արեւելքի տագնապներուն մէջ ու մասնաւորաբար Լիբանանի ներկայ անտանելի ողբերգական կացութեան մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգային-եկեղեցական ընդհանուր գործունէութեան մէջ, գրահրատարակչական առաքելութիւնը ինքնին լուրջ յաջողութիւն է, որ կը շարունակէ նոր ծրագիրներով եւ նորոգուող մշակութային հոգիով իր հաւատարիմ երթը: «Կաթողիկոսութեան կրթամշակութային եւ գրահրատարակչական գործունէութեան միտք բանին մէկն է՝ կասեցնել Սփիւռքի տագնապալի նահանջը, պահպանելով հայոց ինքնութեան եւ յիշողութեան անխորտակ առանցք հայոց լեզուն»²:

Անդրադառնանք Կաթողիկոսութեան առաքելութեան գործնականացման երեւոյթներուն եւ ծրագիրներուն.-

ա) «Հայ Գիրքի Ցուցահանդէս»ներու նպատակն էր եւ է հայ գիրքը տարածել մեր ժողովուրդի կեանքին մէջ: Ցուցահանդէսները սկիզբ առին երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսի օրով՝ 1977էն (16 տարի) եւ աւելի ծաւալուն ու ընդգրկուն կերպով կը շարունակուին Արամ Ա. Վեհափառ Հայրապետի գահակալութեան ընթացքին: Ցուցահանդէսները արդէն 40ամեայ կայացած սովորութեամբ հայ գիրքի գեղեցիկ հանդիսութիւններ են: Արամ Ա. Վեհափառը աւելի քան 30 հայ թէօտար լեզուներով մշակուած եւ հրատարակուած գիրքերու ու բազմաթիւ յօդուածներու հեղինակ է. բնականօրէն քաջալերողն ու նախաձեռնողը պիտի ըլլար, եւ եղաւ, գրահրատարակչութեան:

բ) Վեհափառ Հայրապետի 27ամեայ գահակալութեան շրջանին սկիզբ առին մատենաշարային բնոյթի կարեւոր աշխատասիրութեանց պատրաստութիւնն ու հրատարակութիւնը, ի մասնաւորի՝ «Մատենագիրք Հայոց»ի սկզբնական մօտ 15 հատորները, «Ատանայի Կոտորածի 100-ամեակի մատենաշար»ը, որուն շարքէն տպագրուեցան «Յիշատակարան Ատանայի Աղէտին» (3 հատոր) եւ «Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ Յուշամատեններ» (14 հատոր), հիմնականին մէջ վերահրատարակութիւններ՝ բարեփոխութիւններով եւ սրբագրութիւններով: Հրատարակութեան ամբողջացումի ծրագիրը մեր գործունէութեան մէկ այլ տարածքն է: Ասոր միացնենք Կաթողիկոսարանի Արխիւատան հրատարակութիւնները, ցարդ հինգ հատոր, իսկ նոր նիւթեր պատրաստութեան ընթացքի մէջ են:

գ) Դպրեվանքի հրատարակութիւններէն կ'առանձնացնենք «Ոգեղէն Հաց» հայ գրականութեան ընտրանիին պատրաստութիւնն ու հրատարակութիւնը (3 հատոր) եւ կրօնական բնոյթի բազմաթիւ երկերու թարգմանութիւններ, առաւելաբար անգլերէն լեզուէն:

դ) Յիշենք, Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին եւ հրատարակչական իր ծաւալուն աշխատանքներուն արդիւնքները, մասնաւորաբար հետեւեալ մատենաշարերուն մէջ՝ «Լոյս եւ Աշխարհ», «Ծիսական Բնագիրներ», «Երաժշտական Ժառանգութիւն», «Մեր Հայրերը կը խօսին», «Քրիստոնէան եւ հոգեւոր արժէքները» եւ «Եկեղեցի եւ Ժողովուրդ»:

ե) Արեւմտահայ գրականութեան լաւագոյն երկերուն հրատարակութիւնները նոյն այդ առաքելութեան մէկ այլ արտայայտութիւնն է, հիմնադրամներով ու անհատական մեկենասութեամբ իրականացող: Այսօր զանոնք թուայնացնելը եւ նոյն աստէն ժամանակակից հայ գրագետներու երկերուն լոյս ընծայումը ապահովելը՝ առաջնային նշանակութիւն ունին:

զ) Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ եւ տնօրինումով «Ժողովրդային գրադարան» մը՝ Ֆանարի (Լիբանան) ժողովրդային բնակարաններու շրջանին հաստատելու աշխատանքը ընթացքի մէջ է, որպէսզի գրասէր ընթերցողներու տրամադրութեան տակ դրուին հայ գրականութեան եւ մշակոյթին առնչուած գիրքեր եւ մամուլ:

Հրատարակչական հիմնադրամներ

Ակնարկային ձեռով կը յիշեմ Հրատարակչական Հիմնադրամները, որոնք 1960 թուականներուն սկիզբ առին եւ յառաջացան, հիմնադրամներու յատուկ դրութեամբ եւ կը կառավարուին մասնաւոր կանոնագրութիւններով ու յանձնախումբերով:

² Հայրապետական 25-ամեայ Գահակալութիւն (1995-2020), Արժեւորում եւ Վկայութիւններ, էջ 196:

Այդ հիմնադրամներն են.

1 Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակը, հիմնուած 1966ին, առաւելաբար գեղարուեստական գրական երկերու հրատարակութիւն, ցարդ 103 հատոր:

2 Դանիէլ Վարուժան Հրատարակչական Հիմնադրամը, հիմնուած 1985ին, առաւելաբար արեւմտահայ դասական հեղինակներու գործերու վերահրատարակութիւններ:

3 Սմբատ Արք. Լափաճեան Հրատարակչական Հիմնադրամը, հիմնուած 1996ին, կրօնական եւ դաստիարակչական բնոյթի գործեր, ցարդ 46 հատոր:

4 Արամ Ա. Կաթողիկոս Հրատարակչական Հիմնադրամը, հիմնուած 2001ին, ցարդ 3 հատոր:

5 Ռիչըրտ եւ Թինա Գարօլան Հրատարակչական Հիմնադրամը, հիմնուած 2004ին, երիտասարդ գրողներու ստեղծագործութեանց հրատարակութիւններ, ցարդ 26 հատոր:

